Թողարկման 17-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2010

դեկտեմբեր

թիվ 12 (148)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-217-Ն ՀՀ օրենքը

5 ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-218-Ն ՀՀ օրենքը

9 «Պետական կենսաթոշակների մասին » ՀՕ-243-Ն ՀՀ օրենքը

36 «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ-244-Ն ՀՀ օրենքը

87 «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՕ-245-Ն ՀՀ օրենքը

160 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-253-Ն ՀՀ օրենքը

162 ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-255-Ն ՀՀ օրենքը

163 ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-257-Ն ՀՀ օրենքը

163 ««Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքը

164 ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-271-Ն ՀՀ օրենքը

166 ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-272-Ն ՀՀ օրենքը

166 ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-273-Ն ՀՀ օրենքը

168 ««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-276-Ն ՀՀ օրենքը

169 ««Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-279-Ն ՀՀ օրենքը

169 ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-281-Ն ՀՀ օրենքը

170 ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-284-Ն ՀՀ օրենքը

171 ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-287-Ն ՀՀ օրենքը

171 ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-288-Ն ՀՀ օրենքը

172 ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-289-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

174 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «ԻԴՐԱՄ» ՍՊԸ-ին «Coinstar Money Transfer» և «Blizko» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերին մասնակցության թույլտվություն, «Պապ շինարար», «Վարդան և Մոնիկա» ՍՊԸ-ներին, «Ֆրեշ» ՍՊԸ թիվ 3 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ, «Մանի ընդ Քոմփընի», «Գոլդ Չենս» և «Էքսպրես վիպ սերվիս» ՍՊԸ-ներին գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

174 ՀՀ ԿԲ խորհրդի և ԿԲ նախագահի որոշումները «Արարատբանկ» ԲԲԸ-ի «Կոմիտաս» մասնաճյուղը և «Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի «Վանաձոր» մասնաճյուղը գրանցելու, «Կրեդիտ Հաուս» և «Ֆաստ Կրեդիտ» ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաները վերաձևակերպելու, «ՊԱՏԱ ՍԳՀ», «ՀԱՍՊԼԱՍՏ», «Մուլտի էյր», «Արսինե Թրեյդ» ՍՊԸ-ների արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման և «ՎԻ.ԱՅ.ՓԻ. Բիզնես» ՍՊԸ գրավատան կազմակերպման, «ՎՏԲ Լիզինգ» լիզինգային ՎԿ ՓԲԸ տրամադրված վարկային կազմակերպության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Արփա Սևան» ԲԲԸ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի առևտրի ազդագիրը և «Շեն Կոնցեռն» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առևտրի ազդագիրը գրանցելու վերաբերյալ

174 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների, արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

175 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 298-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

250 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 302-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

251 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 302/1-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 296-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

252 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 308-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ծաղիկների գեղեցկությունը» հուշադրամների շարքի «Արոսենի Հայաստանյան» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

253 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 315-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

255 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 316-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 408-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

257 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 324-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

260 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 325-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

271 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 326-Ն որոշումը ««Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ստեղծելու, տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը» հաստատելու մասին»

331 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 327-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

408 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 328-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք[1]) 26-րդ հոդվածի 2-րդ կետում «անհատ ձեռնարկատեր գրանցվելու» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատեր հաշվառվելու» բառերով, իսկ նույն կետը «գրանցման» բառից հետո լրացնել «կամ հաշվառման» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը «հիմնադիրների» բառից հետո լրացնել «(մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի» բառերով, իսկ նույն կետի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ կետից հանել «իրավաբանական անձի կառավարման կարգը,» բառերը.

3) 2-րդ կետը «անձանց համար՝» բառերից հետո լրացնել «սույն օրենսգրքով և (կամ)» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետում «օրենքով և նրա» բառերը փոխարինել «սույն օրենսգրքով, օրենքով և (կամ) իրավաբանական անձի» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի, կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»[2] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:»:

Հոդված 5. Օրենսգրքի 97-րդ հոդվածից հանել «նրանց ներդրած ավանդների կազմի և կարգի, ավանդները ներդնելու պարտականությունները խախտելու համար պատասխանատվության, ընկերության կառավարման մարմինների կազմի և իրավասության ու նրանց որոշումների ընդունման կարգի մասին՝ ներառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ,» բառերը:

Հոդված 6. «Օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ նախադասությունը «ակտիվների արժեքը» բառերից հետո լրացնել «կազմում է բացասական մեծություն կամ» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ կետը «բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «և առևտրային կոոպերատիվի» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետը «նախապատվության իրավունքից» բառերից հետո լրացնել «(բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»[3] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի)» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
28 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-217-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 69 (803), 29.12.10):
[1] *ՀՀՊՏ 1998 N 17 (50),10.08.98:*
[2] *ՀՀՊՏ 2001 N 38 (170),07.12.01:*
[3] *ՀՀՊՏ 2001 N 40 (172),15.12.01:*

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ընկերությունը կարող է ունենալ կլոր կնիք: Կնիքը պետք է պարունակի հայերենով իր ֆիրմային անվանումը, ինչպես նաև օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) սահմանած այլ վավերապայմաններ: Ընկերության կնիքը կարող է պարունակել նաև ընկերության անվանումը կամ ֆիրմային անվանումն օտար լեզուներով, ինչպես նաև նրա ապրանքային նշանի պատկերը կամ խորհրդանիշը:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներում՝

1) 1-ին կետերից հանել «և իր կանոնադրության» բառերը, նույն կետերը «իրավասու մարմնի» բառերից հետո լրացնել «՝ մասնակիցների ընդհանուր ժողովի» բառերով.

2) 1-ին կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի՝ սույն կետում նշված լիազորությունն ընկերության կանոնադրությամբ կարող է փոխանցվել ընկերության խորհրդի որոշմանը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ընկերության ստեղծումն իրականացվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ:».

2) 3-րդ կետի երկրորդ նախադասությունից հանել «(մասնակից)» բառը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6. Ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը պետք է բովանդակի դրույթներ ընկերության հիմնադրման, մասնակիցների կազմի, մասնակիցների բաժնեմասերի չափերի, ընկերության կանոնադրության հաստատման, ընկերության գործադիր մարմնի ձևավորման մասին, դրույթ այն մասին, որ բոլոր որոշումներն ընդունվել են միաձայն: Ընկերության ստեղծման (հիմնադրման) մասին հիմնադրի (հիմնադիրների) որոշումը կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրությունը ստորագրում են ընկերության բոլոր հիմնադիրները:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը «հիմնադիրների» բառից հետո լրացնել «(մասնակիցների)» բառով.

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրները (մասնակիցները) պետք է ընդունեն միաձայն: Ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

ա) ընկերության անվանումը.

բ) ընկերության գտնվելու վայրը.

գ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը, մասնակիցների բաժնեմասերի չափերը.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 69 (803), 29.12.10):

դ) տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին, որոնք ներառում են՝ ֆիզիկական անձանց համար՝ քաղաքացիությունը, անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը կամ հաշվառման հասցեն, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), իրավաբանական անձանց համար՝ պետությունը, որտեղ հիմնադրվել է, լրիվ անվանումը (ֆիրմային անվանումը), պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը, համայնքի համար՝ համայնքի լրիվ անվանումը, պետության համար՝ պետության լրիվ անվանումը, լիազորված մարմնի լրիվ անվանումը:

Ընկերության կանոնադրությունը կարող է պարունակել օրենքին չհակասող այլ դրույթներ, այդ թվում՝

ա) ընկերության կառավարման մարմինների կազմն ու լիազորությունները, այդ թվում՝ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (այսուհետ՝ ընդհանուր ժողով) բացառիկ լիազորությունը հանդիսացող հարցերը.

բ) ընկերության կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման կարգը, այդ թվում՝ այն հարցերը, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ.

գ) ընկերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

դ) ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կարգը.

ե) ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասն այլ անձին փոխանցելու կարգը:».

3) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի, կամ նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև սույն կետով սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:

Ընկերության մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ բանկ հանդիսացող ընկերությունների մասնակիցներինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) «բ» ենթակետի «ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ» բառերը փոխարինել «ստանալ տեղեկություններ» բառերով.

2) «դ» ենթակետից հանել «և ընկերության կանոնադրությամբ» բառերը.

3) «զ» ենթակետից հանել «օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով» բառերը.

4) վերջին պարբերության «օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ» բառերը փոխարինել «օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ» բառերով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածի «ա» ենթակետում «կանոնադրությամբ» բառը փոխարինել «հիմնադրման մասին պայմանագրով կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ» բառերով:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 3-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերու-

թյունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի): Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել ընկերությանը՝ նշելով գինն ու վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է ընկերության մյուս մասնակիցներին:»:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետից հանել «(աուդիտորի)» բառը.

2) 3-րդ կետի երկրորդ և հինգերորդ նախադասությունները «Ընկերության հիմնադրման մասին պայմանագրով» բառերից հետո լրացնել «կամ ընկերության կանոնադրությամբ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ նախադասությունով. «Նշված հարաբերակցությունը չի կարող մեկից և ընկերության զուտ ակտիվների ու կանոնադրական կապիտալի հարաբերությունից մեծ լինել:»:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Եթե ընկերության նշված ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, ընկերությունը ենթակա է լուծարման:».

2) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Սույն կետում նշված ժամկետի ավարտից հետո ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման կամ լուծարման դեպքերի:»:

Հոդված 14. Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Քսանից ավելի մասնակից ունեցող ընկերություններում վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը պարտադիր է: Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել նաև ընկերության մասնակից չհանդիսացող անձը: Քսան և քսանից պակաս մասնակից ունեցող ընկերություններում կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ ընկերության վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում (վերստուգող չի ընտրվում):»:

Հոդված 15. Օրենքի 36-րդ հոդվածում՝

1) 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ կետի «ժբ» ենթակետը «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «և (կամ) ընկերության կանոնադրությամբ» բառերով:

Հոդված 16. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հերթական ընդհանուր ժողովն անցկացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել հերթական ընդհանուր ժողովի անցկացման այլ պարբերականություն: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր մարմինը:».

2) երկրորդ պարբերության «պետք է սահմանվեն» բառերը փոխարինել «կարող են սահմանվել» բառերով:

Հոդված 17. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր (եթե ընկերության կանոնադրությամբ այլ ժամկետ սահմանված չէ) առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝

պատվիրված նամակն ուղարկելով ընկերության մասնակիցների գրանցամատյանում նշված հասցեով:»:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի առաջին նախադասությունում «որոշումներն ընդունվում են ընկերության միակ մասնակցի կողմից միանձնյա և ձևակերպվում են գրավոր կերպով» բառերը փոխարինել «կարող են ընդունվել ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ» բառերով:

Հոդված 19. Օրենքի 43-րդ հոդվածի առաջին նախադասությունից հանել «՝ ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետով» բառերը:

Հոդված 20. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերում «կանոնադրական կապիտալի» բառերը փոխարինել «զուտ ակտիվների արժեքի» բառերով:

Հոդված 21. Օրենքի 49-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամկետով, եթե ընկերության կանոնադրությամբ այլ՝ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը կազմված է 3 անդամից, եթե ընկերության կանոնադրությամբ անդամների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:».

2) 4-րդ կետի «կանոնադրությամբ և այլ» բառերը փոխարինել «ներքին» բառով:

Հոդված 22. Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետը «բաժնետիրական ընկերության» բառերից հետո լրացնել «կամ առևտրային կոոպերատիվի» բառերով:

Հոդված 23. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
28 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-218-Ն

*ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը

1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը ներառում է՝

1) պետական կենսաթոշակային ապահովությունը.

2) պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը.

3) կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը:

2. Պետական կենսաթոշակային ապահովությանը, պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին և կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3. Պետական կենսաթոշակային ապահովությունը (այսուհետ նաև՝ պետական կենսաթոշակային համակարգ) պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով անձանց ապահովում է պետական կենսաթոշակով:

4. Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է կուտակային կենսաթոշակով:

5. Կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը օրենքով սահմանված կամավոր կուտակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների կամ ապահովագրական վճարների հաշվին անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում ապահովում է լրացուցիչ կենսաթոշակով (եկամտով):

Հոդված 2. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

2. Քաղաքացիների առանձին խմբերի համար Հայաստանի Հանրապետության օրենքով կարող են սահմանվել պետական կենսաթոշակային ապահովության այլ պայմաններ:

Հոդված 3. Պետական կենսաթոշակային ապահովության իրավական կարգավորումը

1. Պետական կենսաթոշակային ապահովության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 4. Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքները

1. Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներն են՝

1) կենսաթոշակի իրավունքի իրականացումն ապահովելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

2) պետական կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը և զարգացումն ապահովելը.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

3) սոցիալական համերաշխություն և սոցիալական արդարություն ապահովելը.

4) կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը:

Հոդված 5. Կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը

1. Կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ նաև՝ լիազոր մարմին) սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 6. Կենսաթոշակ վճարելու միջոցները

1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Հոդված 7. Կենսաթոշակի իրավունքը և կենսաթոշակ ստանալու իրավունքը

1. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ:

Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կենսաթոշակի և կենսաթոշակ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածում: Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա մշտապես կամ առավելապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով) և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից:

2. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (այսուհետ՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում), և նրան նշանակվել է կենսաթոշակ (այսուհետ՝ կենսաթոշակառու):

3. Պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

4. Անձին սոցիալական կենսաթոշակ չի նշանակվում, եթե նա ունի սույն օրենքով սահմանված աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք:

Հոդված 8. Կենսաթոշակի տեսակները

Սույն օրենքով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝
1) տարիքային,
2) արտոնյալ պայմաններով,
3) երկարամյա ծառայության,
4) հաշմանդամության,
5) կերակրողին կորցնելու դեպքում,
6) մասնակի.
2. զինվորական՝
1) երկարամյա ծառայության,
2) հաշմանդամության,
3) կերակրողին կորցնելու դեպքում.
3. սոցիալական՝
1) ծերության,
2) հաշմանդամության,
3) կերակրողին կորցնելու դեպքում:

ԳԼՈՒԽ 2
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 9. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ:

2. 63 տարին լրացած անձին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է նաև 25 տարվա աշխատանքային ստաժից պակաս ստաժի առկայության դեպքում, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

Սույն մասով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը սահմանվում է ըստ հետևյալ սանդղակի.

Կենսաթոշակի անցնելու տարեթիվը	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ. և հետո
Աշխատանքային ստաժը	6 տարի	7 տարի	8 տարի	9 տարի	10 տարի

3. Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակվում է, եթե անձն ունի առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ և չի աշխատում:

4. Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

5. Տարիքային աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հոդված 10. Արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ (թիվ 1 ցուցակով) նշանակվում է 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Կանանց, մինչև սույն մասով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը, կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվ	Տարիք	Կենսաթոշակի անցնելու տարեթիվ
01.07.1958 - 31.12.1958	53	2011
01.01.1959 - 30.06.1959	53,5	2012
01.07.1959 - 31.12.1959	54	2013
01.01.1960 - 30.06.1960	54,5	2014
01.07.1960 - 31.12.1960	55	2015

2. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ (թիվ 2 ցուցակով) նշանակվում է 59 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Կանանց, մինչև սույն մասով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը, կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվ	Տարիք	Կենսաթոշակի անցնելու տարեթիվ
01.07.1953 - 31.12.1953	58	2011
01.01.1954 - 30.06.1954	58,5	2012
01.07.1954 - 31.12.1954	59	2013

3. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 45 տարին լրացած և առնվազն 20 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ ունեցող՝ հիպոֆիզարային թզուկությամբ հիվանդ (լիլիպուտ) անձին:

4. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 1 և թիվ 2 ցուցակները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է քաղաքացիական ավիացիայի՝

1) թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին և բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, և նրանք ծառայել են առնվազն 25 օրացուցային տարի, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատված անձին՝ եթե նա ծառայել է առնվազն 20 օրացուցային տարի.

2) օդային երթևեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողին, եթե լրացել է նրա 50 տարին, և նա ծառայել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 15 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթևեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթևեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին՝ եթե լրացել է նրա 50 տարին, և նա ծառայել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 10 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթևեկության կառավարման աշխատանք.

3) ինժեներատեխնիկական ծառայության աշխատողին, եթե լրացել է նրա 55 տարին, և նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

2. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

3. Սույն հոդվածով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին, եթե հաշմանդամություն սահմանելու կամ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու ժամանակ անձն ունեցել է հետևյալ աշխատանքային ստաժը.

Տարիքային խումբը	Աշխատանքային ստաժը՝ օրացուցային տարիներով
մինչև 23	2 տարի
23 – 26	3 տարի
26 – 29	4 տարի
29 – 32	5 տարի
32 – 35	6 տարի
35 – 38	7 տարի
38 – 41	8 տարի
41 – 44	9 տարի
44-ից բարձր	10 տարի

2. Աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ճանաչված անձին հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է անկախ աշխատանքային ստաժից:

3. Հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 13. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի ընտանիքի հետևյալ անդամներին.

1) 18 տարին չլրացած երեխային.

2) 18 տարին չլրացած եղբորը, քրոջը և թոռանը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում.

3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակին, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը, ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում և չի աշխատում.

4) տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ծնողներին, ամուսնուն, եթե չեն աշխատում.

5) ամուսնուն կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվածով կենսաթոշակի իրավունք ունեցող երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով և չի աշխատում.

6) պապին և տատին, եթե նրանք չեն աշխատում և չունեն զավակներ կամ զավակներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում նշված անձանց կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ մահացած կերակրողի խնամքի տակ եղած լինելու հանգամանքից:

Ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև նրա 23 տարին լրանալը:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերում նշված անձանց և 5-րդ կետում նշված՝ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվում, եթե նրանք, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կերակրողի մահվան օրվա դրությամբ համատեղ բնակվել են նույն բնակության վայրում (հասցեում):

2. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև որդեգրվելու դեպքում:

3. Որդեգրողը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի հարազատ ծնողին հավասար, իսկ որդեգրվածը՝ հարազատ երեխային հավասար: Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող որդեգրվածը որդեգրողի մահվան դեպքում կենսաթոշակի ընտրության իրավունք ունի:

4. Խորթ հայրը և խորթ մայրը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ հորը և հարազատ մորը հավասար, եթե մահացած խորթ որդուն կամ խորթ դստերն անչափահաս տարիքում խնամել են առնվազն 5 տարի:

Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ որդուն և հարազատ դստերը հավասար:

5. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն նաև մահացած ճանաչված անձի ընտանիքի՝ սույն հոդվածում նշված անդամները: Մահացած ճանաչված անձի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակելիս այդ անձի մահվան օր է համարվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռում նշված մահվան օրը, իսկ եթե դատարանի վճռում նշված չէ անձի մահվան օրը, ապա նրան մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը:

6. Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր անդամներին նշանակվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ:

7. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը մահվան օրվա դրությամբ ունեցել է սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը:

8. Հաշմանդամ ճանաչված անձի մահանալու դեպքում նրա ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին կենսաթոշակ նշանակվում է, եթե կերակրողը մահվան օրվա դրությամբ ունեցել է սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ստաժը:

Աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով մահացած անձի ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին կենսաթոշակ է նշանակվում՝ անկախ մահացած անձի աշխատանքային ստաժի տևողությունից:

9. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է կենսաթոշակի իրավունքն ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 14. Մասնակի կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է՝

1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է.

2) թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեցել են առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ), և լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

2. Մասնակի կենսաթոշակը հաշվարկվում է մասնագիտական աշխատանքային ստաժին համամասնորեն:

3. Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները:

Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:

4. Մասնակի կենսաթոշակը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

Հոդված 15. Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի և կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Կ=Հ+ (Ս X Ա) X Գ, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

2. Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկելիս հիմք է ընդունվում տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող 25 տարվա աշխատանքային ստաժը:

Մինչև 25 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար գործակիցը սահմանվում է 0,04, իսկ 25 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է՝

ա) մինչև 25 տարվա (ներառյալ) ստաժի առկայության դեպքում՝ Գ=0,04 X U բանաձևով,

բ) 25 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1+0,02 X (U-25) բանաձևով:

3. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության՝ մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները, բացառությամբ կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկելու դեպքի:

4. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս հիմնական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսի չափով.

3) երրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

5. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 40 տոկոսը:

Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկին գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 40 տոկոսը:

Երկու ծնողին կորցրած և առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող 18-ից մինչև 23 տարեկան զավակի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով:

Հոդված 16. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը

1. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը չեն կարող պակաս լինել հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի՝ նախկինում սահմանված չափերից:

ԳԼՈՒԽ 3
ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 17. Զինվորական կենսաթոշակի իրավունքը

1. Զինվորական կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը.

2) վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը:

Հոդված 18. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի

հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ՝ զինծառայող), որը՝

1) զինվորական ծառայությունից (այսուհետ նաև՝ զինծառայություն) սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ.

2) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս.

3) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

2. Զինծառայողին կենսաթոշակ է նշանակվում զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

3. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հոդված 19. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված զինծառայողին՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի զինվորական ծառայության ստաժի (այդ թվում՝ արտոնյալ հաշվարկով) յուրաքանչյուր լրիվ տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակին ավելանում է ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 2 տոկոսը, իսկ մինչև զինվորական ծառայությունն աշխատած և զինվորական ծառայություն չհամարվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը.

2) սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված զինծառայողին՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 65 տոկոսի չափով. 12 տարի 6 ամսից ավելի զինվորական ծառայության յուրաքանչյուր լրիվ տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակին ավելանում է ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի մեկ տոկոսը, բայց հինգ տոկոսից ոչ ավելի: 25 տարուց ավելի աշխատանքային ստաժի (ներառյալ՝ արտոնյալ հաշվարկով զինվորական ծառայության ստաժը) յուրաքանչյուր լրիվ տարվա համար երկարամյա ծառայության կենսաթոշակին ավելանում է դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի մեկ տոկոսը:

2. Զինվորական կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի չափը:

3. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք տվող 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողի ամսական դրամական բավարարմանը տրվում է հավելում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

Հոդված 20. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված այն զինծառայողին, որը հաշմանդամ է ճանաչվել զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն զինծառայության ժամանակ ծագած հիվանդության հետևանքով, այդ ժամկետից ուշ, սակայն զինծառայության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով:

2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ զինվորական ծառայության տևողությունից:

3. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 21. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 70 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 150 տոկոսից ոչ պակաս.

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 60 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 110 տոկոսից ոչ պակաս.

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ ամսական դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 40 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից ոչ պակաս:

2. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը կազմում է սույն հոդվածով սահմանված՝ կենսաթոշակի նվազագույն չափի մեկուկեսապատիկը:

Հոդված 22. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված անդամներին՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառից, անցած ժամանակաշրջանից և ծառայության տևողությունից:

2. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև՝

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողի ընտանիքի անդամների վրա, որի մահվան պատճառը զինծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ ծագած հիվանդությունը.

2) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամների վրա:

3. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի ընտանիքի անդամներին:

Հոդված 23. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) յուրաքանչյուր երեխայի համար՝ մահացած կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 40 տոկոսի չափով.

2) երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար՝ կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 60 տոկոսի չափով, սակայն օրենսդրությամբ սահմանված հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկից ոչ պակաս.

3) ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր մյուս անդամի համար՝ կերակրողի դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարի 30 տոկոսի չափով:

2. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի 150 տո-

կոսի չափով, իսկ երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի համար՝ հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով:

3. Երկու ծնողին կորցրած և առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող 18-ից մինչև 23 տարեկան զավակի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան երեխայի կենսաթոշակը հաշվարկելու համար սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 24. Ամսական դրամական բավարարումը որոշելու կարգը

1. Զինծառայողին սույն օրենքով կենսաթոշակ նշանակելիս կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք են ընդունվում նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարումը և սննդի փոխհատուցման գումարը:

2. Դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Հոդված 25. Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակվում է 65 տարին լրացած և աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձին:

2. Ծերության կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

3. Ծերության սոցիալական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

Հոդված 26. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Սույն օրենքով սահմանված՝ հաշմանդամության աշխատանքային կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամին, ինչպես նաև հաշմանդամ երեխա ճանաչված անձին նշանակվում է հաշմանդամության սոցիալական կենսաթոշակ:

2. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 27. Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը

1. Սույն օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կամ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձին նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ:

2. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 28. Սոցիալական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը

1. Ծերության սոցիալական կենսաթոշակը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

2. Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի հաշմանդամի և հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ հիմնական կենսաթոշակի 140 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսի չափով.

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ հիմնական կենսաթոշակի 100 տոկոսի չափով:

3. Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափով:

Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով:

Երկու ծնողին կորցրած և առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող 18-ից մինչև 23 տարեկան զավակի՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5
ՍՏԱԺՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՍՏԱԺԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 29. Աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները

1. Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության, գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), 2013 թվականի հունվարի 1-ից հետո քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու և այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաև ԽՍՀՄ տարածքում աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածները.

2) անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածները.

3) սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված զինվորական ծառայության ժամանակահատվածը (բացառությամբ ուսումնական հաստատությունում ուսման ժամանակահատվածի).

4) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող՝ հաշմանդամ ճանաչված անձի հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածը՝ մինչև նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

2. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև՝

1) գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը.

2) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի.

3) ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած վայրերում (զորամասերում) ծառայող՝ զինծառայող ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածը՝ ութ տարուց ոչ ավելի.

5) օտարերկրյա պետությունում գործող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնած ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածը՝ հինգ տարուց ոչ ավելի.

6) ուսումնական հաստատություններում, բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի.

7) բռնադատված կամ քրեական հետապնդման ենթարկված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված անձի՝ կալանքի տակ գտնվելու, ազատազրկման վայրերում և աքսորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածները՝ եռակի չափով՝ սկսած 14 տարեկանից.

8) սույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամանակահատվածները:

3. Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետությունում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, արտոնագրային վճար վճարելու, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր լինելու ժամանակահատվածները հաշվառվում են աշխատանքային ստաժում, եթե՝

1) անձը ենթակա է եղել պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության և ստացել է աշխատավարձ.

2) անձը ենթակա է եղել պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության և վճարել է պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, իսկ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճար):

4. 2013 թվականի հունվարի 1-ից հետո Հայաստանի Հանրապետությունում գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու, անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածները հաշվառվում են աշխատանքային ստաժում, եթե ըստ սույն օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների՝

1) անձը ստացել է աշխատավարձ (եկամուտ).

2) անձը վճարել է եկամտային հարկ:

Հոդված 30. Աշխատանքային ստաժը հաշվարկելու առանձնահատկությունները

1. Քաղաքացիական ավիացիայի թռիչքաիրամանատարական, թռիչքաիրահանգչական, թռիչքային անձնակազմերի անդամներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվարկվում են՝

1) մխոցային օդանավերով կատարած յուրաքանչյուր 20 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ստաժ.

2) ռեակտիվ օդանավերով, ուղղաթիռներով, հատուկ կիրառման ավիացիայում (սանիտարական թռիչքներ, ավիաքիմիական աշխատանքներ, ավիալուսանկարահանում, պարեկություն, մթնոլորտի զոնդում և այլ տեսակի աշխատանքներ), այլ պետությունների օդանավերին ուղեկցող խմբերի թռիչքաիրամանատարական, թռիչքաիրահանգչական, թռիչքային անձնակազմի անդամների պաշտոններում աշխատելու, ինչպես նաև ավիացիայի թռիչքային անձնակազմի կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորելու ժամանակ կատարած յուրաքանչյուր 12 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ստաժ.

3) վթարային-փրկարարական (որոնողական-փրկարարական) ստորաբաժանումներում օդանավերի թռիչքային անձնակազմում մեկ տարվա աշխատանքը՝ որպես մեկուկես տարվա ստաժ.

4) ԴՕՍԱԱՖ-ի ուսումնական և սպորտային ավիացիայի կազմակերպությունների թռչող անձնակազմի պաշտոններում կատարած մեկ տարվա ծառայությունը՝ որպես մեկուկես տարվա ստաժ, եթե կատարվել է ուսումնաթռիչքային պատրաստման պլանը, որպես երկու տարվա ստաժ, եթե կատարվել են թռիչքային բարդ կամ բարձրակարգ հնարքներ.

5) պարաշյուտիստների և փրկարարների մեկ տարվա ծառայությունը՝ որպես մեկուկես տարվա ստաժ, եթե կատարվել է մխոցային օդանավերից, ուղղաթիռներից, դիրիժաբլներից և աերոստատներից թռչելու, տասը մետրից ոչ պակաս բարձրության վրա կախման ռեժիմում գտնվող ուղղաթիռներից հատուկ իջեցնող հարմարանքներով վայրէջքի տարեկան նորման, որպես երկու տարվա ստաժ, եթե կատարվել է ռեակտիվ ինքնաթիռներից և ուղղաթիռներից թռչելու տարեկան նորման:

2. Բորտօպերատորների և բորտուղեկցորդների աշխատանքային ստաժը հաշվարկվում է փաստացի թռիչքային ժամերը սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված թռիչքի ժամերի (համապատասխանաբար՝ 20-ի և 12-ի) վրա բաժանելու միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով սահմանված ծառայության ժամկետների արտոնյալ հաշվարկման իրավունք տվող պայմանները չկատարելու դեպքում մեկ տարվա ծառայությունը հաշվարկվում է որպես մեկ տարվա ստաժ:

4. Թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերում ծառայելու ժամանակաշրջանի մեջ հաշվառվում են նաև զինված ուժերի թռիչքային և թռիչքափորձարկման անձնակազմերի պաշտոններում աշխատելու ժամանակահատվածները:

Օդային երթևեկության կառավարման ծառայությունում աշխատելու ժամանակաշրջանի մեջ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվառվում են նաև թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերում ծառայելու ժամանակահատվածները:

Ինժեներատեխնիկական ծառայությունում աշխատելու ժամանակաշրջանի մեջ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվառվում են նաև թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմերում ծառայելու և օդային երթևեկության կառավարման ծառայությունում աշխատելու ժամանակահատվածները:

5. Թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում հաշվառվում է նաև թիվ 1 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող՝ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած ժամանակահատվածը:

6. Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու, անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու ժամանակահատվածները, սկսած 2013 թվականի հունվարի 1-ից, աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձ ստացող վարձու աշխատողի կողմից կատարվող տարեկան նվազագույն եկամտային հարկի չափով վճարումներ կատարած լինելու դեպքում: Տվյալ տարվա ընթացքում սահմանված չափից պակաս եկամտային հարկ վճարած լինելու դեպքում աշխատանքային ստաժը համամասնորեն պակասեցվում է:

Հոդված 31. Զինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվարկելու առանձնահատկությունները

1. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝

1) համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

2) ԽՍՀՄ զինված ուժերում, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության համակարգերում զինվորական ծառայության, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

3) դատապարտված կամ քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողների՝ կալանքի տակ, ազատազրկման վայրում և աքսորում գտնվելու ժամանակաշրջանները, որոնց նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ ընդունվել քրեական գործը կարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով:

2. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում զինվորական ծառայության ստաժում հաշվառվում են՝

1) եռակի չափով՝

ա. զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինվորական ծառայությունը՝ հատուկ մարտական առաջադրանք կատարելու դեպքում,

գ. 1986 թվականի ապրիլի 26-ից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

դ. սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածը,

ե. մարտական գործողություններ կամ հատուկ առաջադրանք կատարելիս վիրավորված, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստացած զինծառայողների անընդհատ բուժման ժամանակահատվածը,

զ. զինծառայությունն այլ երկրների տարածքներում, որտեղ տեղի են ունեցել մարտական գործողություններ (բացի այն զինծառայողներից, ովքեր զինծառայությունից արձակվել են կամ այդ պետություններից հետ են կանչվել զինծառայողի կոչումը վարկաբեկող արարքների կապակցությամբ), ինչպես նաև այդ երկրներում վիրավորվելու, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստանալու կապակցությամբ բուժհիմնարկներում անընդհատ բուժման ժամանակահատվածը,

է. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

2) կրկնակի չափով՝

ա. զինված ուժերի ավիացիոն ստորաբաժանումների օդաչուների ծառայության ժամանակահատվածը՝ թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում,

բ. գերության ժամանակահատվածը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում Հայաստանի Հանրապետության դեմ հանցագործություն չի կատարել,

գ. 1961 թվականի հունվարի 1-ից մինչև 1982 թվականի դեկտեմբերի 31-ը զինվորական մասնագետների (բացի օդաչուներից)՝ այն երկրներ գործուղվելու ժամանակահատվածը, որոնց բանակները մարտական գործողություններ են կատարել կամ ռազմական օգնություն են ցույց տվել այլ երկրների (անկախ այդ մարտական գործողություններին նշված զինծառայողների մասնակցությունից),

դ. 1976 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 2500 մետր և ավելի, իսկ 1997 թվականի օգոստոսի 11-ից՝ 2000 մետր և ավելի բարձրության բարձրլեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

3) մեկուկեսի չափով՝

ա. պարաշյուտիստների ծառայության ժամանակահատվածը՝ համապատասխան մարմինների սահմանած թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում, և սակրավորների ծառայության ժամանակահատվածը,

բ. հատուկ ստորաբաժանումներում զինծառայող կանանց ծառայության ժամանակահատվածը՝ ըստ համապատասխան մարմինների սահմանած պաշտոնների ցանկի,

գ. զինծառայության ժամանակահատվածն այն վայրերում, որտեղ արտակարգ դրություն է հայտարարվել,

դ. 1992 թվականի փետրվարի 1-ից մինչև 1994 թվականի մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը,

ե. 1973 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1700-2000 մետր բարձրության լեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

զ. 1988 թվականի հունվարի 1-ից մինչև 1990 թվականի դեկտեմբերի 1-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

է. ազգային անվտանգության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի «Ա» ստորաբաժանումում զինծառայության ժամանակահատվածը,

ը. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

4) այլ բնույթի գործունեության մեկ ամսվա ժամանակահատվածը՝ որպես մեկ ամսվա զինվորական ծառայություն՝

ա. մինչև զինվորական ծառայության անցնելը ԽՍՀՄ ԴՕՍԱԱՖ-ի և քաղաքացիական ավիացիայի համակարգերի օդաչուական և ինժեներատեխնիկական անձնակազմի անդամի աշխատանքային ստաժը,

բ. Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչված, սպայական կոչում ստացած և սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած սպաների՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորելու ժամանակահատվածը.

5) այլ բնույթի գործունեության մեկ տարվա ժամանակահատվածը՝ որպես 6 ամսվա զինվորական ծառայություն՝

ա. պահեստից զորակոչված սպայական անձնակազմի զինծառայողի՝ մինչև զինծառայության անցնելը բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսման ժամանակահատվածը՝ 5 տարուց ոչ ավելի,

բ. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորած, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչված, սպայական կոչում ստացած ու սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած զինծառայողների ուսման ժամանակահատվածը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 32. Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը և ստաժը հաշվառելու կարգը

1. Մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը:

Սոցիալական վճարներ կատարելը և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաստատվում է սույն օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների հիման վրա:

3. Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

4. Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

5. Պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է աշխատանքային ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են գործադիր իշխանության, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների լիազորած ներկայացուցիչներ:

6. Աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 6
ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ՎՃԱՐԵԼԸ

Հոդված 33. Կենսաթոշակ նշանակելը

1. Կենսաթոշակը անձի, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում անձի մշտական բնակության վայրի (հասցեի) մասին տվյալների:

2. Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմում ներկայացնելու օրը: Դիմումին կցվում են օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե դիմումի հետ ներկայացվում են անհրաժեշտ ոչ բոլոր փաստաթղթերը, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ընդունում է դիմումը և դիմողին գրավոր տեղեկացնում, թե ինչ փաստաթղթեր պետք է լրացուցիչ ներկայացվեն:

Եթե անձը դիմումին չի կցում սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, ապա սոցիալական վճար կատարած լինելու մասին տեղեկանքը ձեռք է բերում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Տեղեկացվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու դեպքում դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում դիմումն ընդունելու օրը:

4. Կենսաթոշակ նշանակելու դիմումն անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով ընդունելուց կամ երեք ամսվա ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դրանք քննարկում է և կայացնում կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում:

Կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելու դեպքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, կազմում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ:

Կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում կայացնելու դեպքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է դիմողին՝ նշելով մերժելու պատճառը և մերժումը բողոքարկելու կարգը:

5. Կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում կայացվում է, եթե՝

1) անձը չունի կենսաթոշակի իրավունք.

2) անձը, ըստ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, չունի Հայաստանի Հանրապետությունում բնակության վայր (հասցե).

3) անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

6. Կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 34. Կենսաթոշակ նշանակելու ժամկետները

1. Կենսաթոշակ նշանակվում է՝

1) դիմելու օրվանից.

2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում.

3) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում.

4) զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Հոդված 35. Կենսաթոշակ վճարելը

1. Յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

2. Կենսաթոշակը վճարվում է լիազոր մարմնի հետ կենսաթոշակների վճարման ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքած կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած այլ կազմակերպության միջոցով:

Կենսաթոշակների վճարման ծառայություններ մատուցելու պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Կենսաթոշակ վճարելու ծախսերը կատարվում են պետական բյուջեում այդ նպատակով նախատեսված միջոցներից:

4. Կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելն է:

5. Կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

6. Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով բանկին ներկայացնել իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ ներկայանալ բանկ և հայտարարություն տալ իր ողջ լինելու մասին:

Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված փաստաթուղթը կամ հայտարարությունը կենսաթոշակառուն ներկայացնում է նախորդ տարվա ընթացքում այն ներկայացնելու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար վճարված կենսաթոշակի գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

7. Հաշմանդամության խումբը փոխվելու, ինչպես նաև «հաշմանդամ երեխա» կարգավիճակի փոխարեն հաշմանդամության խումբ ձեռք բերելու դեպքում կենսաթոշակը նոր չափով վճարվում է այդ հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության ներկայանալու և վերափորձաքննությամբ հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից: Վերափորձաքննությամբ վերստին հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակն այդ ժամանակահատվածի համար վճարվում է նախկին հաշմանդամության խմբի համար հաշվարկված կենսաթոշակի չափով:

8. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը վճարվում է ընտանիքի՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմած գործունակ չափահաս անդամին:

Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր անդամներին վճարվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ: Ընտանիքի անդամի պահանջով նրա կենսաթոշակը վճարվում է առանձին՝ այդ մասին դիմում տալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անդամների թիվը փոխվելիս կենսաթոշակի չափը փոխվում է այդ թվին համապատասխան:

9. Կենսաթոշակը վճարվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագիրը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում:

Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով:

Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում կենսաթոշակառուին մինչ այդ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նաև այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով:

Մեկ լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածի կենսաթոշակի գումար՝ սկսած կենսաթոշակ չվճարված ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը:

Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսից հետո կենսաթոշակի գումարը տվյալ լիազորագրով չի վճարվում:

Դադարեցված կենսաթոշակի վճարումը լիազորագրով չի վերսկսվում, բացառությամբ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքերի, երբ սույն օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով վճարվում է կենսաթոշակառուին մինչ այդ չվճարված կենսաթոշակի գումարը:

Հոդված 36. Չվճարված կենսաթոշակի գումարը վճարելը

1. Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

2. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակի իրավունք է ունեցել:

3. Չվճարված կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան դարձած անչափահաս երեխային՝ անկախ կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) բնակվելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամի՝ եթե նա, ըստ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ բնակվել է նույն վայրում (հասցեում):

Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այդ ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման:

4. Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

5. Չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 37. Կենսաթոշակի տեսակը փոխելը

1. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, մինչև կենսաթոշակառուի տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելը, նրա ցանկությամբ փոխում է կենսաթոշակի տեսակը:

2. Սույն օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, մասնակի, երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմելուց, նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա:

3. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակի տեսակ փոխելու հանգամանքներ առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի տեսակը փոխելիս կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը հաշվառվում է նույնությամբ:

Հոդված 38. Կենսաթոշակը վերահաշվարկելը

1. Աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել են հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը.

2) կենսաթոշակառուն ներկայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք՝ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ.

3) կենսաթոշակառուն ներկայացրել է մինչև կենսաթոշակ նշանակելը (վերահաշվարկելն) ընկած ժամանակահատվածի վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր:

Քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական, թռիչքային անձնակազմերի անդամների, բորտօպերատորի, բորտուղեկցորդի, կարգավարի (դիսպետչերի) երկարամյա ծառայության կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե նա ներկայացնում է թռիչքային կամ օդային երթևեկության կառավարման աշխատանքներին ոչ պիտանի ճանաչված լինելու մասին թռիչքաբժշկական փորձագիտական հանձնաժողովի տված՝ օրենսդրությամբ սահմանված ձևի տեղեկանք:

2. Սոցիալական կենսաթոշակը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:

3. Զինվորական կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել է զինծառայողների դրամական բավարարման կամ հիմնական կենսաթոշակի չափը.

2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվել է սույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով: Այս դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է գրավոր դիմելու դեպքում՝ հաշվի առնելով վերջին զինծառայությունից արձակվելու օրվա դրությամբ զինծառայողի ունեցած զինվորական ծառայության ստաժը և ամսական դրամական բավարարման ու սննդի փոխհատուցման գումարը:

4. Կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակը վերահաշվարկելու հանգամանքներ առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով սահմանված դեպքերում՝ տվյալ ամսվա 1-ից:

Հոդված 39. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ նշանակելը և վճարելը

1. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություն ընդունելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպության ղեկավարը տվյալ վարչական տարածքը սպասարկող կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանն այդ մասին գրավոր տեղեկացնում է՝ նշելով այդ անձի անունը, ազգանունը, հայրանունը և բնակության վայրի հասցեն: Եթե անձը կենսաթոշակի իրավունք ունի, սակայն նրան կենսաթոշակ չի նշանակվել, ապա կազմակերպության ղեկավարը տասը աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նրան կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը և ներկայացնում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում:

2. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (մանկատանը) ապրող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի 50 տոկոսը:

Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում և երեխայի 18 տարին լրանալու կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում վճարվում միանվագ կարգով:

3. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին վճարվում է նշանակված կենսաթոշակի աշ-

խատանքային մասը, իսկ այդ կազմակերպությունում ապրող՝ զինվորական կենսաթոշակ ստացողներին՝ նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը:

4. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի կենսաթոշակը նշանակվում և վճարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 40. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելը և վճարելը

1. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձն իրեն կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու համար գրավոր դիմում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարին:

Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը պատիժը կրող անձի գրավոր դիմումի հիման վրա տասը աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նրան կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը և ներկայացնում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմին:

2. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նրան բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 41. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը և վերսկսելը

1. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.

2) հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում.

3) կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրավունքը կորցնելու դեպքում.

4) սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում.

5) սույն օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում.

6) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

8) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում).

9) օտարերկրյա քաղաքացուն կամ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում.

10) կենսաթոշակի իրավունքը կորցնելու կամ կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.

11) Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու դեպքում:

Սույն մասում նշված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Առկա (ցերեկային) ուսուցմամբ ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից:

2. Կենսաթոշակ վճարելը դադարեցվում է՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում.

2) կենսաթոշակառուին (կամ նրա փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

3) սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով փաստաթուղթ չներկայացնելու կամ հայտարարություն չտալու դեպքում:

Կենսաթոշակ վճարելը դադարեցվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելու օրվանից, իսկ սույն մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված դեպքերում՝ այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

3. Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է՝

1) կենսաթոշակառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնելու և գրավոր դիմելու դեպքում՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից.

2) 18 տարին լրացած անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից, եթե ուսման մասին ուսումնական հաստատությունից տեղեկանք է ներկայացվում այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո տեղեկանք ներկայացնելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

3) սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով նշանակված կենսաթոշակը ստանալու իրավունքը սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հիմքով դադարեցված լինելու դեպքում՝

ա. տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալուն հաջորդող ամսվա 1-ից,

բ. աշխատանքից ազատվելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

4) հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ դադարեցնելու օրվանից, իսկ հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձի հաշմանդամությունը հաստատող տեղեկանքի հիման վրա.

5) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին բնակվելու իրավունք ձեռք բերելու մասին փաստաթուղթը ներկայացնելու դեպքում՝ բնակության իրավունք ձեռք բերելու օրվանից.

6) սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայությունից արձակվելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի կամ դատավորի պաշտոնից ազատվելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ արձակվելու կամ ազատվելու օրվանից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

7) հաշմանդամության ժամկետը լրանալուց տասներկու ամիս հետո հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը ներկայացվել է հաշմանդամ ճանաչվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու օրվանից:

Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում տվյալ կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում: Այս դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝ հաշվի առնելով սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը, իսկ զինվորական կենսաթոշակի դեպքում՝ դրամական բավարարման կամ հիմնական կենսաթոշակի չափը:

4. Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 3-րդ կետի «բ» ենթակետի, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի հիման վրա վերականգնվելու կամ կենսաթոշակ վճարելը սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ.

2) կենսաթոշակ ստանալու իրավունքը սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի հիման վրա վերականգնվելու դեպքում՝ անձի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ 3-րդ մասի 4-րդ կետի հիման վրա վերականգնվելու դեպքում՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից անձի հաշմանդամությունը հաստատող տեղեկանք ստանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) կենսաթոշակ վճարելը սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթուղթը ներկայացնելու կամ հայտարարությունը տալու մասին բանկից տեղեկատվություն ստանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե այդ տեղեկատվությունը ստացվել է կենսաթոշակ վճարելը դադարեցնելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում:

Սույն մասով սահմանված դեպքում կենսաթոշակի վճարումը կատարվում է սույն օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 42. Բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակ վճարելը

1. Բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթոշակառուի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակը վճարում է նախկին բնակության վայրից նրա կենսաթոշակի գործն ստանալուց հետո: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից:

2. Կենսաթոշակի գործը տեղափոխվում է բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման պահանջագրով, կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ տասնօրյա ժամկետում:

3. Կենսաթոշակի գործն ուղարկող կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը գործի հետ ուղարկում է նաև կենսաթոշակի վերջին վճարման մասին տեղեկանք:

Հոդված 43. Կենսաթոշակից պահումներ կատարելը

1. Կենսաթոշակից պահումներ կարող են կատարվել՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների հիման վրա.

2) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ընտանիքի անդամների թվի փոփոխությունների, ինչպես նաև կենսաթոշակառուի՝ սույն օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով նրան ավել վճարված գումարները հետ գանձելու մասին բնակության վայրի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշման հիման վրա, սակայն նշանակված կենսաթոշակի 15 տոկոսից ոչ ավելի:

2. Կենսաթոշակից կատարվող պահումների չափը հաշվարկվում է կենսաթոշակառուին վճարվելիք ամսական գումարից:

3. Կենսաթոշակից կատարվող պահումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կենսաթոշակի 30 տոկոսը:

Հոդված 44. Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ վճարելը

1. Կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև հաշմանդամ ճանաչված անձի՝ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ:

2. Բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված, բայց կենսաթոշակ նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ, եթե հաշմանդամը մահացել է հաշմանդամ ճանաչվելու օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

3. Ծառայությունից սահմանված կարգով արձակված, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց կամ հաշմանդամ ճանաչվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ:

4. Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ կազմակերպությունը:

5. Թաղման նպաստը վճարվում է գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Այդ գումարը վճարվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

6. Թաղման նպաստ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից:

ԳԼՈՒԽ 7
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդված 45. Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ստեղծելու նպատակը

1. Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան (այսուհետ՝ շտեմարան) ստեղծելու նպատակն է ապահովել անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացումը:

Հոդված 46. Շտեմարան ներառվող տվյալները

1. Շտեմարանը ներառում է՝

1) ֆիզիկական անձանց, ինչպես նաև կենսաթոշակառուներին վերաբերող հետևյալ տվյալները.

ա. ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը և տարին, անձի մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը և տարին,

բ. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) սերիան ու համարը, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը,

գ. սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում),

դ. սեռը,

ե. բնակության վայրի հասցեն,

զ. քաղաքացիությունը,

է. աշխատանքային ստաժում հաշվառվող՝ օրենքով սահմանված այլ գործունեության ժամանակահատվածներին վերաբերող տվյալները,

ը. վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի, թաղման նպաստի գումարների չափերը, այդ գումարները վճարելու օրը, ամիսը և տարին.

2) վարձու աշխատողի դեպքում նաև՝

ա. աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու օրը, ամիսը, տարին,

բ. աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք համարվող փաստաթղթերի (պայմանագրի, հրամանի և այլնի) տվյալները, մասնագիտությունը (պաշտոնը), արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության ժամանակահատվածներին վերաբերող տվյալները,

գ. գործատուի (գործատուների)՝ հարկ վճարողի հաշվառման համարը, լրիվ անվանումը, գտնվելու վայրի կամ պետական գրանցման վայրի հասցեն, պետական ռեգիստրում գրանցվելու օրը, ամիսը, տարին և գրանցման համարը,

դ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը՝ ըստ գործատուների և ամիսների.

3) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում նաև՝

ա. պետական գրանցման օրը, ամիսը և տարին, պետական ռեգիստրում գրանցվելու համարը, ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու օրը, ամիսը և տարին,

բ. ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու) և ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնից ստանալու) օրը, ամիսը և տարին,

գ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած եկամտային հարկի չափը, հարկը վճարելու օրը, ամիսը և տարին.

4) նոտարի դեպքում նաև՝

ա. պաշտոնի նշանակվելու և պաշտոնից ազատվելու օրը, ամիսը և տարին,

բ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը, հարկը վճարելու օրը, ամիսը և տարին.

5) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստացողների դեպքում՝ նաև եկամուտ ստանալու ժամանակահատվածը, եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը, հարկը վճարելու օրը, ամիսը և տարին.

6) արտոնագրային վճար վճարողների դեպքում՝ նաև հարկային մարմնում գրանցվելու օրը, ամիսը և տարին, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը:

2. Շտեմարանը ներառում է նաև կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարին, կենսաթոշակի չափը, ինչպես նաև կենսաթոշակառուներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած տվյալները:

Հոդված 47. Շտեմարանը ձևավորելը և վարելը

1. Շտեմարանը ձևավորվում է հարկային մարմնից, պետական կառավարման և այլ մարմիններից ստացված և անձանց՝ կենսաթոշակ նշանակելու համար կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացրած տվյալներից:

2. Շտեմարանը վարում է լիազոր մարմինը:

3. Շտեմարանը ձևավորելու և վարելու, հարկային մարմնից սույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տվյալները ստանալու, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տվյալներ ստանալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Շտեմարան ներառված տվյալները պաշտպանվում են օրենքով:

ԳԼՈՒԽ 8
ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 48. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմինը՝

1) մշակում և վարում է պետական կենսաթոշակային ապահովության միասնական քաղաքականությունը.

2) վերահսկում է պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունը.

3) իրականացնում է կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) և վճարելու մեթոդական ղեկավարումը.

4) կազմում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի զարգացման պետական համապատասխան ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.

5) գործատուներից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքում՝ ստուգում դրանց հավաստիությունը.

6) հարկային մարմնից ստանում է շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով ստուգում դրանց հավաստիությունը.

7) առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին՝ շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու և դրանք փոփոխելու համար.

8) իր լիազորությունների շրջանակում քննարկում է կենսաթոշակային օրենսդրության խախտումները.

9) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակները, ապահովում կենսաթոշակների վճարումը կամ մերժում կենսաթոշակ նշանակելու, նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումները.

10) վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին.

11) օրենքով սահմանված կարգով քննարկում է կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու մասին դիմումները.

12) կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կենսաթոշակառուին անվճար տրամադրում է կենսաթոշակի վկայական, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

13) կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

14) համագործակցում է համապատասխան հասարակական ու միջազգային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ.

15) վարում է կենսաթոշակային ապահովության կայքէջը.

16) կատարում է սույն օրենքի դրույթներից և իրավական այլ ակտերից բխող այլ գործառույթներ:

2. Շտեմարանը վարելու, գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին շտեմարանից տվյալներ տրամադրելու, շտեմարան ներառվող տվյալները փոփոխելու համար առաջարկություններ ներկայացնելու, կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալների հավաստիությունը ստուգելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 49. Ֆիզիկական ու իրավաբանական անձանց և կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները

1. Ֆիզիկական ու իրավաբանական անձինք և կազմակերպություններն իրավունք ունեն՝

1) լիազոր մարմնից խորհրդատվություն և մեթոդական պարզաբանումներ ստանալու պետական կենսաթոշակային համակարգի գործունեության մասին, լիազոր մարմին ներկայացնել կենսաթոշակային ապահովության հարցերին վերաբերող դիմումներ.

2) լիազոր մարմնից ստանալու շտեմարանի՝ իրենց վերաբերող տվյալներ և դրանք փոփոխելու մասին առաջարկություններ ներկայացնել լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) դիմելու լիազոր մարմին՝ իրենց կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու (կենսաթոշակ վճարելը վերսկսելու) համար:

2. Ֆիզիկական ու իրավաբանական անձինք և կազմակերպությունները կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար ներկայացնում են հավաստի տվյալներ և անհրաժեշտ փաստաթղթեր:

3. Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների տված՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 50. Կենսաթոշակառուի պարտականությունները

1. Կենսաթոշակառուն պարտավոր է՝

1) լիազոր մարմին ներկայացնել իրեն վերաբերող հավաստի տվյալներ.

2) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն:

2. Սույն հոդվածով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված գումարները ենթակա են հետգանձման սույն օրենքի 43-րդ հոդվածով սահմանված կարգով կամ դատարանի վճռի հիման վրա, եթե դադարել է կենսաթոշակ ստանալու՝ անձի իրավունքը:

Հոդված 51. Կենսաթոշակին վերաբերող որոշումները բողոքարկելը

1. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

Հոդված 52. Պատասխանատվությունը կենսաթոշակային ապահովության օրենսդրությունը խախտելու համար

1. Կենսաթոշակային ապահովության օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է օրենքով:

Հոդված 53. Օրենքի կիրառմանը վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերը

1. Սույն օրենքի կիրառմանը վերաբերող գերատեսչական նորմատիվ ակտերն իր իրավասության շրջանակում ընդունում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը:

ԳԼՈՒԽ 9
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 54. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասը, 7-րդ գլուխը, 48-րդ հոդվածի 6-րդ կետը և 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքը, բացառությամբ 9-րդ գլխի, որն ուժը կորցնում է 2013 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 55. Անցումային դրույթներ

1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատվածը, ուսումնական

հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում պահպանվում են նույնությամբ:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով: Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից (առանց հավելումների), ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը միաժամանակ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքով և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքով կենսաթոշակ ստացող անձանց՝ երկու կենսաթոշակ ստանալու իրավունքը պահպանվում է մինչև «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված դրամական օգնություն նշանակելը:

2. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում տվյալներն ամբողջացվում են (այդ թվում՝ 2012 թվականի տվյալները լիազոր մարմին են ներկայացվում), և դրանք, ինչպես նաև կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի շտեմարան են ներառվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը մահացած՝ զինվորական կենսաթոշակ ստացած կենսաթոշակառուի հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստը վճարվում է մահացածի կենսաթոշակի (ներառյալ՝ կենսաթոշակին տրվող հավելումները) տասնհինգապատիկի չափով, իսկ սույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված անձանց մահվան դեպքում՝ չորս հարյուր երեսունհինգ հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-243-Ն

*ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ կենսաթոշակային եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով վճար կատարողին ազդելու կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը:

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի և կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի (այսուհետ՝ կուտակային բաղադրիչ) կառուցվածքը, կուտակային բաղադրիչի կառավարման գործընթացը և դրա կառավարմանը ներգրավված պետական մարմինների լիազորությունները, ինչպես նաև մասնակիցների ռեեստրը վարողի, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների, կենսաթոշակային ֆոնդի պահառուի, հաշվի օպերատորների գործառույթները, պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին պարտադիր և կամավորության սկզբունքով միանալու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց շրջանակը, կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, կենսաթոշակային կուտակային հաշիվների վարումը և կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը, կուտակային կենսաթոշակների տեսակները և դրանց վճարումը, մասնակիցների կողմից կատարված պարտադիր կուտակային վճարների վերադարձելիության երաշխավորման կառուցակարգերը, պատասխանատվությունը սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար, ինչպես նաև կարգավորում է կուտակային կենսաթոշակների հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) անձնավորված հաշվառում՝ ըստ «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին»[1] Հայաստանի Հանրապետության օրենքի.

2) անհատ ձեռնարկատեր՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին»[2] Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) անուիտետ՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[3] Հայաստանի Հանրապետության օրենքի.

4) ապահովագրական ընկերություն՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

5) բազային եկամուտ՝ աշխատավարձ ու դրան հավասարեցված այլ վճարումներ, աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց քաղաքացիա-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):
[1] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10*
[2] *ՀՀՊՏ 2001 N 13 (145), 02.05.01*
[3] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07*

իրավական պայմանագրերից և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ, որը, «Եկամտային հարկի մասին»[4] Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է հարկվող եկամուտ.

6) երաշխիքային ֆոնդ՝ սույն օրենքի համաձայն՝ ստեղծված պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների՝ ճշգրտված տարեկան գնաճով վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդ, որի տնօրինման և կառավարման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

7) ինքնազբաղված անձ՝ օրենքով չարգելված որևէ գործունեությունից պարբերական եկամուտ ստացող ֆիզիկական անձ, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր, «Արտոնագրային վճարների մասին»[5] Հայաստանի Հանրապետության օրենքով արտոնագրային վճար վճարող, քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող.

8) ծրագրային վճար՝ մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման հաշվին ամսական կտրվածքով սահմանված կարգով մասնակցին տրամադրվող գումար.

9) կամավոր կուտակային կենսաթոշակ՝ կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայով վճարվող լրացուցիչ կենսաթոշակ.

10) կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմա՝ կամավոր կուտակային կենսաթոշակ տրամադրելու նպատակով կենսաթոշակային ֆոնդի (կենսաթոշակային ֆոնդի կառավարչի), ապահովագրական ընկերության կամ բանկի կողմից սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանված պայմանների և ընթացակարգերի ամբողջություն, որը ներառում է կուտակային վճարների կատարման կարգը, ժամկետը, ինչպես նաև կամավոր կուտակային կենսաթոշակների հաշվարկման ու վճարման պայմանները, ժամկետը և կարգը.

11) կամուրջ հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնում բացված հատուկ գանձապետական հաշիվ, որին մուտքագրվում են պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակցի կողմից կատարվող կուտակային վճարները՝ հետագայում մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու նպատակով.

12) կենսաթոշակային գաղտնիք՝ պարտադիր կամ կամավոր կուտակային բաղադրիչին մասնակցության հետ կապված գործատուին, պետական լիազոր մարմիններին, Կենտրոնական բանկին, մասնակիցների ռեեստրը վարողին, հաշվի օպերատորին, կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին մասնակցի կենսաթոշակային հաշվի, մասնակցի համար (օգտին) կատարված կուտակային վճարների վերաբերյալ հայտնի դարձած որևէ տեղեկությունը, մասնակցի առևտրային, ապահովագրական, բանկային կամ ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև մասնակցի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը մասնակիցը մտադիր է եղել գաղտնի պահել, և գործատուն, պետական լիազոր մարմինները, Կենտրոնական բանկը, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կամ պահառուն տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել այդ մասին.

13) կենսաթոշակային (կուտակային) հաշիվ՝ մասնակիցների ռեեստրը վարողի (պարտադիր կուտակային բաղադրիչ) կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի (կամավոր կուտակային բաղադրիչ) մոտ բացված անհատական հաշիվ, որտեղ հաշվառվում են մասնակցին պատկանող կենսաթոշակային ֆոնդերի փայերը: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակցի կենսաթոշակային հաշիվը պարունակում է տեղեկություններ կենսաթոշակային ֆոնդի մասնակցին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակի, այդ փայերի հաշվարկային արժեքի, տվյալ մասնակցի համար (օգտին) կատարված կուտակային վճարների վերաբերյալ.

14) կենսաթոշակային տարիք՝ «Պետական կենսաթոշակների մասին»[6] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիք.

---

[4] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10*
[5] *ՀՀՊՏ 2008 N 76 (666), 30.12.08*
[6] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10*

15) կենսաթոշակային ֆոնդ՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին»[7] Հայաստանի Հանրապետության օրենքի.

16) կենսաթոշակային ֆոնդի ակտիվներ՝ մասնակիցների օգտին (համար) վճարված կուտակային վճարների, դրանց հաշվին ձեռք բերված ակտիվների և դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտների հանրագումար.

17) կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարման իրավունք ունեցող իրավաբանական անձ.

18) Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

19) «Կուտակային կենսաթոշակային ավանդներ» սխեմա՝ կամավոր կուտակային կենսաթոշակ տրամադրելու նպատակով բանկերի կողմից առաջարկվող կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմա, որի դեպքում մասնակիցների համար բացված ավանդային հաշվում վճարները կատարվում են կուտակային կենսաթոշակի պայմանագրի համաձայն, ավանդադրված միջոցները բանկը կառավարում է իր ռիսկով և մասնակցի կենսաթոշակային տարիքի հասնելուց հետո ավանդի մայր գումարի և կուտակված տոկոսների հաշվին վճարում է պարբերական կամ միանվագ վճարների տեսքով կենսաթոշակներ.

20) կուտակային վճար՝ սույն օրենքով սահմանված կանոնների համաձայն՝ պարտադիր կամ կամավոր կուտակային կենսաթոշակ ստանալու նպատակով մասնակցի և(կամ) այլ անձի (այդ թվում՝ պետության) կողմից մասնակցի համար (օգտին) կատարվող վճար.

21) հաշվի օպերատոր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կազմակերպություն, որը միջնորդավորում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները.

22) հիմնական կենսաթոշակ՝ ըստ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

23) մասնակից՝ ֆիզիկական անձ, որը սույն օրենքով սահմանված կարգով պարտադիր կամ կամավոր միացել է կուտակային բաղադրիչին և կուտակային կենսաթոշակ ստանալու նպատակով ձեռք է բերում (ձեռք է բերել) կենսաթոշակային ֆոնդի փայեր, կնքել է պայմանագիր ապահովագրական ընկերության հետ կամ կնքել է կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագիր առևտրային բանկի հետ կամ ստանում է սույն օրենքով սահմանված պարտադիր կամ կամավոր կենսաթոշակ.

24) մասնակիցների ռեեստր՝ մասնակիցների և նրանց պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ: Մասնակիցների ռեեստրում առկա ամբողջ տեղեկատվությունը հանդիսանում է պետության սեփականությունը.

25) մասնակիցների ռեեստրը վարող՝ իրավաբանական անձ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ.

26) նոտար՝ ըստ «Նոտարիատի մասին»[8] Հայաստանի Հանրապետության օրենքի.

27) պահառու՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառություն իրականացնող անձ.

28) պարտադիր կուտակային կենսաթոշակ՝ պարտադիր կուտակային բաղադրիչի շրջանակներում մասնակցին սույն օրենքով սահմանված կանոնների համաձայն վճարվող կենսաթոշակ.

29) «Սահմանված կենսաթոշակներ» սխեմա՝ կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմա, որի դեպքում ապահովագրական ընկերությունը խոստանում է մասնակցին հստակ չափով կենսաթոշակ, կուտակային վճարները կախված են ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրից և կարող են լինել ոչ կանոնավոր, իսկ

[7] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10*
[8] *ՀՀՊՏ 2002 N 2 (177), 10.01.02*

կենսաթոշակի չափը կախված չէ կատարված կուտակային վճարների չափից և այդ վճարների ներդրումների եկամտաբերությունից.

30) «Սահմանված կենսաթոշակային վճար» սխեմա՝ կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմա, որի դեպքում մասնակիցների համար կատարված կուտակային վճարները հաշվարկվում են իրենց բազային եկամտի որոշակի տոկոսի չափով կամ որևէ այլ կանոնավոր հիմքով, իսկ կենսաթոշակի չափը կախված է կատարված կուտակային վճարներից և այդ վճարների ներդրումից ստացված եկամուտների չափից.

31) սոցիալական քարտ՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին»[9] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քարտ.

32) փոխկապակցված անձինք՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Սույն օրենքում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով[10], «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին»[11] Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

Հոդված 3. Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչը կարգավորող օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, այլ օրենքներով և իրավական ակտերով: Այլ օրենքների դրույթները տարածվում են սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

Հոդված 4. Կուտակային կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրները

1. Կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվում են մասնակիցների համար (օգտին) կատարված կուտակային վճարների և դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:

ԳԼՈՒԽ 2
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ: ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հոդված 5. Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցները

1. Պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝

ա) վարձու աշխատողները և հանրային ծառայության մեջ գտնվող անձինք, բացառությամբ զինվորական ծառայողների և նրանց հավասարեցված անձանց,

բ) նոտարները,

գ) անհատ ձեռնարկատերերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասը տարածվում է նաև 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված այն օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց վրա, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ:

Հոդված 6. Պարտադիր կուտակային բաղադրիչի կամավոր մասնակիցները

1. Պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր կարգով կարող են մասնակցել՝

1) մինչև 1974 թվականը ծնված՝

[9] *ՀՀՊՏ 2003 N 52 (287), 22.10.03*
[10] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98*
[11] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07*

ա) վարձու աշխատողները և հանրային ծառայության մեջ գտնվող անձինք, բացառությամբ զինվորական ծառայողների և նրանց հավասարեցված անձանց,

բ) նոտարները,

գ) անհատ ձեռնարկատերերը.

2) ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից:

Սույն մասի 1-ին և 2-րդ կետերը տարածվում են նաև մինչև 1974 թվականը ծնված օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միանալու որոշումը վերջնական է: Նրանք այլևս իրավունք չունեն փոխելու պարտադիր կուտակային բաղադրիչին միանալու մասին իրենց որոշումը և վերադառնալու նախկին համակարգ՝ անկախ աշխատանքի փոփոխության կամ աշխատանքից ազատվելու փաստից:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միանալու որոշում ընդունելու դեպքում պարտավոր են մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայքէջի կամ հաշվի օպերատորի միջոցով մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացել կենսաթոշակային հաշիվ՝ սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված դիմում ներկայացնելու միջոցով: Այն կազմակերպությունում, որի միջոցով սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք բացել են կենսաթոշակային հաշիվ, մասնակցին պարտավոր են տրամադրել հավաստում կենսաթոշակային հաշիվ բացած լինելու վերաբերյալ, որից հետո նշված անձինք համարվում են պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին միանալու որոշումը կայացրած: Կամավոր կերպով պարտադիր կուտակային բաղադրիչին միացած անձը վերը նշված հավաստումը պարտավոր է տրամադրել իր գործատուին (հարկային գործակալին), որը դրա հիման վրա կիրականացնի սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործողությունները: Գործատուն (հարկային գործակալը) կամավոր կերպով պարտադիր կուտակային բաղադրիչին միացած անձի կողմից կենսաթոշակային հաշիվ բացելուն հաջորդող ամսվա բազային եկամտից հաշվարկում և վճարում է կուտակային վճար:

Գործատուի փոփոխման դեպքում նոր գործատուին պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից լինելու մասին չհայտնելու դեպքում անձի՝ պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակից լինելու փաստը հայտնի դառնալուց հետո հետագա բազային եկամտից գործատուն ամբողջությամբ փոխանցում է անձի՝ նախորդ ժամանակահատվածում վճարման ենթակա, բայց չվճարված պարտադիր կուտակային վճարները:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերում, ինչպես նաև 2-րդ կետում նշված անձինք, որոնք կամավոր միացել են պարտադիր կուտակային բաղադրիչին, ինքնուրույնաբար կատարում են պարտադիր կուտակային վճարներ:

Հոդված 7. Պարտադիր կուտակային վճարի դրույքաչափերը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մասնակիցների համար կուտակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով հետևյալ կերպ.

1) մասնակից հանդիսացող վարձու աշխատողը, օտարերկրացին ու քաղաքացիություն չունեցող անձը, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, և որի բազային եկամուտը ամսական կտրվածքով չի գերազանցում 500000 դրամը, պարտավոր է կատարել ամսական կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

2) մասնակից հանդիսացող վարձու աշխատողի, օտարերկրացու ու քաղաքացիություն չունեցող անձի (որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է բազային եկամուտ, և որի բազային եկամուտը ամսական կտրվածքով գերազանցում է 500000 դրամը) համար (օգտին) պետական բյուջեից մասնակցի համար (օգտին) կատարվող ամսական վճարը կազմում է 25000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը ամսական վճարվում է մասնակցի կողմից.

3) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 6000000 դրամը, պարտավոր է տարեկան կատարել կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.

4) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակցի (որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով գերազանցում է 6000000 դրամը) համար (օգտին) պետական բյուջեից կատարվող տարեկան վճարը կազմում է 300000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը տարեկան վճարվում է մասնակցի կողմից:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը կուտակային վճարներ է կատարում բազային եկամտի 5%-ի չափով: Նրա համար (օգտին) պետական բյուջեից հավելյալ վճար չի կատարվում:

Եթե 1974 թվականից հետո ծնված և պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած ինքնազբաղված անձինք մինչև իրենց 40 տարեկանը լրանալն անցնում են աշխատանքի որպես վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, ապա նրանց վարձու աշխատանքից կամ որպես նոտար կամ անհատ ձեռնարկատեր աշխատելուց ստացված բազային եկամտի հանդեպ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասը, իսկ ինքնազբաղվածությունից առաջացած եկամտի հանդեպ կիրառվում է սույն մասի առաջին պարբերությունը: Եթե վարձու աշխատողը, նոտարը կամ անհատ ձեռնարկատերը դառնում է ինքնազբաղված անձ և հանդիսանում է պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից, ապա նրա վրա սույն հոդվածի 1-ին մասի փոխարեն տարածվում է սույն մասի առաջին պարբերությունը:

3. Մասնակցի՝ սույն օրենքով սահմանված բազային եկամուտ մի քանի աղբյուրներից միաժամանակ ստանալու դեպքում կուտակային վճարները կատարելու պարտավորությունը և կուտակային վճարի դրույքաչափը կիրառվում են յուրաքանչյուր առանձին դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված և մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցների համար (օգտին) պետության կողմից կատարվող ընդհանուր վճարները չեն կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին մասով պետության վճարների համար սահմանված չափերը: Մի քանի աղբյուրներից միաժամանակ բազային եկամուտ ստացող մասնակիցը պարտավոր է յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո՝ մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը, լրավճարել իր համար կենսաթոշակային վճար՝ իր տարեկան բազային եկամտի 10 տոկոսի և պետության կատարած համապատասխան վճարների տարբերության չափով:

4. Կուտակային վճար կատարելու պարտականությունը պահպանվում է մինչև կենսաթոշակային տարիքի լրանալը: Եթե կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը շարունակում է աշխատել, ապա նա ազատվում է պարտադիր կուտակային վճար կատարելու պարտականությունից, սակայն նա իր կամքով կարող է շարունակել մասնակցել պարտադիր կուտակային բաղադրիչին: Մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակցի համար (օգտին) պետական բյուջեից կուտակային վճարումներ չեն կատարվում: Մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարները պետք է կատարվեն, քանի դեռ մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցից չի ստացել կուտակային կենսաթոշակ ստանալու վերաբերյալ դիմում: Մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի կուտակային կենսաթոշակ ստանալու մասին տեղեկացնում է պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անձնավորված հաշվառում իրականացնող լիազորված մարմնին (այսուհետ՝ հարկային մարմին):

Հոդված 8. Պարտադիր կուտակային վճարներ կատարելը

1. Իրենց աշխատողների համար (անունից) կուտակային վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ:

Գործատուները հարկային գործակալ են համարվում նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի և 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած անձանց հա-

մար, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ներառված՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների համար:

2. Գործատուները պարտավոր են հարկային մարմնից ճշտել՝ արդյոք իրենց աշխատողները համարվում են պարտադիր կուտակային վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք, և այդ անձանց բազային եկամտից հաշվարկել, պահել և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում կատարել կուտակային վճար՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:

Գործատուները պարտավոր են նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի, 2-րդ կետի և 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցների բազային եկամտից հաշվարկել, պահել և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում յուրաքանչյուր ամիս կատարել կուտակային վճար՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձի պարտադիր կուտակային բաղադրիչին միանալու մասին որոշման կայացված լինելու փաստը գործատուի և հարկային մարմնի միջև ճշտվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Գործատուները «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում անձնավորված էլեկտրոնային հաշվետվություն, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

ա) մասնակցի, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) մասնակցի բազային եկամտի չափը,

դ) մասնակցի կուտակային վճարի չափը,

ե) գործատուի հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղված անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում ներառված՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, պարտավոր են ինքնուրույն հաշվարկել և կատարել պարտադիր կուտակային վճարներ տարեկան կտրվածքով՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Վարձու աշխատողները, քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողները (ծառայություններ մատուցողները), օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ, և որոնք միացած են (կամ պարտավոր էին միանալ) պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին, և որոնց գործատուները օրենքով կամ միջազգային պայմանագրերով ազատված են հարկային գործակալ լինելու պարտավորությունից, պարտավոր են յուրաքանչյուր ամիս ինքնուրույնաբար հաշվարկել և վճարել պարտադիր կուտակային վճարները՝ սույն օրենքով գործատուների համար սահմանված կանոններով:

5. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը, սույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված անձինք և ինքնազբաղված անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում ներառված՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմին են ներկայացնում էլեկտրոնային հաշվետվություն, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

ա) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ինքնազբաղված անձի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ինքնազբաղված անձի բազային եկամտի չափը,

դ) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ, ինքնազբաղված անձի պարտադիր կուտակային վճարի չափը,

ե) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ և ինքնազբաղված անձի (ունենալու դեպքում) հարկ վճարողի հաշվառման համարը:

6. Հարկային մարմնի նորմատիվ իրավական ակտով սահմանվում է հաշվետվության ձևը, որում կարող են նախատեսվել նաև այլ տեղեկություններ, որոնք պետք է ներառվեն հաշվետվությունում:

Հոդված 9. Մասնակիցների ռեեստրը վարողին անձնավորված տեղեկատվությունը և պարտադիր կուտակային վճարները փոխանցելը

1. Հարկային մարմինը պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու սահմանված ժամկետից կամ փաստացի ստանալու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, մշակում է դրանք: Այն անձանց համար, որոնց վերաբերյալ տեղեկություններում չկան սխալներ և կամուրջ հաշվին մուտքագրվել են հաշվետվության մեջ նշված կուտակային վճարները, հարկային մարմինը վճարման հանձնարարականներ է ուղարկում գանձապետարան՝ կամուրջ հաշվին մուտքագրված գումարներից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան գումարները մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանձնարարականի ուղարկման օրը հարկային մարմինը պարտադիր կուտակային վճարների մասին անհատական տեղեկատվությունը ներկայացնում է մասնակիցների ռեեստրը վարողին:

3. Հարկային մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող տեղեկատվությունը պարունակում է մասնակիցների մասին հետևյալ տեղեկությունները՝

ա) մասնակցի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) մասնակցի սոցիալական քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) մասնակցի կուտակային վճարի չափը,

դ) պետական բյուջեից վճարման ենթակա գումարի չափը,

ե) գործատուի, ինչպես նաև նոտարի և անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը,

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ տեղեկություններ:

4. Կուտակային վճարները և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվությունը փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մասնակիցների ռեեստրը վարողի հաշվին մասնակիցների ավել փոխանցված կուտակային վճարները չեն վերադարձվում մասնակիցներին, այլ հաշվի են առնվում հետագա կուտակային վճարները հաշվարկելիս և վճարելիս, բացառությամբ հարցը ըստ էության լուծող դատական ակտի և ստուգման ակտի արդյունքում կատարված ճշտումների հիման վրա:

Հոդված 10. Կենսաթոշակային հաշվի բացումը

1. Մասնակիցների ռեեստրը վարողը անձի համար կենսաթոշակային հաշիվ բացում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության կամ անձի կողմից սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի հիման վրա:

Մասնակիցների ռեեստրը վարողը սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված անձանց համար բացում է կենսաթոշակային հաշիվ հարկային մարմնից սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ստանալուց անմիջապես հետո, եթե տվյալ անձի համար կենսաթոշակային հաշիվ արդեն իսկ բացված չի եղել: Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված անձանց համար մասնակիցների ռեեստրը վարողը բացում է կենսաթոշակային հաշիվ՝ անձի կողմից սույն օրենքի 6-րդ հոդվածի

3-րդ մասով սահմանված կարգով ներկայացված կենսաթոշակային հաշիվ բացելու դիմումի հիման վրա:

2. Եթե անձը չի ներկայացրել սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված դիմումը, ապա տվյալ անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, մասնակիցների ռեեստրը վարողը գրավոր (թղթային) տեղեկացնում է տվյալ անձին կենսաթոշակային հաշիվ բացելու և այն փաստի մասին, որ եթե կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո մասնակցի կողմից 30-օրյա ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողին սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու վերաբերյալ դիմում չներկայացվի, ապա անձի փոխարեն ընտրությունը կկատարվի սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված կարգով ծրագրային մոդուլի միջոցով՝ պատահականության սկզբունքով, որից հետո մասնակցի հետագա վճարումները կուղղվեն ընտրված կենսաթոշակային ֆոնդին:

3. Մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային հաշիվը վարում է մինչև մասնակցի մահանալը, իսկ մասնակցի մահանալու պահին նրա կենսաթոշակային հաշվում փայերի առկայության դեպքում՝ մինչև փայերի ժառանգումը կամ ժառանգման ժամկետի ավարտը:

4. Մասնակիցների ռեեստրը վարողի փոփոխության կամ նրա գործունեության դադարեցման դեպքում մասնակիցների ռեեստրը փոխանցվում է մասնակիցների ռեեստր վարող այլ անձի կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Մասնակիցների ռեեստրի փոխանցման կարգը, ձևը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Եթե մասնակիցը սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված այլընտրանքներից ընտրել է հաշվի օպերատորի միջոցով գործարքների իրականացման ճանապարհը, ապա հաշվի օպերատորը սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով միջնորդավորում է մասնակիցների ռեեստր վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները, այդ թվում՝

1) կենսաթոշակային հաշիվ բացելը,

2) մասնակցի անձնական տվյալներում փոփոխություն կատարելը,

3) մասնակցի կողմից ֆոնդի ընտրությունը և (կամ) փոփոխությունը, կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակումը, այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ընդունումը և մասնակիցների ռեեստրը վարողին դրանց փոխանցումը,

4) մասնակցի կենսաթոշակային հաշվի վերաբերյալ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվության ստացումը և փոխանցումը մասնակցին:

6. Հաշվի օպերատորը պետք է ապահովի իր գործառույթների կատարման ընթացքում մասնակիցների, նրանց կատարած ընտրության և այլնի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը:

Հաշվի օպերատոր չի կարող լինել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և (կամ) պահառուի հետ փոխկապակցված անձը:

Հաշվի օպերատորին և նրա աշխատակիցներին արգելվում է գովազդել որևէ կենսաթոշակային ֆոնդ կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, խորհուրդ տալ կամ որևէ այլ կերպ ուղղորդել իրենց դիմող անձանց ընտրելու որևէ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ կենսաթոշակային ֆոնդ:

Հոդված 11. Պարտադիր կուտակային վճարների հաշվին կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերումը

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը հարկային մարմնի՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանձնարարականում նշված չափով պարտադիր կուտակային վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան գումարները փոխանցում է մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկում բացված հաշվին:

2. Մասնակիցների ռեեստրը վարողը հարկային մարմնի տրամադրած՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը համադրում է իր մոտ բացված կենսաթոշակային հաշիվների և Հայաստանի Հանրապետության ֆինանսա-

կան ոլորտի պետական լիազորված մարմնից ստացված միջոցների հետ, որից անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գումարը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) յուրաքանչյուր անձի համար (օգտին) կատարված կուտակային վճարի դիմաց տվյալ անձի կենսաթոշակային հաշվին է փոխանցում մասնակցի ընտրած պարտադիր կենսաթոշակային ֆոնդի՝ կուտակային վճարին համարժեք քանակով փայեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի տեղաբաշխման գինը: Կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկումը կազմակերպում է մասնակիցների ռեեստրը վարողը սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, կենսաթոշակային ֆոնդի կանոնների և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի հետ կնքված պայմանագրի համաձայն,

2) սույն մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին փոխանցված փայերի տեղաբաշխման գնին համարժեք գումարը փոխանցում է համապատասխան կենսաթոշակային ֆոնդի պահառուի նշած հաշվին,

3) յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ներկայացնում է տեղեկատվություն՝ սույն մասի 1-ին կետի համաձայն կենսաթոշակային հաշիվներին փոխանցված համապատասխան կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակի և սույն մասի 2-րդ կետի համաձայն փոխանցված գումարի վերաբերյալ՝ առանց բացահայտելու ընտրություն կատարած մասնակիցներին:

3. Կենսաթոշակային ֆոնդի կանոններով չեն կարող սահմանվել յուրաքանչյուր մասնակցի կողմից ձեռք բերվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակի կամ դրա դիմաց վճարվող գումարի սահմանափակումներ:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին տրամադրում է տեղեկատվություն մասնակիցների կուտակային վճարների ընդհանուր գումարի մասին: Տեղեկատվությունը տրամադրվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին՝ առանց որևէ նույնականացվող տեղեկության, այսինքն՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները չեն տիրապետում որևէ տեղեկատվության, որը նրանց հնարավորություն կտա նույնականացնելու կոնկրետ մարդուն: Մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին կարող է տրամադրել առավելագույնը սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկատվությունը:

5. Կենսաթոշակային ֆոնդի փայի սկզբնական անվանական արժեքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

6. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջներ:

Հոդված 12. Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը

1. Մասնակիցների ռեեստրը վարողը տարին մեկ անգամ, անվճար, ոչ ուշ, քան մինչև ապրիլի 15-ը տեղեկատվություն է տրամադրում մասնակցին նրա կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը առաջին անգամ մասնակցին ներկայացվում է թղթային: Երկրորդ և հետագա անգամները սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը մասնակցին ներկայացվում է ըստ նրա ընտրության՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Եթե մասնակիցը չի կատարում ընտրություն սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը երկրորդ և հետագա անգամները թղթային կամ էլեկտրոնային ստանալու վերաբերյալ, ապա մասնակցին երկրորդ և հետագա անգամները սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը չի տրամադրվում:

Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողը թղթային տարբերակով ուղարկում է սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումում նշված հասցեով: Այն մասնակիցներին, ովքեր մասնակիցների ռեեստրը վարողին չեն ներկայացրել նախընտրելի հասցե, սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը թղթային տարբերակով մասնակիցների ռեեստրը վարողը ուղարկում է բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեով: Մասնակիցը կարող է իր ցանկությամբ դադարեցնել տեղեկատվության ստացումը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը ներկայացնելու ձևը, բովանդակությունը և կարգը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվության ստացման տարբերակների ընտրության, տեղեկատվության ստացման դադարեցման ու տեղեկատվության ստացման վերականգնման կարգը, ձևը և բովանդակությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցին նրա կենսաթոշակային հաշվի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը տարեկան 1 անգամից ավելի թղթային տարբերակով տրամադրելու, ինչպես նաև այլ լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար կարող է մասնակցից գանձել վճար, որի չափը չի կարող գերազանցել դրա պատրաստման և տրամադրման համար կատարված ծախսերը՝ գումարած ռեեստրը վարողի ողջամիտ շահույթը:

5. Մասնակիցների ռեեստր վարողը օրական թարմացված տեղեկատվություն է տեղադրում իր ինտերնետային կայքում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանած բովանդակությամբ և կարգով:

Մասնակիցների ռեեստրը վարողը պետք է ապահովի յուրաքանչյուր մասնակցի հնարավորությունը մասնակիցների ռեեստր վարողի ինտերնետային կայքի միջոցով անվճար մուտք ունենալու իր անհատական կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվությանը: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել այդպիսի մուտքի ապահովմանը ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք հնարավոր է ապահովել տվյալ պահին Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ անձը նույնականացնող և տեղեկատվության գաղտնիությունը ապահովող ծրագրային և տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են պահանջներ սահմանվել մասնակիցների ռեեստրը վարող անձի կողմից հրապարարակման այլ միջոցներով հրապարակվող տեղեկությունների կազմի և հրապարակման ձևի նկատմամբ:

Հոդված 13. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի կարգավիճակը և դրանց սահմանափակումները

1. Մասնակցի կենսաթոշակային հաշվում հաշվառված կենսաթոշակային ֆոնդերի փայերը համարվում են մասնակցի անձնական սեփականությունը:

Ամուսինների կենսաթոշակային ֆոնդերի փայերը համարվում են նրանցից յուրաքանչյուրի անձնական սեփականությունը:

2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ մասնակցի տնօրինման իրավունքը սահմանափակվում է մինչև մասնակցի՝

1) կենսաթոշակային տարիքը լրանալը.

2) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելը.

3) առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացության հիման վրա մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելը.

4) մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը:

3. Կենսաթոշակային ֆոնդի փայը մասնակցի կողմից չի կարող՝

1) գրավադրվել.

2) ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում.

3) նվիրաբերվել կամ օտարվել որևէ այլ եղանակով.

4) օգտագործվել այնպիսի եղանակով, որը կարող է հանգեցնել կենսաթոշակային ֆոնդի փայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարմանը:

4. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող գրավադրվել կամ հանդիսանալ այլ պարտավորությունների ապահովման միջոց: Սույն մասով նախատեսված պահանջը չի սահմանափակում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման իրավունքը, եթե դա նախատեսված է կենսաթոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ), և եթե այդպիսի գործարքի արդյունքում չեն խախտվում սույն օրենքով նախատեսված սահմանաչափերը:

5. Մասնակցի պարտավորությունների համար մասնակցին պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայերի վրա բռնագանձում չի կարող տարածվել մինչև նրա կենսաթոշակային տարիքը լրանալը:

ԳԼՈՒԽ 3
ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 14. Հարկային մարմնի իրավասությունները

1. Հարկային մարմինը՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է պարտադիր կուտակային բաղադրիչի անձնավորված հաշվառման տվյալների բազան,

2) յուրաքանչյուր ամիս գործատուներից ընդունում է պարտադիր կուտակային վճարների մասին անհատական հաշվետվությունները և օրենքով սահմանված կարգով ստուգում դրանց հավաստիությունը,

3) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի համար սահմանված ժամկետում նոտարներից, անհատ ձեռնարկատերերից ու ինքնազբաղված անձանցից ընդունում է պարտադիր կուտակային վճարների մասին հաշվետվությունները և օրենքով սահմանված կարգով ստուգում դրանց հավաստիությունը,

4) յուրաքանչյուր ամիս գործատուներից ստացված անձնավորված տեղեկատվությունը համադրում է անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ,

5) համադրում է նոտարներից, անհատ ձեռնարկատերերից ու ինքնազբաղված անձանցից ստացված անձնավորված տեղեկատվությունը՝ անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ,

6) իրականացնում է գործատուների, նոտարների, անհատ ձեռնարկատերերի և ինքնազբաղված անձանց կողմից կատարվող պարտադիր կուտակային վճարների հավաքագրումը և հաշվետվություն է ներկայացնում հավաքագրումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմին,

7) կատարված կուտակային վճարների և գործատուներից, անհատ ձեռնարկատերերից, նոտարներից ու ինքնազբաղված անձանցից ստացված տեղեկատվության միջև սխալներ հայտնաբերելու դեպքում տեղեկացնում է նրանց այդ մասին: Նրանք պարտավոր են շտկել սխալները և ներկայացնել ճշգրտված հաշվետվություն սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով,

8) ուսումնասիրում է գործատուների, նոտարների, անհատ ձեռնարկատերերի և ինքնազբաղված անձանց կատարած պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ բողոքները և սխալները և անհրաժեշտության դեպքում պահանջում է ներկայացնել ճշգրտված հաշվարկներ,

9) համապատասխան հանձնարարականներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի կամուրջ հաշվին մուտքագրված գումարները մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկում գտնվող հաշվին փոխանցելու համար,

10) կատարված պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ անձնավորված տեղեկատվություն է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին,

11) պատասխանում է մասնակիցների գրավոր դիմումներին՝ կապված պարտադիր կուտակային վճարների և հաշվետվությունների հետ,

12) իր իրավասությունների շրջանակում ընդունում է նորմատիվ իրավական ակտեր և իրականացնում ստուգումներ,

13) հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմին պարտադիր կուտակային բաղադրիչի անձնավորված հաշվառման բազայի և դրա վարման վերաբերյալ՝ նման պահանջի առկայության դեպքում,

14) իրականացնում է սույն օրենքից և այլ օրենքներից բխող այլ լիազորություններ:

2. Հարկային մարմինը պարտավոր է սույն օրենքով հարկային գործակալի պարտականություն կրող անձանց տրամադրել անձնավորված հաշվետվություն ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային և (կամ) թղթային ձևեր, որը համատեղելի կլինի հարկային մարմնի կողմից վարվող անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ:

Հոդված 15. Կենտրոնական բանկի լիազորությունները

1. Կենտրոնական բանկը՝

1) սահմանում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ կանխարգելիչ պահանջներ, այդ թվում՝ շուկայական, գործառնական, իրացվելիության և այլ ռիսկերի հետ կապված պահանջներ,

2) գրանցում է կենսաթոշակային ֆոնդի կանոնները,

3) սահմանում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից մասնակիցներին (կամավոր կենսաթոշակային ֆոնդերի դեպքում) ներկայացվող, ինչպես նաև հրապարակվող հաշվետվությունների ձևը, ներկայացնելու կարգը,

4) կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներից ստացված հաշվետվական տեղեկատվության հիման վրա մշակում և հրապարակում է պարտադիր կուտակային բաղադրիչի վերաբերյալ հանրային իրազեկման տեղեկատվական նյութեր,

5) սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում համաձայնություն է տալիս կամ մերժում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից իրականացվող գովազդների և գովազդային այլ հրապարակումների բովանդակությանը,

6) վերահսկում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների, պահառուների, մասնակիցների ռեեստրը վարողի և հաշվի օպերատորի (իր իրավասության շրջանակներում) գործունեության համապատասխանությունը սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին,

7) կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներից, պահառուներից և մասնակիցների ռեեստրը վարողից ընդունում է սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները և վերլուծում դրանք,

8) իր լիազորությունների շրջանակում ստուգումներ է իրականացնում մասնակիցների ռեեստրը վարողի, հաշվի օպերատորների, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և պահառուների մոտ,

9) սահմանում է մասնակիցների ռեեստրի վարման, այդ թվում՝ մասնակիցների կենսաթոշակային հաշիվների վարման, սույն օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ընդհանուր կանոնները,

10) սահմանում է հաշվի օպերատորների գործունեության կարգը,

11) սահմանում է մասնակցի կողմից մասնակիցների ռեեստր վարողին ներկայացվող դիմումների, ինչպես նաև մասնակիցների ռեեստր վարողի կողմից մասնակիցներին ներկայացվող հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրման կարգը, բացառությամբ սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի,

12) իրականացնում է սույն օրենքից և այլ իրավական ակտերից բխող այլ գործառույթներ:

Հոդված 16. Մասնակիցների ռեեստրը վարողի գործառույթները

1. Մասնակիցների ռեեստրը վարողը սույն օրենքի, սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա՝

1) իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով մասնակիցների ռեեստրը վարողին վերապահված գործառույթները,

2) սույն օրենքով սահմանված կարգով բացում և վարում է մասնակիցների կենսաթոշակային հաշիվները,

3) սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված անձանց համար կենսաթոշակային հաշիվներ բացելու դեպքում տեղեկացնում է այդ մասին հարկային մարմնին,

4) մասնակցի ցանկության դեպքում տեխնիկական միջոցներով ապահովում է մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի, կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրության, ինչպես նաև նրա հաշվի քաղվածքում առկա տեղեկատվության գաղտնիությունը: Սույն կետում նշված գաղտնիության ապահովման կարգը սահմանում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության հետ,

5) սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, կենսաթոշակային ֆոնդի կանոնների և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ կազմակերպում է կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկումը, դրանց մուտքագրումը կենսաթոշակային հաշիվներին, մասնակիցների կենսաթոշակային փայերի մարումը,

6) պարտադիր կուտակային վճարները Կենտրոնական բանկում բացված իր հաշվից փոխանցում է կենսաթոշակային ֆոնդի պահառուի կողմից նշված համապատասխան ակտիվի կառավարչի հաշվին՝ առանց բացահայտելու ընտրություն կատարած մասնակիցներին,

7) սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում մասնակիցներին՝ կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ,

8) մասնակցի դիմումի հիման վրա սույն օրենքով սահմանված ժամկետում կենսաթոշակային ֆոնդի պահառուի հետ համատեղ կազմակերպում է մեկ կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակումը մեկ այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով,

9) կենսաթոշակային ֆոնդի պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված միջոցների փոխանցումը ապահովագրական ընկերությանը՝ սույն օրենքի համաձայն աուդիտետի պայմանագիր կնքելու նպատակով,

10) կենսաթոշակային ֆոնդի պահառուի հետ համատեղ կազմակերպում է միանվագ և ծրագրային վճարների կատարումը,

11) փոխանցում է մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվում պահվող կենսաթոշակային ֆոնդի փայերը՝ հիմք ընդունելով սույն օրենքի համաձայն կատարված ժառանգների կամահայտնությունը,

12) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով, բովանդակությամբ և պարբերականությամբ հաշվետվություններ է ներկայացնում Կենտրոնական բանկին,

13) իրականացնում է սույն օրենքից, սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ու մասնակիցների ռեեստրը վարողի միջև կնքված պայմանագրից և կենսաթոշակային ֆոնդի կանոններից բխող այլ գործառույթներ:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի գործառույթները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը՝

1) հարկային մարմնին տեղեկացնում է կուտակային վճարների կատարման մասին և համապատասխան հանձնարարական ստանալու դեպքում գանձապետական համակարգի միջոցով ապահովում է պարտադիր կուտակային վճարների փոխանցումը մասնակիցների ռեեստրը վարողին,

2) իրականացնում է կանխատեսումներ յուրաքանչյուր ֆինանսական տարում պետական բյուջեից սույն օրենքի համաձայն մասնակիցների համար (օգտին) կատարվող վճարների չափի վերաբերյալ, որոնք հաշվի են առնվում յուրաքանչյուր տարի պետական բյուջեի նախագիծը կազմելիս,

3) մշակում և ապահովում է կուտակային կենսաթոշակային բաղադրիչի միասնական քաղաքականությունը,

4) սույն օրենքի 44-րդ և 72-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ ներդրումների սահմանափակումների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

5) իրականացնում է սույն օրենքից և այլ իրավական ակտերից բխող այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 4
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ

Հոդված 18. Կենսաթոշակային գաղտնիքի պահպանումը

1. Կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումն այն անձի, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով, արգելվում է, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

Կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկության հրապարակում է համարվում այդ տեղեկությունը (կամ դրա ցանկացած կրիչը) բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը, երրորդ անձին հայտնի դարձնելը կամ տարածելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը (թույլատրելը, չխոչընդոտելը կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

2. Գործատուն, պետական լիազոր մարմինները, Կենտրոնական բանկը, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպչական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց ղեկավարներին, ծառայողներին, նախկինում ղեկավար կամ ծառայող հանդիսացող անձանց, ինչպես նաև այն անձանց և կազմակերպություններին, որոնք սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց ծառայություններ (աշխատանքներ) են մատուցում կամ մատուցել են նախկինում, արգելվում է ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելը, ինչպես նաև իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակի կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

4. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, հարկային մարմինը կարող են դատարանում հրապարակել կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները մասնակցի վերաբերյալ՝ մասնակցի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում և սահմաններում, եթե վեճը ծագել է մասնակցի և մասնակիցների ռեեստրը վարողի կամ հաշվի օպերատորի կամ հարկային մարմնի կամ գործատուի միջև:

5. Գործատուները, մասնակիցների ռեեստրը վարողը և հարկային մարմինը պարտավոր են մասնակիցների շահերի պաշտպանության նպատակով մեկը մյուսին տեղեկատվություն տրամադրել մասնակիցների կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ, բացառությամբ մասնակցի ընտրած կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, կենսաթոշակային ֆոնդի և մասնակցի կենսաթոշակային ֆոնդերի փայերի վերաբերյալ տեղեկատվության:

6. Մասնակիցների ռեեստր վարողը կամ հարկային մարմինը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կարող են տրամադրել առավելագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդ ընտրած մասնակիցների քանակը,

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդ ընտրած մասնակիցների տարիքային կազմը՝ նվազագույնը 5 տարվա տարիքային կտրվածքով,

3) տվյալ ամսվա ընթացքում տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդից դուրս եկած մասնակիցների տարիքային կազմը՝ նվազագույնը 5 տարվա տարիքային կտրվածքով,

4) ամսական կտրվածքով տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին միացած մասնակիցների քանակը,

5) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների բազային եկամտի բաշխվածությունը՝ նվազագույնը հարյուր հազար դրամի բաշխվածությամբ, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդը տվյալ ամսում ընտրած մասնակիցների բազային եկամտի բաշխվածությունը՝ նվազագույնը հարյուր հազար դրամի բաշխվածությամբ,

6) տվյալ տարում տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներից կենսաթոշակային տարիքը լրացող մասնակիցների թիվը,

7) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:

Մասնակիցների ռեեստր վարողը և հարկային մարմինը պարտավոր են ապահովել իրենց մոտ առկա կամ հաշվարկման համար հիմք հանդիսացող այլ տեղեկատվության հասանելիության բացառումը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար, որը կարող է օժանդակել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ի հայտ բերելու կոնկրետ մասնակցին կամ կոնկրետ գործատուին, որտեղ աշխատում է մասնակիցը:

Հոդված 19. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, հարկային մարմինը կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին սույն օրենքի համապատասխան տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են դատարանի որոշումը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին կամ նրա լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները:

3. Արգելվում է մասնակիցներին տեղեկացնել նրանց մասին կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի մասին:

4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից վերլուծվելու արդյունքում, եթե պարզվում է, որ տեղի է ունեցել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, ապա Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում քրեական հետապնդում իրականացնող համապատասխան մարմին:

Հոդված 20. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը դատարանին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը քաղաքացիական և քրեական գործերի կողմ հանդիսացող մասնակցի վերաբերյալ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները, սույն օրենքին համապատասխան, տրամադրում են դատարանին միայն վերջինիս՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են դատարանի որոշումը ստանալու պահից՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դատարանին կամ դատարանի լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ, վճռով կամ դատավճռով պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը:

Հոդված 21. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը մասնակցի ժառանգներին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը մասնակցի վերաբերյալ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները, սույն օրենքին համապատասխան, տրամադրում են տվյալ մասնակցի ժառանգներին, եթե վերջիններս ժառանգության իրավունքները հիմնավորող փաստաթղթեր են ներկայացրել:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են ժառանգության իրավունքները հիմնավորող փաստաթղթերը ստանալու օրվանից

հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, նրանց հաղորդել մասնակցի վերաբերյալ իրենց մոտ եղած տեղեկությունները և տրամադրել իրենց մոտ առկա փաստաթղթերը:

3. Գործատուի, մասնակիցների ռեեստրը վարողի, հարկային մարմնի կողմից, սույն հոդվածին համապատասխան, տեղեկությունները հաղորդելու և փաստաթղթերը ներկայացնելու մերժումը կամ սահմանված ժամկետներում չներկայացնելը կարող է բողոքարկվել դատարան: Մերժման կամ սույն օրենքով սահմանված ժամկետներում տեղեկությունները չհաղորդելու և փաստաթղթերը չներկայացնելու հետևանքով դիմող անձանց կամ կազմակերպություններին պատճառված վնասը ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով, եթե մերժումը եղել է անհիմն, կամ ժամկետները խախտվել են գործատուի, մասնակիցների ռեեստրը վարողի, հարկային մարմնի մեղքով:

ԳԼՈՒԽ 5
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Հոդված 22. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործառույթները և գործունեության նկատմամբ պահանջները

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, սույն օրենքի համաձայն, իրականացնում է կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարում:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարում իրականացնող կառավարիչն իրավունք չունի կառավարելու «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կամ չտարատեսականացված ներդրումային ֆոնդ:

2. Կառավարչի ղեկավարները և աշխատակիցներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների շահերից, իրենց իրավունքներն իրականացնել և ֆոնդի մասնակիցների նկատմամբ իրենց պարտականությունները կատարել բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով (ֆիդուցիար պարտականություն):

3. Կառավարիչը պարտավոր է վարել իր սեփական ակտիվների, իր կողմից կառավարվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ու արժեթղթերի փաթեթի առանձնացված հաշվառում:

4. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն համարվում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սեփականությունը և դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պարտավորությունների համար, ներառյալ՝ սնանկության դեպքում:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և տվյալ ֆոնդի կանոններով սահմանված կարգով օրական կտրվածքով որոշում է իր կառավարման ներքո գտնվող յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի և ֆոնդի փայերի զուտ ակտիվների արժեքը:

Հոդված 23. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կազմակերպահիրավական ձևերը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները կարող են ստեղծվել «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպահիրավական տեսակներով:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

Հոդված 24. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պետական գրանցումը և լիցենզավորումը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների պետական գրանցումն ու լիցենզավորումն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 25. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ գործում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ներդրումային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ սահմանված պահանջներն ու սահմանափակումները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով:

Հոդված 26. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆիրմային անվանումը, մասնակցության սահմանափակումները, կառավարման մարմինները և ղեկավարները, նրանց մասնագիտական համապատասխանությունը և որակավորումը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆիրմային անվանմանը, նրա կապիտալում մասնակցության սահմանափակումներին, նրա կառավարման մարմիններին և ղեկավարներին, ղեկավարների մասնագիտական համապատասխանությանը և որակավորման հարցերին վերաբերող պահանջները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 27. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտը: Տարեկան աուդիտի եզրակացությունը

1. Կենսաթոշակային ֆոնդի և նրա կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է հրապարակել, ինչպես նաև իր համացանցային կայքում տեղադրել ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

Հոդված 28. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ վերահսկողությունը: Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունը

1. Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են կազմել, հրապարակել և Կենտրոնական բանկ ներկայացնել սույն օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տարեկան և միջանկյալ հաշվետվություններն ու տեղեկությունները: Հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման և հրապարակման կարգը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից հրապարակվող և (կամ) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները ու տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ամբողջական:

Հոդված 29. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և իր կողմից կառավարվող ֆոնդի մասին տեղեկատվությունը և դրա հրապարակումը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունները պետք է մատչելի լինեն յուրաքանչյուրի համար:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է մշտապես ունենալ գործող համացանցային կայք և այդ կայքում առնվազն հայերենով հրապարակել իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկությունները.

1) ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացությունը: Ընդ որում, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են սույն կետում նշված ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում,

2) կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կազմի և կառուցվածքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն,

3) եկամտաբերության վերաբերյալ տեղեկատվություն,

4) շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշումների մասին տեղեկատվություն, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,

5) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության չափը,

6) կառավարչի տնօրենների խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը և ամսաթիվը, կենսագրությունը):

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել սույն մասի 1-6-րդ կետերում նշված, ինչպես նաև այլ տեղեկությունների (բացառությամբ օրենքով սահմանված առևտրային կամ այլ գաղտնիք կամ ծառայողական տեղեկատվություն կազմող տեղեկությունների) հրապարակման ձևը, կարգը (այդ թվում՝ հրապարակման միջոցները) և պարբերականությունը:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց ինտերնետային կայքում կամ հասարակության համար հասանելի այլ ձևով հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից առաջարկվող կենսաթոշակային ֆոնդերի մասին:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մինչև մայիսի 1-ը, առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակել աուդիտորական եզրակացությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն իրավունք չունի իր գովազդում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի վերաբերյալ արված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության կամ տարընթերցման տեղիք տալ տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի մասին:

6. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները սահմանում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի հետ:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից սույն հոդվածի համաձայն հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ամբողջական:

Հոդված 30. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալը և դրան ներկայացվող պահանջները

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, որը չի կարող լինել հինգ հարյուր միլիոն դրամից պակաս՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար, և երկու հարյուր միլիոն դրամից պակաս՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար:

Հոդված 31. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գովազդը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իր գործունեության վերաբերյալ գովազդ համարվող ցանկացած տեղեկատվության բովանդակությունը նախապես համաձայնեցնել Կենտրոնական բանկի հետ: Եթե Կենտրոնական բանկը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով 10-օրյա ժամանակահատվածում չի մերժում ներկայացված գովազդին համաձայնություն տալու վերաբերյալ կառավարչի դիմումը, ապա տվյալ գովազդին համաձայնությունը համարվում է տրված, և կառավարիչը կարող է հրապարակել տվյալ գովազդը:

2. Կենտրոնական բանկը գովազդային տեղեկատվությունը հրապարակելու համաձայնություն չի տալիս կամ արգելում է դրա հրապարակումը, եթե այն՝

1) հակասում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին.

2) հակասում է սույն օրենքին և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին.

3) պարունակում է թյուր կամ ապակողմնորոշող տեղեկություններ:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին արգելվում է՝

1) հրապարակվող տեղեկատվությամբ երաշխավորել կենսաթոշակային ֆոնդում ներդրումների կանխատեսված կամ ակնկալվող աճ, ինչպես նաև վճարման ենթակա կուտակային կենսաթոշակների կանխատեսված գումարների չափերը,

2) չհիմնավորված կամ ապակողմնորոշիչ խոստումների միջոցով ազդել անձի վրա՝ նրան դրդելով ընտրել տվյալ կառավարչի որևէ կենսաթոշակային ֆոնդ,

3) օգտագործել գովազդային նյութեր անբարեխիղճ մրցակցության համար՝ նշելով կենսաթոշակային ֆոնդի կառավարման նույնանման գործունեություն իրականացնող այլ սուբյեկտների ցանկացած թերություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկություններն իրականում հավաստի են, թե ոչ:

Հոդված 32. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործունեության դադարումը և կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լուծարման մասին (ինքնալուծարում), ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի միջնորդագրի հիման վրա կարող է ուժը կորցրած ճանաչվել նրա՝ պարտադիր կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունը:

2. Ինքնալուծարման կամ պարտադիր կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու համար կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և պայմաններով պետք է ստանա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նախնական համաձայնությունն ստացած կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը միջոցներ է ձեռնարկում իր կողմից կառավարվող բոլոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի (կառավարիչների) փոխանցելու ուղղությամբ: Ընդ որում, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրը կնքվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանվում են պահանջներ սույն մասով նախատեսված մրցույթին ներկայացված հայտերի գնահատման համար, որոնք պետք է հաշվի առնեն հայտը ներկայացնողի կողմից սահմանված կառավարման վճարները, նրա ֆինանսական վիճակը, հեղինակությունը, փորձը և այլ հանգամանքներ:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիան կամ պարտադիր կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունը որպես պատժամիջոց ուժը կորցրած ճանաչվելու դեպքում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունները կատարում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը (լուծարային հանձնաժողովը):

Կենսաթոշակային ֆոնդի գործունեության դադարումն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով սահմանված՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման կամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու մասին որոշում ընդունելուց հետո՝ 3 օրվա ընթացքում, Կենտրոնական բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել մասնակիցների ռեեստրը վարողին:

6. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է 10-օրյա ժամկետում տեղեկացնել տվյալ կառավարչի կենսաթոշակային ֆոնդն ընտրած մասնակիցներին կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործունեության դադարման, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի նոր ընտրություն կատարելու նրանց իրավունքի մասին:

7. Սույն հոդվածով սահմանված կարգով պարտադիր կենսաթոշակային ֆոնդն այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի փոխանցվելու պահից 60 օրվա ընթացքում փոխանցված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներն իրավունք ունեն սույն օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով անվճար փոխելու այդ կենսաթոշակային ֆոնդը:

ԳԼՈՒԽ 6
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 33. Կենսաթոշակային ֆոնդի պահառուն

1. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունն իրականացվում է սույն օրենքով և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Պահառուն պարտավոր է ակտիվների պահառության ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից (ֆիդուցիար պարտականություն):

3. Պահառուն պարտավոր է տարանջատել պահառության հանձնված յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները իր և այլ անձանց ու ֆոնդերի ակտիվներից և դրանց վերաբերյալ վարել առանձնացված հաշվառում:

4. Կենսաթոշակային ֆոնդի պահառու կարող է լինել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկը, որն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առնվազն 2 տարի մատուցում է արժեթղթերի պահառության ծառայություն:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին արգելվում է կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառության պայմանագիր կնքել իր հետ փոխկապակցված պահառուի հետ:

5. Այն դեպքում, երբ կենսաթոշակային ֆոնդի պարտադիր կուտակային ակտիվները ներդրված են նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս, ապա պահառուն անհրաժեշտության դեպքում կնքում է համապատասխան պայմանագիր օտարերկրյա պահառուի հետ՝ այդ պահառության գործառույթները նրա միջոցով իրականացնելու համար՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

6. Պահառուն իրավունք ունի միաժամանակ իրականացնելու երկու և ավելի կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունը: Այդ դեպքում պահառուն պարտավոր է տարանջատել և վարել առանձնացված հաշվառում ինչպես իր սեփական, այնպես էլ յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների, դրանց հետ իրականացվող գործառնությունների և գրառումների վերաբերյալ:

7. Կենսաթոշակային ակտիվները չեն համարվում պահառուի սեփականությունը և դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել պահառուի պարտավորությունների համար, ներառյալ՝ սնանկության դեպքում:

Հոդված 34. Պահառուի գործառույթները

1. Բացի «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներից, պահառուն պարտավոր է Կենտրոնական բանկին ծանուցել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից սույն օրենքի, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և ֆոնդի կանոնների ու պահանջների խախտման կամ նման խախտման մեջ հիմնավոր կասկածներ ունենալու մասին: Սույն մասում նշված խախտումը բացահայտելու կամ խախտման մեջ կասկածելու դեպքում պահառուն պարտավոր է 1 օրվա ընթացքում դրա մասին ծանուցել Կենտրոնական բանկին:

2. Կենսաթոշակային ֆոնդի պահառուն, ի լրումն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթների, իրականացնում է նաև հետևյալ գործառույթները՝

1) կազմակերպում է կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակումը այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերի,

2) կազմակերպում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակումը այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի՝ կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի հետ համատեղ,

3) մասնակիցների ռեեստրը վարողի և ապահովագրական ընկերության հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված միջոցների փոխանցումը ապահովագրական ընկերությանը՝ սույն օրենքի համաձայն անուիտետի պայմանագիր կնքելու նպատակով,

4) կազմակերպում է կենսաթոշակային ֆոնդի մասնակցին պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումը՝ ապահովագրական ընկերության հետ կուտակային կենսաթոշակի պայմանագիր կնքելու նպատակով,

5) իրականացնում է սույն օրենքից բխող այլ գործառույթներ:

Հոդված 35. Պահառուի պատասխանատվությունը

1. Պահառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի միջև կնքված պայմանագիրը չի կարող սահմանափակել սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված պահառուի պատասխանատվությունը:

3. Պահառուն պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար: Այդ վնասները չեն կարող հատուցվել պահառության հանձնված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին:

4. Սույն օրենքի և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ պահառուի պարտականությունների մի մասը այլ պահառուի կողմից իրականացվելու դեպքում (ենթապահառություն) հիմնական պահառուն է պատասխանատվություն կրում պատճառված վնասների համար՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Հոդված 36. Պահառուի փոփոխությունը

1. Պահառուն կարող է իր հայեցողությամբ դադարեցնել կենսաթոշակային ֆոնդի պահառության պայմանագիրը (պայմանագրի կամավոր դադարում)՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Իր հայեցողությամբ պայմանագիրը դադարեցնելու մտադրության դեպքում պահառուն պարտավոր է ենթադրյալ դադարեցման օրվանից առնվազն 90 օր առաջ այդ մասին տեղեկացնել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին, Կենտրոնական բանկին և մասնակիցների ռեեստրը վարողին (պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառության դեպքում):

3. Պահառուի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև պահառուի սնանկ ճանաչվելու դեպքերում (գործունեության հարկադիր դադարում) Կենտրոնական բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին՝ որոշման ընդունման օրվանից հետո՝ 3-օրյա ժամկետում:

4. Տեղեկությունը ստանալուց հետո՝ 60-օրյա ժամկետում, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է պահառության պայմանագիր կնքել այլ պահառուի հետ:

5. Կենսաթոշակային ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո պահառուն պարտավոր է կենսաթոշակային ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: Կենսաթոշակային ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում պահառուն պարտավոր է շարունակել կատարել օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս ֆոնդի ակտիվների փոխանցումը: Պահառուն շարունակում է պատասխանատվություն կրել մինչև ակտիվները և փաստաթղթերը նոր պահառուին ամբողջությամբ փոխանցելը:

ԳԼՈՒԽ 7
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 37. Մասնակիցների կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ընտրելու պարտականությունը

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցները պարտավոր են ընտրել որևէ կենսաթոշակային ֆոնդ: Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում մասնակիցը կարող է ընտրել միայն մեկ ֆոնդ: Նույն ժամանակահատվածում մասնակցի համար (օգտին) կատարվող յուրաքանչյուր կուտակային վճար (վճարներ) չի (չեն) կարող միաժամանակ ուղղվել մեկից ավելի կենսաթոշակային ֆոնդերի:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և նրանց կենսաթոշակային ֆոնդերի մասին ամբողջական և թարմացված տեղեկատվությունը պետք է մշտապես առկա լինի մասնակիցների ռեեստրը վարողի (այդ թվում՝ համացանցային կայքում) և հաշվի օպերատորի մոտ:

Հոդված 38. Կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը

1. Մասնակիցը պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ընտրելու համար պարտավոր է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնել կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմում՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում նշված միջոցներով կամ հաշվի օպերատորի միջոցով: Դիմումի ձևը և ներկայացման կարգը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) մասնակցի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը, ծննդյան տարեթիվը և ամսաթիվը,

2) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

3) մասնակցի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), բնակության վայրը և այլն),

4) մասնակցի՝ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն (կենսաթոշակային հաշվի քաղվածք, նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն և այլն) ստանալու նախընտրելի միջոցը,

5) ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անվանումը և կենսաթոշակային ֆոնդը,

6) հավաստում՝ ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման վճարների և ֆոնդի կանոնների հետ համաձայն լինելու մասին,

7) հավաստում, որ տեղյակ է կուտակային վճարներ կատարելու իր պարտականության մասին,

8) դիմումը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը,

9) մասնակցի (մասնակցի լիազոր ներկայացուցչի) ստորագրությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որն ապահովում է անձի նույնականացումը:

3. Մասնակիցները պարտավոր են մասնակիցների ռեեստրը վարողին տեղեկացնել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումում նշված անձնական տվյալների փոփոխության մասին:

Հոդված 39. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելը

1. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում մասնակցի համար կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը կատարում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ ծրագրային մոդուլի միջոցով:

Ծրագրային մոդուլը պատահականության սկզբունքով բաշխում է ընտրություն չկատարած մասնակիցներին բոլոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների միջև այլ մասնակիցների կողմից կատարված ընտրությանը համամասնորեն՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կենսաթոշակային ֆոնդի փայերը մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին փոխանցելու օրվանը նախորդող օրվա դրությամբ առկա համամասնությունը:

Կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած անձանց կուտակային վճարների հաշվին ձեռք են բերվում սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված սկզբունքով պատահական ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի միջին ռիսկայնության (պահպանողական (կոնսերվատիվ)) կենսաթոշակային ֆոնդի փայեր:

2. Մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել մասնակցին նրա անունից ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի մասին, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը փոխելու նրա իրավունքի մասին:

Հոդված 40. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը փոխելու մասնակցի իրավունքը

1. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած պահի անվճար փոխելու նախկինում ընտրված պարտադիր կենսաթոշակային ֆոնդը՝ իր հետագա կուտակային վճարներն ուղղելու նույն կամ նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող ցանկացած կենսաթոշակային ֆոնդ:

Սույն մասով սահմանված դեպքում մասնակիցը լրացնում և մասնակիցների ռեեստրը վարողին է ներկայացնում սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընտրության դիմում:

2. Մասնակիցն իրավունք ունի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի իր փայերը փոխանակելու միայն այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով: Մասնակիցն իրավունք ունի իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու այլ կենսաթոշակային ֆոնդի (նույն կամ այլ կառավարչի կողմից կառավարվող) փայերով՝ մասնակիցների ռեեստրը վարողին ֆոնդի փայերի փոխանակման դիմում ներկայացնելու միջոցով: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու դեպքում մասնակցից կարող է գանձվել փոխանակման ենթակա փայերի մարման վճար՝ սույն օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը պետք է պարունակի սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև նախկին և նոր ընտրված կենսաթոշակային ֆոնդերի և դրանց կառավարիչների անվանումները: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը մերժում է սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված դիմումը, եթե այն չի համապատասխանում սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է 5-օրյա ժամկետում տեղեկացնել դիմում ներկայացրած մասնակցին դիմումը մերժելու մասին՝ նշելով մերժելու պատճառները:

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 2-րդ մասի կամ սույն օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պետք է վճար գանձվի կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելիս, ապա մասնակիցների ռեեստրը վարողը պետք է տեղեկացնի մասնակցին այդ մասին՝ նշելով վճարման ենթակա գումարի չափը:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը մասնակիցների ռեեստր վարողին ներկայացնելու պահից սկսած՝ մասնակցի համար (օգտին) կատարվող կուտակային վճարները ուղղվում են նոր ընտրված կենսաթոշակային ֆոնդ:

7. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակումն իրականացվում է մասնակցի՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում:

8. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու դեպքում հիմք են ընդունվում համապատասխան ֆոնդերի փայերի նույն օրվա համար հաշվարկված և հրապարակված հետգնման (մարման) և տեղաբաշխման գները՝ հաշվի առնելով սույն օրենքի, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի և 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

9. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված պարտավորությունները մասնակիցների ռեեստրը վարողը կարող է իրականացնել տեղեկատվական համակարգով՝ մասնակիցների ռեեստրը վարողի համացանցային կայքի կամ հաշվի օպերատորի միջոցով:

10. Կենսաթոշակային ֆոնդերի փայերի փոխանակումն արգելվում է, եթե կասեցված է փոխանակման ենթակա փայերի հետգնումը (մարումը) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկումը՝

1) Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ կամ

2) պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոնների համաձայն՝ ֆոնդի կանոններով սահմանված հիմքերով: Ընդ որում, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոններով կարող են սահմանվել միայն Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ որոշմամբ սահմանված փայերի հետգնման (մարման) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկման կասեցման հիմքերը: Սույն կետով սահմանված դեպքում փոխանակման ենթակա փայերի հետգնումը (մարումը) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկումը կարող է կասեցվել ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով՝ նախապես տեղեկացնելով Կենտրոնական բանկին և պահառուին փայերի հետգնման (մարման) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկման կասեցման մասին՝ նշելով դրա հիմքերը, ինչպես նաև այդ մասին տեղեկատվությունը երեք օրվա ընթացքում հրապարակելով առնվազն 3000 տպաքանակ ունեցող հանրապետական տարածում ունեցող մամուլում:

ԳԼՈՒԽ 8
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հոդված 41. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սկզբունքները

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կարող են ներդրվել բացառապես սույն օրենքի, սույն օրենքի համաձայն ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև տվյալ ֆոնդի կանոնների պահանջներին համապատասխան:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում ունենալ առնվազն մեկ տոկոս մասնակցություն՝ իր սեփական ակտիվներից: Սույն պարբերությամբ սահմանված նվազագույն չափը նվազելու դեպքում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում համապատասխան կենսաթոշակային ֆոնդում ավելացնել իր մասնակցությունը մինչև մեկ տոկոս: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

2. Նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ներդրումների արդյունավետությունը՝ հօգուտ պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

1) ակտիվների ապահովություն և եկամտաբերություն,

2) ռիսկերի դիվերսիֆիկացիա,

3) համարժեք իրացվելիության ապահովում:

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրումը սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշվածներից տարբեր այլ նպատակներով ու սկզբունքների հիման վրա համարվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտում:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ հսկելու և գնահատելու դիրքերի ռիսկերը և դրանց բաժինը կենսաթոշակային ֆոնդի ընդհանուր ռիսկի մեջ:

Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 42. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի նկարագրությունը

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերն են՝

1) հավասարակշռված ֆոնդ, որի կանոնների համաձայն՝ բաժնային արժեթղթերի և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքների կշիռը ֆոնդի ակտիվներում չի կարող գերազանցել 50 տոկոսը.

2) պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդ, որի կանոնների համաձայն՝ բաժնային արժեթղթերի և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքների կշիռը ֆոնդի ակտիվներում չի կարող գերազանցել 25 տոկոսը.

3) կայուն եկամտային ֆոնդ, որի կանոնների համաձայն՝ ակտիվները չեն կարող ներդրվել բաժնային արժեթղթերում և դրանց վրա հիմնված ածանցյալ գործիքներում:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի համար Կենտրոնական բանկ գրանցման ներկայացնել ֆոնդի կանոնները, որը, բացի «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներից, պետք է նախատեսի՝

1) ֆոնդի կառավարչի փայերի թողարկման և մարման ընթացակարգը,

2) ծրագրային վճարների հաշվարկման և կատարման կարգը,

3) կենսաթոշակային ֆոնդերի փայերի մարման և ստացված միջոցները ապահովագրական ընկերությանը փոխանցելու կարգը,

4) պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների հետ կապված որոշումներ ընդունելու համար նախատեսված ընթացակարգերը և պատասխանատու պաշտոնատար անձանց:

Յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ պարտավոր է առաջարկել առնվազն պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդ:

3. Կենտրոնական բանկը կարող է ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք լրացուցիչ պահանջներ կսահմանեն կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդ պետք է նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերից տարբերվի բաժնային արժեթղթերում ներդրումների թույլատրելի սահմանաչափի առնվազն 15 տոկոս տարբերությամբ:

5. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերի իմաստով բաժնային արժեթղթերը չեն ներառում այն ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը), որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն՝ ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել միայն սույն օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված բանկային ավանդներում, պարտքային արժեթղթերում կամ դրանց հեջավորման նպատակով ձեռք բերվող ածանցյալ գործիքներում:

Հոդված 43. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների թույլատրելի ներդրումները

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

2. Արտասահմանում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,

2) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,

3) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,

4) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել օտարերկրյա թողարկողների կամ դրանց թողարկած արժեթղթերի նկատմամբ նվազա-

գույն չափանիշներ, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1) բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,

2) Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,

3) Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերում,

4) այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց կամ դրանց թողարկած արժեթղթերի նկատմամբ նվազագույն չափանիշներ, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները:

4. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող ձևավորվել փոխառու միջոցների հաշվին, բացառությամբ եթե փոխառությունները ներգրավվել են մինչև 3 ամիս մարման ժամկետով և տվյալ կենսաթոշակային ֆոնդի ակտիվների մինչև 10 տոկոսի չափով, և եթե տվյալ փոխառությունների ներգրավման արդյունքում չեն խախտվում սույն օրենքով նախատեսված սահմանաչափերը:

Հոդված 44. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սահմանափակումները

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները սույն օրենքի 43-րդ հոդվածում թվարկված ֆինանսական գործիքներում կարող են ներդրվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակային և արժութային սահմանափակումների շրջանակներում:

2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում,

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի աուդիտն իրականացնող անձի թողարկած արժեթղթերում,

3) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,

4) ածանցյալ գործիքներում, բացառությամբ հեջավորման նպատակով ներդրումների,

5) այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է,

6) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մետաղներ և այլն):

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերը չեն կարող կարգավորվող շուկայից դուրս վաճառվել կամ ցանկացած այլ ձևով օտարվել՝

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուին,

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին,

3) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի կառավարման մարմնի անդամներին,

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված անձանց հետ փոխկապակցված անձանց:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ձեռնարկել քայլեր՝ համապատասխանեցնելու կենսաթոշակային ֆոնդի ներդրումները սույն օրենքի պահանջներին, և ապահովել հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները, եթե սույն հոդվածի 1-ին մասի հիման վրա սահմանված սահմանափակումները խախտվել են որպես հետևանք՝

1) շուկայական գների փոփոխության, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների գնահատման համար,

2) արտարժույթի փոխարժեքի փոփոխության,

3) կազմակերպությունների միջև տնտեսական և կազմակերպական հարաբերությունների փոփոխության, որոնց բաժնետոմսերում ներդրվել են կենսաթոշակային ֆոնդի ակտիվները,

4) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամքից անկախ և հսկողությունից դուրս այլ հանգամանքների:

6. Սույն օրենքով նախատեսված ներդրումների համապատասխանությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ խախտումը տեղի է ունեցել կամ ակտիվների գնահատման արդյունքում հայտնի է դարձել խախտման մասին:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իրականացնել ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերով ամրագրված իրավունքները՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից:

ԳԼՈՒԽ 9
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 45. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակցի հաշվին կատարվող վճարները և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներից գանձվող վճարները և կատարվող ծախսերը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներից գանձում է վճար (կառավարչի պարգևավճար)՝ սույն օրենքի 47-րդ հոդվածում նշված չափով:

Բացի սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված պարգևավճարից, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կարող է կատարել նաև տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման հետ կապված ծախսերը, որոնց կազմը և առավելագույն չափը սահմանում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի հետ:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվներից, բացի սույն օրենքով սահմանված վճարներից և ծախսերից, այլ նվազեցումներն արգելված են:

2. Կենսաթոշակային ֆոնդի կանոններով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, կարող է սահմանվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման վճար, որը չի կարող գերազանցել մարվող փայերի հաշվարկային արժեքի մեկ տոկոսը:

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման վճար չի գանձվում սույն օրենքով սահմանված կարգով կենսաթոշակի անցնելիս կուտակված միջոցները անուիտետի, ծրագրային վճարի կամ միանվագ վճարի տեսքով ստանալու, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

1) մասնակցի կողմից իր կենսաթոշակային ֆոնդի փայերը նույն կառավարչի այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում.

2) սույն օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերով կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դեպքում.

3) մասնակցի կողմից 12 ամսվա ընթացքում առաջին անգամ իր փայերը այլ կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակման գործարքի դեպքում.

4) սույն օրենքի համաձայն՝ անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո սույն օրենքի 38-րդ կամ 39-րդ հոդվածով սահմանված կարգով մասնակցի (մասնակցի համար) առաջին անգամ ընտրած կենսաթոշակային ֆոնդի փայերի առաջին անգամ փոխանակման դեպքում.

5) ժառանգի կողմից սույն օրենքի 12-րդ գլխի համաձայն ժառանգված փայերի առաջին փոխանակման գործարքի դեպքում:

Հոդված 46. Պահառուի ծառայությունների համար վճարները

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուի ծառայությունների համար վճարները կատարվում են համաձայն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ կնքված պայմանագրի՝ տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվին:

Հոդված 47. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պարգևավճարը

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչն իր կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանում է տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար տարեկան պարգևավճարներ և դրանց հաշվարկման կարգը:

2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման տարեկան պարգևավճարի չափը չպետք է գերազանցի տվյալ կենսաթոշակային ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի 1.5 տոկոսը:

Հոդված 48. Մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարները

1. Մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարները կատարվում են համաձայն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ կնքված պայմանագրի՝ տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվին:

Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գանձվող վճարների չափը պետք է տնտեսապես հիմնավորված լինի և նրա համար ապահովի ողջամիտ եկամտաբերություն:

2. Մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարի առավելագույն չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության և մասնակիցների ռեեստրը վարողի միջև կնքված պայմանագրով:

3. Մասնակիցներից մասնակիցների ռեեստրը վարողին ուղղված՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կամ ժառանգության ձևակերպման վերաբերյալ դիմումի համար մասնակցից կամ նրա ժառանգից գանձվում է վճար, որը չի կարող ավելի լինել, քան այդ նպատակով կատարվող ծախսերի և ողջամիտ շահութաբերության հանրագումարը:

ԳԼՈՒԽ 10
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հոդված 49. Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիության երաշխավորումը

1. Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, վերադարձելիությունը երաշխավորվում է:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գումարի վերադարձելիությունը գումարի 20 տոկոսով երաշխավորում է սույն օրենքի հիման վրա ստեղծված Երաշխիքային ֆոնդը, իսկ մնացած 80 տոկոսով՝ Հայաստանի Հանրապետությունը:

Հոդված 50. Երաշխավորված պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպքը

1. Մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպք է համարվում այն իրավիճակը, երբ սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված դիմումը ստանալու օրվա դրությամբ անձի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի հաշվարկային արժեքների հանրագումարը փոքր է սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գումարից:

2. Յուրաքանչյուր մասնակցին սույն գլխով նախատեսված հատուցումն իրականացվում է միայն մեկ անգամ:

Հոդված 51. Երաշխիքային ֆոնդի միջոցները և երաշխիքային վճարները

1. Երաշխիքային ֆոնդի միջոցները ձևավորվում են սույն օրենքով սահմանված երաշխիքային վճարների գումարներից, դրանց կառավարումից ստացված եկամուտներից, կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ սույն օրենքի 52-րդ

հոդվածի 5-րդ մասի համաձայն ձեռք բերած պահանջի հիման վրա ստացված գումարներից, այլ եկամուտներից ու միջոցներից:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից կատարվող երաշխիքային վճարների գումարները կուտակվում են Երաշխիքային ֆոնդի՝ Կենտրոնական բանկում գտնվող հաշվում:

3. Երաշխիքային ֆոնդի միջոցները կարող են օգտագործվել բացառապես սույն օրենքով նախատեսված կարգով և պայմաններով երաշխավորված պարտադիր կուտակային կենսաթոշակների հատուցման և Երաշխիքային ֆոնդի կառավարման այլ գործառնական ու վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների ծրագրի իրականացման համար, որոնք սահմանված են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի համար:

4. Երաշխիքային ֆոնդի կառավարման տարեկան վարչական ծախսերը և կապիտալ ներդրումները չեն կարող գերազանցել հավաքագրված երաշխիքային վճարների 0.1 տոկոսը:

5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները, բացառությամբ անվճարունակ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների, պարտավոր են սույն օրենքով նախատեսված կարգով Երաշխիքային ֆոնդին վճարել միանվագ և պարբերական երաշխիքային վճարներ: Երաշխիքային վճարների հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն ստանալու պահից տասնօրյա ժամկետում իրենց հաշվին վճարում են միանվագ երաշխիքային վճար՝ 15 միլիոն դրամ գումարի չափով:

7. Պարբերական երաշխիքային վճարները կատարվում են եռամսյակը մեկ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը: Պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը հաշվարկվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների տարեկան 0.02 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով: Ընդ որում, պարբերական երաշխիքային վճարները կատարվում են համապատասխան պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին:

8. Երաշխիքային ֆոնդում կուտակված միջոցները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

9. Եթե հաշվետու եռամսյակի վերջին օրը Երաշխիքային ֆոնդի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, գերազանցում են տվյալ եռամսյակի վերջին օրվա դրությամբ երաշխիքային վճարներ կատարող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 2.5 տոկոսը, ապա կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարբերական երաշխիքային վճարներ չեն կատարում: Այդ մասին Երաշխիքային ֆոնդը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնին հայտնում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա հինգերորդ օրը:

10. Սույն հոդվածով սահմանված երաշխիքային վճարները չկատարելու դեպքում այդ գումարների վրա հաշվարկվում են երաշխիքային վճար կատարելու համար սահմանված օրվա դրությամբ գործող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի եռապատիկի չափով տոկոսներ, որոնք վճարվում են չվճարող կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվին:

Հոդված 52. Մասնակիցների կատարած երաշխավորված կուտակային վճարումների հատուցումը, տեղեկատվության փոխանակումը և վերահսկողությունը

1. Հատուցման դեպքի առկայության մասին որոշումը մասնակիցների ռեեստրը վարողն ընդունում է սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, որից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցին հայտնում է հատուցման դեպքի առկայության (կամ դրա բացակայության) և սույն օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված տարբերության չափի մասին:

2. Հատուցման դեպքի առկայության փաստը բացահայտելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, մասնակիցների ռեեստրը վարողն այդ մասին (ներառյալ՝ սույն օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված տարբերության չափի) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնին և Երաշխիքային ֆոնդին՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած փաստաթղթերը և տեղեկությունները:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը և Երաշխիքային ֆոնդը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, հատուցման դեպքի առկայության փաստը հաստատված համարելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակիցների ռեեստրը վարողին են փոխանցում սույն օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված տարբերության գումարը՝ յուրաքանչյուրը իր՝ սույն օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մասնաբաժնին համապատասխանող չափով:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտադիր կուտակային կենսաթոշակը վճարելիս մասնակցի կենսաթոշակային հաշվում գտնվող բոլոր փայերի մարումից ստացված գումարին միացնում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ստացած գումարը: Եթե մասնակիցը, ստանալով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված գումարը, ցանկանում է կենսաթոշակը ստանալ ծրագրային վճարի տեսքով, ապա սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված գումարի հաշվին սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով մասնակցի համար ձեռք են բերվում այն կենսաթոշակային ֆոնդի փայերը, որին մասնակիցը վճարումներ է կատարելիս եղել սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումը ներկայացնելու պահին:

5. Երաշխավորված պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարների՝ ճշգրտված տարեկան գնաճով հատուցումն իրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը հատուցած գումարի և հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերի չափով հետադարձ պահանջի իրավունք են ձեռք բերում համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ, եթե հատուցման դեպքն առաջացել է տվյալ կառավարչի գործողությունների կամ անգործության հետևանքով, բացառությամբ երբ կառավարիչն ապացուցում է, որ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

6. Երաշխիքային ֆոնդի և Կենտրոնական բանկի, ինչպես նաև Երաշխիքային ֆոնդի և մասնակիցների ռեեստրը վարողի միջև տեղեկությունների փոխանակման կարգը և պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

7. Երաշխիքային ֆոնդի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի միջև տեղեկությունների փոխանակման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Երաշխիքային ֆոնդի կողմից սույն օրենքով, Երաշխիքային ֆոնդի գործունեությունը կարգավորող այլ օրենքներով և դրանց համապատասխան ընդունված իրավական այլ ակտերով սահմանված գործունեության, Երաշխիքային ֆոնդի, ինչպես նաև դրա տնօրենի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Կենտրոնական բանկը՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 11

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Հոդված 53. Պարտադիր կուտակային կենսաթոշակների տեսակները

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակների տեսակներն են՝

1) անուիտետները.

2) ծրագրային վճարները.

3) միանվագ վճարները:

2. Կուտակային կենսաթոշակի չափը որոշվում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի արժեքի և կուտակային կենսաթոշակների ստացման ժամանակահատվածի հիման վրա:

3. Անուիտետների և ծրագրային վճարների հաշվարկման համար մասնակիցների ռեեստրը վարողը և ապահովագրական ընկերությունները պետք է օգտագործեն երկու սեռի համար ունիվերսալ մահացության աղյուսակներ:

4. Կուտակային կենսաթոշակների վրա բռնագանձում կարող է տարածվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 54. Մասնակցի պարտադիր կուտակային կենսաթոշակների ստացման կարգը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո

1. Մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում, եթե լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Մասնակիցը կարող է սույն օրենքով սահմանված կարգով տնօրինել իր պարտադիր կուտակային կենսաթոշակը՝ անկախ պետական կենսաթոշակը ստանալու փաստից:

2. Պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալու ցանկություն ունենալու դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակ ստանալ ցանկացող մասնակիցը դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին իր կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարի մասին տեղեկանք ստանալու վերաբերյալ: Մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է դիմումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, մասնակցին տրամադրել տեղեկանք՝ սույն մասի առաջին նախադասությամբ նշված տեղեկություններով: Մասնակցի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող դիմումի, ինչպես նաև մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակցին տրամադրվող տեղեկանքի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով: Կենսաթոշակային հաշվի հաշվեկշիռը կազմվում է պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցելու օրվանից սկսած՝ մինչև մասնակիցների ռեեստրը վարողին դիմում ներկայացնելու օրը:

3. Կախված մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից՝ մասնակիցն իր պարտադիր կուտակային կենսաթոշակը կարող է ստանալ հետևյալ ձևերով.

ա) եթե մասնակցի միջոցները, սույն օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակային կենսաթոշակը ստանալու ծրագրային վճարների (բացառությամբ սույն օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) կամ միանվագ վճարի ձևով.

բ) եթե մասնակցի միջոցները, սույն օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, բայց փոքր այդ կենսաթոշակի հնգապատիկից, ապա մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված գումարի չափով սույն օրենքով սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր.

գ) եթե մասնակցի միջոցները, սույն օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մի մասի մարման արդյունքում ստացված գումարի չափով սույն օրենքով սահմանված կարգով կնքել հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուիտետի պայմանագիր, իսկ մնացած մասը մասնակիցն իրավունք ունի ստանալու ծրագրային վճարների (բացառությամբ սույն օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) կամ միանվագ վճարի ձևով:

Իր ընտրության վերաբերյալ դիմումը մասնակիցը պարտավոր է ներկայացնել մասնակիցների ռեեստրը վարողին:

4. Անուիտետ ստանալու իրավունքը ծագում է անկախ այն հանգամանքից՝ մասնակիցն այլ աղբյուրներից անուիտետ, պետական կենսաթոշակ կամ նպաստ ստանում է, թե ոչ:

Հոդված 55. Մասնակցի միջոցներն ապահովագրական ընկերությանը փոխանցելը

1. Մասնակիցը գրավոր դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին՝ տեղեկացնելով ընտրված ապահովագրական ընկերության և անուիտետի պայմանագրի, ինչպես նաև փայերը մարելու և դրա արդյունքում ստացված միջոցներն ապահովագրական ընկերությանը փոխանցելու մասին: Դիմումի ձևը, ինչպես նաև դրան կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է տեղեկացնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին մարման պահանջի մասին և կենսաթոշակային ֆոնդի պահառուի հետ համատեղ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպել մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու դրա արդյունքում ստացված միջոցների փոխանցումը մասնակցի դիմումում նշված ապահովագրական ընկերությանը՝ անուիտետ գնելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում միջոցները ապահովագրական ընկերությանը չփոխանցելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը յուրաքանչյուր կետանցված օրվա համար մասնակցին վճարում է տույժ՝ չփոխանցված գումարի 0.01 տոկոսի չափով: Սույն մասով նախատեսված տույժ վճարելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի ներկայացնելու հետադարձ պահանջ տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուին, եթե կետանցը տեղի է ունեցել պահառուի մեղքով:

4. Ապահովագրական ընկերությունն իր հետ պայմանագիր կնքած մասնակցին գրավոր տեղեկացնում է սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դրամական միջոցների ստացման և դրանց չափի մասին՝ ստանալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում:

Հոդված 56. Անուիտետների տեսակները

1. Անուիտետի տեսակներն են՝

1) 10 կամ 5 տարով երաշխավորված անուիտետ (այսուհետ՝ որոշակի ժամկետով երաշխավորված անուիտետ).

2) ամուսինների անուիտետ՝ 10 կամ 5 տարի երաշխավորված ժամկետով:

2. Որոշակի ժամկետով երաշխավորված անուիտետը վճարվում է ցմահ, սակայն եթե անձը մահանում է նախքան 10 կամ 5 տարի (ըստ պայմանագրի) երաշխավորված ժամանակահատվածի լրանալը, ապա օրենքով ժառանգ համարվող անձինք իրավունք ունեն ապահովագրական ընկերությունից հետ ստանալ որոշակի ժամկետով երաշխավորված անուիտետի մնացորդային գումարը:

3. Ամուսինների անուիտետը վճարվում է ցմահ՝ այն անձին, հօգուտ որի այն նշանակվել է: Անձի մահից հետո, անուիտետը շարունակվում է վճարվել վերջինիս ողջ մնացած ամուսնուն ցմահ՝ անուիտետի պայմանագրում նախատեսված գումարի չափով: Եթե ամուսիններից երկուսն էլ մահանում են երաշխիքային ժամանակահատվածում, նրանց ժառանգները ստանում են չվճարված գումարի անուիտետի պայմանագրով սահմանված մասը:

4. Անուիտետի վճարման պայմանագրից բխող պարտավորական իրավունքները չեն կարող գրավադրվել որպես մեկ այլ պարտավորության կատարման ապահովման միջոց:

Հոդված 57. Անուիտետի պայմանագիր կնքելը

1. Ապահովագրական ընկերությունը անուիտետի պայմանագրով պարտավորվում է մասնակցի համար, սույն օրենքի 55-րդ հոդվածի համաձայն, իրեն միանվագ փոխանցված դրամական միջոցների դիմաց մասնակցին վճարել անուիտետ: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է անուիտետի պայմանագիր կնքել յուրաքանչյուր

մասնակցի հետ, որն ընտրել է տվյալ ապահովագրական ընկերության որևէ անուիտետ (հրապարակային պայմանագիր):

2. Մասնակիցն ու ապահովագրական ընկերությունը կնքում են անուիտետի վճարման պայմանագիր՝ հաշվի առնելով սույն օրենքով և դրանից բխող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

3. Անուիտետ վճարելու մասին պայմանագիր կնքելու համար մասնակիցը ապահովագրական ընկերություն է ներկայացնում (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սույն օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տրամադրած տեղեկանքը մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքի վերաբերյալ:

4. Անուիտետի պայմանագիր կնքելիս ապահովագրական ընկերությանն արգելվում է մասնակցից պահանջել վերջինիս առողջական վիճակի վերաբերյալ կամ հիվանդության պատմությունից որևէ տեղեկատվություն:

5. Անուիտետի պայմանագրում նշվում են՝

1) անուիտետի տեսակը,

2) մասնակցի տարիքը,

3) ապահովագրական ընկերությանը միանվագ փոխանցված գումարի չափը,

4) վճարման ենթակա անուիտետի չափը, ժամկետը և վճարման պարբերականությունը,

5) անուիտետի պայմանագրի դադարման հիմքերը և պայմանները,

6) պատասխանատվությունը անուիտետի պայմանագրի պայմանները խախտելու դեպքում,

7) օրենքով սահմանված այլ պայմաններ:

6. Անուիտետի պայմանագրում, բացի սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված էական պայմաններից, կողմերի հայեցողությամբ կարող են նախատեսվել սույն օրենքին և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտին չհակասող այլ դրույթներ:

Հոդված 58. Անուիտետի պայմանագրի դադարելը

1. Անուիտետի պայմանագիրը դադարում է անուիտետ ստացող անձի մահվան, իսկ ամուսինների անուիտետի պայմանագրի դեպքում՝ երկրորդ ամուսնու մահվան դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Երաշխավորված ժամկետում անուիտետ ստացող անձանց մահվան դեպքում անուիտետի պայմանագիրը դադարում է պայմանագրով սահմանված մնացորդային գումարը ժառանգներին՝ օրենքով սահմանված կարգով վճարելու դեպքում:

3. Ապահովագրական ընկերության կողմից 2 անգամ անընդմեջ անուիտետ չվճարելու դեպքում անուիտետ ստացող անձը կամ նրա ամուսինն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ լուծելու պայմանագիրը՝ պահանջելով ապահովագրական ընկերությունից կորցրած եկամտի փոխհատուցում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով անուիտետի պայմանագիրը լուծելու դեպքում անուիտետի մնացորդային գումարը ենթակա է փոխանցման անձի կողմից նշված այլ ապահովագրական ընկերությանը: Սույն մասում նշված մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերություն փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 59. Ծրագրային վճարը

1. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կուտակային կենսաթոշակը կարող է վճարվել ծրագրային վճարի տեսքով:

2. Ծրագրային վճարը մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերի մասնակի մարումների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է՝ բաշխված ըստ կյանքի սպասվող տևողության ամիսների:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է ծրագրային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը:

Հոդված 60. Միանվագ վճարը

1. Միանվագ վճարը կատարվում է՝

1) սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում.

2) նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը անձին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում.

3) մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում, ինչը հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից տրված եզրակացությամբ.

4) մասնակցի մահվան դեպքում՝ սույն օրենքի 61-րդ հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում իրավատերը (մասնակիցը, ժառանգը կամ այլ իրավազոր ֆիզիկական անձը) դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին՝ նշելով միանվագ վճար կատարելու հիմքը:

Դիմումի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Մասնակիցների ռեեստրը վարողը դիմումը ստանալու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, մարում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերը և կատարում է միանվագ վճար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում միանվագ վճարը չկատարելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը յուրաքանչյուր կետանցված օրվա համար մասնակցին վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.01 տոկոսի չափով: Սույն մասով նախատեսված տույժ վճարելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնելու տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուին, եթե կետանցը տեղի է ունեցել պահառուի մեղքով:

5. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճար կարող է կատարվել նաև՝

1) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին մշտական բնակության նպատակով մեկնում է արտասահման և հրաժարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

2) Հայաստանում աշխատող օտարերկրացիներին, ովքեր վերադառնում են իրենց մշտական բնակության երկիր:

Սույն մասով նախատեսված միանվագ վճարը կարող է կատարվել միայն անկախիկ փոխանցման միջոցով՝ համապատասխան օտարերկրյա պետությունում անձի գործող պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվին: Եթե համապատասխան օտարերկրյա պետությունում անձը չունի պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշիվ, կամ միջոցների փոխանցումն անհնար է որևէ այլ օբյեկտիվ պատճառով, ապա սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անձինք կարող են ստանալ իրենց միջոցները սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել սույն մասում նշված միանվագ վճարների կատարման կարգը և այլ պայմաններ:

ԳԼՈՒԽ 12
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐԻ ԵՎ ԱՆՈՒԻՏԵՏԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ

Հոդված 61. Կենսաթոշակային ֆոնդերի փայերի և անուիտետի ժառանգումը

1. Կենսաթոշակային ֆոնդերի փայերի և անուիտետի ժառանգման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով:

2. Կենսաթոշակային ֆոնդերի փայերը և անուիտետը կարող են ժառանգության կարգով փոխանցվել միայն ֆիզիկական անձանց և Հայաստանի Հանրապետությանը:

3. Ժառանգվել կարող են ինչպես նախքան կուտակային կենսաթոշակ ստանալը մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի

փայերը, այնպես էլ կուտակային կենսաթոշակ ստանալու ժամանակահատվածում մահացած կենսաթոշակառուի ժառանգման ենթակա փայերը և անուիտետը:

4. Մասնակցի մահվան դեպքում նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի փայերը փոխանցվում են նրա ժառանգի կենսաթոշակային հաշվին կամ սույն օրենքով սահմանված կարգով մարվում են և ժառանգություն ստացած ժառանգներին վճարվում են միանվագ վճարի տեսքով: Ընդ որում, եթե մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա ժառանգվող կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը՝

1) պակաս է հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկից, ապա փայերը մարվում են, և մարման արդյունքում ստացված գումարը վճարվում է ժառանգներին միանվագ վճարի տեսքով.

2) մեծ է հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկից, ապա հիմնական կենսաթոշակի քսանհինգապատիկի չափով փայերը մարվում են, և մարման արդյունքում ստացված գումարը վճարվում է ժառանգին միանվագ, իսկ գերազանցող մասը փոխանցվում է ժառանգի պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվին, եթե նա պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից է: Եթե ժառանգորդը ցանկանում է ժառանգված փայերը փոխանակել իր հաշվում գտնվող փայերով, ապա պարտավոր է լրացնել և մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնել սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը:

5. Եթե մահացած մասնակցի ժառանգը չի հանդիսանում պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից, ապա մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է նրա համար բացել կենսաթոշակային հաշիվ և ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանցել այդ կենսաթոշակային հաշվին՝ անկախ ժառանգի տարիքից: Այդ պահից սկսած՝ ժառանգը ձեռք է բերում կենսաթոշակային ֆոնդի մասնակցի համար սույն օրենքով սահմանված բոլոր իրավունքները և կրում է սույն օրենքով սահմանված բոլոր պարտականությունները, բացառությամբ պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտականության: Եթե ժառանգը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի և չունի մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված կենսաթոշակային հաշիվ, ապա նա գումարը ստանում է սույն օրենքով սահմանված կարգով՝ միանվագ վճարի տեսքով:

6. Մահացած կենսաթոշակառուի ժառանգման ենթակա կենսաթոշակը ժառանգներին օրենքով սահմանված չափով վճարվում է միանվագ վճարի տեսքով: Ապահովագրական ընկերությունից անուիտետի ժառանգման կարգը և դիմումի ձևը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

7. Եթե մահացած մասնակիցը չունի ժառանգ, ապա նրան պատկանող փայերը մարվում են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից, և ձևավորված դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

8. Սույն հոդվածի 7-րդ մասի կանոնները կիրառվում են նաև մահացած մասնակցի կենսաթոշակային ֆոնդի փայերի նկատմամբ, որոնց սեփականատերերին 3 տարի չի հաջողվել պարզել, և որոնք չեն մուտքագրվել որևէ մեկի կենսաթոշակային հաշվին:

Հոդված 62. Կենսաթոշակային ակտիվների ժառանգման կարգը

1. Ժառանգության վկայականը ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ժառանգը դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները սույն օրենքով սահմանված կարգով միանվագ ստանալու կամ սույն օրենքով սահմանված կարգով ժառանգություն ստացած փայերն իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու մասին: Դիմումի հետ ժառանգը պարտավոր է ներկայացնել նաև ժառանգության վկայականի պատճենը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը կարող է ներկայացվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Դիմումի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) ժառանգի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

2) ժառանգի սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, բացառությամբ այն դեպքի, երբ անձը օտարերկրյա քաղաքացի է և պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից չէ,

3) ժառանգի կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն և այլն),

4) ժառանգի՝ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն (նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն և այլն) ստանալու նախընտրելի միջոցը,

5) ժառանգատուի անունը և ազգանունը,

6) ժառանգատուի սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

7) ժառանգի ընտրած կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի անվանումը,

8) հավաստում այն մասին, որ համաձայն է սույն մասի 7-րդ կետում նշված կենսաթոշակային ֆոնդի կանոնների հետ,

9) հավաստում այն մասին, որ պահանջում է փայերի մարում և կուտակային ակտիվների միանվագ վճարում՝ նշելով իր անհատական բանկային հաշվի վավերապայմանները,

10) ժառանգության վկայականի վավերապայմանները,

11) դիմումի ներկայացման տարին, ամիսը և ամսաթիվը,

12) ժառանգի (ժառանգի լիազոր ներկայացուցչի) ստորագրությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որն ապահովում է անձի նույնականացումը:

Եթե ժառանգը դիմում է ներկայացրել ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը սույն օրենքին համապատասխան ամբողջությամբ իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու մասին, ապա սույն մասի 9-րդ կետով նախատեսված տեղեկությունները չեն լրացվում:

Եթե ժառանգը դիմում է ներկայացրել ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելու և ստացված դրամական միջոցները սույն օրենքին համապատասխան ամբողջությամբ միանվագ ստանալու մասին, ապա չեն լրացվում սույն մասի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված տեղեկությունները:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը չի կարող հետ կանչվել կամ փոփոխվել:

4. Եթե ժառանգը դիմում է ներկայացրել ժառանգած կենսաթոշակային ֆոնդի փայերն իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու մասին, ապա այդ դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները:

5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը ներկայացնելուց հետո մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է կազմակերպել կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանցումը ժառանգի կենսաթոշակային հաշվին և (կամ) կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը՝ դիմումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փայերի մարման ժամանակ փայի հետգնման (մարման) գնի հաշվարկման նկատմամբ կիրառվում են սույն օրենքի, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի և 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում կենսաթոշակային ակտիվները շարունակում են մնալ նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման ներքո մինչև 3 տարի ժամանակով: Երեք տարվա ընթացքում դիմում չներկայացնելու դեպքում փայերը մարվում են, և մարման արդյունքում առաջացած միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հոդված 63. Կենսաթոշակային ֆոնդերի փայերի ժառանգման մասին դիմումը մերժելը

1. Մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի մերժելու սույն օրենքի 62-րդ հոդվածով սահմանված դիմումը, եթե դիմումը չի համապատասխանում 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Դիմումը մերժելու և դրա պատճառների մասին մասնակիցների ռեեստրը վարողը գրավոր տեղեկացնում է դիմում ներկայացրած ժառանգին:

2. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սույն օրենքի 62-րդ հոդվածով սահմանված դիմումը մերժելու դեպքում ժառանգը պարտավոր է ներկայացնել նոր դիմում, որը կհամապատասխանի սույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

ԳԼՈՒԽ 13
ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հոդված 64. Կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի գործունեության սկզբունքները

1. Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կամավոր կուտակային բաղադրիչը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր մասնակցություն,

2) կամավոր կուտակային բաղադրիչին մասնակցության դեպքում՝ հարկային արտոնությունների տրամադրում:

2. Կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաները լինում են հետևյալ տեսակների.

1) սահմանված կենսաթոշակներ.

2) կուտակային կենսաթոշակային ավանդներ.

3) սահմանված կենսաթոշակային վճարներ:

Հոդված 65. Կամավոր կուտակային կենսաթոշակային գործունեություն իրականացնելը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում միայն կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները), բանկերը և ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն առաջարկելու կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներ:

2. Կամավոր կուտակային կենսաթոշակների պայմանագրի սուբյեկտ կարող է լինել գործատուն, որը կամավոր կուտակային կենսաթոշակի պայմանագիր է կնքում իր աշխատակիցների օգտին, ինչպես նաև ֆիզիկական անձը, որն իրավունք ունի կամավոր կուտակային կենսաթոշակի պայմանագիր կնքելու իր կամ այլ անձանց օգտին:

3. Կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերը պարտավոր են սահմանել կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կանոնները, որոնք պետք է ներառեն կամավոր կուտակային վճարի չափը, փայերի մարման վճարի չափը, վճարների կատարման ժամկետը և պարբերականությունը, կենսաթոշակների վճարման ժամկետներն ու պարբերականությունը, ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ պայմաններ:

4. Կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաների կանոնները կարող են փոփոխվել միայն ապագա ժամանակահատվածի համար, և դրանք չեն կարող վատթարացնել մասնակիցների/շահառուների կամավոր կուտակային կենսաթոշակի պայմանները:

5. Անձը կարող է մասնակցել միաժամանակ մեկից ավելի կամավոր սխեմաների:

6. Անձը կամավոր կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի:

7. Մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցն իրավունք ունի միանվագ վճարի ձևով ստանալու իր միջոցները հետևյալ դեպքերում.

1) անձին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում.

2) մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում, որը հավաստվում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տված եզրակացությամբ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում.

4) Հայաստանում աշխատող օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու դեպքում.

5) կամավոր կենսաթոշակային ֆոնդի դադարեցման (լուծարման) դեպքում:

Բոլոր այլ դեպքերում կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաների մասնակիցները կարող են օգտագործել այդ սխեմաներով կուտակված միջոցները միայն կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո:

Հոդված 66. Ապահովագրական ընկերությունների կողմից կամավոր կուտակային կենսաթոշակների տրամադրումը

1. Ապահովագրական ընկերությունները կարող են առաջարկել միայն «սահմանված կենսաթոշակներ» սխեմաներ:

2. Անձը կարող է ապահովագրական ընկերությունից կամավոր կենսաթոշակը ստանալ հետևյալ ձևերով.

1) միանվագ վճարի տեսքով.

2) ցմահ կամ ժամկետային վճարների (անուիտետի) տեսքով:

3. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է ունենալ ակտուարական հաշվարկներ իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան որակավորում ունեցող ակտուար կամ պայմանագրային կարգով օգտվել նման ակտուարի ծառայություններից:

4. Ապահովագրական ընկերությունների կողմից կամավոր կուտակային կենսաթոշակային միջոցների տնօրինումն ու օգտագործումն իրականացվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել «սահմանված կենսաթոշակներ» սխեմա առաջարկող ընկերությունների տեխնիկական պահուստների և ներդրումների նկատմամբ պահանջներ:

5. Ապահովագրական ընկերությունները կենսաթոշակները վճարում են սույն օրենքով և կամավոր կուտակային կենսաթոշակի (անուիտետի) պայմանագրով սահմանված կարգով: Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել կամավոր կուտակային կենսաթոշակի (անուիտետի) պայմանագրին, ինչպես նաև սույն օրենքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ գործատուի և ապահովագրական ընկերության միջև կնքվող պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջներ, որոնց ներառումը պայմանագրերում ապահովագրական ընկերության պարտականությունն է:

6. Մահացած կենսաթոշակառուի ժառանգման ենթակա անուիտետը ժառանգներին վճարվում է միանվագ վճարի տեսքով օրենքով և անուիտետի պայմանագրով սահմանված չափով: Ապահովագրական ընկերությունից անուիտետի ժառանգության ստացման կարգը և դիմումի ձևը սահմանվում են անուիտետի պայմանագրով:

Հոդված 67. Բանկերի կողմից կամավոր կուտակային կենսաթոշակների տրամադրումը

1. Բանկերը կարող են առաջարկել միայն «կուտակային կենսաթոշակային ավանդներ» կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներ:

2. Մասնակիցը կարող է բանկից կամավոր կենսաթոշակը ստանալ հետևյալ ձևերով՝

1) միանվագ վճարի տեսքով.

2) ժամկետային պարբերական վճարների տեսքով:

3. Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցն իրավունք ունի պահանջելու բանկից կուտակային կենսաթոշակային ավանդի գումարի կամ դրա մի մասի փոխանցումը ապահովագրական ընկերությանը՝ անուիտետի պայմանագիր կնքելու նպատակով: Բանկն իրականացնում է կուտակային կենսաթոշակային ավանդի գումարի կամ դրա մի մասի անկանխիկ փոխանցումը մասնակցի նշած ապահովագրական ընկերությանը՝ կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մասնակցի կողմից դիմումը ստանալուց

հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով նախատեսված ավանդի գումարի կամ դրա մի մասի փոխանցման դեպքում մասնակցին՝ փոխանցված գումարի մասով կանխիկ վճարումներ չեն կատարվում:

4. Բանկերը կենսաթոշակները վճարում են սույն օրենքով և կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրով սահմանված կարգով: Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել կամավոր կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջներ, որոնց ներառումը պայմանագրերում բանկի պարտականությունն է:

5. Մահացած մասնակցի ժառանգն իրավունք ունի ցանկացած ժամանակ բանկից պահանջելու կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը կամ դրա մի մասը՝ ներկայացնելով ավանդի պայմանագրով նախատեսված դիմումը և ժառանգության վկայականը: Բանկը պարտավոր է կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը կամ դրա մնացած մասը վերադարձնել մահացած մասնակցի ժառանգին՝ նրա առաջին իսկ պահանջով:

Հոդված 68. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կամավոր կուտակային կենսաթոշակների տրամադրումը

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները) կարող են առաջարկել միայն «սահմանված կենսաթոշակային վճարներ» սխեմաներ:

2. Կամավոր կուտակային վճար կատարելով՝ անձը ձեռք է բերում վճարին համապատասխան քանակով տվյալ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի տեղաբաշխման գինը: Ձեռք բերված փայերը հավաստում են մասնակցի՝ տվյալ ֆոնդի ակտիվների նկատմամբ փայամասնակցության իրավունքը:

3. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցը կարող է փոխանակել կամավոր կենսաթոշակային ֆոնդի իր փայերը միայն այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցն իրավունք ունի իր կամավոր կենսաթոշակային ֆոնդի (նախկին կենսաթոշակային ֆոնդ) փայերը փոխանակելու տվյալ կամ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի (նոր կենսաթոշակային ֆոնդ) փայերով՝ նախկին կենսաթոշակային ֆոնդի կառավարչին դիմում ներկայացնելու միջոցով: Նախկին կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարումն ու միջոցների փոխանցումը նոր կենսաթոշակային ֆոնդին՝ ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մասնակցի կողմից դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Փայերի փոխանակման դեպքում նախկին կենսաթոշակային ֆոնդի փայերը մարվում են, և մարման գնին համապատասխան չափով ձեռք են բերվում նոր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Փայերի փոխանակման դեպքում հիմք են ընդունվում նույն օրվա փայերի մարման (հետգնման) և տեղաբաշխման գները՝ հաշվի առնելով սույն հոդվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ մասերի, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի և 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

5. Եթե սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փոխանակման ենթակա նախկին կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումը (հետգնումը) կասեցված է, ապա փայերի փոխանակումն իրականացվում է փայերի հետգնման (մարման) կասեցման ժամկետի ավարտից անմիջապես հետո: Եթե փայերի փոխանակման արդյունքում ձեռքբերման ենթակա փայերի տեղաբաշխումը կասեցված է, ապա կառավարիչը մերժում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումը՝ մասնակցին տեղեկացնելով դիմումի մերժման պատճառների մասին:

Սույն մասով նախատեսված փոխանակման ենթակա նախկին կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումը (հետգնումը) կարող է կասեցվել միայն սույն օրենքի 40-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքերում:

6. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով կարող է նախատեսվել մասնակցի՝ տվյալ ֆոնդին մասնակցության նվազագույն ժամանակահատված, որը լրանալուց հետո միայն մասնակիցը կարող է պահանջել ձեռք բերված փայերի փոխանակումը (հաջորդ փոխանակումը)՝ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն: Սույն մասով սահմանված ժամանակահատվածը չի կարող 2 տարուց ավելի լինել:

7. Կամավոր կենսաթոշակային ֆոնդից կենսաթոշակների ստացման համար, ինչպես նաև սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում մասնակիցը պետք է ներկայացնի դիմում համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարչին: Դիմումի ձևը և դրանում պարունակվող տեղեկությունները սահմանվում են կենսաթոշակային ֆոնդի կանոններով:

8. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կենսաթոշակները վճարվում են սույն օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանված կարգով:

9. Մասնակիցը կարող է կամավոր կենսաթոշակային ֆոնդից կենսաթոշակը ստանալ հետևյալ ձևերով՝

1) միանվագ վճարի տեսքով.

2) ծրագրային վճարի տեսքով:

10. Մասնակիցն իրավունք ունի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո պահանջելու կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերի մարում և մարման արդյունքում ստացված միջոցների կամ դրանց մի մասի փոխանցումը ապահովագրական ընկերությանը՝ անուիտետի պայմանագիր կնքելու նպատակով: Մասնակցին պատկանող փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված դրամական միջոցների կամ դրանց մի մասի փոխանցումը մասնակցի նշած ապահովագրական ընկերությանը կազմակերպում է տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուն՝ մասնակցի կողմից սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով նախատեսված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ստացված միջոցների կամ դրանց մի մասի ապահովագրական ընկերությանը փոխանցման դեպքում մասնակցին՝ ապահովագրական ընկերությանը փոխանցված գումարի մասով, կենսաթոշակային ֆոնդը վճարումներ չի կատարում:

11. Կենսաթոշակային ֆոնդի մասնակցի մահվան դեպքում ժառանգն իրավունք ունի դիմում ներկայացնելու կենսաթոշակային ֆոնդի կառավարչին՝ ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները միանվագ ստանալու մասին: Դիմումի հետ ժառանգը պարտավոր է ներկայացնել նաև ժառանգության վկայականի պատճենը: Դիմումի ձևը և ներկայացման կարգը սահմանվում են կենսաթոշակային ֆոնդի կանոններով:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դիմումը ներկայացնելուց հետո կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իրականացնել կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը դիմումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներից գանձում է պարգևավճար՝ տվյալ կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանված չափով և կարգով:

14. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների (այդ թվում՝ սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված՝ կառավարչի պարգևավճարի, ինչպես նաև պահառուի պարգևավճարի) առավելագույն չափը, ինչպես նաև կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար տվյալ ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և առավելագույն չափերը սահմանում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի հետ:

15. Կենսաթոշակային ֆոնդի կանոններով, բացառությամբ կենսաթոշակի ստացման նպատակով կենսաթոշակային ֆոնդի փայերը մարելու դեպքի, կարող է սահմանվել կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման վճար, որը պետք է ուղղակի սահմանված լինի տվյալ կենսաթոշակային ֆոնդի կանոններով և չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի համատեղ հաստատված չափը:

Հոդված 69. Անձնավորված հաշվառումը «Սահմանված կենսաթոշակային վճարներ» կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայում

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերը յուրաքանչյուր շահառուի/մասնակցի համար պարտավոր են վարել անձնավորված հաշվառում՝ «Եկամտային հարկի և կուտա-

կային վճարների անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված սկզբունքներին համապատասխան:

2. «Սահմանված կենսաթոշակային վճարներ» սխեմայի յուրաքանչյուր մասնակցի համար պետք է բացվի կենսաթոշակային հաշիվ, որտեղ հաշվառվում են մասնակցին պատկանող տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերը:

3. Կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդը պարտավոր է պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ տեղեկատվություն տրամադրել մասնակցին նրա կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին՝ կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տարեկան տեղեկատվությունը մասնակցին տրամադրվում է թղթային տարբերակով, եթե մասնակիցը այլ նախընտրելի տարբերակ չի նշել:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տարեկան տվյալները մասնակցին տրամադրվում են անվճար՝ նախորդ տարվա համար ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

Հոդված 70. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սկզբունքները

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կարող են ներդրվել բացառապես սույն օրենքի, սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և ֆոնդի կանոնների պահանջներին համապատասխան:

2. Նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ներդրումների արդյունավետությունը՝ հօգուտ «Սահմանված կենսաթոշակային վճարներ» սխեմայում կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների, կամավոր կենսաթոշակային ֆոնդի ներդրումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

1) կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ապահովություն և եկամտաբերություն,

2) ռիսկերի դիվերսիֆիկացիա,

3) համարժեք իրացվելիության ապահովում:

3. «Սահմանված կենսաթոշակային վճարներ» սխեմայում կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշվածներից այլ նպատակներով ու սկզբունքների հիման վրա կհամարվի կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտում:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ հսկելու և գնահատելու դիրքերի ռիսկերը և դրանց բաժինը կենսաթոշակային ֆոնդի ընդհանուր ռիսկի մեջ:

Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 71. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների թույլատրելի ներդրումները

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

2. Հայաստանի Հանրապետությունում կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել հետևյալ ակտիվներում.

1) բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը չի գտնվում անվճարունակության (սնանկության) գործընթացում,

2) Հայաստանի Հանրապետության, Կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության համայնքների թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում,

3) Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,

4) այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

3. Արտասահմանում կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1) ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,

2) ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում,

3) ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների համայնքների թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում,

4) ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերում,

5) ՏՀՋԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),

6) Ռուսաստանի Դաշնության այն արժեթղթերում, որոնք բավարարում են Կենտրոնական բանկի սահմանած չափանիշները,

7) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով:

Կենտրոնական բանկ կարող է սահմանել այլ երկրների ցանկ, որտեղ կարող են ներդրվել կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները:

Հոդված 72. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման սահմանափակումները

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները սույն օրենքի 71-րդ հոդվածում թվարկված ֆինանսական գործիքներում կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակական և արժութային սահմանափակումների շրջանակում:

2. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում,

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի աուդիտն իրականացնող անձի թողարկած արժեթղթերում,

3) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,

4) ածանցյալ գործիքներում, բացառությամբ հեջավորման նպատակով ներդրումների,

5) այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է,

6) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մետաղներ և այլն):

3. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերը չեն կարող կարգավորվող շուկայից դուրս վաճառվել կամ ցանկացած այլ ձևով օտարվել՝

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի պահառուին.

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին.

3) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի կառավարման խորհրդի անդամներին.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված անձանց հետ փոխկապակցված անձանց:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

5. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները չեն կարող գրավադրվել կամ հանդիսանալ այլ պարտավորությունների ապահովման միջոց: Սույն մասով նախատեսված պահանջը չի սահմանափակում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման իրավունքը, եթե դա նախատեսված է կենսա-

թոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ), և եթե այդպիսի գործարքի արդյունքում չեն խախտվում սույն օրենքով նախատեսված սահմանաչափերը:

Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կարող է ներգրավել կարճաժամկետ՝ մինչև 3 ամիս մարման ժամկետով փոխառություններ՝ տվյալ կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 10 տոկոսը չգերազանցող չափով, եթե այդպիսի գործարքի արդյունքում չեն խախտվում սույն օրենքով նախատեսված սահմանաչափերը:

6. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ձեռնարկել քայլեր՝ համապատասխանեցնելու կենսաթոշակային ֆոնդի ներդրումները սույն օրենքի պահանջներին և ապահովելու հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել կենսաթոշակային ֆոնդի ակտիվները, եթե սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի դրույթները խախտվել են որպես հետևանք՝

1) շուկայական գների փոփոխության, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների գնահատման համար,

2) արտարժույթի փոխարժեքի փոփոխության,

3) կազմակերպությունների միջև տնտեսական և կազմակերպական հարաբերությունների փոփոխության, որոնց բաժնետոմսերում ներդրվել են կենսաթոշակային ֆոնդի ակտիվները,

4) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամքից անկախ և հսկողությունից դուրս այլ հանգամանքների:

7. Սույն օրենքով նախատեսված ներդրումների համապատասխանեցումը պետք է ավարտվի ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ տեղի է ունեցել խախտումը կամ ակտիվների գնահատման արդյունքում հայտնի է դարձել խախտման մասին:

8. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իրականացնել ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերով ամրագրված իրավունքները՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից:

Հոդված 73. Կամավոր կուտակային կենսաթոշակային գործունեության լիցենզավորումը

1. Բանկերը, ապահովագրական ընկերությունները, կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները) կարող են առաջարկել կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներ Կենտրոնական բանկի կողմից՝ համապատասխանաբար «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով տրված լիցենզիայի հիման վրա:

Հոդված 74. Գործատուի կողմից ձեռք բերվող լրացուցիչ (կորպորատիվ) կենսաթոշակները

1. Գործատուներն իրենց աշխատակիցներին լրացուցիչ (կորպորատիվ) կենսաթոշակներ տրամադրելու նպատակով կարող են կամավոր կենսաթոշակային սխեմաներ ձեռք բերել կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներից կամ ապահովագրական ընկերություններից:

2. Գործատուն իր աշխատողներին լրացուցիչ կուտակային կենսաթոշակներ տրամադրելիս չի կարող ցուցաբերել խտրական մոտեցում: Կորպորատիվ (լրացուցիչ) կենսաթոշակներ կարող են առաջարկվել ամբողջ կոլեկտիվին կամ տվյալ գործատուի աշխատողների որոշակի կատեգորիային (այդ թվում՝ կախված գործատուի մոտ աշխատողի աշխատած տարիների քանակից): Արգելվում է լրացուցիչ կուտակային կենսաթոշակներ տրամադրել բացառապես գործատուի ղեկավար կազմին: Աշխատողների որոշակի կատեգորիայի ներսում բոլոր աշխատողներին պետք է տրամադրվեն հավասար և միօրինակ պայմաններ:

3. Գործատուին արգելվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագիրը կնքել իր հետ փոխկապակցված ապահովագրական ընկերության կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հետ:

4. Գործատուի կողմից տրամադրվող լրացուցիչ կուտակային կենսաթոշակային սխեմայի ձեռքբերումը կարող է սահմանվել նաև կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով:

5. Լրացուցիչ (կորպորատիվ) կուտակային կենսաթոշակ ստանալու համար կամավոր կուտակային վճարներ կարող են կատարվել միայն գործատուների կամ գործատուների և աշխատողների կողմից:

6. Արգելվում է աշխատակցին պարտադրել մասնակցել կամ շարունակել մասնակցությունը գործատուի ձեռք բերած կամավոր կենսաթոշակային սխեմային՝ որպես տվյալ գործատուի մոտ աշխատելու պահանջ: Արգելվում է աշխատակցի աշխատավարձից կամ դրան հավասարեցրած այլ վճարումներից կատարել կամավոր կենսաթոշակային սխեմային մասնակցության հետ կապված նվազեցումներ կամ հատկացումներ՝ առանց աշխատակցի գրավոր համաձայնության:

Հոդված 75. Կենսաթոշակային հաշվում կուտակված կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանցելը

1. Մինչև կենսաթոշակային տարիքի լրանալը կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցը կարող է օգտագործել իր կամավոր կուտակային կենսաթոշակային փայերը սույն օրենքի 65-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքում և կարգով:

2. Աշխատակիցը սույն օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքը ձեռք է բերում՝

1) գործատուի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո.

2) գործատուի և տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի միջև կնքված համապատասխան պայմանագիրը խզվելուց հետո.

3) գործատուի լուծարվելուց հետո:

ԳԼՈՒԽ 14
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 76. Պատասխանատվությունը պարտադիր կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար

1. Սույն օրենքով պարտադիր կուտակային վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար:

Պարտադիր կուտակային վճարը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցը (նրա համար պարտադիր կուտակային վճարումներ կատարելու պարտականություն ունեցող անձը՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված պարտադիր կուտակային վճարի գումարի 0.15 տոկոսի չափով:

Եթե սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած անձը չի հայտնել իր գործատուին (հարկային գործակալին) պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից լինելու մասին, ապա սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տույժը գործատուի նկատմամբ չի կիրառվում մինչև հարկային մարմնի կողմից տվյալ անձի պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցության փաստի մասին տեղեկացվելը:

Սույն մասով նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված պարտադիր կուտակային վճարի գումարների նկատմամբ՝ կետանցման ամբողջ ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Պարտադիր կուտակային վճարներ չկատարելու կամ ուշացումով կատարելու համար գանձված տույժերի հաշվին ձեռք են բերվում այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը, որին այդ պահին պարտադիր կուտակային վճարներ է կատարում մասնակիցը (մասնակիցները), ում համար չի կատարվել կամ ուշացումով է կատարվել պարտադիր կուտակային վճարը:

2. Կուտակային վճարների վճարումն ուշացնելու դեպքում հարկային մարմինը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի) կուտակային վճարի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործատուին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Ընդ որում, այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ չկատարված կուտակային վճարներն ամբողջությամբ մարված չեն:

Կուտակային վճարներ՝ի կատարումը սահմանված ժամկետում չկատարվելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնելու հայցադիմում՝ գործատուի գույքը բռնագանձելու նպատակով:

Չվճարված կուտակային վճարների գումարի, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված տույժի չափը 500.000 և ավելի դրամ կազմելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի գործատուի՝ կուտակային վճարների չվճարված գումարին և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գումարին համարժեք գույքի վրա արգելանք դնելու մինչև դատարանի կողմից վճռի կայացումը, բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի վրա բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը:

Սույն մասով նախատեսված արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ գործատուի բանկային հաշիվների նկատմամբ, ապա անշարժ գույքի, այնուհետև՝ այլ ակտիվների նկատմամբ:

Դատարանի վճռից հետո հարկային մարմինը ապահովում է բռնագանձված գույքի իրացումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հարկային մարմնի կողմից գործատուի գույքի արգելադրումից հետո՝ 30-օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում գործատուի գույքը համարվում է արգելանքից հանված:

Որպես չկատարված կուտակային վճարների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և գործատուի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 77. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի պատասխանատվությունը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը և մասնակիցների ռեեստրը վարողն իրենց գործառույթներն իրականացնում են բարեխղճորեն՝ ի շահ մասնակցի: Նրանք պարտավոր են գործել ֆինանսական կամ նմանատիպ այլ հարցերում ողջամտության սահմաններում՝ լավատեղյակ անձի փորձառությամբ: Նման փորձառության պակասի դեպքում նրանք պետք է օգտվեն համապատասխան մասնագետների ծառայություններից:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը և մասնակիցների ռեեստրը վարողը իրենց գործառույթների մի մասի իրականացումն այլ անձի պատվիրակելու դեպքում շարունակում են պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

3. Կենտրոնական բանկը կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի կամ մասնակիցների ռեեստրը վարողի նկատմամբ կարող է կիրառել սույն գլխով նախատեսված պատասխանատվության միջոցները, եթե նրանք՝

1) սույն օրենքի խախտմամբ իրականացրել կամ թույլատրել են ներդրումներ կամ այլ ծախսեր.

2) սույն օրենքի խախտմամբ կնքել են ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ.

3) չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հետ կապված պայմանագրերով նախատեսված պարտավորությունները.

4) փոխկապակցված անձի հետ սույն օրենքով արգելված կամ սահմանափակված իրավահարաբերությունների շրջանակում կնքել են պայմանագիր.

5) իրենց կամ իրենց հետ փոխկապակցված անձանց օգտին է օգտագործել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կամ դրանց մասին տեղեկատվությունը.

6) խախտել են անձնավորված հաշվառում վարելու կանոնները, ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները կամ այդ փաստաթղթերում ներկայացրել են կեղծ, թերի կամ անարժանահավատ տվյալներ.

7) չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել Կենտրոնական բանկի՝ սույն օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականները.

8) պետական գրանցման և (կամ) լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացրել անարժանահավատ, կեղծ կամ թերի տեղեկություններ.

9) խախտել են սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

Հոդված 78. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարների պատասխանատվություն

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարները պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով մասնակիցների շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն իրենց պարտականությունները բարեխղճորեն և խելամտորեն:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե վնաս պատճառած արարքն իրականացրել են կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և(կամ) մասնակիցների ռեեստրը վարողի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք մասնակիցների առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում սույն օրենքի 79-րդ և 82-րդ հոդվածներով նախատեսված դեպքերով:

Հոդված 79. Պատժամիջոցները սույն օրենքը խախտելու համար

1. Սույն օրենքի 77-րդ հոդվածով սահմանված դեպքերում Կենտրոնական բանկը խախտումը հայտնաբերելու օրվանից մեկ տարվա ընթացքում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, մասնակիցների ռեեստրը վարողի, նրանց ղեկավարների, հաշվի օպերատորի նկատմամբ կարող է կիրառել պատասխանատվության հետևյալ միջոցները.

1) նախազգուշացում և խախտումը վերացնելու կամ ապագայում նման խախտում չկրկնելու կամ ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական կամ հանձնարարականներ (այսուհետ՝ նաև նախազգուշացում).

2) տուգանք.

3) վերահսկվողի ղեկավարին կամ պատասխանատու անձին որակավորման վկայականից զրկել.

4) թույլտվության ուժը կորցրած ճանաչել:

Մեկ խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ պատասխանատվության միջոց, բացառությամբ այն դեպքի, երբ նախազգուշացման հետ կիրառվում է նաև տուգանք:

2. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին, հաշվի օպերատորին, պահառուին և մասնակիցների ռեեստրը վարողին և նրանց ղեկավարներին չի ազատում օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով նախատեսված պարտականությունների կատարումից:

3. Կենտրոնական բանկը պարտավոր է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի, նրանց ղեկավարների նկատմամբ սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոց (միջոցներ) կիրառելու մասին որոշումը հրապարակել իր համացանցային տնային կայքում:

Հոդված 80. Նախազգուշացումը

1. Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տրված խախտումը, և խախտում թույլ տված անձը տեղեկացվում է խախտման անթույլատրելիության մասին:

2. Նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տրված խախտումը Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում վերացնելու և (կամ) ապագայում նման խախտումը չկրկնելու հանձնարարական և (կամ) ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական տալու հնարավորություն: Թույլ տրված խախտումը վերացնելու կամ չկրկնելու հանձնարարականով կամ ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով կարող է նախատեսվել նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, հաշվի օպերատորի, պահառուի կամ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կնքվող որոշակի գործարքների և (կամ) գործառնությունների դադարեցում և (կամ) դրանց պայմանների փոփոխություն: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացածի համար:

3. Նախազգուշացումը՝ որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել սույն օրենքի 77-րդ հոդվածով նախատեսված որևէ խախտման առկայության դեպքում:

4. Այնպիսի խախտումների դեպքում, որոնց հետևանքով գույքային վնաս է պատճառվել մասնակիցներին, յուրաքանչյուր խախտման համար Կենտրոնական բանկը որոշում է ընդունում նախազգուշացման և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ մասնակիցների ռեեստրը վարողի կամ պահառուի կամ հաշվի օպերատորի կողմից մասնակիցներին պատճառված վնասը (այդ թվում՝ բաց թողնված օգուտը) փոխհատուցելու վերաբերյալ և այդ մասին տեղեկացնում տուժած մասնակցին:

Հոդված 81. Տուգանքը

1. Սույն օրենքի և (կամ) դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի խախտման դեպքում, եթե խախտումը թույլ տված անձի մոտ ստեղծված իրավիճակի շտկման նպատակով վերահսկողական միջոցառումների (ինչպիսիք են հանդիպումը, նամակագրությունը, բացատրական աշխատանքները) իրականացումից և (կամ) նախազգուշացում տալուց հետո այդ խախտումները և (կամ) խախտումների պատճառները չեն վերացվել կամ չեն կարող վերացվել, Կենտրոնական բանկի նախագահն իր որոշմամբ իրավասու է նման խախտում թույլ տված անձի նկատմամբ կիրառելու տուգանք:

2. Այնպիսի խախտումների դեպքում, որոնց հետևանքով գույքային վնաս չի պատճառվել մասնակիցներին, սակայն խախտվել են հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ պահանջներ, տուգանքի չափը յուրաքանչյուր խախտման համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը, բացառությամբ սույն օրենքի 10-րդ և 18-րդ հոդվածների 6-րդ մասերով սահմանված դրույթների խախտման դեպքերի:

Տուգանքի չափը որոշելիս տուգանք կիրառող մարմինը հաշվի է առնում՝

1) նախկինում նման խախտման համար այլ անձանց նկատմամբ կիրառված տուգանքի չափը,

2) խախտման բնույթը (դիտավորության առկայությունը, անտարբերությունը կամ անփութությունը),

3) խախտմամբ այլ անձանց հասցված վնասի առկայությունը և դրա չափը,

4) անհիմն հարստացման աստիճանը՝ հաշվի առնելով այլ անձանց տրված հատուցումները,

5) նախկինում նույն անձի կողմից նույն կամ այլ խախտում թույլ տալը և դրա համար պատասխանատվության ենթարկվելը, ինչպես նաև նախկին պատասխանատվության չափն ու բնույթը,

6) նույն և այլ անձանց կողմից նման խախտումները հետագայում բացառելու անհրաժեշտության աստիճանը:

3. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին և երրորդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման դեպքում հաշվի օպերատորից կամ հաշվի օպերատորի խախտում կատարած ղեկավարից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար նվազագույն աշխատավարձի 3000-ապատիկի չափով:

Սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտման դեպքում հաշվի օպերատորից կամ հաշվի օպերատորի խախտում կատարած ղեկավարից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար մինչև նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով:

4. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողից կամ նրա ղեկավարից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկի չափով:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի նկատմամբ նշանակված տուգանքները գանձվում են վերջիններիս (իրավաբանական անձի) միջոցներից, բացառությամբ, եթե հաշվի օպերատորը պետական մարմին է: Եթե հաշվի օպերատորը պետական մարմին է, ապա տուգանքը կիրառվում է խախտումը կատարող համապատասխան աշխատակցի նկատմամբ:

6. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի որոշմամբ այն դեպքում, երբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը կամ մասնակիցների ռեեստրը վարողը համաձայն չեն տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ:

7. Սույն հոդվածի համաձայն գանձված տուգանքի գումարը փոխանցվում է պետական բյուջե:

Հոդված 82. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարը կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ զրկվել որակավորման վկայականից, եթե՝

1) դիտավորությամբ խախտել է օրենքները կամ այլ իրավական ակտերի պահանջները.

2) պաշտոնավարման ընթացքում վարել է չհիմնավորված և մասնակիցների շահերը վտանգող գործունեություն.

3) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի կամ նրա ծառայողների գործողություններին.

4) կատարել է այնպիսի գործողություններ կամ ցուցաբերել է այնպիսի անգործություն, որոնց հետևանքով մասնակիցը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս.

5) գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որը հակասում է մասնակիցների իրավունքներին կամ օրինական շահերին.

6) իր ծառայողական պարտականությունների (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի կամ մասնակիցների ռեեստրը վարողի և նրա հաճախորդների հանդեպ ստանձնած պարտականությունները) կատարման ընթացքում դրսևորել է անազնիվ կամ անբարեխիղճ վարքագիծ.

7) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման համապատասխանության չափանիշներին.

8) չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կենտրոնական բանկի տված հանձնարարականը.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից այդ անձի՝ սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև վերահսկվողի ներքին իրավական ակտերով սահմանված լիազորությունները դադարում են:

Հոդված 83. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելը և պահառուի՝ կենսաթոշակային ֆոնդի պահառության գործունեությունն արգելելը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի թույլտվությունը կարող է ուժը կորցրած ճանաչվել կամ պահառուին կարող է արգելվել կենսաթոշակային ֆոնդի պահառու-

թյուն իրականացնել (այսուհետ՝ նաև թույլտվությունն ուժը կորցրած ճանաչել), եթե առկա են սույն օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հիմքերը, օրենքով սահմանված այլ դեպքերում, ինչպես նաև այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարում կիրառվել է 2 և ավելի անգամ 81-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչը կամ պահառուն Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում չի վերացրել համապատասխան խախտման հետևանքները կամ չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանք վերացնելու համար:

2. Կենտրոնական բանկը իրավունք ունի ուժը կորցրած ճանաչելու կենսաթոշակային ֆոնդի կառավարչին տրված թույլտվությունը, եթե պարզվում է, որ թույլտվություն ստանալու համար ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում բացառապես սույն օրենքով և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Այլ օրենքներով թույլտվության ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում գործում են սույն օրենքի և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

4. Պահառուի կողմից սույն հոդվածով սահմանված խախտումները կատարելու դեպքում Կենտրոնական բանկը իրավունք ունի հանձնարարելու կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ողջամիտ ժամկետում խզել պայմանագիրը տվյալ պահառուի հետ:

Հոդված 84. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը հրապարակելը և դրա իրավական հետևանքները

1. Սույն օրենքի 83-րդ հոդվածով նախատեսված հիմքերով թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն անմիջապես հրապարակվում է: Նշված որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

2. Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու պահից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կամ պահառուն այդ որոշմամբ սահմանված ժամկետով, բայց ոչ պակաս, քան 10 տարով զրկվում են կենսաթոշակային ֆոնդի կառավարման և ակտիվների պահառության գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների, որոնք ուղղված են տվյալ ծառայության մասով նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը: Պահառուն պարտավոր է շարունակել կատարել օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ կենսաթոշակային ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված իր պարտականությունները մինչև կենսաթոշակային ֆոնդի նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս կենսաթոշակային ֆոնդի ակտիվների փոխանցումը:

3. Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենն այն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տրամադրվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և պահառուին: Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը դատարանը չի կասեցնում այդ որոշման գործողությունը գործի ողջ դատական քննության ընթացքում:

Հոդված 85. Վեճերի լուծումը

1. Սույն օրենքի համաձայն՝ մասնակցի կամ շահառուի կողմից կենսաթոշակային հաշվի վերաբերյալ ցանկացած բողոք կամ հարցում գրավոր ներկայացվում է հարկային մարմին, որը բողոքը կամ հարցումը քննում է առավելագույնը 30 օրվա ընթացքում և մասնակցին կամ շահագրգիռ անձին գրավոր հայտնում է իր որոշման և որոշման համար հիմք հանդիսացած հիմնավորումների մասին, կամ հարցումը (բողոքը) ստանալու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն ուղղում է իրավասու մարմնին:

2. Մասնակիցը կամ շահառուն կարող է պահանջ ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին՝ անկախ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցումը կամ բողոքը հարկային մարմին ներկայացնելու հանգամանքից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

3. Եթե մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի կենսաթոշակային հաշվից գումարներ է փոխանցում ապահովագրական ընկերությանն անուիտետ գնելու նպատակով, ապա նման գործառույթի հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է հետևյալ կարգով. անուիտետի վճարման վերաբերյալ մասնակցի կամ շահառուի բողոքն առաջին հերթին ներկայացվում է ապահովագրական ընկերության ղեկավար մարմին: Ղեկավար մարմինը նման բողոքը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, քննում է բողոքը և մասնակցին կամ շահառուին գրավոր տեղեկացնում է իր որոշման և նման որոշման համար հիմք հանդիսացած հիմնավորումների մասին: Մասնակիցը կամ վերջինիս լիազոր ներկայացուցիչն իրավունք ունի ներկա գտնվելու հարցի քննությանը: Որոշման հետ չհամաձայնելու դեպքում մասնակիցը կամ շահառուն դիմում է իրավական պաշտպանության բոլոր հնարավոր միջոցներին, որոնք նախատեսված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԳԼՈՒԽ 15
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 86. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորության:

2. Սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

3. Պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցները մինչև 2014 թվականի հունվարի 1-ը պետք է սույն օրենքով նախատեսված կարգով կատարեն կենսաթոշակային ֆոնդի և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն, այլապես ընտրությունը կատարվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 39-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 87. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքով սահմանված պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փոփոխության, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդերի փայերի ժառանգման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված կարգով կուտակված պարտադիր կենսաթոշակային միջոցները կարող են կուտակային կենսաթոշակային բաղադրիչից դուրս բերվել (այդ թվում՝ կենսաթոշակի տեսքով) 2015 թվականի հունվարի 1-ից:

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուի գործառույթները մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշում ընդունելը իրականացվում են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից: Կենսաթոշակային ֆոնդի բանկային հաշվի օգտագործումը սույն մասում նշված ժամանակահատվածում իրականացվում է մասնակիցների ռեեստրը վարողի համաձայնությամբ:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-244-Ն

*ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ներդրողների իրավունքների պաշտպանությունն է, կոլեկտիվ ներդրումային համակարգի զարգացումը և ներդրումային ֆոնդերի ու ներդրումային ֆոնդերի կառավարիչների ստեղծման ու գործունեության համար միասնական կանոնների սահմանումը, ֆինանսական միջնորդության ավելացումը և արժեթղթերի շուկայում բնակչության լայն զանգվածների ներգրավումը:

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է կոլեկտիվ ներդրումների հետ կապված հարաբերությունները և սահմանում (կանոնակարգում) է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդերի տեսակները և դրանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղերի և ներդրումային ֆոնդի պահառուների իրավական կարգավիճակը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդի կառավարիչների, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղերի կազմավորման, գործունեության, կառավարման ու դադարեցման հետ կապված հարաբերությունները.

3) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդերի ներդրումային քաղաքականությանը ներկայացվող պահանջները.

4) Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերի վաճառքը.

5) սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների կատարման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից վերահսկողության իրականացման և այդ պահանջների խախտման համար պատասխանատվության կիրառման կապակցությամբ ծագող հարաբերությունները:

2. Սույն օրենքով ներդրումային ֆոնդերի համար սահմանված դրույթները վերաբերում են հրապարակային ներդրումային ֆոնդերին, եթե կոնկրետ իրավական նորմի բովանդակությունում ուղղակի նշված չէ, որ այն վերաբերում է ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերին:

3. Արժեթղթավորման և կենսաթոշակային ֆոնդերի առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով:

Հոդված 2. Ներդրումային ֆոնդերի իրավական կարգավորումը

1. Ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի) և ներդրումային ֆոնդերի կառավարիչների կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով (հաշվի առնելով

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները), Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով, եթե սույն օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ներդրումային ֆոնդ՝** իրավաբանական անձ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրերի կամ նմանատիպ այլ պայմանագրերի հիման վրա ձևավորված ակտիվների համախումբ, որն ստեղծվել և (կամ) գործում (օգտագործվում) է՝ որպես նպատակ կամ հիմնական նպատակներից մեկն ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցները միասնական ներդրումային քաղաքականության ներքո արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների միջոցով ապահովել այդ միջոցների վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման, շահաբաժինների և (կամ) այլ ֆինանսական եկամտի տեսքով՝ վերջինների կողմից իրավաբանական անձի կապիտալում (ակտիվների համախմբում) կատարված ներդրումներին համապատասխան և կախված այդ ներդրումների կառավարման արդյունքներից՝ անկախ այն հանգամանքից, թե այդ իրավաբանական անձը (ակտիվների համախումբը) իր հիմնադիր փաստաթղթերում կամ առաջարկի փաստաթղթերում բնութագրվում է որպես «ներդրումային ֆոնդ», թե ոչ, ինչպես նաև անկախ նրանից, թե սահմանված նպատակը և (կամ) գործունեությունն իրականում տվյալ իրավաբանական անձի (ակտիվների համախումբը կառավարող անձի) կողմից իրականացվել է, թե ոչ (այսուհետ՝ ֆոնդ): Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն կետով նախատեսված գործունեությունը որպես անձի (ակտիվների համախմբի) ստեղծման կամ գործունեության նպատակ կամ հիմնական նպատակներից մեկը գնահատելու չափանիշներ: Ընդ որում, «ֆոնդ» հասկացության մեջ չեն ընդգրկվում՝

ա. բանկը, ապահովագրական ընկերությունը, ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, վարկային կազմակերպությունը և արժեթղթավորման հիմնադրամը,

բ. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը,

գ. պետության կողմից կամ միջազգային պայմանագրերի հիման վրա իրականացվող ծրագրերի շրջանակներում ներդրումներ կատարող կազմակերպությունները,

դ. խումբը, հոլդինգը կամ նմանատիպ այլ անձը, որի հիմնական գործունեությունը ապրանքների արտադրությունը կամ ծառայությունների մատուցումն է (բայց ոչ ներդրումներն անշարժ գույքում), և որի կողմից արժեթղթերում ներդրումները պայմանավորված են գերազանցապես դրանք թողարկած անձանց կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ դրանց վրա էապես ազդելու նպատակով: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն ենթակետով նախատեսված դրույթները մանրամասնող չափանիշներ.

2) **հրապարակային ֆոնդ՝** ոչ հրապարակային ֆոնդ չհամարվող ֆոնդ.

3) **ոչ հրապարակային ֆոնդ՝** ֆոնդ, որի կանոնադրության (կանոնների) համաձայն՝ իր թողարկած արժեթղթերը չեն կարող տեղաբաշխվել հրապարակային առաջարկի, այդ թվում՝ բացառապես անորոշ թվով որակավորված ներդրողներին ուղղված առաջարկի միջոցով.

4) **ֆոնդի տեսակ՝** ըստ ներդրումային քաղաքականության կամ ըստ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) թողարկման և հետգնման կառուցակարգի՝ ֆոնդի՝ սույն օրենքով նախատեսված կոնկրետ տեսակ.

5) **ստանդարտ ֆոնդ՝** մասնագիտացված ֆոնդ չհամարվող ֆոնդի տեսակ, որի (ենթաֆոնդեր ունենալու դեպքում՝ նրա բոլոր ենթաֆոնդերի) ներդրումային քաղաքականությունը համապատասխանում է սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված պահանջներին, բացառությամբ չտարատեսականացված ստանդարտ ֆոնդերի.

6) **մասնագիտացված ֆոնդ**՝ անշարժ գույքի ֆոնդ, լրացուցիչ ռիսկով ֆոնդ (հեջ ֆոնդ), արժեթղթավորման ֆոնդ, ֆոնդերի ֆոնդ, մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդ (փրայվիթ էքուիթի ֆոնդ), այդ թվում՝ վենչուրային ֆոնդ, ինչպես նաև ֆոնդի այլ տեսակ, որի ակտիվներն ամբողջությամբ կամ որոշակի նվազագույն սահմանաչափերով, բայց ոչ պակաս, քան 30 տոկոսով ենթակա են ներդրման կոնկրետ տեսակի ակտիվներում.

7) **չտարատեսականացված ֆոնդ**՝ ստանդարտ (մասնագիտացված) ֆոնդ, որի (ենթաֆոնդեր ունենալու դեպքում՝ նրա թեկուզև մեկ ենթաֆոնդի) ներդրումային քաղաքականությունը չի համապատասխանում սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված պահանջներին (օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով մասնագիտացված ֆոնդի տվյալ տեսակի (բացառությամբ ուղղակիորեն որակավորված ներդրողների ֆոնդերի) համար սահմանված ակտիվների ներդրման տարատեսականացման պահանջներին).

8) **պայմանագրային ֆոնդ**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրերի հիման վրա ձևավորված ակտիվների համախումբ.

9) **կորպորատիվ ֆոնդ**՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ֆոնդ, որի ակտիվները հավաքագրվում են միայն բաժնետոմսերի կամ այլ բաժնային արժեթղթերի (այսուհետ՝ բաժնետոմսեր) տեղաբաշխման միջոցով.

10) **փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերություն**՝ բաժնետիրական ընկերություն, որը չունի ֆիքսված կապիտալ, և որի կապիտալը ցանկացած պահի հավասարարժեք է ֆոնդի զուտ ակտիվների արժեքին.

11) **հաստատուն կապիտալով բաժնետիրական ընկերություն**՝ փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերություն չհանդիսացող բաժնետիրական ընկերություն.

12) **բաց ֆոնդ**՝ ֆոնդի տեսակ, որը պարտավոր է իր յուրաքանչյուր մասնակցի պահանջով ցանկացած աշխատանքային օր սույն օրենքով սահմանված կարգով հետ գնել տվյալ մասնակցին պատկանող՝ ֆոնդի թողարկած արժեթղթերը.

13) **միջակայքային ֆոնդ**՝ ֆոնդի տեսակ, որը չի իրականացնում իր թողարկած արժեթղթերի շարունակական հիմքով հետգնում, բայց որը պարտավոր է իր կանոններով (կանոնադրությամբ) սահմանված միջակայքային ժամկետներում իր յուրաքանչյուր մասնակցի պահանջի առկայության դեպքում սույն օրենքով սահմանված կարգով հետ գնել տվյալ մասնակցին պատկանող՝ ֆոնդի թողարկած արժեթղթերը.

14) **փակ ֆոնդ**՝ ֆոնդի տեսակ, որը պարտավորություն չունի իր մասնակցի պահանջով հետ գնելու նրան պատկանող՝ ֆոնդի թողարկած արժեթղթերը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

15) **ենթաֆոնդ**՝ միևնույն ֆոնդի կազմում առանձնացված ակտիվների համախումբ, որն ունի գործունեության միասնական կանոններ և ֆոնդի ակտիվների այլ համախմբերից տարբերվում է իր ներդրումային քաղաքականությամբ, եկամուտների բաշխման քաղաքականությամբ, ֆոնդի փայերի տեղաբաշխման և (կամ) հետգնման վճարներով, իր ակտիվների արժույթով, կառավարչի պարգևավճարով կամ դրանց համակցությամբ.

16) **ֆոնդի փայ**՝ պայմանագրային ֆոնդի թողարկած անվանական ներդրումային արժեթուղթ, որը հավաստում է իր տիրապետողի՝ տվյալ ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը (այսուհետ՝ փայ).

17) **ֆոնդի ակտիվ**՝ ֆոնդի՝ փայերի (բաժնետոմսերի) տեղաբաշխման միջոցով հավաքագրված դրամական միջոցները, սույն օրենքով թույլատրելի այն ակտիվները, որոնցում ներդրվել են հավաքագրված դրամական միջոցները և կառավարման շնորհիվ ստացված եկամուտները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ միջոցներ.

18) **իրացվելի ակտիվ**՝ դրամական միջոց կամ այլ ակտիվ, որը հնարավոր է կարճ ժամանակում առանց դրանց սեփականատիրոջ համար էական կորուստների վերածել դրամական միջոցների.

19) **ֆոնդի զուտ ակտիվների արժեք**՝ ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և սույն օրենքով ու ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված դեպքերում ու կարգով ֆոնդի (պայմանագրային ֆոնդի ակտիվների հաշվին՝ կառավարչի) ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունը.

20) **փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեք**՝ արժեք, որը հավասար է ֆոնդի (ենթաֆոնդի) զուտ ակտիվների արժեքի և տվյալ ֆոնդի (ենթաֆոնդի) տեղաբաշխված ու հետ չգնված փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր քանակի հարաբերությանը.

21) **ֆոնդի մասնակից**՝ սույն օրենքի համապատասխան՝ ֆոնդի թողարկած արժեթղթերի սեփականատեր.

22) **ֆոնդի կառավարիչ**՝ սույն օրենքով սահմանված կարգով ֆոնդի կառավարման լիցենզիա ստացած անձ, որն իրականացնում է սույն օրենքին համապատասխան ստեղծված ֆոնդի կառավարումը (այսուհետ՝ կառավարիչ).

23) **ֆոնդի պահառու**՝ ֆոնդի ակտիվների պահառության ծառայություն մատուցող անձ, որը սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և ֆոնդի (նրա կառավարչի) հետ կնքված պայմանագրի հիման վրա ի պահ է ընդունում, պահպանում և հաշվառում է ֆոնդի ակտիվները, իրականացնում է ֆոնդի ակտիվների կառավարման հետ կապված գործարքների սպասարկումը և դրանց հիման վրա ակտիվների փոխանցումը, ինչպես նաև իր իրավասությունների շրջանակում վերահսկում է տվյալ ֆոնդի կառավարչի գործունեությունը՝ ի շահ ֆոնդի մասնակիցների (այսուհետ՝ պահառու).

24) **ֆոնդի գործակալ**՝ կառավարչի հետ կնքված պայմանագրի հիման վրա փայերի կամ բաժնետոմսերի վաճառքը և (կամ) հետգնումը (մարումը) իրականացնող անձ (այսուհետ՝ գործակալ).

25) **որակավորված ներդրողների ֆոնդ**՝ ստանդարտ կամ մասնագիտացված ֆոնդ, որի թողարկած փայերը (բաժնետոմսերը), օրենքին կամ իր կանոններին (կանոնադրությանը) համապատասխան, կարող են առաջարկվել միայն՝

ա. որակավորված ներդրողներին և (կամ)

բ. այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող փայի (բաժնետոմսի) գնման գինը (յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում ձեռք բերվող փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր արժեքը) գերազանցում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեծությունը.

26) **ինդեքսային ֆոնդ**՝ ստանդարտ ֆոնդի տեսակ, որի ներդրումային քաղաքականության նպատակը որոշակի բաժնետոմսերի կամ պարտատոմսերի ինդեքսի կառուցվածքի կրկնօրինակումն է.

27) **կենսաթոշակային ֆոնդ**՝ ֆոնդ, որի ակտիվները ձևավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաքագրված պարտադիր (պարտադիր կենսաթոշակային ֆոնդ) կամ կամավոր (կամավոր կենսաթոշակային ֆոնդ) կուտակային վճարների և դրանց ներդրման հաշվին, և որի մասնակիցներին ֆոնդի ակտիվներից վճարումները կատարվում են (վերադարձվում են ֆոնդի ակտիվներում մասնակցի փային համապատասխանող դրամական միջոցները) կենսաթոշակի ձևով մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն օրենքում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

ԲԱԺԻՆ 2
ՖՈՆԴԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՓԱՅԵՐԸ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ)

ԳԼՈՒԽ 2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Ֆոնդի կարգավիճակը և դրա տեսակները

1. Ֆոնդը (այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդը) կարող է ստեղծվել և իրականացնել սույն օրենքով նախատեսված գործունեությունը միայն սույն օրենքով նախատեսված կարգով ֆոնդը (դրա կանոնները) Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:

2. Ֆոնդը (այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդը) կարող է ստեղծվել պայմանագրային կամ կորպորատիվ ֆոնդի կարգավիճակով:

3. Ըստ ներդրումային քաղաքականության՝ ֆոնդը կարող է լինել ստանդարտ կամ մասնագիտացված:

4. Ըստ փայերի (բաժնետոմսերի) թողարկման և հետգնման կառուցակարգի՝ ֆոնդը կարող է լինել բաց, փակ կամ միջակայքային:

5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդը կարող է հանդես գալ միայն որպես բաց պայմանագրային ֆոնդ:

6. Ֆոնդը չի կարող իրականացնել սույն օրենքով ֆոնդի համար չնախատեսված գործունեություն:

Հոդված 5. Ֆոնդի անվանումը և «ներդրումային ֆոնդ», «կենսաթոշակային ֆոնդ» բառակապակցությունների ու դրանց ածանցյալների օգտագործման սահմանափակումները

1. Սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված ֆոնդերն իրավունք չունեն իրենց անվանման մեջ ապակողմնորոշող այնպիսի բառեր օգտագործելու, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ ֆոնդի ֆինանսական վիճակի կամ իրավական կարգավիճակի կամ իրականացվող գործունեության վերաբերյալ:

2. Պայմանագրային ֆոնդի անվանումը պետք է պարունակի իր կառավարչի անվանումը: Միևնույն կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերը չեն կարող ունենալ միևնույն կամ շփոթելու աստիճան իրար նման անվանումներ:

3. Արգելվում են Կենտրոնական բանկում համապատասխան գրանցում չունեցող անձանց կողմից «ներդրումային ֆոնդ» կամ «կենսաթոշակային ֆոնդ» բառակապակցությունների, դրանց հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց զուգորդությունների, ինչպես նաև գործարար ավանդույթի շրջանակներում ֆոնդերի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն բնութագրող անվանումների օգտագործումը իրենց անվանման մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե «ներդրումային ֆոնդ» կամ «կենսաթոշակային ֆոնդ» բառակապակցությունների, դրանց ածանցյալների կամ նշված անվանումների օգտագործման իմաստից չի բխում, որ խոսքը չի վերաբերում ներդրումային ֆոնդի և կենսաթոշակային ֆոնդի՝ սույն օրենքով և (կամ) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:

Հոդված 6. Ֆոնդի գտնվելու վայրը

1. Ֆոնդի գտնվելու վայրը նրա կառավարչի գտնվելու վայրն է:

Հոդված 7. Գործակալը

1. Ֆոնդը կարող է ունենալ գործակալ (գործակալներ):

2. Գործակալ կարող է լինել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ներդրումային ծառայություններ մատուցող այն անձը, որի հետ կառավարիչը կնքել է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծառայությունների մատուցման պայմանագիր:

3. Գործակալը փայերի կամ բաժնետոմսերի վաճառքը և (կամ) հետգնումը (մարումը) իրականացնում է ֆոնդի (պայմանագրային ֆոնդի դեպքում՝ կառավարչի) անունից և ֆոնդի հաշվին համապատասխան հայտերի ընդունմամբ և կառավարչին փոխանցմամբ և (կամ) դրամական միջոցների ընդունմամբ, փոխանցմամբ և վճարումների կատարմամբ՝ պայմանագրային ֆոնդի դեպքում նշելով, որ ինքը գործում է որպես տվյալ ֆոնդի գործակալ:

Հոդված 8. Ոչ հրապարակային ֆոնդը

1. Ոչ հրապարակային կորպորատիվ ֆոնդը չի կարող ունենալ բաց բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձև:

2. Ոչ հրապարակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հրապարակային տեղաբաշխում չի կարող իրականացվել:

3. Ոչ հրապարակային ֆոնդը կարող է ունենալ ոչ ավելի, քան 49 մասնակից: Մասնակիցների քանակը 49-ից անցնելու դեպքում ոչ հրապարակային ֆոնդը պարտավոր է 90 օրացուցային օրվա ընթացքում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով վերագրանցվել որպես հրապարակային ֆոնդ կամ համապատասխանաբար կրճատել իր մասնակիցների թիվը: Հակառակ դեպքում այն ենթակա է դատական կարգով լուծարման:

4. Կենտրոնական բանկի պահանջով ոչ հրապարակային ֆոնդը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել սույն օրենքի 92-րդ հոդվածով նախատեսված հաշվետվությունները:

5. Ոչ հրապարակային ֆոնդի (պայմանագրային ֆոնդի կանոնների), նրա կանոնադրությունում (կանոններում) կատարված փոփոխությունների և (կամ) լրացումների գրանցման և ոչ հրապարակային ֆոնդի վերակազմակերպման, տեսակի փոփոխման և լուծարման (դադարման) կարգի և պայմանների նկատմամբ տարածվում են սույն օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներով, 23-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 24-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով, ինչպես նաև 8-րդ բաժնով որակավորված ներդրողների ֆոնդերի համար նախատեսված համապատասխան դրույթները, բացառությամբ վերակազմակերպման և տեսակի փոփոխման սահմանափակումների, ինչպես նաև լուծարման (դադարման) հիմքերին վերաբերող նորմերի: Ընդ որում, սույն մասի համաձայն կիրառման ենթակա դրույթները պահառուին վերաբերող մասով տարածվում են ոչ հրապարակային ֆոնդերի նկատմամբ միայն համապատասխան առանձնացված պահառուի առկայության դեպքում, իսկ կառավարչին վերաբերող մասով տարածվում են ոչ հրապարակային ֆոնդի գործադիր կառավարումն իրականացնելու իրավունք ունեցող անձի (անկախ սույն օրենքի իմաստով կառավարիչ ճանաչվելու հանգամանքից) նկատմամբ միայն կիրառելիության դեպքում: Բացի այդ, ոչ հրապարակային ֆոնդի գրանցման ժամանակ պետք է Կենտրոնական բանկ ներկայացվեն դրա գործադիր կառավարումն իրականացնող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկությունները: Վերջինները պետք է Կենտրոնական բանկ ներկայացվեն նաև դրանց յուրաքանչյուր փոփոխության դեպքում փոփոխությունից հետո՝ տասը օրացուցային օրվա ընթացքում:

Հոդված 9. Չտարատեսականացված ֆոնդը

1. Չտարատեսականացված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) նշվում է դրա՝ չտարատեսականացված ֆոնդ լինելու մասին:

2. Չտարատեսականացված ֆոնդը համարվում է որակավորված ներդրողների ֆոնդ:

Հոդված 10. Պայմանագրային և կորպորատիվ ֆոնդերը

1. Պայմանագրային ֆոնդը կառավարվում է կառավարչի կողմից՝ ֆոնդի կանոնների (ֆոնդի կառավարման պայմանագրերի) հիման վրա:

2. Պայմանագրային ֆոնդի մասնակցի՝ ֆոնդի ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակվում է այդ իրավունքը հավաստող իրեն պատկանող փայի օտարման և իրավահաջորդության կարգով փոխանցելու, ֆոնդի ակտիվների կառավարման շնորհիվ ստացված եկամուտներից շահաբաժիններ ստանալու, ինչպես նաև ֆոնդի դադարման դեպքում ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժինը ստանալու իրավունքներով՝ սույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով: Փակ պայմանագրային ֆոնդի մասնակցի՝ ֆոնդի ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը դրսևորվում է նաև ֆոնդի ակտիվների կառավարմանն առնչվող սույն օրենքով և (կամ) ֆոնդի կանոններով ֆոնդի մասնակիցների ընդհանուր ժողովին (այսուհետ՝ ֆոնդի ժողով) վերապահված իրավասություններով առաջարկություններ ներկայացնելու և որոշումներ կայացնելիս իրենց պատկանող փայերի քանակին և հաշվարկային արժեքին համապատասխան ձայների քանակով ֆոնդի ժողովին մասնակցության իրավունքով, բացառությամբ սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Պայմանագրային ֆոնդի ակտիվները, այդ ակտիվներով ձեռք բերված արժեթղթերը և այլ գույքն ու դրա նկատմամբ իրավունքներն առանձնացված հաշվառվում և գրանցվում են այդ ֆոնդի կառավարչի անունով՝ առանց դրանց նկատմամբ կառավարչի սեփականության իրավունքի ձեռքբերման:

4. Պայմանագրային ֆոնդի կառավարիչը ֆոնդի կառավարման հետ կապված գործարքները կնքում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես տվյալ ֆոնդի կառավարիչ, և որ այդ գործարքներով իր ստանձնած պարտավորությունները կատարվում են բացառապես տվյալ ֆոնդի ակտիվների հաշվին:

5. Պայմանագրային ֆոնդի կառավարման հետ կապված գործարքներով կառավարչի ստանձնած պարտավորությունների կատարման կարգի և պայմանների (այդ թվում՝ դրանց համար նրա պատասխանատվության շրջանակների) նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրային ֆոնդի կառավարման պայմանագրի կողմ համարվող պայմանագրային ֆոնդի կառավարչի համար սահմանված համապատասխան դրույթները:

6. Կորպորատիվ ֆոնդը կարող է հանդես գալ միայն հաստատուն կամ փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերության, իսկ լրացուցիչ ռիսկով ֆոնդերի և մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի, այդ թվում՝ վենչուրային ֆոնդերի դեպքում՝ նաև վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձևով:

7. Կորպորատիվ ֆոնդի կառավարիչը ֆոնդի կառավարման հետ կապված գործարքները կնքում է տվյալ ֆոնդի անունից և նրա հաշվին: Վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձևով ստեղծված ֆոնդի կառավարիչն իր գույքով համապարտ սուբսիդիար պատասխանատվություն է կրում տվյալ ֆոնդի պարտավորությունների համար:

Հոդված 11. Բաց, փակ և միջակայքային ֆոնդերը

1. Բաց ֆոնդը կարող է հանդես գալ միայն որպես պայմանագրային ֆոնդ կամ փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերություն:

2. Փակ և միջակայքային ֆոնդերը կարող են հանդես գալ միայն որպես պայմանագրային ֆոնդ կամ հաստատուն կամ փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերություն, իսկ լրացուցիչ ռիսկով ֆոնդերի և մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի, այդ թվում՝ վենչուրային ֆոնդերի դեպքում՝ նաև որպես վստահության վրա հիմնված ընկերակցություն: Այն միջակայքային կորպորատիվ ֆոնդը, որի կանոնադրությամբ իր բաժնետոմսերի հետգնման միջակայքը նախատեսված է տարեկան մեկ անգամից ոչ ավելի պարբերականությամբ, չի կարող ունենալ փոփոխական կապիտալով բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձև:

Հոդված 12. Ենթաֆոնդերը

1. Պայմանագրային ֆոնդը կարող է բաժանվել ենթաֆոնդերի:

2. Ֆոնդի կանոններում պետք է նշվի առկա ենթաֆոնդերի և նրանցից յուրաքանչյուրի ներդրումային քաղաքականության, եկամուտների բաշխման քաղաքականության, ֆոնդի փայերի տեղաբաշխման և (կամ) հետգնման վճարների, ենթաֆոնդերի ակտիվների արժույթի և կառավարչի պարգևավճարի առանձնահատկությունների մասին (առկայության դեպքում):

3. Յուրաքանչյուր ենթաֆոնդի մասնակից կարող է պահանջ ներկայացնել միայն իր ենթաֆոնդի ակտիվների նկատմամբ: Յուրաքանչյուր ենթաֆոնդ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով կարգավորվող հարաբերություններում դիտվում է որպես առանձին պայմանագրային ֆոնդ:

4. Կառավարիչը կարող է փոփոխել ենթաֆոնդի ներդրումային քաղաքականությունը կամ միացնել մի ենթաֆոնդը նույն ֆոնդի այլ ենթաֆոնդի՝ պայմանագրային ֆոնդերի տեսակի փոփոխության և միացման համար սույն օրենքով սահմանված կանոններին համապատասխան՝ ֆոնդի կանոնների մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով:

5. Ֆոնդի կանոնների գրանցումից (ենթաֆոնդի ստեղծմամբ պայմանավորված՝ ֆոնդի կանոններում կատարված համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից) հետո՝ 6 ամսվա ընթացքում, ենթաֆոնդի զուտ ակտիվների արժեքի՝ սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունը ձեռք չբերվելու, ենթաֆոնդի զուտ ակտիվների արժեքը սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունից 60 օրացուցային օրից ավելի ժամկետով նվազելու կամ ենթաֆոնդի զուտ ակտիվների արժեքը սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծության 1/2-ից նվազելու դեպ-

քում ենթաֆոնդը ենթակա է դադարեցման, և նրա ակտիվները պետք է վերադարձվեն ենթաֆոնդի մասնակիցներին սույն օրենքով պայմանագրային ֆոնդի դադարեցման համար սահմանված կարգով:

6. Սույն օրենքով ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և փայերի հաշվարկային արժեքի հաշվարկմանը և հրապարակմանը, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) վճարներին վերաբերող դրույթները տարածվում են նաև ենթաֆոնդերի զուտ ակտիվների արժեքի և փայերի հաշվարկային արժեքի հաշվարկման և հրապարակման և տեղաբաշխման ու հետգնման (մարման) վճարների նկատմամբ:

Հոդված 13. Ֆոնդում մասնակցությունը

1. Ֆոնդում մասնակցությունը հավաստվում է ֆոնդի փայով կամ ֆոնդի բաժնետոմսով:

2. Պայմանագրային ֆոնդի մասնակցի բաժինը որոշվում է նրան պատկանող փայերի քանակի և տվյալ ֆոնդի՝ շրջանառության մեջ գտնվող բոլոր փայերի ընդհանուր թվի հարաբերությամբ:

3. Եթե պայմանագրային ֆոնդը ունի տարբեր դասերի փայեր, ապա ֆոնդի մասնակցի մասնաբաժինը որոշվում է նրան պատկանող փայերի քանակի և շրջանառության մեջ գտնվող տվյալ դասի բոլոր փայերի քանակի հարաբերությունը բազմապատկելով տվյալ դասի բոլոր փայերի զուտ ակտիվների արժեքի և ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հարաբերությամբ:

4. Ֆոնդի մասնակից չեն կարող լինել տվյալ ֆոնդի պահառուն, տվյալ ֆոնդի մասնակիցների ռեեստրավարը (եթե այդ գործառույթն իրականացնում է կառավարչից տարբերվող անձը), տվյալ ֆոնդի անկախ աուդիտն իրականացնող անձը և նրանց հետ փոխկապակցված անձինք:

5. Չտարատեսականացված ֆոնդի, ինչպես նաև մասնագիտացված ֆոնդի, բացառությամբ անշարժ գույքի ֆոնդի, արժեթղթավորման ֆոնդի և ֆոնդերի ֆոնդի թողարկած փայերը (բաժնետոմսերը), եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան տեսակի ֆոնդի գործունեությունը կարգավորող օրենքով, կարող են առաջարկվել միայն՝

1) որակավորված ներդրողներին.

2) այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող փայի (բաժնետոմսի) գնման գինը (յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում ձեռք բերվող փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր արժեքը) գերազանցում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեծությունը:

Հոդված 14. Նախապատվության իրավունքը

1. Ֆոնդի (բացառությամբ վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի) մասնակիցները չունեն նոր թողարկվող փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման նախապատվության իրավունք:

Հոդված 15. Փայերի (բաժնետոմսերի) փոխանցելիությունը

1. Փակ ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) չի կարող սահմանափակվել ֆոնդի մասնակիցների իրավունքը՝ վերավաճառել իրենց պատկանող փայերը (բաժնետոմսերը) կարգավորվող շուկայում:

2. Փակ ֆոնդի փայերը (բաժնետոմսերը) ենթակա են պարտադիր թույլտվության կարգավորվող շուկայում առևտրին:

3. Կենսաթոշակային ֆոնդի փայերը կարող են փոխանցվել այլ անձի բացառապես «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժառանգման կարգով:

Հոդված 16. Ֆոնդի զուտ ակտիվները

1. Ֆոնդի, ինչպես նաև յուրաքանչյուր ենթաֆոնդի զուտ ակտիվների նվազագույն արժեքը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով: Այդ պահանջը կիրառվում է ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումից (ենթաֆոնդի ստեղծմամբ պայմանավորված՝ ֆոնդի կանոններում կատարված համապատասխան փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահից) 6 ամիս հետո:

2. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Ֆոնդի տեղաբաշխված ու հետ չգնված փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեքների համագումարը միշտ պետք է հավասար լինի ֆոնդի զուտ ակտիվների արժեքին:

4. Կառավարիչը ֆոնդի (ենթաֆոնդի) զուտ ակտիվների արժեքը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նվազագույն չափից նվազելու դեպքում պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել Կենտրոնական բանկին և միջոցներ ձեռնարկել հնարավոր կարճ ժամկետում խախտումը վերացնելու ուղղությամբ:

Հոդված 17. Ֆոնդի ակտիվներից գանձվող վճարները և կատարվող ծախսերը

1. Ֆոնդի ակտիվներից կարող են գանձվել միայն այն վճարները (այդ թվում՝ կառավարչի և պահառուի պարգևավճարները, ֆոնդի հարկերը), որոնք սահմանված են օրենքով:

2. Ֆոնդի ակտիվների հաշվին կարող են կատարվել միայն ֆոնդի կառավարման և պահառության հետ ուղղակիորեն կապված և ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված ծախսերը, ինչպես նաև այն ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է սույն օրենքով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վճարներն ու ծախսերը չեն կարող գերազանցել ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված առավելագույն սահմանաչափերը:

4. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վճարների ու ծախսերի առավելագույն սահմանաչափեր: Այդ սահմանաչափերը կարող են տարբերակվել՝ կախված ֆոնդի տեսակից:

Հոդված 18. Ֆոնդի շահաբաժինները

1. Ֆոնդը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի) կարող է ստացած զուտ եկամուտները բաշխել իր մասնակիցներին շահաբաժինների տեսքով՝ դրամական միջոցներով և (կամ) ֆոնդի կանոնադրությամբ (կանոններով) նախատեսված լինելու դեպքում իր թողարկած փայերով (բաժնետոմսերով):

2. Կորպորատիվ ֆոնդը պահուստային կապիտալ չի ստեղծում:

Հոդված 19. Ֆոնդի ակտիվների բաժանումը և դրանցից բաժնի առանձնացումը

1. Արգելվում է պայմանագրային ֆոնդի ակտիվների բաժանումը կամ դրանցից որևէ մասնակցի բաժինը առանձնացնելը, բացառությամբ սույն օրենքով սահմանված կարգով ֆոնդի դադարման ժամանակ ֆոնդի ակտիվները մասնակիցների միջև բաշխվելու դեպքի:

2. Ֆոնդի մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտավորությունների դիմաց կարող է բռնագանձում տարածվել նրան պատկանող փայի (փայերի) (բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի) նկատմամբ՝ փայի հաշվարկային արժեքի և ֆոնդի մասնակցի պարտավորության տարբերության փոխհատուցման պայմանով՝ հանելով փայի իրացման, այդ թվում՝ հետգնման ներկայացման հետ կապված ծախսերը:

Հոդված 20. Ֆոնդի վերակազմակերպումը

1. Սույն օրենքով ստեղծված ֆոնդը կարող է վերակազմակերպվել միայն սույն օրենքով նախատեսված այլ ֆոնդի: Հրապարակային ֆոնդը չի կարող վերակազմակերպվել ոչ հրապարակային ֆոնդի: Կենսաթոշակային ֆոնդը չի կարող վերակազմակերպվել կենսաթոշակային ֆոնդ չհամարվող այլ ներդրումային ֆոնդի:

ԳԼՈՒԽ 3
ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 21. Ֆոնդի ստեղծումը

1. Ֆոնդը ստեղծված է համարվում սույն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից ֆոնդի (կորպորատիվ ֆոնդի դեպքում) կամ դրա կանոնների (պայմանագրային ֆոնդի դեպքում) գրանցման պահից:

2. Ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման համար հիմնադիրը (հիմնադիրները) կամ կառավարիչը (պայմանագրային ֆոնդի դեպքում՝ կառավարիչը) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման միջնորդագիրը.

2) հիմնադրի (հիմնադիրների ժողովի) որոշումը՝ ֆոնդ ստեղծելու մասին (կորպորատիվ ֆոնդի դեպքում).

3) կառավարչի տնօրենների խորհրդի որոշումը՝ տվյալ ֆոնդն ստեղծելու (բացառությամբ, եթե կորպորատիվ ֆոնդն ստեղծվում է ոչ կառավարչի նախաձեռնությամբ) և կառավարելու մասին.

4) ֆոնդի կանոնադրության (կանոնների) նախագիծը՝ 6 օրինակից.

5) կառավարչի տնօրենների խորհրդի որոշումը ֆոնդի կանոնները հաստատելու մասին (պայմանագրային ֆոնդի դեպքում).

6) կառավարչի կողմից ներկայացված և հիմնադիրների ժողովում (հիմնադրի որոշմամբ) հաստատված ֆոնդի կառավարման պայմանագրի նախագիծը (կորպորատիվ ֆոնդի դեպքում).

7) կառավարչի և պահառուի միջև կնքված (պայմանագրային ֆոնդի դեպքում) կամ պահառուի կողմից ներկայացված և հիմնադիրների ժողովում (հիմնադրի որոշմամբ) հաստատված (կորպորատիվ ֆոնդի դեպքում) ֆոնդի պահառության պայմանագրի նախագիծը.

8) հիմնադրի (հիմնադիրների ժողովի) (կորպորատիվ ֆոնդի դեպքում) կամ ֆոնդի ժողովի (փակ պայմանագրային ֆոնդի դեպքում, որի կանոններով նախատեսված չէ, որ տվյալ ֆոնդում ֆոնդի ժողով չի գումարվում) որոշումը ֆոնդի կանոնադրության (կանոնների) և ֆոնդի պահառության պայմանագրերի նախագծերը հաստատելու (պայմանագրային ֆոնդի կառավարչի տնօրենների խորհրդի համապատասխան որոշմանը համաձայնություն տալու) մասին.

9) ֆոնդի ազդագիրը (բացառությամբ որակավորված ներդրողների ֆոնդի և բաց ֆոնդի).

10) պետական տուրքի վճարման անդորրագիրը.

11) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

3. Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերի հավաստիությունը գնահատելու համար:

4. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման մասին, եթե ներկայացվել են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները, և առկա չեն ֆոնդի կանոնների գրանցումը մերժելու՝ սույն օրենքով սահմանված հիմքերը:

5. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված միջնորդագիրը ներկայացնելու պահից 30 (որակավորված ներդրողների ֆոնդի դեպքում՝ 10) աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կենտրոնական բանկը պարտավոր է կորպորատիվ ֆոնդի գրանցման մասին որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրանցման վկայականը հանձնել միջնորդագիր ներկայացրած անձին: Սույն մասով նախատեսված գրանցման վկայականի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

7. Կենտրոնական բանկը ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման մասին որոշումը կայացնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազոր մարմնին՝ վերջինիս կողմից ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

8. Կենտրոնական բանկում գրանցվելու պահից կորպորատիվ ֆոնդը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Հոդված 22. Ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման մերժման հիմքերը

1. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ, և այդ թերությունները չեն վերացվել միջնորդագիր ներկայացրած անձի կողմից սույն օրենքի 111-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում.

2) կառավարման պայմանագիրը չի բավարարում սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները (կորպորատիվ ֆոնդի դեպքում).

3) պահառության պայմանագրի նախագիծը և (կամ) ազդագիրը չեն բավարարում սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները.

4) ֆոնդի կանոնադրությունը (կանոնները) հակասում է օրենքին, դրա վրա հիմնված այլ նորմատիվ իրավական ակտերին և (կամ) չի բխում ֆոնդի մասնակիցների շահերից:

2. Որակավորված ներդրողների ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման ժամանակ ֆոնդի կանոնադրության (կանոնների), ֆոնդի կառավարման պայմանագրի և ֆոնդի պահառության պայմանագրի նախագծերի բովանդակությունը չի ստուգվում:

Հոդված 23. Կորպորատիվ ֆոնդի կանոնադրությունը

1. Կորպորատիվ ֆոնդի կանոնադրությունը, ի լրումն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով տվյալ կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց կանոնադրությանը ներկայացվող պահանջներին, պետք է պարունակի՝

1) ֆոնդի տեսակը (ըստ ներդրումային քաղաքականության և ըստ փայերի (բաժնետոմսերի) թողարկման և հետգնման կառուցակարգի) և կարգավիճակը (կորպորատիվ ֆոնդ).

2) ֆոնդի ներդրումային քաղաքականությունը, այդ թվում՝ ներդրումների ուղղությունները, սահմանաչափերը և այլ յուրահատուկ (աշխարհագրական, ճյուղային և այլն) սահմանափակումները, ներդրումների հետ կապված ռիսկերի համառոտ նկարագիրը.

3) ածանցյալներով գործարքների կնքման նպատակները, թույլատրելի ածանցյալ գործիքների տեսակները, սահմանաչափերը, թույլատրելի ռիսկերի առավելագույն չափերը և դրանց հաշվարկման մեթոդը, եթե ֆոնդի կանոնադրության համաձայն՝ ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում.

4) ֆոնդի բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և հետգնման (մարման), ինչպես նաև դրանց թողարկման, տեղաբաշխման և հետգնման (մարման) կասեցման կարգը և պայմանները.

5) ֆոնդի եկամուտների բաշխման քաղաքականությունը.

6) ֆոնդի ակտիվներից կառավարչին և պահառուին վճարվող պարգևավճարների և այլ վճարների տեսակները, չափը և հաշվարկման կարգը.

7) ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի տեսակները և դրանց առավելագույն չափը.

8) ֆոնդի բաժնետոմսերի հաշվարկային արժեքի, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) գների որոշման և հրապարակման կարգն ու ժամկետները.

9) ֆոնդի ակտիվների գնահատման և ֆոնդի ակտիվների զուտ արժեքի հաշվարկման կարգը.

10) կառավարչի և պահառուի փոփոխման կարգը և պայմանները.

11) ֆոնդի կառավարման այն գործառույթների ցանկը, որոնք կարող են պատվիրակվել երրորդ անձի (նման հնարավորության նախատեսման դեպքում).

12) տեղեկատվության հրապարակման կարգը.

13) ֆոնդի կանոնադրության փոփոխման կարգը.

14) ֆոնդի տեսակի փոփոխման, ֆոնդի վերակազմակերպման և ֆոնդի լուծարման կարգը.

15) սույն օրենքով նախատեսված այլ դրույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել բաց կորպորատիվ ֆոնդի կանոնադրությունում ներառման ենթակա այլ դրույթներ և տեղեկություններ:

3. Ֆոնդի կանոնադրությունում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվելու դեպքում այդ փոփոխությունները և (կամ) լրացումները պետք է 10-օրյա ժամկետում ներկայացվեն Կենտրոնական բանկ: Ներկայացված փոփոխությունները և (կամ) լրացումները ենթակա են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից գրանցման Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից: Բաց կորպորատիվ ֆոնդի բաժնետոմսերի թողարկման և հետգնման (մարման) հետևանքով կապիտալի փոփոխությունները չեն առաջացնում ֆոնդի կանոնադրության փոփոխության անհրաժեշտություն:

4. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է գրանցել ֆոնդի կանոնադրության փոփոխությունները և (կամ) լրացումները, եթե դրանք հակասում են օրենքին, դրա վրա հիմնված այլ նորմատիվ իրավական ակտերին և (կամ) չեն բխում ֆոնդի մասնակիցների շահերից:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ֆոնդի կանոնադրության փոփոխությունների և (կամ) լրացումների գրանցմանը վերաբերող դրույթները չեն տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա, և վերջիններ կանոնադրության փոփոխությունները և (կամ) լրացումները գրանցվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ Կենտրոնական բանկ ներկայացվելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց այդ փոփոխությունների և (կամ) լրացումների բովանդակության ստուգման, եթե առկա չէ ֆոնդի մասնակցի պահանջը Կենտրոնական բանկի կողմից դրանց՝ օրենքին և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխանությունը ստուգելու մասին:

Հոդված 24. Պայմանագրային ֆոնդի կանոնները

1. Պայմանագրային ֆոնդի կանոնները առնվազն ներառում են՝

1) ֆոնդի անվանումը և գործունեության ժամկետը (եթե նրա գործունեությունը սահմանափակված է որոշակի ժամկետով), կառավարչի, պահառուի և ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի (եթե այն կառավարչից տարբերվող այլ անձ է) անվանումը և գտնվելու վայրը.

2) ֆոնդի տեսակը (ըստ ներդրումային քաղաքականության և ըստ փայերի թողարկման և հետգնման կառուցակարգի) և կարգավիճակը (պայմանագրային ֆոնդ).

3) ֆոնդի ներդրումային քաղաքականությունը, այդ թվում՝ ներդրումների ուղղությունները, սահմանաչափերը և այլ յուրահատուկ (աշխարհագրական, ճյուղային և այլն) սահմանափակումները, ներդրումների հետ կապված ռիսկերի համառոտ նկարագիրը.

4) ածանցյալներով գործարքների կնքման նպատակները, թույլատրելի ածանցյալ գործիքների տեսակները, սահմանաչափերը, թույլատրելի ռիսկերի առավելագույն չափերը և դրանց հաշվարկման մեթոդը, եթե ֆոնդի կանոնների համաձայն՝ ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում.

5) փայերի դասերը և դրանցից յուրաքանչյուրով հավաստվող իրավունքները, փայի անվանական արժեքը (առկայության դեպքում).

6) ֆոնդի եկամուտների բաշխման քաղաքականությունը.

7) ֆոնդի ակտիվներից կառավարչին և պահառուին վճարվող պարգևավճարների և այլ վճարների տեսակները, չափը և հաշվարկման կարգը, ֆոնդի հաշվին կատարվող ծախսերի տեսակները և դրանց առավելագույն չափը.

8) փայի հաշվարկային արժեքի, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) գների որոշման և հրապարակման կարգն ու ժամկետները.

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իր կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդին կամ դրա կառավարմանն առնչվող գովազդ համարվող ցանկացած տեղեկատվության բովանդակությունը նախապես համաձայնեցնել Կենտրոնական բանկի հետ՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Սույն մասով սահմանված կենսաթոշակային ֆոնդի կամ դրա կառավարմանն առնչվող գովազդ համարվող ցանկացած տեղեկատվության բովանդակություն Կենտրոնական բանկ ներկայացնելու և համաձայնությունը տալու կամ մերժելու մասին կենսաթոշակային ֆոնդի կառավարչին տեղեկացնելու կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

2. Ֆոնդի վերաբերյալ ցանկացած գովազդ, հայտարարություն կամ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) առաջարկին և (կամ) վաճառքին ուղղված ցանկացած գործողություն, փաստաթուղթ (այդ թվում՝ ազդագիր) կամ տեղեկատվության փոխանցման այլ միջոց պետք է հստակ տեսանելի և այլ տեղեկատվությունից առանձնացող նշում պարունակի այն մասին, որ ֆոնդը և նրա կառավարիչը չեն կարող երաշխավորել ֆոնդի կողմից հռչակված ֆոնդի նպատակների ձեռքբերումը: Սույն մասով նախատեսված տեղեկատվության փոխանցման միջոցը չպետք է պարունակի որևէ պնդում, որը հակասում է ազդագրում պարունակվող որևէ տեղեկատվության կամ նվազեցնում է դրա նշանակությունը, և պետք է նշում պարունակի ազդագրի առկայության և այն մասին, թե ինչպես ներդրողները կամ պոտենցիալ ներդրողները կարող են այդ փաստաթուղթը ձեռք բերել կամ ծանոթանալ դրան:

3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող կառավարչի վերաբերյալ ցանկացած գովազդ կամ հայտարարություն պետք է նշում պարունակի նրա՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ լինելու մասին:

4. Կառավարիչներին արգելվում է գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ՝

1) օգտագործել ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ ակտիվների կառավարչի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ կառավարչի և (կամ) նրա

կողմից կառավարվող ֆոնդերի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ.

2) երաշխավորել իր կողմից կառավարվող ֆոնդերի ակտիվների կանխատեսված կամ ակնկալվող աճ, ինչպես նաև վճարման ենթակա շահաբաժինների, կուտակային կենսաթոշակների կանխատեսված գումարների չափերը.

3) չհիմնավորված կամ ապակողմնորոշիչ խոստումների միջոցով ազդել անձի վրա՝ նրան դրդելով ընտրել տվյալ ակտիվների կառավարչին.

4) օգտագործել անբարեխիղճ մրցակցության մեթոդներ՝ նշելով այլ կառավարիչների և (կամ) ֆոնդերի ցանկացած թերություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկություններն իրականում հավաստի են, թե ոչ:

Հոդված 96. Արտաքին աուդիտը

1. Յուրաքանչյուր տարի կառավարչի և նրա կողմից կառավարվող ֆոնդի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով կառավարիչը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ արտաքին աուդիտ): Ֆոնդի արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում է ֆոնդի ժողովը (կառավարչի խորհուրդը, եթե ֆոնդը չունի ժողով)՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Կառավարչի արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում է կառավարչի ժողովը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել ֆոնդի (կառավարչի) արտաքին աուդիտ իրականացնող անձին ներկայացվող լրացուցիչ պահանջներ: Ֆոնդի (կառավարչի) արտաքին աուդիտ իրականացնող անձի անդամ (ղեկավար) չի կարող լինել կառավարչի կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, կառավարչի ներքին աուդիտն իրականացրած անձի անդամը և ղեկավարը, ֆոնդի վերստուգող հանձնաժողովի անդամը, ինչպես նաև կառավարչի, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:

3. Ցանկացած ժամանակ ֆոնդի արտաքին աուդիտ կարող է հրավիրվել ֆոնդի ժողովի կամ կառավարչի խորհրդի կողմից՝ ֆոնդի միջոցների հաշվին, կամ ֆոնդի մասնակցի կամ պահառուի նախաձեռնությամբ՝ նրա միջոցների հաշվին: Ցանկացած ժամանակ կառավարչի արտաքին աուդիտ կարող է հրավիրվել կառավարչի խորհրդի կողմից՝ կառավարչի միջոցների հաշվին, կամ կառավարչի մասնակցի նախաձեռնությամբ՝ նրա միջոցների հաշվին: Ընդ որում, ֆոնդի (կառավարչի) մասնակցի կամ պահառուի կողմից արտաքին աուդիտ հրավիրվելու դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում և նրա հետ պայմանագիր է կնքում արտաքին աուդիտ պահանջող մասնակիցը (պահառուն), որը կարող է կառավարչից պահանջել իր կատարած ծախսերի հատուցում ֆոնդի միջոցների հաշվին, եթե կառավարչի խորհրդի որոշմամբ այդ աուդիտն արդարացված է եղել ֆոնդի (կառավարչի) համար:

4. Արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելուց, պետք է նախատեսվի նաև աուդիտորական հաշվետվություն (նամակ կառավարչի ղեկավարությանը) կազմելը:

5. Կառավարիչը արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից եզրակացություն ներկայացնելը՝

1) սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ֆոնդի (կառավարչի) տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանելու մասին.

2) ֆոնդի (կառավարչի) վերստուգող հանձնաժողովի (ներքին աուդիտի) գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին.

3) ֆոնդի (կառավարչի) ներքին տեղեկատվական համակարգի առկայության և որակի մասին.

4) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու արժանահավատության մասին.

5) որակավորված ներդրողների ֆոնդի կանոնների (կանոնադրության), ֆոնդի պահառության, ֆոնդի կառավարման պայմանագրերի և դրանց փոփոխությունների՝ սույն օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին (որակավորված ներդրողների ֆոնդի արտաքին աուդիտի դեպքում):

6. Աուդիտորական ստուգում իրականացնելու ընթացքում ֆոնդի (կառավարչի) ֆինանսական վիճակի՝ իր կարծիքով էական վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտոն իրականացնող անձը պարտավոր է դրանց մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Կենտրոնական բանկին:

7. Կենտրոնական բանկը կարող է կառավարչին պարտադրել չորս ամսվա ընթացքում հրավիրել կառավարչի և (կամ) նրա կողմից կառավարվող ֆոնդի արտաքին աուդիտ և առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում հրապարակել արտաքին աուդիտոն իրականացնող անձի եզրակացությունը:

8. Արտաքին աուդիտոն իրականացնող անձի տարեկան եզրակացությունը և հաշվետվությունը կառավարիչը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Որակավորված ներդրողների ֆոնդի արտաքին աուդիտոն իրականացնող անձի տարեկան եզրակացությունը և հաշվետվությունը Կենտրոնական բանկ են ներկայացվում միայն Կենտրոնական բանկի պահանջով:

9. Կենտրոնական բանկի պահանջով արտաքին աուդիտոն իրականացնող անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ֆոնդի (կառավարչի) աուդիտի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, նույնիսկ եթե դրանք պարունակում են ծառայողական տեղեկություններ, առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք: Սույն մասով նախատեսված տեղեկությունների տրամադրումը Կենտրոնական բանկ չի համարվում օրենքով պահպանվող գաղտնիքի կամ ծառայողական տեղեկատվության ապօրինի հրապարակում (տրամադրում) և չի առաջացնում պատասխանատվություն: Սույն մասով սահմանված պարտավորությունների չկատարման համար արտաքին աուդիտոն իրականացնող անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

10. Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համատեղ նորմատիվ իրավական ակտերով կարող են արտաքին աուդիտոն իրականացնող անձի համար սահմանվել արտաքին աուդիտին և աուդիտորական եզրակացության ձևին և բովանդակությանը վերաբերող առավել մանրամասն պահանջներ:

11. Կենտրոնական բանկը կարող է պահանջել արտաքին աուդիտոն իրականացնող անձից լրացուցիչ բացատրություններ և պարզաբանումներ իր եզրակացության և հաշվետվության վերաբերյալ:

12. Եթե աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը կազմվել են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ, կամ արտաքին աուդիտը չի իրականացվել օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ապա Կենտրոնական բանկը կարող է չընդունել այն և պահանջել ֆոնդի և (կամ) կառավարչի հաշվին այլ արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից նոր արտաքին աուդիտ:

Հոդված 97. Ծառայողական տեղեկատվությունը

1. Ֆոնդը (ֆոնդի մասնակցին) սպասարկելու կապակցությամբ կառավարչին, պահառուին, ինչպես նաև ֆոնդի կառավարման առանձին գործառույթներ իրականացնող այլ անձին (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիային) ֆոնդի (ֆոնդի մասնակցի) հայտնի դարձած հաշիվների վերաբերյալ որևէ տեղեկությունը, ֆոնդի (ֆոնդի մասնակցի) առևտրային կամ ծառայողական գաղտնիքը և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը ֆոնդը (ֆոնդի մասնակիցը) մտադիր է եղել գաղտնի պահել, և կառավարիչը, պահառուն կամ սույն մասով նախատեսված այլ անձը տեղյակ է եղել

կամ պետք է տեղյակ լիներ այդ մտադրության մասին, համարվում է ծառայողական տեղեկատվություն:

2. Ծառայողական տեղեկատվություն է համարվում նաև սույն օրենքով վերահսկման ենթակա անձանց կողմից վերահսկողության իրականացման կապակցությամբ ֆոնդի (ֆոնդի մասնակցի) վերաբերյալ Կենտրոնական բանկին տրամադրված՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ծառայողական տեղեկատվության վրա տարածվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ծառայողական տեղեկատվության պահպանմանը, տրամադրմանը և հրապարակմանը վերաբերող դրույթները:

4. Եթե Կենտրոնական բանկի կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունը վերլուծելիս պարզվում է, որ տեղի է ունեցել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում քրեական հետապնդում իրականացնող համապատասխան մարմին:

ԲԱԺԻՆ 7
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖՈՆԴԵՐԸ

ԳԼՈՒԽ 16
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖՈՆԴԵՐԸ

Հոդված 98. Օտարերկրյա ֆոնդերի արժեթղթերի վաճառքը Հայաստանի Հանրապետությունում

1. Օտարերկրյա ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար օտարերկրյա ֆոնդը կամ նրա կառավարիչը պետք է ստանա Կենտրոնական բանկի խորհրդի նախնական թույլտվությունը:

2. Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը ստանալու համար Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով Կենտրոնական բանկ են ներկայացվում՝

1) նախնական թույլտվության տրամադրման միջնորդագիրը.

2) համապատասխան օտարերկրյա պետության՝ օտարերկրյա կառավարչի և (կամ) ֆոնդի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի տված տեղեկանքն այն մասին, որ օտարերկրյա ֆոնդը և (կամ) օտարերկրյա կառավարիչն ունի համապատասխան գործունեություն իրականացնելու թույլտվություն և գործում է տվյալ պետության օրենսդրության համաձայն.

3) օտարերկրյա կառավարչի կամ ֆոնդի գրանցման երկրի օրենսդրության համաձայն՝ կառավարչի և (կամ) ֆոնդի գրանցման վկայականի, կանոնադրության կամ այլ հիմնադիր փաստաթղթերի և լիցենզիայի, պայմանագրային ֆոնդի կանոնների՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունները.

4) ֆոնդի կամ կառավարչի գործարար ծրագիրը.

5) ազդագիրը (բացառությամբ բաց ֆոնդի կամ որակավորված ներդրողների ֆոնդի թողարկած արժեթղթերի).

6) վերջին տարեկան և կիսամյակային հաշվետվությունները (եթե կիսամյակային հաշվետվությունը կազմվել է վերջին տարեկան հաշվետվությունից հետո)՝ հաստատված արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից.

7) Հայաստանի Հանրապետությունում փայերի կամ բաժնետոմսերի վաճառքի և հետգնման (մարման) ընթացակարգի մանրամասն նկարագիրը, այդ թվում՝ փայերի կամ բաժնետոմսերի վաճառքի և հետգնման (մարման) հետ կապված վճարումների կատարման պայմանները.

8) տեղեկություններ գործակալի վերաբերյալ, որի միջոցով իրականացվելու են արժեթղթերի վաճառքն ու հետգնումը (մարումը) և նրա հետ կնքված համապատասխան պայմանագիրը.

9) պետական տուրքի վճարման անդորրագիրը.

10) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված թույլտվության տրամադրման կարգն ու պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

4. Օտարերկրյա ֆոնդերի արժեթղթերի վաճառքը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետությունում գրանցված գործակալի միջոցով (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի)՝ սույն օրենքի, այլ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ: Նման գործակալին Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են ներկայացվել լրացուցիչ պահանջներ:

5. Օտարերկրյա ֆոնդի արժեթղթերը կարող են վաճառվել նաև տվյալ ֆոնդի կառավարիչ համարվող Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կառավարչի կամ օտարերկրյա կառավարչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղի կողմից, որի դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախնական թույլտվության ստացման համար Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են կառավարչին (եթե Կենտրոնական բանկում առկա համապատասխան տեղեկություններում չեն կատարվել փոփոխություններ) և գործակալին:

ԲԱԺԻՆ 8
ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ (ԼՈՒԾԱՐՈՒՄԸ)

ԳԼՈՒԽ 17
ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 99. Կորպորատիվ ֆոնդի տեսակի փոփոխումը և վերակազմակերպումը

1. Կորպորատիվ ֆոնդի տեսակի փոփոխումը և ֆոնդի վերակազմակերպումը կատարվում են ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) որոշման հիման վրա:

2. Ստանդարտ (մասնագիտացված) կորպորատիվ ֆոնդը կարող է վերափոխվել մասնագիտացված (ստանդարտ) կորպորատիվ ֆոնդի, կամ ստանդարտ (մասնագիտացված) ֆոնդի կոնկրետ տեսակը կարող է վերափոխվել ստանդարտ (մասնագիտացված) ֆոնդի մեկ այլ տեսակի, ինչպես նաև բաց, միջակայքային կամ փակ կորպորատիվ ֆոնդը կարող է վերափոխվել փակ, բաց կամ միջակայքային կորպորատիվ ֆոնդի (ֆոնդի տեսակի փոփոխում):

3. Ֆոնդի տեսակի փոփոխումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով ֆոնդի կանոնադրության փոփոխության միջոցով:

4. Եթե ստանդարտ ֆոնդը վերափոխվում է մասնագիտացված ֆոնդի, կամ բաց ֆոնդը վերափոխվում է փակ ֆոնդի, ապա ֆոնդի կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանց հրապարակումից առնվազն երեք ամիս հետո:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումը չի տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա: Որակավորված ներդրողների բաց ֆոնդը փակ ֆոնդի վերափոխվելու դեպքում ֆոնդի կանոնադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում ֆոնդի տեսակի փոփոխման մասին ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) կողմից որոշում կայացվելուց առնվազն մեկ ամիս հետո:

6. Կորպորատիվ ֆոնդը կարող է վերակազմակերպվել բացառապես իր կառավարչի կողմից կառավարվող այլ կորպորատիվ ֆոնդին միանալու, սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքում՝ այլ կառավարչի կողմից կառավարվող կորպորատիվ ֆոնդին միանալու, ինչպես նաև վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդը բաժնետիրական ընկերություն հանդիսացող ֆոնդի վերակազմավորվելու միջոցով:

7. Սույն օրենքով սահմանված դեպքերում առանց կառավարչի մնացած ֆոնդը կարող է միանալ այլ կառավարչի կողմից կառավարվող ֆոնդին, որի դեպքում պետք է պահպանվեն սույն օրենքի՝ նոր կառավարչի հետ ֆոնդի կառավարման պայմանագիր կնքելուն վերաբերող կանոնները:

8. Բաց կամ միջակայքային ֆոնդը չի կարող միանալ փակ ֆոնդին: Բաց ֆոնդը չի կարող միանալ միջակայքային ֆոնդին: Ստանդարտ ֆոնդը չի կարող միանալ մասնագիտացված ֆոնդին: Կամավոր կենսաթոշակային ֆոնդը կարող է միանալ միայն կամավոր կենսաթոշակային ֆոնդի:

9. Կորպորատիվ ֆոնդի՝ մեկ այլ կորպորատիվ ֆոնդի հետ միանալու ձևով վերակազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով միացող ֆոնդի (ֆոնդերի) գործունեության դադարման մասին Կենտրոնական բանկի ֆոնդերի գրանցման համապատասխան մատյանում գրառում կատարելու և այն ֆոնդի կանոնադրության մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

10. Կորպորատիվ ֆոնդին միանալու համար պահանջվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը: Կենտրոնական բանկի համաձայնությունը չի պահանջվում որակավորված ներդրողների ֆոնդի միացման համար:

11. Կորպորատիվ ֆոնդի տեսակի փոփոխման և ֆոնդի վերակազմակերպման հետ կապված ֆոնդի կանոնադրության փոփոխությունները ենթակա են հրապարակման Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով: Սույն մասով նախատեսված պահանջը չի տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա:

12. Կորպորատիվ ֆոնդի տեսակի փոփոխման կամ ֆոնդի վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվում են կառավարչի հաշվին:

Հոդված 100. Պայմանագրային ֆոնդի տեսակի փոփոխումը և միացումը

1. Պայմանագրային ֆոնդի տեսակի փոփոխումը և միացումը կատարվում են կառավարչի խորհրդի որոշման և ֆոնդի ժողովի (առկայության դեպքում) կողմից դրան տրված համաձայնության հիման վրա:

2. Ստանդարտ (մասնագիտացված) պայմանագրային ֆոնդը կարող է վերափոխվել մասնագիտացված (ստանդարտ) պայմանագրային ֆոնդի, կամ ստանդարտ (մասնագիտացված) ֆոնդի կոնկրետ տեսակը կարող է վերափոխվել ստանդարտ (մասնագիտացված) ֆոնդի մեկ այլ տեսակով, ինչպես նաև բաց, միջակայքային կամ փակ պայմանագրային ֆոնդը կարող է վերափոխվել փակ, բաց կամ միջակայքային պայմանագրային ֆոնդի (ֆոնդի տեսակի փոփոխում):

3. Ֆոնդի տեսակի փոփոխումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով ֆոնդի կանոնների փոփոխության միջոցով:

4. Եթե ստանդարտ ֆոնդը վերափոխվում է մասնագիտացված ֆոնդի, կամ բաց ֆոնդը վերափոխվում է փակ ֆոնդի, ապա ֆոնդի կանոնների փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանց հրապարակումից առնվազն երեք ամիս հետո:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումը չի տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա: Որակավորված ներդրողների բաց ֆոնդը փակ ֆոնդի վերափոխվելու դեպքում ֆոնդի կանոնների փոփոխություններն ուժի մեջ են մտնում ֆոնդի տեսակի փոփոխման մասին կառավարչի խորհրդի կողմից որոշում կայացվելուց առնվազն մեկ ամիս հետո:

6. Ֆոնդի միաձուլումը, բաժանումը և առանձնացումն արգելվում են:

7. Ֆոնդի՝ մեկ այլ ֆոնդին միացումն իրականացվում է սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով միացող ֆոնդի (ֆոնդերի) կանոնների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու և այն ֆոնդի կանոնների մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

8. Ֆոնդի միացման համար պահանջվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը: Կենտրոնական բանկի համաձայնությունը չի պահանջվում որակավորված ներդրողների ֆոնդի միացման համար:

9. Պայմանագրային ֆոնդը կարող է միանալ միայն նույն կառավարչի կողմից կառավարվող մեկ այլ պայմանագրային ֆոնդի: Սույն օրենքով սահմանված դեպքերում առանց կառավարչի մնացած ֆոնդը կարող է միանալ այլ կառավարչի կողմից կառավարվող ֆոնդին, որի դեպքում պետք է պահպանվեն սույն օրենքի՝ ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցելուն վերաբերող կանոնները: Բաց կամ միջակայքային ֆոնդը չի կարող միանալ փակ ֆոնդին: Բաց ֆոնդը չի կարող միանալ միջակայքային ֆոնդին: Ստանդարտ ֆոնդը չի կարող միանալ մասնագիտացված ֆոնդին: Կամավոր կենսաթոշակային ֆոնդը կարող է միանալ միայն կամավոր կենսաթոշակային ֆոնդի: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդը կարող է միանալ միայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նույն տեսակի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի:

10. Միացման դեպքում միացող ֆոնդի ակտիվները և պարտավորությունները փոխանցվում են այն ֆոնդին, որին միանում է փոխանցման ակտին համապատասխան:

11. Ֆոնդի տեսակի փոփոխման և միացման հետ կապված ֆոնդի կանոնների փոփոխությունները ենթակա են հրապարակման Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով: Սույն մասով նախատեսված պահանջը չի տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա:

12. Ֆոնդի տեսակի փոփոխման կամ միացման հետ կապված ծախսերը կատարվում են կառավարչի հաշվին:

ԳԼՈՒԽ 18
ՖՈՆԴԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ (ԼՈՒԾԱՐՈՒՄԸ)

Հոդված 101. Կորպորատիվ ֆոնդի լուծարումը

1. Ի լրումն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի՝ կորպորատիվ ֆոնդը լուծարվում է, եթե՝

1) լրացել է ֆոնդի կանոնադրությամբ նախատեսված ֆոնդի գործունեության ժամկետը.

2) ֆոնդի գրանցումից հետո՝ 6 ամսվա ընթացքում, ձեռք չի բերվել ֆոնդի զուտ ակտիվների՝ սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունը.

3) ֆոնդի զուտ ակտիվների արժեքը նվազել է սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունից վեց ամսից ավելի ժամկետով.

4) ֆոնդի զուտ ակտիվների արժեքը նվազել է սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծության 1/2-ից.

5) սույն օրենքով սահմանված կարգով դադարեցվել (դադարել) է ֆոնդի պահառության և (կամ) ֆոնդի կառավարման պայմանագրի գործողությունը, և այդ պահից 2 ամսվա ընթացքում չի նշանակվել նոր պահառու և (կամ) կառավարիչ, կամ ֆոնդը սույն օրենքով սահմանված կարգով չի միացել այլ կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի.

6) օրենքով և ֆոնդի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) կողմից ֆոնդի լուծարման մասին որոշում չկայացվելու դեպքում Կենտրոնական բանկը պարտավոր է պահառուի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ ֆոնդի լուծարման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) որոշման հիման վրա ֆոնդը կարող է լուծարվել Կենտրոնական

բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում, եթե նրա լուծարմամբ չեն վտանգվի ֆոնդի մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը: Սույն մասով նախատեսված համաձայնությունը չի պահանջվում որակավորված ներդրողների ֆոնդերի համար: Վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձևով ստեղծված ֆոնդը կառավարչի խորհրդի որոշման հիման վրա կարող է լուծարվել նաև սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված հիմքերով՝ նախապես առնվազն վեց ամիս առաջ հայտարարելով այդ մասին:

4. Ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) նշանակած լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամներ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխան որակավորում ունեցող անձինք: Կենտրոնական բանկը վերահսկողություն է իրականացնում ֆոնդի լուծարման գործընթացի նկատմամբ, և լուծարման հանձնաժողովը իր գործունեության համար հաշվետու է Կենտրոնական բանկի առջև:

5. Ֆոնդի ակտիվներն ամբողջությամբ բաշխելուց հետո ֆոնդի լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որը ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված այլ փաստաթղթերի հետ ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ ֆոնդի լուծարման մասին գրանցում կատարելու համար:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացվելու պահից տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկը կայացնում է լուծարային հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը: Կենտրոնական բանկը մերժում է լուծարային հաշվեկշռի հաստատումը, եթե լուծարային հանձնաժողովը խախտել է օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջները:

7. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը չհաստատվելու դեպքում լուծարային հանձնաժողովը 10-օրյա ժամկետում վերացնում է Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարային հաշվեկշիռը լուծարվող ֆոնդի ժողովի (վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող ֆոնդի կառավարչի խորհրդի) կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր միջնորդագիր է ներկայացնում Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկն այդ միջնորդագիրը քննում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

8. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատվելու մասին որոշումը կայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը լուծարվող ֆոնդին գրանցումից հանելու մասին գրառում է կատարում ֆոնդերի գրանցումների մատյանում:

9. Ֆոնդը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած Կենտրոնական բանկի կողմից ֆոնդի լուծարման մասին համապատասխան գրանցում կատարելու պահից, որի մասին Կենտրոնական բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազոր մարմնին՝ վերջինիս կողմից ֆոնդի լուծարման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

10. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում լուծարային հանձնաժողովը ֆոնդի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով հրապարակում է տեղեկատվություն, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է ֆոնդի լուծարման հետ կապված պարտավորություններից:

11. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի լուծարման դեպքում ֆոնդի մասնակիցն իրավունք ունի պահանջելու տվյալ ֆոնդի պահառուից, որ իրեն բաշխման ենթակա

ակտիվների հաշվին իր անունից ձեռք բերվեն այլ (իր ընտրած) կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայեր (բաժնետոմսեր): Պահառուն պարտավոր է գրավոր և պատշաճ ձևով տեղեկացնել լուծարվող ֆոնդի բոլոր մասնակիցներին՝ սույն մասով նախատեսված իրենց իրավունքների և դրանց հետևանքների մասին: Սույն մասով սահմանված ծանուցումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան ակտիվները միանվագ վճարվում են ֆոնդի ընտրություն չկատարած մասնակիցներին:

Հոդված 102. Պայմանագրային ֆոնդի դադարեցումը

1. Ֆոնդը դադարեցվում է, եթե՝

1) լրացել է ֆոնդի կանոններով նախատեսված՝ ֆոնդի գործելու ժամկետը.

2) ֆոնդի կանոնների գրանցումից հետո՝ 6 ամսվա ընթացքում, ձեռք չի բերվել ֆոնդի զուտ ակտիվների արժեքի՝ սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունը.

3) ֆոնդի զուտ ակտիվների արժեքը իջել է սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծությունից վեց ամսից ավելի ժամկետով.

4) ֆոնդի զուտ ակտիվների արժեքը իջել է սույն օրենքով նախատեսված նվազագույն մեծության 1/2-ից.

5) սույն օրենքով սահմանված կարգով դադարեցվել (դադարել) է ֆոնդի պահառության և (կամ) ֆոնդի կառավարման պայմանագրի գործողությունը, և այդ պահից երեք ամսվա ընթացքում չի նշանակվել նոր պահառու և (կամ) կառավարիչ, կամ ֆոնդը սույն օրենքով սահմանված կարգով չի միացել այլ կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի.

6) օրենքով և ֆոնդի կանոններով նախատեսված այլ դեպքերում:

2. Ֆոնդի դադարեցման մասին որոշումը կայացնում է կառավարիչը, իսկ նրա բացակայության դեպքում՝ պահառուն, որը ենթակա է համաձայնեցման ֆոնդի ժողովի հետ (դրա առկայության դեպքում): Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված հիմքերի առկայության դեպքում ֆոնդի դադարեցման մասին որոշում չկայացվելու կամ ֆոնդի ժողովի կողմից այդ որոշմանը համաձայնություն չտրամադրվելու դեպքում Կենտրոնական բանկը պարտավոր է պահառուի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ ֆոնդի դադարեցման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում կառավարչի (պահառուի) կողմից ֆոնդի դադարեցման մասին որոշման հիման վրա ֆոնդը կարող է դադարեցվել միայն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում, եթե նրա դադարեցմամբ չեն վտանգվի ֆոնդի մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը: Սույն մասով նախատեսված համաձայնությունը չի պահանջվում որակավորված ներդրողների ֆոնդերի համար:

4. Ֆոնդի դադարեցումը իրականացվում է կառավարչի, իսկ նրա բացակայության դեպքում՝ պահառուի կողմից սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Կենտրոնական բանկը վերահսկողություն է իրականացնում ֆոնդի դադարեցման գործընթացի նկատմամբ, և կառավարիչը (պահառուն) հաշվետու է նրա առջև իր գործողությունների համար:

5. Ֆոնդի դադարեցման և ֆոնդի պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետների (որը չի կարող պակաս լինել երկու ամսից) ու կարգի մասին հայտարարությունը, ինչպես նաև պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետների ավարտից հետո կառավարչի (պահառուի) կազմած դադարեցման միջանկյալ հաշվեկշիռը կառավարիչը կամ պահառուն (եթե կառավարիչ չկա) պետք է հրապարակի առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում:

6. Ֆոնդի դադարեցման ժամանակ կառավարիչը (պահառուն) կարող է իրականացնել միայն այնպիսի գործողություններ և կնքել այնպիսի գործարքներ, որոնք ուղղված են ֆոնդի ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և ֆոնդի ակտիվների բաշխմանը:

7. Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ դադարեցման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին ֆոնդը չունի

պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, ֆոնդի ակտիվները բաշխվում են ֆոնդի մասնակիցների միջև ֆոնդում նրանց մասնակցության չափին համամասնորեն: Ֆոնդի մասնակիցներին նրանց փայերի դիմաց վճարումը կատարվում է բացառապես դրամական միջոցներով:

8. Ֆոնդի ակտիվներն ամբողջությամբ բաշխելուց հետո կառավարիչը (պահառուն) կազմում է դադարեցման հաշվեկշիռ, որը ֆոնդի ժողովի առկայության դեպքում հաստատվում է նրա կողմից և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված այլ փաստաթղթերի հետ ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացվելու պահից տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկը կայացնում է դադարեցման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը: Կենտրոնական բանկը մերժում է դադարեցման հաշվեկշռի հաստատումը, եթե կառավարիչը (պահառուն) խախտել է օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ֆոնդի դադարեցմանը ներկայացվող պահանջները:

10. Կենտրոնական բանկի կողմից դադարեցման հաշվեկշիռը չհաստատվելու դեպքում կառավարիչը (պահառուն) 10-օրյա ժամկետում վերացնում է Կենտրոնական բանկի կողմից դադարեցման հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և դադարեցման հաշվեկշիռը դադարեցվող ֆոնդի ժողովի (առկայության դեպքում) կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր միջնորդագիր է ներկայացնում Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկն այդ միջնորդագիրը քննում է սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

11. Կենտրոնական բանկի կողմից դադարեցման հաշվեկշիռը հաստատվելու մասին որոշումը կայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը դադարեցվող պայմանագրային ֆոնդի կանոնները գրանցումից հանելու մասին գրառում է կատարում պայմանագրային ֆոնդերի կանոնների գրանցումների մատյանում:

12. Ֆոնդը համարվում է դադարած Կենտրոնական բանկի կողմից ֆոնդի դադարման մասին համապատասխան գրանցում կատարելու պահից, որի մասին Կենտրոնական բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազոր մարմնին՝ վերջինիս կողմից ֆոնդի դադարման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

13. Կենտրոնական բանկի կողմից դադարեցման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում կառավարիչը (պահառուն) ֆոնդի դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով հրապարակում է տեղեկատվություն, որից հետո կառավարիչը (պահառուն) ազատվում է ֆոնդի դադարեցման հետ կապված պարտավորություններից:

14. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի դադարեցման դեպքում ֆոնդի մասնակցի ակտիվները ենթակա չեն վերադարձման նրան, այլ դրանց հաշվին և վերջինի անունից տվյալ ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գնվում են սույն մասով սահմանված կարգով ընտրված այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ֆոնդի ընտրությունը կատարվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ֆոնդի մասնակցի կողմից սույն մասով նախատեսված ֆոնդի ընտրությունը կատարելու անհրաժեշտության և դրա կարգի մասին գրավոր և պատշաճ ձևով տեղեկացվելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ընտրությունը չկատարվելու դեպքում ֆոնդի ընտրությունը կատարվում է տվյալ ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծրագրային մոդուլի միջոցով պատահականության սկզբունքով:

15. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի դադարեցման դեպքում ֆոնդի ակտիվները բաշխվում են ֆոնդի մասնակիցների միջև սույն օրենքի 101-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով:

Բ Ա Ժ Ի Ն 9
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 19
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 103. Վերահսկողության իրականացման ընդհանուր հիմունքները

1. Սույն օրենքի, ֆոնդերի և (կամ) կառավարիչների կազմավորման և (կամ) գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների կատարման և պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը:

2. Կենտրոնական բանկն իր իրավասության շրջանակներում կարգավորում և վերահսկում է կորպորատիվ ֆոնդերը, այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդերը, կառավարիչներին և պահառուներին (այսուհետ՝ վերահսկվող անձինք), ինչպես նաև դրանց ղեկավարների և դրանց կազմում կամ անունից գործող սույն օրենքով որակավորման ենթակա անձանց գործունեությունը:

3. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վերահսկողության իր իրավասությունն իրականացնում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց նկատմամբ հեռակա վերահսկողության և նրանց մոտ ստուգումների իրականացման միջոցով:

4. Կենտրոնական բանկը հեռակա վերահսկողությունը և ստուգումներն իրականացնում է սույն օրենքով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:

5. Կենտրոնական բանկն իրավասու է վերահսկողության ընթացքում վերահսկվող անձանց վերաբերյալ իրեն հայտնի դարձած այնպիսի տեղեկություններ հայտնելու օտարերկրյա պետության՝ ֆոնդերի նկատմամբ բացառիկ վերահսկողության իրավունք ունեցող համապատասխան պետական մարմնին, որոնք անհրաժեշտ են նրան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող համապատասխան վերահսկվող անձի կողմից տվյալ պետության տարածքում դուստր ընկերություն (այդ թվում՝ որպես գործակալ հանդես եկող դուստր ընկերություն) կամ տարածքային ստորաբաժանում ստեղծելուն համաձայնություն տալու կամ տվյալ պետության տարածքում ստեղծված այդպիսի դուստր ընկերության (այդ թվում՝ որպես գործակալ հանդես եկող դուստր ընկերության) կամ տարածքային ստորաբաժանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար՝ Կենտրոնական բանկի և օտարերկրյա պետության՝ ֆոնդերի նկատմամբ բացառիկ վերահսկողության իրավունք ունեցող համապատասխան պետական մարմնի միջև կնքված միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 104. Կենտրոնական բանկի հեռակա վերահսկողությունը

1. Կենտրոնական բանկը հեռակա վերահսկողությունն իրականացնում է սույն օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից Կենտրոնական բանկի կողմից պահանջվող՝ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և նմանատիպ այլ փաստաթղթերի կամ տեղեկությունների ստուգման միջոցով:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանվում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման կարգն ու ժամկետները:

Հոդված 105. Կենտրոնական բանկի կողմից ստուգումների իրականացումը

1. Կենտրոնական բանկն ստուգումներն իրականացնում է օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված հաճախականությամբ և կարգով՝ ըստ իր կազմած ստուգումների ծրագրի (ծրագրված ստուգումներ) և (կամ) ըստ անհրաժեշտության:

2. Վերահսկվող անձանց մոտ ստուգումներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 106. Կենտրոնական բանկի կողմից պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը

1. Սույն օրենքի, ֆոնդերի և (կամ) կառավարիչների կազմավորման և (կամ) գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը սույն օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձանց նկատմամբ կարող է կիրառել պատասխանատվության հետևյալ միջոցները (կիրառելիության դեպքում).

1) նախազգուշացում՝ խախտումը վերացնելու և (կամ) ապագայում նման խախտում չկրկնելու և (կամ) ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով (հանձնարարականներով) (այսուհետ՝ նաև նախազգուշացում).

2) տուգանք.

3) մասնագիտական որակավորումից զրկում.

4) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

2. Մեկ խախտման համար կարող է նշանակվել միայն մեկ պատասխանատվության միջոց, բացառությամբ այն դեպքի, երբ նախազգուշացման հետ կիրառվում է նաև տուգանք:

3. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառումը չի բացառում միաժամանակ այլ ընթացակարգով նշանակված քրեական, վարչական, քաղաքացիական կամ պատասխանատվության այլ ձևերի կիրառման հնարավորությունը:

4. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 107. Նախազգուշացումը

1. Սույն օրենքի, ֆոնդերի և (կամ) կառավարիչների կազմավորման և (կամ) գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի խախտման դեպքում Կենտրոնական բանկի նախագահն իրավունք ունի իր որոշմամբ նախազգուշացում տալու նման խախտում թույլ տված անձին:

2. Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տրված խախտումը, և խախտում թույլ տված անձը տեղեկացվում է խախտման անթույլատրելիության մասին:

3. Նախազգուշացման մեջ տրվում է նաև թույլ տված խախտումը Կենտրոնական բանկի սահմանած ժամկետում վերացնելու և (կամ) ապագայում նման խախտումը չկրկնելու և (կամ) ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական (հանձնարարականներ): Այդ հանձնարարականով (հանձնարարականներով) կարող են նախատեսվել նաև վերահսկվող անձի կողմից կնքվող որոշակի գործարքների և (կամ) գործառնությունների դադարեցում և (կամ) դրանց պայմանների փոփոխություն և (կամ) նրանց գործունեությունն օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանեցնելու վերաբերյալ անհրաժեշտ այլ միջոցառումների իրականացման ցուցումներ: Հանձնարարականի (հանձնարարականների) կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացած անձի համար:

Հոդված 108. Տուգանքը

1. Սույն օրենքի, ֆոնդերի և (կամ) կառավարիչների կազմավորման և (կամ) գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ օրենքների և (կամ) դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի խախտման դեպքում, եթե վերահսկվող անձի մոտ ստեղծված իրավիճակի շտկման նպատակով վերահսկողական միջոցառումների (ինչպիսիք են հանդիպումը, նամակագրությունը, բացատրական աշխատանքները) իրականացման և (կամ) նախազգուշացում տալու արդյունքում այդ խախտումները և (կամ) խախտումների պատճառները չեն վերացվել կամ չեն կարող վերացվել, Կենտրոնական բանկի նախագահն իրավասու է նման խախտում թույլ տված անձի նկատմամբ իր որոշմամբ կիրառելու տուգանք:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում նշանակված տուգանքի առավելագույն չափի նկատմամբ կիրառվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրավաբանական և ֆիզիկական անձանց համար սահմանված տուգանքի առավելագույն չափի մասին դրույթները, եթե այլ օրենքներով առանձին խախտումների համար ավելի մեծ չափի տուգանք սահմանված չէ:

3. Տուգանքի չափը որոշելիս Կենտրոնական բանկը հաշվի է առնում՝

1) խախտման բնույթը (դիտավորության առկայությունը, անտարբերությունը կամ անփութությունը).

2) խախտմամբ այլ անձանց հասցված վնասի առկայությունը և դրա չափը.

3) անհիմն հարստացման աստիճանը՝ հաշվի առնելով այլ անձանց տրված հատուցումները.

4) նախկինում նույն անձի կողմից նույն կամ այլ խախտում թույլ տված լինելը և դրա համար պատասխանատվության ենթարկվելը, ինչպես նաև նախկին պատասխանատվության բնույթն ու չափը.

5) Կենտրոնական բանկի կողմից էական ճանաչված այլ հանգամանքներ:

4. Բոլոր դեպքերում տուգանքի չափը չպետք է հանգեցնի վերահսկվող անձի՝ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված ծանր ֆինանսական վիճակին:

5. Սույն հոդվածով սահմանված տուգանքները կամովին չվճարվելու դեպքում գանձվում են դատական կարգով՝ Կենտրոնական բանկի հայցի հիման վրա: Ընդ որում, վերահսկվող անձի ղեկավարի կամ դրա կազմում կամ անունից գործող սույն օրենքով որակավորման ենթակա անձի նկատմամբ կիրառված տուգանքը գանձվում է նրա անձնական միջոցներից:

6. Սույն գլխով նախատեսված կարգով գանձված տուգանքներն ուղղվում են պետական բյուջե:

Հոդված 109. Մասնագիտական որակավորումից զրկելը

1. Վերահսկվող անձի ղեկավարը կամ դրա կազմում կամ անունից գործող սույն օրենքով որակավորման ենթակա անձը Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է զրկվել մասնագիտական որակավորումից, եթե նա՝

1) դիտավորությամբ խախտել է օրենքները կամ այլ իրավական ակտերը.

2) կատարել է այնպիսի գործողություններ կամ ցուցաբերել է այնպիսի անգործություն, որի հետևանքով վերահսկվող անձը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնասներ.

3) պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և ներդրողների շահերը վտանգող գործունեություն կամ դրսևորել է անբարեխիղճ վերաբերմունք իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ վերահսկվող անձի և նրա հաճախորդների հանդեպ ստանձնած պարտականությունների նկատմամբ.

4) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին կամ չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կենտրոնական բանկի նախազգուշացմամբ տրված հանձնարարականը (հանձնարարականները).

5) մասնագիտական որակավորում ստանալու համար ներկայացրել է կեղծ և (կամ) անարժանահավատ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ:

Հոդված 110. Լիցենզիայի (թույլտվության) ուժը կորցրած ճանաչելը

1. Կենտրոնական բանկի կողմից կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սույն օրենքով նախատեսված դեպքերում:

2. Մինչև սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառումը Կենտրոնական բանկը կարող է որոշակի ժամկետ սահմանել կառավարչի համար, որի ընթացքում վերջինը պարտավոր է վերացնել լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու համար հիմք համարվող խախտումները:

3. Պահառուի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքերը և կարգը սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԲԱԺԻՆ 10
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 111. Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերի թերությունների մասին ծանուցումը և կատարված փոփոխությունների մասին տեղեկացումը

1. Եթե Կենտրոնական բանկ ներկայացված սույն օրենքով նախատեսված միջնորդագրին կից չեն ներկայացվել սույն օրենքով և (կամ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և (կամ) դրանցում առկա են թերություններ, ապա Կենտրոնական բանկը պարտավոր է հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել միջնորդագիր ներկայացրած անձին: Սույն մասով սահմանված կարգով ծանուցված անձը պարտավոր է տասը օրացուցային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) վերացնել դրանցում առկա թերությունները: Այդ դեպքում միջնորդագիրը ներկայացված է համարվում բոլոր պատշաճ փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտքագրվելու պահից:

2. Եթե Կենտրոնական բանկ ներկայացված՝ սույն օրենքով նախատեսված միջնորդագրի քննության ընթացքում ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկություններում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա միջնորդագիր ներկայացրած անձը պարտավոր է ողջամիտ ժամկետներում, բայց ոչ ուշ, քան մինչև Կենտրոնական բանկի կողմից ներկայացված միջնորդագրի բավարարման կամ մերժման մասին որոշման ընդունումը, այդ փոփոխությունների մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով նաև փոփոխված տեղեկությունները հավաստող փաստաթղթերը: Այդ դեպքում միջնորդագիրը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտքագրվելու պահից:

Հոդված 112. Օրենքով սահմանված ժամկետների կասեցումը

1. Սույն օրենքով գրանցման, լիցենզիա տրամադրելու, նախնական համաձայնության, ինչպես նաև ցանկացած այլ հարցի վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետները Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող են կասեցվել նրա կողմից, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

2. Սույն օրենքով գրանցման, լիցենզիա տրամադրելու, նախնական համաձայնության, ինչպես նաև ցանկացած այլ հարցի վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկի կողմից միջնորդագիր ներկայացրած անձի միջնորդագիրը չմերժելու և սահմանված ժամկետը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով կասեցնելու մասին որոշում չկայացնելու դեպքում համարվում է, որ Կենտրոնական բանկը կայացրել է դրական որոշում, և Կենտրոնական բանկը պարտավոր է իրականացնել այն գործողությունները, որոնք, համաձայն սույն օրենքի, նա պետք է իրականացներ, եթե սահմանված ժամկետներում ընդունած լիներ համապատասխան դրական որոշումը: Ընդ որում, այդ գործողությունների համար սահմանված ժամկետների հաշվարկը սկսվում է Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացնելու համար նախատեսված ժամկետի վերջին օրը լրանալու պահից:

Հոդված 113. Կենտրոնական բանկի կայացրած որոշումները և դրանց ուղարկումը

1. Սույն օրենքով գրանցման, լիցենզիա տրամադրելու, նախնական համաձայնության, ինչպես նաև ցանկացած այլ հարցի վերաբերյալ Կենտրոնական բանկի կայացրած որոշումները պետք է լինեն հիմնավորված և աներկիմաստ:

2. Սույն օրենքով գրանցման, լիցենզիա տրամադրելու, նախնական համաձայնության, ինչպես նաև ցանկացած այլ հարցի վերաբերյալ Կենտրոնական բանկի կայացրած որոշումը այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է միջնորդագիր ներկայացրած անձին:

ԲԱԺԻՆ 11
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 114. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 115. Անցումային դրույթներ

1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի պահառուների համար սույն օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներն ուժի մեջ են մտնում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետից:

2. Ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցման և կառավարչի գրանցման և լիցենզավորման համար սույն օրենքով նախատեսված միջնորդագիրը կարող է Կենտրոնական բանկ ներկայացվել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գրանցման (գրանցման և լիցենզավորման) կարգը սահմանող նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-245-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 67-րդ հոդվածի 6-րդ մասը «Բանկերի» բառից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 90-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Վստահության վրա հիմնված ընկերակցություն հանդիսացող ներդրումային ֆոնդերի առանձնահատկությունները սահմանվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը «իր ավանդը» բառերից հետո լրացնել «, եթե այլ բան սահմանված չէ վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձև ունեցող հրապարակային ներդրումային ֆոնդի կանոնադրությամբ» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդի կառավարիչների առանձնահատկությունները՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներդրումային ընկերությունների առանձնահատկությունները՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 6-րդ մասը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդի կառավարիչների առանձնահատկությունները՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներդրումային ընկերությունների առանձնահատկությունները՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով»:

Հոդված 7. Օրենսգրքի 905-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ժամկետային ավանդի տարատեսակ է հանդիսանում կուտակային կենսաթոշակային ավանդը, որը ներդրվում է ֆիզիկական անձի համար իր կամ այլ անձի կողմից միանվագ կամ պարբերաբար, և որը, ինչպես նաև նրա վրա հաշվեգրված տոկոսները, ֆիզիկական անձը կարող է ստանալ միայն օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:».

2) 2-րդ մասի առաջին նախադասությունը «բացառությամբ» բառից հետո լրացնել «կուտակային կենսաթոշակային ավանդների և» բառերով, իսկ 2-րդ նախադասության «առ ոչինչ է» բառերից հետո՝ «, բացառությամբ կուտակային կենսաթոշակային ավանդների» բառերով.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

3) 3-րդ մասը «որը» բառից հետո լրացնել «կուտակային կենսաթոշակային ավանդ չէ կամ» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 907-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները չեն տարածվում կուտակային կենսաթոշակային ավանդների վրա: Կուտակային կենսաթոշակային ավանդի տոկոսները ավելանում են ավանդի գումարին, և դրանց հավելագրվում են կուտակային կենսաթոշակային ավանդին հավելագրվող տոկոսներ: Կուտակային կենսաթոշակային ավանդների վրա հավելագրված բոլոր տոկոսները վճարվում են ավանդի հետ միաժամանակ՝ սույն օրենսգրքի 905 հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում:»:

Հոդված 9. Օրենսգրքում՝

1) 968.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8. Հրապարակային ֆոնդի և դրա առանձին տեսակների կառավարման պայմանագրերի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:».

2) 968.2-րդ հոդվածը «եկամուտները» բառից հետո լրացնել «ինչպես նաև օրենքով նախատեսված այլ միջոցներ» բառերով.

3) 968.4-րդ հոդվածում «, և ֆոնդի կառավարման պայմանագրով չեն կարող սահմանվել լրացուցիչ այլ պայմաններ» բառերը փոխարինել «(հոդված 444)» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 968.7-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ֆոնդի ակտիվները, այդ ակտիվներով ձեռք բերված արժեթղթերը և այլ գույքն ու դրա նկատմամբ իրավունքներն առանձնացված հաշվառվում և գրանցվում են այդ ֆոնդի կառավարչի անունով՝ առանց դրանց նկատմամբ ֆոնդի կառավարչի սեփականության իրավունքի ձեռքբերման:»:

Հոդված 11. Օրենսգրքի 968.9-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ֆոնդի կառավարիչը պարտավոր է հատուցել իր գործողությունների կամ անգործության հետևանքով ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասների (ներառյալ՝ բաց թողնված օգուտների) համար, բացառությամբ, երբ կառավարիչն ապացուցում է, որ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում: Ընդ որում, ֆոնդի պակաս եկամտաբերությունը մյուս նմանատիպ ֆոնդերի եկամտաբերությունից ինքնին չի կարող տվյալ ֆոնդի կառավարչի համար իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքով սույն մասով նախատեսված հատուցման պարտականություն առաջացնել:»:

Հոդված 12. Օրենսգրքի 1079-րդ հոդվածում «եկամտահարկով» բառը փոխարինել «եկամտային հարկով» բառերով:

Հոդված 13. Օրենսգրքի 1184-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Կուտակային կենսաթոշակային ակտիվների և կուտակային կենսաթոշակների ժառանգության առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 12-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-253-Ն

*«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**[*]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 35.1-ին հոդվածով.

«Հոդված 35.1. Կամավոր կուտակային կենսաթոշակային գործունեությունը

1. Բանկերը կարող են իրականացնել կամավոր կուտակային կենսաթոշակային գործունեություն՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

2. Բանկերը կարող են առաջարկել միայն «կուտակային կենսաթոշակային ավանդներ» կամավոր կենսաթոշակային սխեմաներ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին պարբերությունը, 72-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների,» բառերով, իսկ 34-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է.1» կետով.

«է.1) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-255-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 4-րդ մասում՝

1) «կամավոր» բառից հետո լրացնել «կուտակային» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընկերությունները կարող են իրականացնել միայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «սահմանված կենսաթոշակներ» սխեմայով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրություն:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում 4-րդ մասի 4-րդ կետի «կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը» բառերը փոխարինել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «սահմանված կենսաթոշակներ» սխեմայով կամավոր կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-257-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-97-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասը և 19-րդ հոդվածի 1-ին մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-270-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի «դ» ենթակետի «հիմնադրամների փայերը կամ դրանցում մասնակցությունը հավաստող նման այլ փաստաթղթերը» բառերը փոխարինել «ֆոնդերի փայերը, բաժնետոմսերը և այլ բաժնային արժեթղթերը» բառերով.

2) 23-րդ կետի «ա» ենթակետի «հիմնադրամները և դրանց կառավարող ընկերությունները» բառերը փոխարինել «ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն» բառերով.

3) 27-րդ կետը «օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդի կառավարիչը, ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարչի մասնաճյուղը,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9) բաց ներդրումային ֆոնդերի կողմից թողարկվող արժեթղթերի վրա:»:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերի վաճառքի կարգն ու պայմանները սահմանվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ներդրումային ծառայությունների մատուցում չի համարվում նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ֆոնդերի գործունեությունը:», իսկ 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) ներդրումային ծառայություններ մատուցող անձ չհամարվող անձի կողմից «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Երաշխիքային ֆոնդի միջոցների կառավարման վրա:»:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «Բանկերի» բառից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով.

2) 1-ին մասը «Բանկերը» բառից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչները» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Ներդրումային ֆոնդի կառավարիչը ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների իրականացման համար պետք է, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ունենա Կենտրոնական բանկի տված համապատասխան թույլտվություն:»:

Հոդված 6. Օրենքի 61-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

«Հոդված 61. Ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների մատուցման սահմանափակումները

1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության ռիսկայնությունը զսպելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է նախատեսել սահմանափակումներ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ներդրումային ծառայությունների առանձին տեսակների մատուցման համար կամ սահմանել դրանց մատուցման հատուկ կարգ:

2. Ներդրումային ֆոնդի կառավարիչները կարող են մատուցել միայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ներդրումային ծառայություններ և ոչ հիմնական ծառայություններ:»:

Հոդված 7. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ կետերով.

«8) ներդրումային ֆոնդի կառավարման կամ դրա ակտիվների պահառության ընթացքում ներդրումային ֆոնդի կամ դրա մասնակցի և նրան պատկանող ֆոնդի թողարկած արժեթղթերի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունների փոխանակումը տվյալ ներդրումային ֆոնդի, կառավարչի և պահառուի միջև, բացառությամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի.

9) օրենքով սահմանված դեպքերում աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի իրականացման ընթացքում ստացած տեղեկությունների կամ փաստաթղթերի տրամադրումը Կենտրոնական բանկին:»:

Հոդված 8. Օրենքի 148-րդ հոդվածի 1-ին մասը «բաժնետիրական ընկերությունների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ ներդրումային ֆոնդերի)» բառերով:

Հոդված 9. Օրենքի 191-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ներդրումային ֆոնդի պահառուների և նրանց կողմից ֆոնդի ակտիվների պահառության իրականացման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 10. Օրենքի 206-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն գլխի դրույթները չեն տարածվում ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց ղեկավարների և դրանց կազմում կամ անունից գործող Կենտրոնական բանկի կողմից որակավորման ենթակա անձանց նկատմամբ: Սույն մասով նախատեսված անձանց վերահսկողության և պատասխանատվության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-271-Ն

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 6-րդ մասը, 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը և 16-րդ հոդվածը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-272-Ն

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Սույն օրենքի դրույթները տարածվում են ներդրումային ֆոնդերի հետ կապված հարաբերությունների վրա, եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Բաց Ընկերությունը, որը չունի ֆիքսված կապիտալ, և որի կապիտալը ցանկացած պահի հավասարարժեք է նրա զուտ ակտիվների արժեքին, համարվում է փոփոխական կապիտալով Ընկերություն: Փոփոխական կապիտալով Ընկերության կազմակերպական-իրավական ձևով կարող է ստեղծվել միայն բաց կորպորատիվ ներդրումային ֆոնդը: Փոփոխական կապիտալով Ընկերության առանձնահատկությունները սահմանվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Սույն օրենքի՝ Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխմանը վերաբերող դրույթները չեն տարածվում փոփոխական կապիտալով Ընկերության վրա:»:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված հարցերով որոշումների ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:»:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը «ձայների 2/3-ից» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասը «ձայների 3/4-ով» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը «ձայների 2/3-ից» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 7. Օրենքի 47-րդ հոդվածի առաջին պարբերությունը «ձայների պարզ մեծամասնությամբ» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 8. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը «արտոնյալ բաժնետոմսերի» բառերից հետո լրացնել «(, բացառությամբ ներդրումային ֆոնդերի բաժնետոմսերի)» բառերով:

Հոդված 9. Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը «ձայների 3/4-ով» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 10. Օրենքի 64-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշման ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:».

2) 5-րդ մասը «ձայների մեծամասնությամբ» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 68-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «կամ Ընկերության կանոնադրությամբ» բառերով.

2) 4-րդ մասը «ձայների 3/4-ով» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով.

3) 5-րդ մասը «ձայների 2/3-ից» բառերից հետո լրացնել «, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ» բառերով:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-273-Ն

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը «լիցենզիա ստացած անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո)» բառերով.

2) 5-րդ կետի «օգտվելու համար» բառերից հետո հանել միջակետը, և նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «: Ընդ որում, Բյուրոյի կողմից մատուցվող ծառայություն է համարվում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը՝ կապված ԱՊՊԱ պայմանագրով ապահովադրի, ապահովագրված անձի կամ տուժողի հետ.»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 5.1-ին կետերով.

«3.1) Բյուրո՝ նախորդ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից երաշխավորման ֆոնդ կատարված պարբերական վճարների 0.15 տոկոսը.».

«5.1) ներդրումային ֆոնդի կառավարիչներ՝ 90.000 դրամ.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-276-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում «, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց և այդ անձանց ինքնակարգավորվող անձանց մոտ» բառերը փոխարինել «անձանց մոտ, ներդրումային ընկերություններում, ներդրումային ֆոնդերում և ներդրումային ֆոնդի կառավարիչների մոտ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին մասը «վճարահաշվարկային կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «մասնաճյուղերի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղերի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-279-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքը (այսուհետ՝ Օրենք) «ներդրումային ընկերություն» և «ներդրումային ընկերություններ» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչ» և «, ներդրումային ֆոնդի կառավարիչներ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի «իե», «լ», «լա» և «լբ» կետերն ուժը կորցրած ճանաչել:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

Հոդված 3. Օրենքի 39.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը «արժեթղթավորման հիմնադրամների» բառերից հետո լրացնել «, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարիչների, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի (Երաշխիքային ֆոնդի կառավարման մասով)» բառերով.

2) 5-րդ մասը «կարգավորվող շուկայի օպերատորների» բառերից հետո լրացնել «, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի,» բառերով.

3) 6-րդ մասը «ստուգումների» բառից առաջ լրացնել «, կորպորատիվ ներդրումային ֆոնդերում» բառերով, իսկ ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերից հետո լրացնել «կամ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով.

4) 7-րդ մասը «Բանկ,» բառից հետո լրացնել «կորպորատիվ ներդրումային ֆոնդ,» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-281-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ1» ենթակետով.

«բ.1) ներդրումային ֆոնդի կառավարիչները,».

2) 14-րդ կետը «հաշվետվություն տրամադրող անձի» բառերից հետո լրացնել «(ներդրումային ֆոնդի կառավարիչների համար՝ նաև իրենց կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերի)» բառերով, իսկ «հաշվետվություն տրամադրող անձին» բառերից հետո՝ «(ներդրումային ֆոնդի կառավարիչների համար՝ նաև իրենց կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերին)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը «իրենց» բառից հետո լրացնել «(ներդրումային ֆոնդի կառավարիչների համար՝ նաև իրենց կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերի)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը «հաշվետվություն տրամադրող անձին» բառերից հետո լրացնել «(ներդրումային ֆոնդին)» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-284-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

«ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագրում «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերից հետո լրացնել «, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի կողմ պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարչի համար սույն օրենքի իմաստով պարտավորություն են համարվում պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարման հետ կապված գործարքներով նրա ստանձնած այն պարտավորությունները, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթների, ենթակա են կատարման նրա հաշվին: Ընդ որում, այն պարտավորությունները, որոնք ենթակա են կատարման սույն մասով նախատեսված ֆոնդի կառավարչի հաշվին միայն ֆոնդի ակտիվների անբավարարության դեպքում, այդ կառավարչի համար սույն օրենքի իմաստով պարտավորություն են համարվում միայն ֆոնդի ակտիվների չբավարարող մասով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-287-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասը «ներդրումային ընկերություն,» բառերից հետո լրացնել «ներդրումային ֆոնդի կառավարիչ,» բառերով, իսկ «Արժեթղթերի շուկայի մասին,» բառերից հետո՝ «Ներդրումային ֆոնդերի մասին,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) առաջին պարբերությունը «մարմնի» բառից հետո լրացնել «, իսկ ներդրումային ֆոնդի կառավարչի մասնակցի դեպքում՝ սույն մասով նախատեսված մասնակիցների ռեեստրը վարող անձի» բառերով.

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

2) առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ներդրումային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց մասնակիցների գրանցամատյանի վարումը հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային կամ այլ մասնագիտացված կազմակերպությանը, որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր: Ընդ որում, ներդրումային ֆոնդի կառավարիչներին արգելվում է անձամբ վարել իրենց մասնակիցների գրանցամատյանը:».

3) երկրորդ պարբերությունը «բանկ» բառից հետո լրացնել «կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-288-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ[*]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երկրորդ պարբերության «ներդրումային հիմնադրամների» բառերը փոխարինել «ներդրումային ֆոնդերի» բառերով.

2) 3-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդի կառավարիչների» բառերով:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«Հոդված 8.1. Վարկային կազմակերպության խորհուրդը

1. Անկախ կազմակերպական-իրավական տեսակից և այլ չափանիշներից՝ վարկային կազմակերպությունը պարտավոր է ունենալ տնօրենների խորհուրդ (դիտորդ խորհուրդ) (այսուհետ՝ խորհուրդ):

2. Վարկային կազմակերպության խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 3 և առավելագույնը 15 անդամից:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2010 թ., Երևան ՀՕ-289-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին (ՀՀՊՏ N 69 (803)[1], 30.12.10):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ***Վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** անփոփոխ է թողնվել՝ 7.25% (որոշում թիվ 2Ա):

- ***«Coinstar Money Transfer» և «Blizko» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 323Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Պապ շինարար», «Վարդան և Մոնիկա» ՍՊԸ-ներին, «Ֆրեշ» ՍՊԸ թիվ 3 մասնաճյուղին (որոշումներ թիվ 319Ա, 321Ա, 355Ա):

- ***Գրանցվել են*** «Արարատբանկ» ԲԲԸ-ի «Կոմիտաս» մասնաճյուղը և «Զարգացման Հայկական բանկ» ԲԲԸ-ի «Վանաձոր» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/1876Ա, 1/1909Ա):

- ***Վերածնակերպվել են*** «Կրեդիտ Հաուս» և «Ֆաստ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 350Ա, 352Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՊԱՏԱ ՍԳՀ», «ՀԱՍՊԼԱՍՏ», «Մուլտի էյր» և «Արսինե Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 318Ա, 330Ա, 331Ա, 332Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՎԻ.ԱՅ.ՓԻ. Բիզնես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիան, «ՎՏԲ Լիզինգ» լիզինգային ՎԿ փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված վարկային կազմակերպության լիցենզիան (որոշումներ թիվ 353Ա, 356Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Մանի ընդ Քոմփընի», «Գոլդ Չենս» և «Էքսպրես վիպ սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 322Ա, 351Ա, 354Ա):

- ***Գրանցվել են*** «Արփա Սևան» բաց բաժնետիրական ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի առևտրի ազդագիրը և «Շեն Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առևտրի ազդագիրը (որոշումներ թիվ 1/1758Ա, 1/1776Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար մի շարք փակ բաժնետիրական, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 1 արտադրական կոոպերատիվի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 7900000 դրամ գումարի չափով, ինչպես նաև ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1756Ա, 1/1769Ա, 1/1770Ա, 1/1775Ա, 1/1800Ա, 1/1816Ա, 1/1817Ա, 1/1850Ա, 1/1851Ա, 1/1853Ա, 1/1854Ա, 1/1881Ա, 1/1882Ա, 1/1886Ա, 1/1888Ա, 1/1915Ա, 1/1943Ա, 1/1945Ա, 1/1946Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու մասին» թիվ 314 Ն որոշմամբ հաստատված
   1) «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի,
   2) «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ համաձայն Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 նոյեմբերի 2010 թ., N298-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀԳՏ N30 (382)[1], 21.12.2010):

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թ. նոյեմբերի 9-ի թիվ 298-Ն որոշմամբ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
---------- Ա. Ջավադյան
09.11.2010 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
ՀՀ ֆինանսների նախարարի
թիվ 821 Ն հրամանով
ՀՀ ֆինանսների նախարար՝
---------- Տ. Դավթյան
13.12.2010 թ.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 298-Ն որոշմամբ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314 Ն որոշման

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱՍ 1. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ		
10-11	**Դրամական միջոցներ և ապահովագրության գծով ստացվելիք գումարներ**	
	100	**Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ**
	1000	Կանխիկ ՀՀ դրամ դրամարկղում
	1001	Կանխիկ արտարժույթ դրամարկղում
	1002	Կանխիկ դրամ ճանապարհին
	1003	Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր
	1004	Ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ բանկերին
	1005	Ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ ապահովագրական ընկերություններին
	1006	Ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1007	Ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ այլ անձանց
	101	**Բանկային հաշիվներ**
	1011	Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում
	1012	Բանկային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում
	102	**Այլ հաշիվներ բանկերում**
	1020	Ակրեդիտիվներ ռեզիդենտ բանկերում
	1021	Ակրեդիտիվներ ոչ ռեզիդենտ բանկերում
	1022	Այլ հաշիվներ ռեզիդենտ բանկերում
	1023	Այլ հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում
	103	**Ոչ կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ**
	1030	Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներից
	1031	Ստացվելիք գումարներ ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներից
	1032	Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ ապահովադիրներից
	1033	Ստացվելիք ապահովագրավճարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1034	Ստացվելիք ապահովագրավճարներ ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1035	Ստացվելիք միջնորդավճարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1036	Ստացվելիք միջնորդավճարներ ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1037	Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից
	1038	Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտ իրավաբանական անձանցից
	1039	Ստացվելիք գումարներ այլ ոչ ռեզիդենտ անձանցից
	104	**Կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ**
	1040	Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներից
	1041	Ստացվելիք գումարներ ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներից
	1042	Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ ապահովադիրներից
	1043	Ստացվելիք ապահովագրավճարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից

	1044	Ստացվելիք ապահովագրավճարներ ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1045	Ստացվելիք միջնորդավճարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1046	Ստացվելիք միջնորդավճարներ ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից
	1047	Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից
	1048	Ստացվելիք գումարներ այլ ռեզիդենտ իրավաբանական անձանցից
	1049	Ստացվելիք գումարներ այլ ոչ ռեզիդենտ անձանցից
105	**Ոչ կյանքի համապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ**	
	1050	Ռեզիդենտ համապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ
	1051	Ոչ ռեզիդենտ համապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ
106	**Ոչ կյանքի վերապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ**	
	1060	Վերապահովագրության ընդունած ռիսկերի գծով ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ
	1061	Վերապահովագրության ընդունած ռիսկերի գծով ոչ ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ
	1062	Ստացման ենթակա միջնորդավճարներ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1063	Ստացման ենթակա միջնորդավճարներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1064	Ստացման ենթակա այլ գումարներ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1065	Ստացման ենթակա այլ գումարներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից
107	**Կյանքի համապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ**	
	1070	Ռեզիդենտ համապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ
	1071	Ոչ ռեզիդենտ համապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ
108	**Կյանքի վերապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ**	
	1080	Վերապահովագրության ընդունած ռիսկերի գծով ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ
	1081	Վերապահովագրության ընդունած ռիսկերի գծով ոչ ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ
	1082	Ստացման ենթակա միջնորդավճարներ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1083	Ստացման ենթակա միջնորդավճարներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1084	Ստացման ենթակա այլ գումարներ ռեզիդենտ վերապահովագրողներից
	1085	Ստացման ենթակա այլ գումարներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից
109	**Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ համապահովագրողների նկատմամբ**	
	1090	Հատուցումների գծով պահանջներ ռեզիդենտ համապահովագրողների նկատմամբ
	1091	Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ համապահովագրողների նկատմամբ
110	**Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ վերապահովագրողների նկատմամբ**	
	1100	Հատուցումների գծով պահանջներ ռեզիդենտ վերապահովագրողների նկատմամբ
	1101	Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողների նկատմամբ
111	**Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ այլ անձանց նկատմամբ**	
	1110	Հատուցումների գծով պահանջներ այլ ռեզիդենտների նկատմամբ
	1111	Հատուցումների գծով պահանջներ այլ ոչ ռեզիդենտների նկատմամբ
112	**Կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ**	
	1120	Հատուցումների գծով պահանջներ ռեզիդենտ համապահովագրողների նկատմամբ
	1121	Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ համապահովագրողների նկատմամբ
	122	Հատուցումների գծով պահանջներ ռեզիդենտ վերապահովագրողների նկատմամբ
	1123	Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողների նկատմամբ
	1124	Հատուցումների գծով պահանջներ այլ ռեզիդենտների նկատմամբ
	1125	Հատուցումների գծով պահանջներ այլ ոչ ռեզիդենտների նկատմամբ
113	**Տեխնիկական պահուստներում վերապահովագրողի մասնաբաժինը**	
	1130	Վերապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում
	1131	Վերապահովագրողի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում
	1132	Վերապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում
	1133	Վերապահովագրողի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում
	1134	Վերապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում
	1135	Վերապահովագրողի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում
	1136	Վերապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում

	1137	Վերաապահովագրողի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում
	1138	Վերաապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում
	1139	Վերաապահովագրողի մասնաբաժինը ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում
	114	**Ապագա ժամանակաշրջանի ծախսեր**
	1140	Հետաձգված ձեռքբերման ծախսեր իրավաբանական անձանց գծով
	1141	Հետաձգված ձեռքբերման ծախսեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով
	1142	Ապահովագրության պայմանագրերի հետ կապված ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր իրավաբանական անձանց գծով
	1143	Ապահովագրության պայմանագրերի հետ կապված ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով
	1144	Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով
	1145	Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր իրավաբանական անձանց գծով
	115	**Ստացվելիք այլ գումարներ ապահովագրական պայմանագրերից**
	1150	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ
	1151	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ռեզիդենտ իրավաբանական անձանց նկատմամբ
	1152	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ այլ ռեզիդենտների նկատմամբ
	1153	Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ոչ ռեզիդենտների նկատմամբ
	1154	Այլ ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից
	1155	Այլ ստացվելիք գումարներ ռեզիդենտ իրավաբանական անձանցից
	1156	Այլ ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտներից
	116	**Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ**
	1160	Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների ընդհանուր պահուստ
	1161	Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների հատուկ պահուստ
	117	**Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ**
	1170	Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների ընդհանուր պահուստ
	1171	Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների հատուկ պահուստ
	118	**Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ**
	1180	Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ
	1181	Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների ծածկման հատուկ պահուստ
12	**Ընթացիկ ներդրումներ և տրամադրված փոխառություններ**	
	120	**Ընթացիկ ավանդներ**
	1200	Ընթացիկ ավանդներ ռեզիդենտ բանկերում
	1201	Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ
	1202	Ընթացիկ ավանդներ ոչ ռեզիդենտ բանկերում
	1203	Ոչ ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ
	121	**Այլ ընթացիկ ներդրումներ**
	1210	Այլ ընթացիկ ներդրումներ ռեզիդենտ բանկերում
	1211	Ռեզիդենտ բանկերում այլ ընթացիկ ներդրումների գծով ստացվելիք տոկոսներ
	1212	Այլ ընթացիկ ներդրումներ ոչ ռեզիդենտ բանկերում
	1213	Ոչ ռեզիդենտ բանկերում այլ ընթացիկ ներդրումների գծով ստացվելիք տոկոսներ
	1214	Այլ ընթացիկ ներդրումներ այլ ռեզիդենտների մոտ
	1215	Այլ ռեզիդենտների մոտ այլ ընթացիկ ներդրումների գծով ստացվելիք տոկոսներ
	1216	Այլ ընթացիկ ներդրումներ այլ ոչ ռեզիդենտների մոտ
	1217	Այլ ոչ ռեզիդենտների մոտ այլ ընթացիկ ներդրումների գծով ստացվելիք տոկոսներ
	122	**Բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր**
	1220	Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1221	Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1222	Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1223	Ոչ ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1224	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1225	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	1226	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1227	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ

	123	**Ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր**
	1230	Ռեզիդենտ ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1231	Ռեզիդենտ ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1232	Ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1233	Ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1234	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1235	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	1236	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1237	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	124	**Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր**
	1240	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1241	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1242	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1243	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1244	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1245	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	1246	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1247	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	125	**Այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր**
	1250	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1251	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1252	Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1253	Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1254	Այլ ռեզիդենտներին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1255	Այլ ռեզիդենտներին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1256	Ոչ ռեզիդենտներին տրամադրված ընթացիկ փոխառություններ
	1257	Ոչ ռեզիդենտներին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ
	1258	Այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր
	1259	Այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ
	126	**Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ**
	1260	Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների ընդհանուր (անհավաքագրելիության) պահուստ
	1261	Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների հատուկ (անհավաքագրելիության) պահուստ
	127	**Չճանաչված տոկոսային եկամուտ ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով**
	1270	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ բանկեր
	1271	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ բանկեր
	1272	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ ապահովագրական ընկերություններ
	1273	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ բանկեր ապահովագրական ընկերություններ
	1274	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ այլ ֆինանսական ընկերություններ
	1275	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական ընկերություններ
	128	**Չճանաչված տոկոսային եկամուտ այլ անձանց կապիտալում ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով**
	1280	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերեր
	1281	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերեր
	1282	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ իրավաբանական անձինք
	1283	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք
	1284	Չճանաչված տոկոսային եկամուտ-ռեզիդենտ այլ անձինք
	1285	Չճանաչված տոկոսային եկամուտ-ոչ ռեզիդենտ այլ անձինք

13	**Առևտրական նպատակներով պահվող ընթացիկ արժեթղթեր**	
	130	**ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր**
	1300	ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
	1301	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր
	1302	ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի ստացվելիք տոկոսներ
	131	**ՀՀ պետական արժեթղթեր**
	1310	ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1311	ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր
	1312	ՀՀ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ
	132	**ՀՀ ոչ պետական արժեթղթեր**
	1320	Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում
	1321	Ներդրումներ սովորական բաժնետոմսերում
	1322	Այլ փայամասնակցություններ
	1323	ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1324	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր
	1325	ՀՀ ոչ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ
	133	**Այլ երկրների պետական արժեթղթեր**
	1330	Այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1331	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթեր
	1332	Այլ երկրների պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ
	134	**Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր**
	1340	Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում
	1341	Ներդրումներ սովորական բաժնետոմսերում
	1342	Այլ փայամասնակցություններ
	1343	Այլ երկրների ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1344	Այլ երկրների ոչ պետական տոկոսային արժեթղթեր
	1345	Այլ երկրների ոչ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ
	135	**Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր**
	1350	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթեր
	1351	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր
	1352	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	139	**Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր**
	1390	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ բանկերին
	1391	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ բանկերին
	1392	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1393	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1394	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1395	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1396	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ անձանց
	1397	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ անձանց
14	**Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր**	
	140	**ՀՀ ԿԲ արժեթղթեր**
	1400	ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
	1401	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր
	1402	ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	141	**ՀՀ պետական արժեթղթեր**
	1410	ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1411	ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր
	1412	ՀՀ պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	142	**ՀՀ ոչ պետական արժեթղթեր**
	1420	Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում
	1421	Ներդրումներ սովորական բաժնետոմսերում
	1422	Այլ փայամասնակցություններ
	1423	ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1424	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր
	1425	ՀՀ ոչ պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	143	**Այլ երկրների պետական արժեթղթեր**
	1430	Այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1431	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթեր
	1432	Այլ երկրների պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ

	144	**Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր**
	1440	Ներդրումներ արտոնյալ բաժնետոմսերում
	1441	Ներդրումներ սովորական բաժնետոմսերում
	1442	Այլ փայամասնակցություններ
	1443	Այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1444	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթեր
	1445	Այլ երկրների պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	145	**Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր**
	1450	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթեր
	1451	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր
	1452	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	149	**Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր**
	1490	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ բանկերին
	1491	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ բանկերին
	1492	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1493	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1494	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1495	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1496	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ անձանց
	1497	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ անձանց
15	**Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր**	
	150	**ՀՀ ԿԲ արժեթղթեր**
	1500	ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր
	1501	ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս
	1502	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր
	1503	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1504	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար
	1505	ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	151	**ՀՀ պետական արժեթղթեր**
	1510	ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1511	ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս
	1512	ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր
	1513	ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1514	ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար
	1515	ՀՀ պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	152	**ՀՀ ոչ պետական արժեթղթեր**
	1520	ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1521	ՀՀ ոչ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս
	1522	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթեր
	1523	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1524	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար
	1525	ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	153	**Այլ երկրների պետական արժեթղթեր**
	1530	Այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1531	Այլ երկրների պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս
	1532	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթեր
	1533	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1534	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար
	1535	Այլ երկրների պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	154	**Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր**
	1540	Այլ երկրների ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր
	1541	Այլ երկրների ոչ պետական առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս
	1542	Այլ երկրների ոչ պետական տոկոսային արժեթղթեր
	1543	Այլ երկրների ոչ պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1544	Այլ երկրների ոչ պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար
	1545	Այլ երկրների ոչ պետական տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	155	**Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր**
	1550	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթեր
	1551	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս

	1552	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր
	1553	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս
	1554	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր հավելավճար
	1555	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ
	156	**Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր**
	1560	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ բանկերին
	1561	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ բանկերին
	1562	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1563	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին
	1564	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1565	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին
	1566	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ այլ անձանց
	1567	Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ոչ ռեզիդենտ այլ անձանց
	157	**Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերի արժեզրկման կորուստների պահուստ**
	1570	Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերի արժեզրկման կորուստների պահուստ
16	**Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից և այլ ընթացիկ պահանջներ նրանց նկատմամբ**	
	160	**Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից**
	1600	Ստացվելիք շահաբաժիններ ռեզիդենտ համատեղ վերահսկվող միավորում ներդրումներից
	1601	Ստացվելիք շահաբաժիններ ոչ ռեզիդենտ համատեղ վերահսկվող միավորում ներդրումներից
	1602	Ստացվելիք շահաբաժիններ ռեզիդենտ դուստր ընկերություններում ներդրումներից
	1603	Ստացվելիք շահաբաժիններ ոչ ռեզիդենտ դուստր ընկերություններում ներդրումներից
	1604	Ստացվելիք շահաբաժիններ ռեզիդենտ ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից
	1605	Ստացվելիք շահաբաժիններ ոչ ռեզիդենտ ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից
	1606	Ստացվելիք այլ շահաբաժիններ
	161	**Այլ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ**
	1610	Այլ ընթացիկ պահանջներ ռեզիդենտ համատեղ վերահսկվող միավորների նկատմամբ
	1611	Այլ ընթացիկ պահանջներ ոչ ռեզիդենտ համատեղ վերահսկվող միավորների նկատմամբ
	1612	Այլ ընթացիկ պահանջներ ռեզիդենտ դուստր ընկերությունների նկատմամբ
	1613	Այլ ընթացիկ պահանջներ ոչ ռեզիդենտ դուստր ընկերությունների նկատմամբ
	1614	Այլ ընթացիկ պահանջներ ռեզիդենտ ասոցիացված կազմակերպությունների նկատմամբ
	1615	Այլ ընթացիկ պահանջներ ոչ ռեզիդենտ ասոցիացված կազմակերպությունների նկատմամբ
17	**Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ**	
	170	**Դեբիտորական պարտքեր**
	1700	Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ
	6303	Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով հնարավոր կորուստների հակադարձումից եկամուտներ
	6304	Ստացվելիք այլ փոխհատուցումների գծով եկամուտներ
64	**Եկամուտներ տեխնիկական պահուստների գծով**	
	640	**Եկամուտներ տեխնիկական պահուստների հակադարձումից**
	6400	Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6401	Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6402	Եկամուտներ ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6403	Եկամուտներ ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի հակադարձումից ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6404	Եկամուտներ տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստի հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6405	Եկամուտներ տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստի հակադարձումից ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6406	Եկամուտներ մաթեմատիկական պահուստի հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6407	Եկամուտներ մաթեմատիկական պահուստի հակադարձումից ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6408	Եկամուտներ տեխնիկական այլ պահուստների հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	6409	Եկամուտներ տեխնիկական այլ պահուստների հակադարձումից ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	641	**Եկամուտներ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով**
	6410	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6411	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6412	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6413	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6414	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6415	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6416	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ

	6417	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6418	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
	6419	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ
65	**Այլ եկամուտներ**	
	650	**Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ**
	6500	Հիմնական միջոցների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	6501	Ոչ նյութական ակտիվների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	6502	Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	6503	Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	651	**Ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ**
	6510	Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	6511	Այլ ընթացիկ ակտիվների օտարումից (վաճառքից) եկամուտներ
	652	**Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ**
	6520	Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ
	653	**Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից եկամուտներ և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ**
	6530	Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված օգուտներ
	6531	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ
	6532	Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ
	6533	Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ
	654	**Ֆինանսական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ**
	6540	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից եկամուտներ
	6541	Առևտրական նպատակով պահվող ակտիվների վերագնահատումից եկամուտներ
	655	**Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ**
	6550	Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների եկամուտներ
	656	**Այլ եկամուտներ**
	6560	Այլ եկամուտներ
	657-658	**Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ**
	6570	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6571	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6572	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6573	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6574	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6575	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6576	Ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6577	Ոչ ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ
	6578	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6579	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6580	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6581	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6582	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6583	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6584	Ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ

	6585	Ոչ ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից եկամուտներ
	6586	Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ ռեզիդենտների գծով
	6587	Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ ոչ ռեզիդենտների գծով
67	**Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ**	
	670	**Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ**
	6700	Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ էական սխալների ուղղման արդյունքում
	6701	Նախորդ ժամանակաշրջանների եկամուտներ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում

ԴԱՍ 7. ԾԱԽՍԵՐ

70	**Ապահովագրության հետ կապված ծախսեր**	
	700	**Ոչ կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի հետ կապված ծախսեր**
	7000	Ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7001	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7002	Ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7003	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7004	Ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր
	7005	Ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր
	7006	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	7007	Ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	7008	Այլ ոչ ռեզիդենտներին վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	701	**Կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի հետ կապված ծախսեր**
	7010	Ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7011	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7012	Ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7013	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7014	Ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր
	7015	Ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր
	7016	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	7017	Ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	7018	Այլ ոչ ռեզիդենտներին վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր
	702	**Ոչ կյանքի համասապահովագրության գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր**
	7020	Համասապահովագրական պայմանագրերի գծով ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7021	Համասապահովագրական պայմանագրերի գծով ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7022	Համասապահովագրական պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	703	**Կյանքի համասապահովագրության գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր**
	7030	Համասապահովագրական պայմանագրերի գծով ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7031	Համասապահովագրական պայմանագրերի գծով ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	7032	Համասապահովագրական պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներին վճարվելիք հատուցումների գծով ծախսեր
	704	**Ոչ կյանքի վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր**
	7040	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց
	7041	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց
	7042	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ոչ ռեզիդենտներին
	705	**Կյանքի վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ**
	7050	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ռեզիդենտ ֆիզիկական անձանց
	7051	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց
	7052	Վերասապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ոչ ռեզիդենտներին
	706	**Վերասապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր**
	7060	Ռեզիդենտ վերասապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր
	7061	Ոչ ռեզիդենտ վերասապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր
	707	**Դադարեցված ապահովագրական պայմանագրերի գծով ծախսեր**
	7070	Դադարեցված ապահովագրական պայմանագրերի գծով ծախսեր ռեզիդենտների գծով
	7071	Դադարեցված ապահովագրական պայմանագրերի գծով ծախսեր ոչ ռեզիդենտների գծով

71	**Պահուստների հետ կապված ծախսեր**	
	710	**Տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր**
	7100	Չվաստակած ապահովագրավճարների պահուստների ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7101	Չվաստակած ապահովագրավճարների պահուստների ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7102	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
		Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7104	Տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7105	Տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7106	Մաթեմատիկական պահուստի ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7107	Մաթեմատիկական պահուստի ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7108	Այլ տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	7109	Այլ տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով
	711	**Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր**
	7110	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7111	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7112	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7113	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7114	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7115	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7116	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7117	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած մաթեմատիկական պահուստում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7118	Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
	7119	Ոչ ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած այլ տեխնիկական պահուստներում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր
72	**Տոկոսային ծախսեր**	
	720	**Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով**
	7200	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց
	7201	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7202	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց
	7203	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7204	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	7205	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	721	**Տոկոսային ծախսեր բանկերից ստացված վարկերի դիմաց**
	7210	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ստացված ընթացիկ վարկերի դիմաց
	7211	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից ստացված ոչ ընթացիկ վարկերի դիմաց
	7212	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ստացված ընթացիկ վարկերի դիմաց
	7213	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ բանկերից ստացված ոչ ընթացիկ վարկերի դիմաց
	722	**Տոկոսային ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով**
	7220	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց
	7221	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց

	7222	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7223	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7224	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	7225	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	723	**Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով**
	7230	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց
	7231	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների դիմաց
	7232	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7233	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց
	7234	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	7235	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	724	**Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց**
	7240	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ընթացիկ վարկերի դիմաց
	7241	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ընթացիկ վարկերի դիմաց
	7242	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ոչ ընթացիկ վարկերի դիմաց
	7243	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ոչ ընթացիկ վարկերի դիմաց
	725	**Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց**
	7250	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված ընթացիկ փոխառությունների գծով
	7251	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների գծով
	7252	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ընթացիկ փոխառությունների գծով
	7253	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ իրավաբանական անձանցից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների գծով
	7254	Տոկոսային ծախսեր այլ ռեզիդենտներից ներգրավված ընթացիկ փոխառությունների գծով
	7255	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտներից ներգրավված ընթացիկ փոխառությունների գծով
	7256	Տոկոսային ծախսեր այլ ռեզիդենտներից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների գծով
	7257	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտներից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների գծով
	7258	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	7259	Տոկոսային ծախսեր ոչ ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով
	726	**Տոկոսային ծախսեր գանձապետարանից ստացված վարկերի դիմաց**
	7260	Տոկոսային ծախսեր գանձապետարանից ստացված ընթացիկ վարկերի դիմաց
	7261	Տոկոսային ծախսեր գանձապետարանից ստացված ոչ ընթացիկ վարկերի դիմաց
	727	**Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով**
	7270	Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով
	728	**Այլ տոկոսային ծախսեր**
	7280	Այլ տոկոսային ծախսեր
	729	**Ֆինանսական վարձակալության գծով ֆինանսական ծախսեր**
	7290	Ֆինանսական վարձակալության գծով ֆինանսական ծախսեր
73	**Կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր**	
	730	**Ծախսեր անձնակազմի գծով**
	7300	Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ
	7301	Պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ
	7302	Պարգևատրումներ և լրավճարներ
	7303	Արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ
	7304	Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով
	7305	Անձնակազմի ուսուցման ծախսեր
	7306	Անձնակազմի գծով այլ ծախսեր

	731-732	**Կառավարչական ծախսեր**
	7310	Ընկերության շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության ծախսեր
	7311	Ընկերության շենքի տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր
	7312	Ընկերության սարքավորումների սպասարկման և պահպանման ծախսեր
	7313	Ընկերության փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման ծախսեր
	7314	Անվտանգության ապահովման ծախսեր
	7315	Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր
	7316	Կապի և հաղորդակցության միջոցների գծով ծախսեր
	7317	Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր
	7318	Բանկային ծառայությունների գծով ծախսեր
	7319	Գործուղման ծախսեր
	7320	Գրասենյակային ծախսեր
	7321	Կազմակերպչական ծախսեր
	7322	Այլ կառավարչական ծախսեր
	733	**Հասարակական կապերի գծով ծախսեր**
	7330	Գովազդի գծով ծախսեր
	7331	Ներկայացուցչական ծախսեր
	7332	Անդամավճարներ
	7333	Այլ ծախսեր
	734	**Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր**
	7340	Շենքերի, շինությունների ամորտիզացիոն ծախսեր
	7341	Գույքի և գրասենյակային սարքավորումների ամորտիզացիոն ծախսեր
	7342	Կապի և հաղորդակցման միջոցների, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկայի ամորտիզացիոն ծախսեր
	7343	Փոխադրամիջոցների ամորտիզացիոն ծախսեր
	7344	Այլ հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր
	7345	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր
	7346	Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների ամորտիզացիոն ծախսեր
	735	**Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր**
	7350	Համակարգչային ծրագրերի ամորտիզացիոն ծախսեր
	7351	Լիցենզիաների և վստահագրերի ամորտիզացիոն ծախսեր
	7352	Հեղինակային իրավունքների, արտոնագրերի ամորտիզացիոն ծախսեր
	7353	Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր
	736	**Այլ ծախսեր**
	7360	Արժեթղթերի թողարկման գծով ծախսեր
	7361	Տուգանքների և տույժերի գծով այլ ծախսեր
	7362	Այլ ծախսեր
74	**Այլ ծախսեր**	
	740	**Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) ծախսեր**
	7401	Հիմնական միջոցների օտարումից (վաճառքից) ծախսեր
	7402	Ոչ նյութական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր
	7403	Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր
	7404	Այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր
	7405	Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր
	7406	Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր
	741	**Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր**
	7410	Անդամավճարների ձևավորման գծով ծախսեր
	7411	Պարբերական վճարների ձևավորման գծով ծախսեր
	7412	Լրացուցիչ վճարների ձևավորման գծով ծախսեր
	7413	Միանվագ վճարների ձևավորման գծով ծախսեր
	7414	Այլ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր
	742	**Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման (վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր**
	7420	Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման (վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր
	743	**Նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից կորուստներ**
	7430	Հիմնական միջոցների վերագնահատումից ծախսեր
	7431	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից ծախսեր
	7432	Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ
	7433	Ոչ նյութական ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ

	744	**Ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր**
	7440	Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր
	7441	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր
	745	**Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր**
	7450	Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր
	746-747	**Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից ծախսեր**
	7460	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7461	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7462	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7463	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7464	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7465	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7466	Ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7467	Ոչ ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից ծախսեր
	7468	Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7469	Ոչ ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7470	Ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7471	Ոչ ռեզիդենտ ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7472	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7473	Ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7474	Ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7475	Ոչ ռեզիդենտ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթի վերագնահատումից ծախսեր
	7478	Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների վերագնահատումից ծախսեր ռեզիդենտների գծով
	7479	Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների վերագնահատումից ծախսեր ոչ ռեզիդենտների գծով
	749	**Այլ ծախսեր**
	7490	Այլ ծախսեր
75	**Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ**	
	750	**Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ**
	7500	Ավանդների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ
	7501	Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի արժեզրկումից կորուստների ընդհանուր պահուստին հատուցումներ
	7502	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումից կորուստների ընդհանուր պահուստին հատկացումներ
	7503	Այլ անձանց նկատմամբ այլ պահանջների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) ընդհանուր պահուստին հատկացումներ
	7504	Ապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին հատկացումներ
	7505	Ավանդների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) հատուկ պահուստին հատկացումներ
	7506	Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի արժեզրկումից կորուստների հատուկ պահուստին հատկացումներ
	7507	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկումից կորուստների հատուկ պահուստին հատկացումներ
	7508	Այլ անձանց նկատմամբ այլ պահանջների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) հատուկ պահուստին հատկացումներ
	7509	Ապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների հատուկ պահուստին հատկացումներ

77	**Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր**	
	770	**Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր**
	7700	Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր էական սխալների ուղղման արդյունքում
	7701	Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում
78	**Շահութահարկի գծով ծախս**	
	781	**Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)**
	7810	Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)
	7811	Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)

ԴԱՍ 8. ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

80	**Արտահաշվեկշռային հաշիվներ**	
	800	**Որպես գրավ պահվող ակտիվներ**
	8000	ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր
	8001	ՀՀ պետական արժեթղթեր
	8002	Այլ արժեթղթեր
	8003	Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ
	8004	Պատրաստի արտադրանք և ապրանքներ
	8005	Դրամական միջոցներ
	8006	Այլ ակտիվներ
	801	**Գրավադրված ակտիվներ**
	8010	ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր
	8011	ՀՀ պետական արժեթղթեր
	8012	Այլ արժեթղթեր
	8013	Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ
	8014	Պատրաստի արտադրանք և ապրանքներ
	8015	Դրամական միջոցներ
	8016	Այլ ակտիվներ
	802	**Վարձակալություն**
	8020	Գործառնական վարձակալությամբ օգտագործվող շենքեր
	8021	Գործառնական վարձակալությամբ օգտագործվող փոխադրամիջոցներ և այլ հիմնական միջոցներ
	8022	Այլ ակտիվներ
	803	**Պայմանական ակտիվներ**
	8030	Ստացված երաշխավորություններ
	8031	Ստացված երաշխիքներ
	8032	Այլ պայմանական ակտիվներ
	804	**Պայմանական պարտավորություններ**
	8040	Տրամադրված երաշխավորություններ
	8042	Այլ պայմանական պարտավորություններ
	805	**Ապահովագրական գումարներ**
	8050	Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ
	8051	Կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ
	806	**Այլ արտահաշվեկշռային հաշիվներ**

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 298-Ն որոշմամբ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 314 Ն որոշման

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ընդհանուր դրույթներ

«Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում» ներկայացված ձևակերպումները չեն ներառում տվյալ հաշվի կամ ենթաբաժնի բոլոր հաշվապահական թղթակցությունները: Ապահովագրական ընկերությունները կարող են կատարել հրահանգում չներկայացված հաշվապահական ձևակերպումներ, եթե վերջիններս համապատասխանում են սույն հրահանգի տրամաբանությանը և չեն հակասում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին:

Ապահովագրական ընկերությունները հաշվային պլանում կարող են ավելացնել սինթետիկ հաշիվներ միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրավոր համաձայնությամբ:

Սույն հրահանգի իմաստով՝ «ռեզիդենտ» և «ոչ ռեզիդենտ» տերմինների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունվարի 14-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկում»:

Սույն հրահանգում ներկայացված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում:

ԴԱՍ 1. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 10 - 11
«Դրամական միջոցներ և ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»

Բաժին 10 - 11-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 100 «Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ», 101 «Բանկային հաշիվներ», 102 «Այլ հաշիվներ բանկերում», 103 «Ոչ կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ», 104 «Կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ», 105 «Ոչ կյանքի համաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ», 106 «Ոչ կյանքի վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ» 107 «Կյանքի համաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ», 108 «Կյանքի վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ» 109 «Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ համաապահովագրողների նկատմամբ», 110 «Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ», 111 «Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ այլ անձանց նկատմամբ», 112 «Կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ», 113 «Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժինը», 114 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր ապահովագրության գծով», 115 «Ստացվելիք այլ գումարներ ապահովագրական պայմանագրերից», 116 «Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ», 117 «Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ», 118 «Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»:

Ենթաբաժին 100
«Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերությունների տրամադրության տակ գտնվող կանխիկ դրամական միջոցների և դրանց համարժեքների, ինչպես նաև ապահովագրական ընկերության կողմից ռեպո համաձայնագրով բանկերին՝ այդ թվում և ՀՀ կենտրոնական բանկին, ապահովագրական ընկերություններին և այլ ֆինանսական կազմակերպություններին վաճառված արտարժույթի հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ապահովագրական ընկերության դրամարկղ մուտքագրված կանխիկ դրամական միջոցները, այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ապահովագրական ընկերության կողմից ձեռք բերված չեկերը և այլ վճարային փաստաթղթերը, իսկ կրեդիտում՝ ելքագրված կանխիկ դրամական միջոցները:

1000 «Կանխիկ ՀՀ դրամ դրամարկղում» - այս հաշվում արտացոլվում է ապահովագրական ընկերության դրամարկղերում ՀՀ դրամի առկայությունն ու շարժը:

1001 «Կանխիկ արտարժույթ դրամարկղում» - այս հաշվում արտացոլվում է ապահովագրական ընկերության դրամարկղերում արտարժույթի առկայությունն ու շարժը:

1002 «Կանխիկ դրամ ճանապարհին» - այս հաշվում հաշվառվում է ճանապարհին գտնվող կանխիկ դրամը, այսինքն՝ ապահովագրական ընկերության բանկային հաշիվ մուտքագրելու համար (սակայն դեռևս չմուտքագրված) փոստային բաժանմունքներ մուտքագրված դրամական միջոցները:

Հաշիվը դեբետագրվում է ապահովագրական ընկերության մասնաճյուղեր և այլ կազմակերպություններ կանխիկ դրամ փոխանցելու դեպքում, մինչև համապատասխան փաստաթղթի ստացումը՝

Դտ- 1002,

Կտ- 1000, 1001:

Հաշիվը կրեդիտագրվում է ապահովագրական ընկերության բանկային հաշիվներ մուտքագրելու, ապահովագրական ընկերության մասնաճյուղերից և այլ կազմակերպություններից ստացված կանխիկ դրամը ապահովագրական ընկերության դրամարկղ մուտքագրելու դեպքում.

Դտ- 1000, 1001, բանկային հաշիվներ,

Կտ- 1002:

1003 «Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր» - ***այս հաշվում հաշվառվում են այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ չեկերը և այլ վճարային փաստաթղթերը:***

Հաշիվը դեբետագրվում է ներկայացրած ճանապարհային և հաշվարկային չեկերն ընդունելիս՝

1) այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունը վճարում է հաճախորդին վճարային փաստաթղթերի դիմաց՝

Դտ- 1003,

Կտ- Դրամական միջոցներ/բանկային հաշիվ,

2) երբ վճարումը պետք է կատարվի ապագայում որևէ ամսաթվին, ապա ձևակերպվում է՝

Դտ-1003,

Կտ-369 ենթաբաժնի համապատասխան հաշիվ, 4340, 4341:

Հաշիվը կրեդիտագրվում է չեկերի և այլ վճարային փաստաթղթերի դիմաց փոխհատուցում ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ

Կտ- 1003:

1004 «Ռեպո համաձայնագրով վաճառված արտարժույթ բանկերին» - այս հաշիվը նախատեսված է բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված արտարժույթի հաշվառման համար հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- 1004,

Կտ- 1001:

Արտարժույթի հետ ստացման ժամանակ.

Դտ- 1001,

Կտ- 1004:

1005-1007 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1004 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժին 101
«Բանկային հաշիվներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցների հաշվառման համար: Են-

թաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են մուտք եղած, իսկ կրեդիտում՝ ելք եղած գումարները:

1011 «Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում»- այս հաշվում արտացոլվում են ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

1012 «Բանկային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում»- այս հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

Ենթաբաժին 102
«Այլ հաշիվներ բանկերում»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում ակրեդիտիվներում և այլ հաշիվներում ՀՀ դրամով և արտարժույթով դրամական միջոցների հաշվառման համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվները ակտիվային են, դեբետում արտացոլվում են մուտք եղած դրամական միջոցները, իսկ կրեդիտում՝ ելքագրված դրամական միջոցները:

1020 «Ակրեդիտիվներ ռեզիդենտ բանկերում» - հաշվում արտացոլվում են ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության ակրեդիտիվներում դրամական միջոցների առկայությունը և շարժը:

1021 «Ակրեդիտիվներ ոչ ռեզիդենտ բանկերում» - հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության ակրեդիտիվներում դրամական միջոցների առկայությունը և շարժը:

1022 «Այլ հաշիվներ ռեզիդենտ բանկերում» - հաշվում արտացոլվում են ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության այլ հաշիվներում դրամական միջոցների առկայությունը և շարժը:

1023 «Այլ հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում» - հաշվում արտացոլվում են ոչ ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության այլ հաշիվներում դրամական միջոցների առկայությունը և շարժը:

Ենթաբաժին 103
«Ոչ կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ոչ կյանքի ուղղակի ապահովագրական գործունեության գծով ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ապահովադիրներից, ապահովագրական միջնորդներից և այլ անձանցից ստացվելիք ապահովագրավճարների և միջնորդավճարների հաշվառման համար:

1030 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներից» - հաշիվը դեբետագրվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գումարով և կրեդիտագրվում է դրանց վճարման դեպքում:

Ստացվելիք ապահովագրավճարների գումարով՝

Դտ-1030

Կտ-600 ենթաբաժնի համապատասխան եկամտային հաշիվ:

Ապահովագրավճարների ստացման դեպքում՝

Դտ-Դրամական միջոցներ

Կտ- 1030:

1031 «Ստացվելիք գումարներ ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներից» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտ իրավաբանական անձ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1030 հաշվի հաշվառումը:

1033 «Ստացվելիք ապահովագրավճարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից» - հաշվում արտացոլվում են ռեզիդենտ ապահովագրական միջնորդների կողմից ստացված, սակայն դեռևս ապահովագրական ընկերությանը չփոխանցած ապահովագրավճարները:

Եթե ապահովադրի նկատմամբ ապահովագրավճարի գծով ձևավորված դեբիտորական պարտքը մարվել է ռեզիդենտ ապահովագրական միջնորդին վճարելու միջոցով, սակայն վերջինս դեռևս ապահովագրական ընկերությանը այն չի փոխանցել, տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ 1033,

Կտ 1030-1032:

Եթե ապահովադիրը ապահովագրավճարը վճարել է ռեզիդենտ ապահովագրական միջնորդին, սակայն վերջինս այն ապահովագրական ընկերությանը չի փոխանցել, ապա տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 1033,

Կտ- 600 ենթաբաժնի համապատասխան եկամտային հաշիվ:

1034 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1033 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժնի մյուս բոլոր հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1030 հաշվի հաշվառումն է:

Ենթաբաժին 104
«Կյանքի ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից կնքված՝ կյանքի ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հաշվառման համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 103 ենթաբաժնի հաշվառումը:

Ենթաբաժին 105
«Ոչ կյանքի համաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից կնքված համաապահովագրության պայմանագրով ստանձնած ռիսկին համամասնորեն ստացվելիք գումարների, մասնավորապես ապահովագրավճարների հաշվառման համար: Ենթաբաժնում ընդգրկված հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են ստացվելիք գումարների չափով, կրեդիտագրվում են ստացված գումարների չափով:

Համաապահովագրողներից ստանձնած ռիսկին համամասնորեն ստացվելիք ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ- 105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 600 ենթաբաժնի համապատասխան հաշիվ, իսկ համաապահովագրողներին փոխանցվելիք գումարների մասով՝

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 310 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ռեզիդենտ համաապահովագրողներից ապահովագրավճարների ստացման դեպքում ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ-105 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Համաապահովագրողներին փոխանցվելիք գումարների փոխանցման դեպքում ձևակերպվում է՝

Դտ-310 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 106
«Ոչ կյանքի վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով ապահովագրական ընկերություններից ստացվելիք վերաապահովագրավճարների և այլ գումարների հաշվառման համար: Հաշիվը դեբետային է, ստացվելիք վերաապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ- 106 ենթաբաժնի համապատասխան հաշիվ

Կտ- 600 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Հաշիվը կրեդիտագրվում է այդ գումարների ստացման ժամանակ:

Այս բաժնի 107 «Կյանքի համաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ» և 108 «Կյանքի վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարներ» ենթաբաժիններում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 105 և 106 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 109
«Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ համաապահովագրողների նկատմամբ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից կնքված համաապահովագրության պայմանագրերի հիման վրա համաապահովագրողներից ստացվելիք հատուցումների (ստացված վնասի իրենց բաժնի) հաշվառման համար:

1090 «Հատուցումների գծով պահանջներ ռեզիդենտ համաապահովագրողների նկատմամբ» - հաշիվը նախատեսված է համաապահովագրական պայմանագրից բխող ռեզիդենտ համաապահովագրող ընկերությունից ստացվելիք գումարների հաշվառման համար:

Ռեզիդենտ համաապահովագրողից վնասի՝ իր կողմից հատուցվող գումարով ձևակերպվում է.

Դտ-1090

Կտ-600 ենթաբաժնի համապատասխան եկամտային հաշիվ:

Հատուցման գումարի ստացման դեպքում հաշիվը կրեդիտագրվում է՝ դեբետագրելով դրամական միջոցներ հաշվառող հաշիվները:

Այս բաժնի 110 «Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ», 111 «Ոչ կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ այլ անձանց նկատմամբ», 112 «Կյանքի ապահովագրության հատուցումների գծով պահանջներ»:

Ենթաբաժին 113
«Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժինը»

1130 «Վերաապահովագրողի մասնաբաժինը ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի արտացոլման համար: Վերաապահովագրողի բաժնի չափով ձևակերպվում է.

Դտ-1130

Կտ- 641 ենթաբաժնի համապատասխան եկամտային հաշիվ:

Վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսումները կատարվում են հետևյալ ձևակերպումներով.

Դտ- 711 ենթաբաժնի համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 1130:

1130-1139 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1130 հաշվի հաշվառումը:

Ենթաբաժին 114
«Ապագա ժամանակաշրջանի ծախսեր ապահովագրության գծով»

Այս ենթաբաժինը օգտագործվում է այն դեպքում, եթե ապահովագրական կամ վերաապահովագրական պայմանագրի ձեռքբերման հետ կապված ծախսերի հետաձգումը սահմանված է տվյալ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ՝ համաձայն ՖՀՄՍ 4-ի:

1140 «Հետաձգված ձեռքբերման ծախսեր» - այս հաշվում կուտակվում և արտացոլվում են այն գումարները, որոնք ծախսվում են ապահովագրական պայմանագրի ստեղծման համար և ամորտիզացվում են տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Հաշիվը դեբետագրվում է հետաձգված ձեռքբերման ծախսի չափով՝

Դտ- 1140,

Կտ- Դրամական միջոց:

Հաշիվը կրեդիտագրվում է ապագա ժամանակաշրջանում ճանաչված ծախսի չափով՝

Դտ- Համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 1140:

1141 «Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի գծով» - այս հաշվում կուտակվում և արտացոլվում են ապահովագրության պայմանագրերի հետ կապված այն գումարները, որոնք ծախսվում են ապահովագրության պայմանագրերի հետ կապված, ներառված չեն 1140 հաշվում և ամորտիզացվում են տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Հաշիվը դեբետագրվում է ապագա ժամանակաշրջանի ծախսի չափով՝

Դտ- 1141,

Կտ- Դրամական միջոց:

Հաշիվը կրեդիտագրվում է ապագա ժամանակաշրջանում ճանաչված ծախսի չափով՝

Դտ- Համապատասխան ծախսային հաշիվ,

Կտ- 1141:

Ենթաբաժին 115
«Ստացվելիք այլ գումարներ ապահովագրական պայմանագրերից»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վնասի պահանջի իրավունքի ստացման (սուբրոգացիայի) դեպքում ապահովագրական ընկերության կողմից այլ անձանց նկատմամբ ձեռք բերված պահանջների հաշվառման համար:

1150 «Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ» - այս հաշվում հաշվառվում են սուբրոգացիայի հետևանքով ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ առաջացած պահանջների գծով ստացվելիք գումարները:

Պահանջների գծով ստացվելիք գումարով ձևակերպվում է.

Դտ- 1150,

Կտ- համապատասխան եկամտային հաշիվ:

Պահանջների գծով ստացված գումարների գծով ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ- 1150:

1151-1152 հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1150 հաշվի դեպքում է:

Ենթաբաժին 116, 117, 118
«Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ», «Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ», «Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվները պասիվային են, կարգավորող: Դրանք նախատեսված են ուղղակի ապահովագրության և համաապահովագրության, վերաապահովագրության գծով ստացվելիք գումարների, ինչպես նաև բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության դեպքում) հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 12
«Ընթացիկ ներդրումներ և տրամադրված փոխառություններ»

Այս բաժինը ներառում է 120 «Ընթացիկ ավանդներ», 121 «Այլ ընթացիկ ներդրումներ», 122 «Բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 123 «Ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 124 «Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 125 «Այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր» և 126 «Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ», 127 «Չճանաչված տոկոսային եկամուտ ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով», 128 «Չճանաչված տոկոսային եկամուտ այլ անձանց կապիտալում ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով» ենթաբաժինները:

Ենթաբաժին 120
«Ընթացիկ ավանդներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների հաշվառման համար:

1200 «Ընթացիկ ավանդներ ռեզիդենտ բանկերում» -այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերում ապահովագրական ընկերության կողմից ներդրված ավանդների հաշվառման համար:

Ռեզիդենտ բանկերում ընթացիկ ավանդներ ներդնելիս.

Դտ-1200,

Կտ-Դրամական միջոցներ:

1201 «Ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով ստացվելիք տոկոսների հաշվառման համար: Հաշվեգրված տոկոսների գումարով ձևակերպվում է.

Դտ-1201,

Կտ-610 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Հաշվեգրված տոկոսների ստացման դեպքում ձևակերպվում է.

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ-1201:

1202 «Ընթացիկ ավանդներ ոչ ռեզիդենտ բանկերում» և 1203 «Ոչ ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ» - հաշիվների հաշվառումը տարվում է նույն կերպ, ինչ որ 1201 և 1202 հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 121
«Այլ ընթացիկ ներդրումներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից բանկերի և այլ անձանց մոտ ներդրված այլ գումարների և դրանց գծով ստացվելիք տոկոսների հաշվառման համար: Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 120 ենթաբաժնի հաշվառումը:

Ենթաբաժին 122
«Բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների հաշվառման համար:

1220 «Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառություններ» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերին տրամադրված փոխառությունների հաշվառման համար:

Փոխառությունների տրամադրման ժամանակ ձևակերպվում է.

Դտ-1220,

Կտ-Դրամական միջոցներ:

Փոխառությունների մարման ժամանակ ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ-1220:

1221 «Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ» - այս հաշիվը նախատեսված է տրամադրված փոխառությունների գծով տոկոսների հաշվառման համար: Հաշվեգրված տոկոսների գումարով ձևակերպվում է.

Դտ- 1221,

Կտ -612 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Տոկոսները ստանալիս.

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 1221:

1222-1223 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1120-1221 հաշիվների դեպքում է:

1224 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի (այդ թվում և ՀՀ կենտրոնական բանկի) հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով տրամադրված դրամական միջոցների արտացոլման համար՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ - 1224,

Կտ- Դրամական միջոցներ:

1225 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի (այդ թվում և ՀՀ կենտրոնական բանկի) հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսների արտացոլման համար՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ - 1225,

Կտ - 6124:

1226-1227 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1124-1225 հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 123
«Ապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերություններին տրամադրված փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 122 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 124
«Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար: Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշվառումը:

Ենթաբաժին 125
«Այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 121 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 126
«Ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվները ակտիվապասիվային են, կարգավորող: Դրանք նախատեսված են ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստի հաշվառման համար:

«Ենթաբաժին 127
«Չճանաչված տոկոսային եկամուտ ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով»

Հաշիվը կոնտրակտիվային է: Այն հակակշիռ է կուտակված ստացվելիք տոկոսների հաշիվներին: Հաշվառումը տարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի ապրիլի 14-ի թիվ 285-Ն հրամանով հաստատված «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն:

«Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն՝ ակտիվը չաշխատող դասակարգելու պահին ակտիվի գծով հաշվեգրված տոկոսային եկամուտները գրանցվում են որպես չճանաչված տոկոսային եկամուտ՝

Դտ -Տոկոսային եկամուտ,

Կտ -127 «Չճանաչված տոկոսային եկամուտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով»:

Չաշխատող ակտիվների գծով տոկոսների հաշվեգրումը շարունակվում է հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ -Ստացվելիք տոկոսներ,

Կտ -127 «Չճանաչված տոկոսային եկամուտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով»:

128 «Չճանաչված տոկոսային եկամուտ այլ անձանց կապիտալում ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով» ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ-որ 127 «Չճանաչված տոկոսային եկամուտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ընթացիկ ներդրումների և նրանց տրամադրված փոխառությունների գծով» ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

ԲԱԺԻՆ 13
«Առևտրական նպատակներով պահվող ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է 130 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր», 131 «ՀՀ պետական արժեթղթեր», 132 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 133 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 134 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 135 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 139 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր» ենթաբաժինները:

Ենթաբաժին 130
«ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից ձեռք բերված և առևտրական նպատակներով պահվող ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀ 39-րդ ստանդարտի: Ենթաբաժնում ներառված հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են ձեռք բերված արժեթղթերի արժեքով, հաշվեգրված տոկոսների գումարով, դրական վերագնահատման գումարով, կրեդիտագրվում են վաճառված արժեթղթերի արժեքով, ստացված տոկոսների գումարով, բացասական վերագնահատման գումարով:

Այս բաժնի մյուս ենթաբաժինների, բացառությամբ ենթաբաժին 139-ի, հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 130 ենթաբաժնի հաշվառումը:

Ենթաբաժին 139
«Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից կնքված ռեպո համաձայնագրերի գծով վաճառված առևտրական նպատակներով պահվող արժեթղթերը:

Ենթաբաժնում ներառված հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի իրական արժեքով, դրական վերագնահատման գումարով, կրեդիտագրվում են ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի հետ ստացման դեպքում իրական արժեքով, բացասական վերագնահատման գումարով:

1390 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր ռեզիդենտ բանկերին» **-** այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի հաշվառման համար. հաշվապահական ձևակերպումը տրվում է թղթակցելով վաճառվող արժեթղթի հաշվի հետ.

Դտ- 1390,

Կտ- վաճառվող արժեթղթի համապատասխան հաշիվ:

Արժեթղթի հետ ստացման ժամանակ.

Դտ- վաճառված արժեթղթի համապատասխան հաշիվ,

Կտ- 1390:

1391-1397 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1390 հաշվի հաշվառումը:

ԲԱԺԻՆ 14
«Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 140 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 141 «ՀՀ պետական արժեթղթեր», 142 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 143 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 144 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր» 145 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 149 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր»:

Այս բաժնի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 39-ի: Այս բաժնի հաշիվներում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք ապահովագրական ընկերությունը, համաձայն ՀՀՀՀՍ 39-ի, դասակարգել է վաճառքի համար մատչելի: Հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են ձեռք բերված արժեթղթերի արժեքով, հաշվեգրված տոկոսների գումարով, դրական վերագնահատման գումարով, կրեդիտագրվում են վաճառված արժեթղթերի արժեքով, ստացված տոկոսների գումարով, բացասական վերագնահատման գումարով:

ԲԱԺԻՆ 15
«Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 150 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 151 «ՀՀ պետական արժեթղթեր», 152 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 153 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 154 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 155 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 156 «Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր», 157 «Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերի արժեզրկման կորուստների պահուստ»:

Բաժնում ընդգրկված բոլոր հաշիվները (բացառությամբ՝ «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման կորուստների պահուստ» հաշվի) ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում ընկերության ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների սկզբնական գրանցումը կատարվում է ձեռքբերման արժեքով (անվանական արժեքին գումարած հավելավճար կամ հանած զեղչատոկոս), իսկ այնուհետև՝ ամորտիզացված արժեքով: Սկզբնական գրանցման ժամանակ մինչև ձեռքբերումն ակտիվի գծով կուտակված և չվճարված տոկոսների գումարով դեբետագրվում են ստացվելիք տոկոսների հաշիվները: Զեղչատոկոսի կամ հավելավճարի համար գործում են առանձին հաշիվներ, դրանց գումարը դուրս է գրվում (ամորտիզացվում) եկամուտների հաշվին՝ օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Եթե ընկերությունն այս կարգի ակտիվները վերադասակարգում է որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ, ապա գրանցումը կատարվում է դրանց՝ տվյալ օրվա շուկայական (իրական) գնի համաձայն: Այն դեպքում, երբ ներդրումները վերադասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող ակտիվներ, ապա գնահատման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը, հաշվարկված որպես իրական արժեքի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրման հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է եկամուտների հաշվետվության մեջ՝ որպես իրացված շահույթ կամ վնաս: Եթե ակտիվը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի, ապա վերագնահատման արդյունքը, որպես իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն, գրանցվում է կամ հաշվեկշռի կապիտալի 5112 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում, կամ եկամուտներում (ծախսերում):

Ենթաբաժին 150
«ՀՀ ԿԲ արժեթղթեր»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Եթե արժեթղթերը ձեռք են բերվել անվանականից բարձր կամ ցածր արժեքով, ապա հավելավճարի կամ զեղչատոկոսի համար օգտագործվում են առանձին հաշիվներ:

1500 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի հաշվառման համար: Զեղչատոկոսային արժեթղթերից եկամուտը ստացվում է անվանական արժեքի ու ձեռքբերման գնի տարբերություն հանդիսացող զեղչի (դիսկոնտի) ամորտիզացիայի միջոցով:

Հաշիվը դեբետագրվում է արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դտ- 1500 (անվանական արժեքով),

Կտ-1501 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերության չափով)

Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման արժեքով):

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի մարման դեպքում՝

Կտ- 1500,

Դտ- Դրամական միջոցներ:

1501 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» - այս հաշվում հաշվառվում է մինչև մարման ժամկետը պահվող ՀՀ ԿԲ կողմից թողարկված զեղչատոկոսով (դիսկոնտային) արժեթղթերի զեղչատոկոսը: Մինչև արժեթղթի մարման ժամկետը ապահովագրական ընկերությունը էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ-1501 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»,

Կտ-6190 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից»:

1502 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր» - այս հաշվում հաշվառում են տոկոսային եկամուտ բերող ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը: Այս ներդրումները կարող են ձեռք բերվել ինչպես անվանական արժեքով, այնպես էլ դրանից բարձր կամ ցածր գնով՝ կախված արժեթղթերի կուպոնային և շուկայական տոկոսադրույքների մակարդակից:

Հաշիվը դեբետագրվում է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր ձեռք բերելիս:

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել զեղչով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը.

Դտ- 1502(անվանական արժեքով),

Կտ- 1503 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»,

Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

Եթե արժեթուղթը ձեռք է բերվել հավելավճարով, ապա տրվում է հետևյալ ձևակերպումը.

Դտ- 1502 (անվանական արժեքով),

Դտ- 1504 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»,

Կտ- Դրամական միջոցներ (ձեռքբերման գնով):

1503 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» - հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոսի հաշվառման համար: Զեղչատոկոսի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը ապահովագրական ընկերությունը կատարում է զեղչատոկոսի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դտ- 1503 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով),

Կտ- 6190 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից»:

1504 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» - հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար: Հավելավճարի ամորտիզացիան կատարվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով:

Մինչև արժեթղթի մարման ժամկետը ապահովագրական ընկերությունը կատարում է հավելավճարի ամորտիզացիա՝ այն դուրս գրելով եկամուտներից՝

Դտ-6190 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից»,

Կտ- 1504 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» (էֆեկտիվ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի և ստացվելիք կուպոնային տոկոսների տարբերության գումարով):

1505 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի ձեռքբերման դեպքում, գնի մեջ ներառված կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների չափով՝

Դտ- 1505 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»,

Կտ- Դրամական միջոցներ,

բ) ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով տոկոսներ հաշվեգրելիս՝

Դտ- 1505 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ» (կուպոնային տոկոսադրույք x անվանական արժեք),

Կտ- 6190 «Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից»:

Հաշիվը կրեդիտագրվում է ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի տոկոսները ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 1505 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ»:

Այս բաժնի մյուս ենթաբաժինների հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 150 ենթաբաժնի հաշիվների դեպքում:

ԲԱԺԻՆ 16
«Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից և այլ ընթացիկ պահանջներ նրանց նկատմամբ»

ենթաբաժին 160
«Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կապակցված (ասոցիացված, համատեղ կամ դուստր) կազմակերպություններում ներդրումներից ստացվելիք շահաբաժինների հաշվառման համար:

Ներդրումների հաշվառման ինքնարժեքի մեթոդի դեպքում՝

160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝

Դտ- 160 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ,

Կտ- 621 «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ» ենթաբաժնի հաշիվներ,

160 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժինները ստանալիս՝

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 160 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներ:

Ներդրումները հաշվառման բաժնեմասնակցության մեթոդի դեպքում՝

160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում» ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ստացվելիք շահաբաժինները հայտարարելուց հետո՝

Դտ-«Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում» ենթաբաժնի հաշիվներ

Կտ- Համապատասխան ներդրման հաշիվ,

160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում» ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են շահաբաժինները ստանալիս՝

Դտ - Դրամական միջոցներ,

Կտ-160 «Ստացվելիք շահաբաժիններ այլ անձանց կանոնադրական կապիտալում» ենթաբաժնի հաշիվներ:

ենթաբաժին 161
«Այլ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են դուստր, համատեղ վերահսկվող և ասոցիացված ընկերությունների նկատմամբ այլ ընթացիկ պահանջների հաշվառման համար: Հաշիվները ակտիվային են, դեբետագրվում են պահանջների ավելացման և կրեդիտագրվում՝ դրանց նվազման դեպքում:

ԲԱԺԻՆ 17
«Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 170 «Դեբիտորական պարտքեր», 171 «Կանխավճարներ աշխատակիցներին և այլ անձանց», 172 «Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 173 «Ստացվելիք այլ գումարներ», 174 «Հետաձգված հարկային ակտիվներ», 175 «Այլ ընթացիկ ակտիվներ», 176 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»:

ենթաբաժին 170
«Դեբիտորական պարտքեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

1700 «Դեբիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ» **-** այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների ռեզիդենտների նկատմամբ ունեցած դեբիտորական պարտքերի հաշվառման համար: Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, այն դեբետագրվում է առաջացող դեբիտորական պարտքերի գումարով, կրեդիտագրվում է դրանց մարման գումարով:

1701 «Դեբիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած դեբիտորական պարտքերի հաշվառման համար: Հաշիվը ակտիվային է, մասնավորապես, այն դեբետագրվում է առաջացող դեբիտորական պարտքերի գումարով, կրեդիտագրվում է դրանց մարման գումարով:

1702 «Դեբիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է բյուջեի նկատմամբ ապահովագրական ընկերությունների դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

Ենթաբաժին 171
«Կանխավճարներ աշխատակիցներին և այլ անձանց»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից իրենց աշխատակիցներին, Բյուրոյին, այլ անձանց կանխավճարված գումարների համար:

1710 «Կանխավճարված աշխատավարձ» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների կողմից աշխատողներին կանխավճարված աշխատավարձի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճարը տալիս.

Դտ-1710,

Կտ-Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է կանխավճարված աշխատավարձի գծով դեբիտորական պարտքը ծախսերով փակելիս՝

Դտ-ծախսային հաշիվներ,

Կտ-1710:

1711 «Աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության աշխատակիցներին առհաշիվ տրված այնպիսի գումարները, ինչպիսիք են՝ գործուղումների հետ կապված կանխավճարները, վճարներն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար և այլն:

Հաշիվը դեբետագրվում է առհաշիվ գումարներ տրամադրելիս՝

Դտ- 1711,

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է առհաշիվ տրված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս: 1711 հաշվի գումարը դուրս է գրվում այն հաշիվների վրա, որոնց գծով օգտագործվել են այդ միջոցները՝

Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ և պասիվային հաշիվներ,

Կտ-1711:

1712 «Կանխավճարներ ռեզիդենտներին» - այս հաշվում հաշվառվում են ռեզիդենտներին ապրանքների, ծառայությունների և այլ պայմանագրերի համար տրված կանխավճարները: Ապրանքների ստացման, ծառայությունների մատուցման, պայմանագրերի կատարման դեպքում կանխավճարներն այս հաշվից փոխանցվում են համապատասխան ակտիվի կամ ծախսի հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճար տալիս՝

Դտ- 1712,

Կտ- Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ստանալիս՝

Դտ- Ծախսեր, ակտիվային հաշիվներ,

Կտ- 1712:

1713 «Կանխավճարներ ոչ ռեզիդենտներին» - այս հաշվի հաշվառումը տարվում է նույն ձևով, ինչ որ 1712 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 172
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, այլ հարկերի և տուրքերի ու պարտադիր սոցիալական ապահովագրության կանխավճարված վճարումների հաշվառման համար:

1720 «Կանխավճարներ շահութահարկի գծով» - այս հաշվում հաշվառվում են շահութահարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները:

Կանխավճար կատարելիս ձևակերպվում է՝

Դտ- 1720,

Կտ- Դրամական միջոցներ:

Պարտավորության ժամկետը լրանալիս կանխավճարները դուրս են գրվում այս հաշվից՝ թղթակցելով պարտավորությունների համապատասխան հաշվի հետ՝

Դտ- 361 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-1720:

1721 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով» **-** այս հաշվում հաշվառում են ավելացված արժեքի հարկի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

1722 «Այլ կանխավճարված հարկեր և տուրքեր» - այս հաշվում հաշվառում են այլ հարկերի և տուրքերի գծով բյուջեին վճարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

1723 «Կանխավճարներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» **-** այս հաշվում հաշվառում են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կատարված կանխավճարները: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1720 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 173
Ստացվելիք այլ գումարներ

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են այլ ստացվելիք գումարների հաշվառման համար:

Ստացվելիք գումարները հաշվեգրելիս դեբետագրվում են 173 ենթաբաժնի հաշիվները և կրեդիտագրվում տվյալ գործարքի գծով թղթակցող հաշիվները:

Վճարումը ստանալիս տրվում է՝

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 173 «Ստացվելիք այլ գումարներ» ենթաբաժնի հաշիվներ:

Ենթաբաժին 176
«Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստների հաշվառման համար: Այս հաշվի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 39-ի և ՀՀՀՀՍ 36-ի: Հաշիվը կրեդիտագրվում է հնարավոր կորուստների գումարով թղթակցելով համապատասխան ծախսային հաշվի հետ, դեբետագրվում է հնարավոր կորուստների պահուստների գումարով:

ԴԱՍ 2. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 20
«Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 200 «Հիմնական միջոցներ», 201 «Հիմնական միջոցների ամորտիզացիա», 202 «Ոչ նյութական ակտիվներ», 203 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա», 204 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ», 205 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում», 206 «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում», 207 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»:

Ենթաբաժին 200
«Հիմնական միջոցներ»

2000 «Հող» - այս հաշվում հաշվառվում են ներդրումներ հողում: Հողը ներկայացվում է ձեռքբերման արժեքով, որը ներառում է գնման գինը՝ ներառյալ բոլոր անհրաժեշտ ծախսերը՝ հողը օգտագործման

համար պիտանի դարձնելու նպատակով: Ծախսերի կազմի մեջ մտնում են նաև կոյուղու համակարգի տեղադրման, ճանապարհների կառուցման, հարթեցման և վերականգնման հետ կապված ու նմանատիպ այլ ծախսերը: Հողի արժեքը դուրս չի գրվում (ամորտիզացվում), որովհետև այս տեսակի ակտիվի ծառայության ժամկետը անսահմանափակ է:

Հաշիվը դեբետագրվում է հողի ձեռքբերման դեպքում՝ գնման գնի, իսկ հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է հողի օտարման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի չափով, իսկ հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2001 «Շենքեր, շինություններ» **-** այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության շենքերում (տարածքում) կատարված ընդհանուր ներդրումները: Շենքերը ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է շենքի, տարածքի պատրաստման ծախսերը, ինչպիսիք են՝ հիմք փորելը, փոխադրման և տեղադրման ծախսերը, ճարտարապետների և ուսումնասիրողների վարձավճարը, շինարարական ծախսերը և բոլոր այն անհրաժեշտ ծախսերը, որոնք կատարվում են տվյալ ակտիվն օգտագործման համար պիտանի դարձնելու համար: Ակտիվը բարելավելու համար կատարված այն ծախսերը, որոնք հաջորդում են նրա սկզբնական ձեռքբերման արժեքին և բարձրացնում են ակտիվի արդյունավետությունը կամ ավելացնում դրա օգտագործման տևողությունը, պետք է ավելացվեն ակտիվի հաշվեկշռային արժեքին:

Հաշիվը դեբետագրվում է շենքի և շինությունների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ շենքի և շինությունների իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է շենքի և շինությունների օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2002 «Գույք և գրասենյակային սարքավորումներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող գույքի և գրասենյակային սարքավորումների (օրինակ՝ սեղան, աթոռ, պահարան, բազկաթոռ, դարակաշար, չհրկիզվող պահարան և այլն) համար կատարված ներդրումները: Գույքը և գրասենյակային սարքավորումները հաշվեկշռում գրանցվում են իրենց ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման, տեղադրման ծախսերը և տվյալ ակտիվն օգտագործման համար պիտանի դարձնելու բոլոր անհրաժեշտ ծախսերը: Հետագայում հաշվառումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը երկարացնելու ու բարելավելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում, ինչպես նաև գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է գույքի և գրասենյակային սարքավորումների օտարման և դուրսգրման և գույքի ու գրասենյակային սարքավորումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական գնի արժեքների բացասական տարբերության չափով:

2003 «Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա» **-** այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող համակարգիչների և հաղորդակցման սարքավորումների համար կատարված ներդրումները: Դրանք ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման ծախսերը և այլ անհրաժեշտ ծախսեր, որոնք կատարվում են այդ ակտիվներն օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով:

«Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա»՝ հաշվեկշռում գրանցվում են ձեռքբերման արժեքով, հետագայում՝ իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա ձեռք բերելու և հետագայում դրանց օգտակար ծառայությունն ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկայի օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է

նաև նշված ներդրումների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական ու հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2004 «Փոխադրամիջոցներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող փոխադրամիջոցների համար կատարված ներդրումները: Այս ներդրումները ներկայացվում են ձեռքբերման արժեքով, որը ներառում է չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տեղափոխման ծախսերը և այլ անհրաժեշտ ծախսերը, որոնք կատարվում են այդ ակտիվներն օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով: Հետագայում հաշվառումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է փոխադրամիջոցների ձեռքբերման և հետագայում դրանց օգտակար ծառայությունը ավելացնելու համար կապիտալ ներդրումների կատարման դեպքում: Հաշիվը դեբետագրվում է նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է փոխադրամիջոցների օտարման և դուրսգրման, ինչպես նաև փոխադրամիջոցների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական ու հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

2005 «Այլ հիմնական միջոցներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրության ընկերության գործունեության համար օգտագործվող այն հիմնական միջոցների համար կատարված ներդրումները, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2001, 2002, 2003, 2004 հաշիվների դեպքում:

2006 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից վարձակալության վերցված հիմնական միջոցները: Նշված ներդրումները գնահատվում են վարձակալության համաձայն նախատեսված վճարումների ամենացածր ներկա արժեքով կամ ակտիվի իրական գնով: Ակտիվի արժեքը պարբերաբար դուրս է գրվում (ամորտիզացվում է) կամ ակտիվի օգտակար տևողության, կամ լիզինգի տևողության ընթացքում (ներառելով ցանկացած հնարավոր վերականգնման ժամանակաշրջան, որի ընթացքում վարձակալությունը կնորացվի), կախված նրանից, թե որ ժամկետն է ավելի կարճ, և արդյոք ապահովագրական ընկերությունը հնարավորություն կունենա ձեռք բերել տվյալ ակտիվը վարձակալության ժամկետը լրանալուց հետո: Երբ վարձակալության ժամկետը ավարտվում է, ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալող ապահովագրական ընկերությանը կամ վերադարձվում է վարձատուին:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցնելիս դեպքում՝

Դտ- 2006,

Կտ- 430 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Հաշիվը դեբետագրվում է նաև վարձակալության վերցված հիմնական միջոցների վերագնահատման, նաև դրանցում կապիտալ ներդրումների կատարման դեպքում:

Վարձակալության վերցված հիմնական միջոցների գնման դեպքում հաշիվը կրեդիտագրվում է՝

Դտ-Հիմնական միջոցներ,

Կտ-2006:

Ենթաբաժին 201
«Հիմնական միջոցների ամորտիզացիա»

Այս ենթաբաժնում հաշվառվում են հիմնական միջոցների ամորտիզացիայի գումարները: Հիմնական միջոցների ամորտիզացիան կատարվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում՝ ապահովագրական ընկերության կողմից ընտրված մեթոդով: Հաշիվների կրեդիտում գրանցվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

Ենթաբաժին 202
«Ոչ նյութական ակտիվներ»

2020 «Համակարգչային ծրագրեր» - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից ձեռք բերված կամ ապահովագրական ընկերության կողմից մշակված համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվառելու համար: Համակարգչային ծրագրերի գծով կատարված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2021 «Լիցենզիաներ և վստահագրեր» - հաշիվը նախատեսված է լիցենզիաների և վստահագրերի ձեռքբերման նպատակով ապահովագրական ընկերության կատարած ծախսումների հաշվառման հա-

մար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2022 «Հեղինակային իրավունքներ, արտոնագրեր» - հաշիվը նախատեսված է հեղինակային իրավունքների և արտոնագրերի ձեռքբերման նպատակով ապահովագրական ընկերության կատարած ծախսումների հաշվառման համար: Նշված ծախսումները հաշվեկշռում ճանաչվում են որպես ակտիվ և պարբերաբար դուրս են գրվում (ամորտիզացվում են) հաշվարկված օգտակար տևողության ընթացքում:

2023 «Այլ ոչ նյութական ակտիվներ» - այս հաշվում հաշվառվում են այն ոչ նյութական ակտիվները, որոնց հաշվառման համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

Ենթաբաժին 203
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են 203 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» ենթաբաժնի ակտիվների ամորտիզացիայի (մաշվածքի) գումարները հաշվառելու համար: Հաշիվները հակակշռային են: Հաշիվների կրեդիտում գրանցվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերի կուտակումները:

Ենթաբաժին 204
«Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են ծառայությունից դուրս գտնվող և/կամ օտարման ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվառման համար: Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ծառայությունից դուրս գալու ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի չափով այս հաշիվները դեբետագրվում են:

Ծառայությունից դուրս գտնվող ակտիվներն ամորտիզացիայի ենթակա չեն:

Հաշիվները կրեդիտագրվում են դեռևս չշահագործված ակտիվները շահագործման հանձնելիս՝

Դտ - Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

Կտ – 204 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»:

Հաշիվները կրեդիտագրվում են նաև ծառայությունից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարման դեպքում: Օտարման արդյունքում դրանց վաճառքի գնի և դրանց հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությունը դեբետագրվում/կրեդիտագրվում է ակտիվների օտարումից առաջացող վնասների կամ օգուտների հաշիվներին:

Ենթաբաժին 205
«Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերման և բարելավման համար կատարված, սակայն դեռևս չկապիտալացված ծախսումները:

2050 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում» - այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու վրա կատարված ծախսումները հաշվառելու համար:

Կապիտալ ներդրումների գծով ռեզիդենտներին տրամադրված գումարները կատարողական ակտերի հիման վրա վերագրանցվում են որպես կապիտալ ներդրումներ ապահովագրական ընկերության հիմնական միջոցներում՝

Դտ- 2050 «Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում»,

Կտ- 1712, 1713:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցի օբյեկտը շահագործման հանձնելիս՝

Դտ- Հիմնական միջոցների համապատասխան հաշիվ,

Կտ- 2050:

2050 հաշիվն օգտագործվում է նաև առկա հիմնական միջոցների բարելավմանն ուղղվող ծախսերի հաշվառման համար: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով հիմնական միջոցների արժեքին կամ դուրս են գրվում ապահովագրական ընկերության ծախսերով: Կատարված ծախսումների կապիտալացման կամ ծախսերով դուրսգրման չափանիշները ներկայացված են ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտում:

Ենթաբաժին 206
«Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Այս բաժնում ներառված հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 36-ի:

2060 «Հիմնական միջոցների արժեզրկում» - այս հաշիվը նախատեսված է հիմնական միջոցների արժեզրկումը հաշվառելու համար: Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցների արժեզրկման դեպքում՝

Դտ- 753 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկման հակադարձման դեպքում՝

Դտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»

Կտ- 653 «Հիմնական միջոցների գծով արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»,

բ) ակտիվների լրիվ արժեզրկման ժամանակ՝

Դտ- 2060 «Հիմնական միջոցների արժեզրկում»,

Կտ-Հիմնական միջոցները հաշվառող համապատասխան հաշիվներ:

2061 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկում» - այս հաշվի հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2060 հաշվի դեպքում է:

Ենթաբաժին 207
«Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությանը պատկանող, սակայն շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հաշվառման համար: Այս ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 206 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 21
«Ոչ ընթացիկ ներդրումներ և տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ»

Այս բաժնում ներառված են 210 «Ոչ ընթացիկ ավանդներ», 211 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ», 212 «Բանկերին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 213 «Ապահովագրական ընկերություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 214 «Այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 215 «Այլ անձանց տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ», 216 «Ոչ ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստ» ենթաբաժինները:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 12 «Ընթացիկ ներդրումներ և փոխառություններ» բաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 22
«Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները. 220 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 221 «ՀՀ պետական արժեթղթեր», 222 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 223 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 224 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 225 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր», 226 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր»:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 14 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր» բաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 23
Մինչև մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 230 «ՀՀ ԿԲ արժեթղթեր», 231 «ՀՀ պետական արժեթղթեր», 232 «ՀՀ ոչ պետական արժեթղթեր», 233 «Այլ երկրների պետական արժեթղթեր», 234 «Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր», 235 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժե-

թղթեր», 236 «Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր», 237 «Մինչև մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ արժեթղթերի արժեզրկման կորուստների պահուստ»:

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 15 «Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթեր» բաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 24
«Ոչ ընթացիկ ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում և այլ ոչ ընթացիկ պահանջներ նրանց նկատմամբ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 240 «Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում», 241 «Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում», 242 «Այլ ոչ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ» և 243 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»:

Այս բաժնի հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 31 «Համատեղ ձեռնարկումներում մասնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում» և ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտների համաձայն:

Ըստ ՀՀՀՀՍ 21-ի՝ այս հաշիվների արտարժութային մնացորդները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվող հաշվարկային փոխարժեքով:

Ենթաբաժին 240
«Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքում ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով), իսկ հետո ճշգրտվում է ձեռքբերումից հետո կապակցված կազմակերպության զուտ ակտիվներում ընկերության բաժնեմասի փոփոխությունների չափով: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է կապակցված կազմակերպության գործունեության արդյունքներում ընկերության բաժնեմասը:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրումը կատարելիս՝

Դտ- 240,

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ ապահովագրական ընկերության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ- 240,

Կտ- Այլ ակտիվներ, 500 «Կանոնադրական կապիտալ»:

Ձեռքբերման ամսաթվից հետո կապակցված կազմակերպության շահույթի կամ վնասի ընկերության բաժնեմասը գրանցվում է 240 ենթաբաժնի հաշիվներին՝

ա) *Դտ- 240,*

Կտ- 621 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ, կամ

բ) *Դտ- 621 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ, կամ*

Կտ- 240:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 241
«Ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»

Այս ենթաբաժնում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Ինքնարժեքի մեթոդի կիրառման դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով): Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլ-

վում են միայն այն չափով, որքանով որ ընկերությունը շահաբաժին է ստանում ներդրման օբյեկտի՝ ձեռքբերման ամսաթվից հետո կուտակված չբաշխված զուտ շահույթից:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրում կատարելիս, ձեռքբերման արժեքով՝

Դտ- 241,

Կտ- Դրամական միջոցներ:

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ ապահովագրական ընկերության բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դտ- 241,

Կտ- Այլ ակտիվներ, 500 «Կանոնադրական կապիտալ»:

Կապակցված կազմակերպության կողմից շահաբաժինները հայտարարելուց հետո դրանք գրանցվում են 160 «Ստացվելիք շահաբաժիններ» ենթաբաժնի հաշիվներում:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժին 242
«Այլ ոչ ընթացիկ պահանջներ այլ անձանց նկատմամբ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից կապակցված կազմակերպությունների նկատմամբ այլ պահանջների հաշվառման համար: Հաշիվը ակտիվային է, դեբետագրվում է պահանջների առաջացման դեպքում, կրեդիտագրվում է դրանց մարման դեպքում:

Ենթաբաժին 243
«Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»

2430 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ» - հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 36 ստանդարտի համաձայն: Պահուստին հատկացումներ կատարվում են՝ հիմք ընդունելով ներդրումների փոխհատուցվող գումարը: Այն սահմանվում է որպես ներդրման վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը:

Հաշիվը կրեդիտագրվում է ներդրումների և/կամ այլ պահանջների արժեզրկման նախանշանի առկայության դեպքում դրանց փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝

Դտ- 760 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 2430:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկումից կորստի վերականգնման դեպքում՝

Դտ -2430,

Կտ -760 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

բ) լրիվ արժեզրկման դեպքում՝ ներդրման հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում 2430 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստ»- հաշվից: Ընդ որում, նախ՝ դուրս է գրվում ներդրման գծով առկա գուդվիլը (եթե այդպիսին գոյություն ունի), ապա՝ ներդրման արժեքը»՝

Դտ -2430,

Կտ -Համապատասխան ներդրման հաշիվ:

ԲԱԺԻՆ 25
«Այլ ոչ ընթացիկ ակտիվներ»

Այս բաժինը ներառում է 250 «Հետաձգված հարկային ոչ ընթացիկ ակտիվներ», 251 «Այլ ոչ ընթացիկ ակտիվներ»: 250 ենթաբաժնի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 12-ի:

ԲԱԺԻՆ 26
«Այլ ոչ ընթացիկ ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստ»

Այս բաժնի հաշիվները պասիվային են, կարգավորող: Դրանք նախատեսված են այլ ոչ ընթացիկ ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության դեպքում) հաշվառման համար:

ԴԱՍ 3. «ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ԲԱԺԻՆ 30
«Վճարվելիք գումարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 300 «Ոչ կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ», 301 «Կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ», 302 «Ոչ կյանքի համաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ», 303 «Կյանքի համաապահովագրության գծով վճարվելիք գումարներ», 304 «Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք գումարներ» և 305 «Կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք գումարներ»:

Ենթաբաժին 300
«Ոչ կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրողներին (ապահովադիրներին), ապահովագրական միջնորդներին, այլ անձանց ոչ կյանքի ուղղակի ապահովագրության հետ կապված վճարվելիք գումարները հաշվառելու համար:

Վճարվելիք գումարների չափով ձևակերպվում է.

Դտ- 700 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Վճարելիս.

Դտ-300 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 301
«Կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների կողմից կնքված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 300 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 302
«Ոչ կյանքի համաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ոչ կյանքի համաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են պարտավորությունների ավելացման դեպքում, դեբետագրվում են դրանց մարման և/կամ նվազման դեպքում: Հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 300 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 303
«Կյանքի համաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կյանքի համաապահովագրության պայմանագրերի գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը կատարվում է նույն սկզբունքով, ինչ որ 300 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 304
«Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրող ընկերությունների կողմից վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք հատուցումների հաշվառման համար:

Դտ- 704 «Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր» ենթաբաժնի հաշիվներ,

Կտ- 304 «Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ» ենթաբաժնի հաշիվներ:

Հատուցումը կատարելիս.

Դտ-304 «Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ» ենթաբաժնի հաշիվներ,

Կտ- դրամական միջոցներ:

Ենթաբաժին 305
«Կյանքի վերաապահովագրությամբ ընդունված ռիսկերի գծով վճարվելիք գումարներ»

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 304 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 31
«Համաապահովագրողներին և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 310 «Ոչ կյանքի ապահովագրության գծով համաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ», 311 «Կյանքի ապահովագրության գծով համաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ», 312 «Ոչ կյանքի ապահովագրության գծով վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ», 313 «Կյանքի ապահովագրության գծով վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ»:

Ենթաբաժին 310
«Ոչ կյանքի ապահովագրության գծով համաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության կողմից համաապահովագրության պայմանագրերի համաձայն համաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների հաշվառման համար:

Համաապահովագրողին փոխանցվելիք ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ-Դրամական միջոցներ,

Կտ-310 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ապահովագրավճարների փոխանցման դեպքում ձևակերպվում է.

Դտ-310 ենթաբաժնի հաշիվներ,

Կտ- Դրամական միջոցներ:

ԲԱԺԻՆ 32
«Ստացված ընթացիկ փոխառություններ և վարկեր»

Այս բաժինը ներառում է 320 «Բանկերից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 321 «Բանկերից ստացված ընթացիկ վարկեր», 322 «Ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 323 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր», 324 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ընթացիկ վարկեր», 325 «Այլ անձանցից ներգրավված ընթացիկ փոխառություններ», 326 «Այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր» ենթաբաժինները:

Ենթաբաժին 320
«Բանկերից ներգրավված ընթացիկ փոխառություններ և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են բանկերից ստացված ընթացիկ փոխառությունների և դրանց գծով վճարվելիք տոկոսների հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են ներգրավված փոխառությունների, վճարվելիք տոկոսների գումարով, դեբետագրվում են դրանց մարման, վճարման դեպքում:

3201 «Ռեզիդենտ բանկերից ներգրավված ընթացիկ փոխառություններ» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բանկերից ներգրավված փոխառությունների հաշվառման համար:

Փոխառությունների ներգրավման դեպքում ձևակերպվում է.

Դտ- Դրամական միջոցներ,

ԿՏ- 3201 ենթաբաժնի հաշիվներ:

Դրանց մարման դեպքում.

Դտ-3201,

Կտ-Դրամական միջոցներ:

3202 «Ռեզիդենտ բանկերից ներգրավված ընթացիկ փոխառությունների գծով վճարվելիք տոկոսներ»- նախատեսված է ներգրավված փոխառությունների գծով վճարվելիք տոկոսների հաշվառման համար:

Տոկոսներ հաշվեգրելիս ձևակերպվում է՝

Դտ- 720 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-3202:

Տոկոսները վճարելիս՝

Դտ- 3202,

Կտ- Դրամական միջոցներ:

3204 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի (այդ թվում և ՀՀ կենտրոնական բանկի) հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացված դրամական միջոցների արտացոլման համար՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ - Դրամական միջոցներ,

Կտ- 3204

3205 «Ռեզիդենտ բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով վճարվելիք տոկոսներ» - այս հաշիվը նախատեսված է ռեզիդենտ բանկերի (այդ թվում և ՀՀ կենտրոնական բանկի) հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով վճարվելիք տոկոսների արտացոլման համար՝ հետևյալ ձևակերպմամբ.

Դտ - 7204,

Կտ - 3205:

3206-3207 հաշիվների, ինչպես նաև 326 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3204-3205 հաշիվների դեպքում է:

Այս բաժնի մյուս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 320 ենթաբաժնի հաշվառումը:

ԲԱԺԻՆ 33
«Ընթացիկ պարտավորություններ ՀՀ Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 330 «Ընթացիկ պարտավորություններ ՀՀ Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ» և 331 «Ընթացիկ վարկեր գանձապետարանից»:

Ենթաբաժին 330
«Ընթացիկ պարտավորություններ ՀՀ Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ՀՀ Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ ապահովագրական ընկերության ընթացիկ պարտավորությունների հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտագրվում են պարտավորությունների ավելացման, վճարվելիք տոկոսների հաշվեգրման դեպքում, դեբետագրվում են պարտավորությունների մարման, նվազման, տոկոսների վճարման դեպքում:

Բաժնի մյուս ենթաբաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 330 ենթաբաժնի դեպքում:

ԲԱԺԻՆ 34
«Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ընթացիկ արժեթղթեր»

Ենթաբաժին 340
«Թողարկված ընթացիկ արժեթղթեր»

3400 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի հաշվառման համար:

Ապահովագրական ընկերության կողմից թողարկված զեղչատոկոսային արժեթուղթը հաշվեկշռում գրանցվում է անվանական արժեքով, հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- Դրամական միջոցներ,

Դտ- 3401 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» (անվանական արժեքի և իրացման գնի տարբերության չափով),

Կտ- 3400 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»:

Հաշիվը դեբետագրվում է թողարկված արժեթղթերի մարման դեպքում՝

Դտ- 3400 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթեր»,

Կտ- Դրամական միջոցներ:

3401 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս» **-** հաշիվը նախատեսված է թողարկված զեղչատոկոսային արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ.

Դտ-7280 «Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»,

Կտ- 3401 «Թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս»:

3402 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»- այս հաշիվը նախատեսված է թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հաշվառման համար:

Թողարկված տոկոսային արժեթղթերը հաշվեկշռում գրանցվում են իրենց անվանական արժեքով: Եթե արժեթուղթը վաճառվել է զեղչատոկոսով կամ հավելավճարով, ապա վաճառքի գնի ու անվանական արժեքի տարբերության գումարները գրանցվում են, համապատասխանաբար, 3403 «Թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» կամ 3404 «Թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» հաշիվներում:

Թողարկված տոկոսային արժեթղթերը տեղաբաշխելիս տրվում են հետևյալ ձևակերպումները.

ա) զեղչատոկոսի դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ,

Դտ- 3401«Թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»,

Կտ- 3402 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»:

բ) հավելավճարի դեպքում՝

Դտ- Դրամական միջոցներ,

Կտ- 3402 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»,

Կտ- 3404 «Թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»:

Արժեթղթերի մարման դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները.

Դտ- 3402 «Թողարկված տոկոսային արժեթղթեր»,

Կտ- Դրամական միջոցներ:

3403 «Թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս» **-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի զեղչի հաշվառման համար:

Զեղչատոկոսի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ.

Դտ- 7280 «Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց»,

Կտ- 3403 «Թողարկված տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս»:

3404 «Թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար» **-** հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի հավելավճարի հաշվառման համար:

Հավելավճարի ամորտիզացիան իրականացվում է էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով, հետևյալ ձևակերպմամբ՝

Դտ-7280 «Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության թողարկած արժեթղթերի դիմաց»,

Կտ - 3404 «Թողարկված տոկոսային արժեթղթերի հավելավճար»:

3405 «Թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ» - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով վճարվելիք տոկոսների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է վճարվելիք տոկոսները հաշվեգրելիս՝
Դտ- 7280 «Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության թողարկված արժեթղթերի դիմաց»,
Կտ- 3405 «Թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»:
Հաշիվը դեբետագրվում է արժեթղթերի դիմաց տոկոսներ վճարելիս՝
Դտ- 3405 «Թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց հաշվեգրված տոկոսներ»,
Կտ- Դրամական միջոցներ:

ԲԱԺԻՆ 35
«Տեխնիկական պահուստներ

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 350 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ», 351 «Պահանջների պահուստներ», 352 «Մաթեմատիկական պահուստ», 353 «Այլ պահուստներ»:

Ենթաբաժին 350
«Չվաստակած ապահովագրավճարների պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են չվաստակած ապահովագրավճարների պահուստի հաշվառման համար: Չվաստակած ապահովագրավճարների պահուստի մեծությունը որոշվում է իրավական ակտերով սահմանված հատուկ հաշվարկի հիման վրա: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պահուստի մեծությունը, իսկ դեբետում՝ դրա դուրսգրումը:

Վերոհիշյալ հատուկ հաշվարկի հիման վրա ստացած ձևավորման ենթակա պահուստի մեծության կամ արտացոլման ենթակա պահուստի և արդեն ձևավորած պահուստի մեծության տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ- 710 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,
Կտ- 350 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հակադարձելիս՝ ավել ձևավորված մեծությամբ ձևակերպվում է.

Դտ- 350 «Չվաստակած ապահովագրավճարների պահուստ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,
Կտ- 640 «Եկամուտներ տեխնիկական պահուստների հակադարձումից»:

Ենթաբաժին 351
«Պահանջների պահուստներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են պահանջների պահուստի հաշվառման համար: Պահանջների պահուստի մեծությունը որոշվում է իրավական ակտերով սահմանված հատուկ հաշվարկի հիման վրա: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ պահուստի մեծությունը, իսկ դեբետում՝ դրա հակադարձումը:

Չևավորման ենթակա պահուստի մեծության կամ արտացոլման ենթակա պահուստի և արդեն ձևավորած պահուստի մեծության տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ- 710 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,
Կտ- 351 «Պահանջների պահուստներ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Պահանջների պահուստ հակադարձելիս՝ ավել ձևավորված մեծությամբ ձևակերպվում է.

Դտ- 351,
Կտ-640 «Եկամուտներ տեխնիկական պահուստների հակադարձումից»:

Ենթաբաժին 352
«Մաթեմատիկական պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են կյանքի ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորված տեխնիկական պահուստների հաշվառման համար:

Մաթեմատիկական պահուստի մեծությունը որոշվում է իրավական ակտերով սահմանված հատուկ հաշվարկի հիման վրա: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի

վերջին օրվա դրությամբ պահուստի մեծությունը, իսկ դեբետում՝ դրա դուրսգրումը, հակադարձումը և հատուցումների վճարումը:

Չնավորման ենթակա պահուստի մեծության կամ արտացոլման ենթակա պահուստի և արդեն ձևավորած պահուստի մեծության տարբերության ձևակերպվում է.

Դտ-710 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ-352 «Մաթեմատիկական պահուստ»:

Մաթեմատիկական պահուստ հակադարձելիս՝ ավել ձևավորված մեծությամբ ձևակերպվում է.

Դտ 352,

Կտ-640 «Եկամուտներ տեխնիկական պահուստների հակադարձումից»:

ԲԱԺԻՆ 36
«Այլ վճարվելիք գումարներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 360 «Վճարման ենթակա շահաբաժիններ», 361 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 362 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր», 363 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով», 364 «Եկամուտներին վերաբերող շնորհներ», 365 «Պահուստներ», 366 «Այլ ընթացիկ պարտավորություններ», 367 «Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորություններ», 368 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»:

Ենթաբաժին 360
«Վճարման ենթակա շահաբաժիններ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին ապահովագրական ընկերության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար:

Շահաբաժիններ հայտարարելիս ապահովագրական ընկերությունը ձևակերպում է՝

Դտ- 530 «Չբաշխված շահույթ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ- 360 «Վճարման ենթակա շահաբաժիններ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Շահաբաժինները վճարելիս ձևակերպում է՝

Դտ- 360 «Վճարման ենթական շահաբաժիններ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 361
«Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

3610 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով» - այս հաշիվը նախատեսված է հաշվարկված շահութահարկի գծով ապահովագրական ընկերության պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվարկված շահութահարկի գումարի չափով՝

Դտ -7810 «Ընթացիկ հարկի գծով ծախս (փոխհատուցում)»,

Կտ- 3610 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»:

Հաշիվը դեբետագրվում է շահութահարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով

Դտ-3610 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»,

Կտ- 1720 «Կանխավճարներ շահութահարկի գծով»:

3611 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով» - այս հաշիվը նախատեսված է հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով ապահովագրական ընկերության պարտավորության հաշվառման համար: «Կրեդիտորներ ավելացված արժեքի հարկի գծով» հաշիվը թղթակցում է այն ակտիվային հաշիվների հետ, որոնց գծով հաշվարկվել է հարկը:

Հաշիվը դեբետագրվում է ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 1721 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով» հաշվի հետ՝

Դտ- 3611 «Կրեդիտորական պարտքեր ավելացված արժեքի հարկի գծով»,

Կտ- 1721 «Կանխավճարներ ավելացված արժեքի հարկի գծով»:

3612 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բյուջե վճարվելիք այլ հարկերի, տուրքերի, ինչպես նաև ապա-

հովագրական ընկերության՝ որպես հարկային գործակալ, իր հաճախորդներին վճարված եկամուտներից պահված առանձին հարկատեսակների հաշվառման համար:

Եկամտահարկի գծով ձևակերպվում է՝

Դտ- 7400 «Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ, 7401 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ»,

Կտ- 3612 «Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և տուրքերի գծով:

3613 «Կրեդիտորական պարտքեր սոցիալական ապահովագրության վճարումների գծով» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության աշխատողների աշխատավարձից և ապահովագրական ընկերության միջոցներից պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Վճարվելիք գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը.

Դտ- 7404 «Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»,

Կտ- 3613:

Պարտավորությունները մարելիս՝

Դտ- 3613,

Կտ- Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 362
«Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»

3620 «Հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և այլ վճարներ - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության հիմնական աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը.

Դտ- 7400,

Կտ- 3620:

Վճարում կատարելիս՝

Դտ-3620,

Կտ-Դրամական միջոցներ:

3621 «Պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ և այլ վճարներ - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների հաշվառման համար:

Վճարվելիք աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների գումարի չափով կատարվում է հետևյալ ձևակերպումը՝

Դտ-7401,

Կտ-3621:

Վճարում կատարելիս՝

Դտ-3621,

Կտ-Դրամական միջոցներ»:

3622 «Այլ ներքին կրեդիտորական պարտքեր» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության աշխատողների նկատմամբ այլ պարտավորությունների հաշվառման համար:

3623 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3624 «Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ» - այս հաշիվը նախատեսված է ապրանքների կամ ծառայությունների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների հաշվառման համար:

3625 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ռեզիդենտների նկատմամբ» - հաշիվն օգտագործվում է նոր ստեղծվող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի ձևավորման և գործող ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի համալրման նպատակով՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական կապիտալի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են ապահովագրական ընկերության հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական կապիտալի ձևավորման և համալրման դեպքում՝
Դտ- հաշիվներ բանկերում,
Կտ- 3625:
Կանոնադրական կապիտալի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

3626 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով ոչ ռեզիդենտների նկատմամբ» **-** այս հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 3625 հաշվի դեպքում է:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 363
«ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏԱԾԳՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ»

3630 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով» **-** այս հաշիվը նախատեսված է հաշվարկված հարկերի գծով ընթացիկ պարտավորությունների հաշվառման համար, որոնց վճարման ժամկետը հետաձգվել է մինչև դրանց հետ կապված իրացումից հասույթի ստացումը:

Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են հետաձգված հարկերի գծով առաջացած ընթացիկ պարտավորությունների գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարման գումարը:

Շահութահարկի գումարն արտացոլելիս.
Դտ-781 ենթաբաժնի հաշիվներ,
Կտ-3630:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 364
«ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՈՐԻՆԵՐ»

3640 «Եկամուտներին վերաբերող շորիներ» - այս հաշիվը նախատեսված է եկամուտներին վերաբերող շորիների հաշվառման համար: Եկամուտներին վերաբերող շորիների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀ 20 «Պետական շորիների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտում:

Եկամուտներին վերաբերող շորիները ստանալիս.
Դտ-համապատասխան ակտիվային հաշիվներ,
Կտ-3640:
Եկամուտներին վերաբերող շորիների վերագրումը եկամուտներին.
Դտ-3640,
Կտ-6590:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 365
«ՊԱՀՈՒՍՏՆԵՐ»

3650 «Անբարենպաստ պայմանագրերի գծով ընթացիկ պահուստներ» - այս հաշիվը նախատեսված է այն պահուստների հաշվառման համար, որոնք կապված են ընկերության կողմից կնքված անբարենպաստ պայմանագրերի հետ, մասնավորապես, այդ պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրերից ակնկալվող ստացվելիք օգուտները: Նմանատիպ պայմանագրերի հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 37-ի:

Պահուստների ճանաչման ժամանակ ձևակերպվում է.
Դտ-757 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,
Կտ-3650:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 366
«ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ստացված կանխավճարների, գործառնական վարձակալության գծով վճարվելիք գումարների, վճարվելիք տույժերի, տուգանքների և այլ ընթացիկ այն պարտավորությունների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է պարտավորությունների աճը, իսկ դեբետում՝ դրանց մարումը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 367
«ԲՅՈՒՐՈՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են անդամավճարների, պարբերական վճարների, լրացուցիչ վճարների, միանվագ վճարների և Բյուրոյի նկատմամբ այլ կրեդիտորական պարտավորությունների

արտացոլման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում է պարտավորությունների աճը՝ թղթակցելով 741 ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ, իսկ դեբետում արտացոլվում է պարտավորությունների մարումը՝ թղթակցելով դրամական միջոցների հաշվի հետ:

Ենթաբաժին 368
«Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրության գծով, ինչպես նաև ապագա ժամանակաշրջանի այլ եկամուտների հաշվառման համար: Հաշիվները պասիվային են, կրեդիտում արտացոլվում են ապագա ժամանակաշրջանի եկամուտները՝ թղթակցելով դրամական միջոցների հաշիվների հետ, իսկ դեբետում ապագա ժամանակաշրջանի եկամուտների ճանաչումը որպես եկամուտ՝ թղթակցելով համապատասխան եկամտային հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 37
«Առևտրային նպատակներով պահվող պարտավորություններ»

Այս բաժինը ներառում է 370 «Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր», 371 «Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արտարժույթ», 379 «Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ» ենթաբաժինները:

Ենթաբաժին 370
«Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում է ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում ձևավորված պարտավորությունը՝ հետևյալ հաշվապահական ձևակերպումներով.

Դտ- դրամական միջոց (կամ վաճառքի արդյունքում ստացված որևէ այլ ակտիվ),

Կտ- 370 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթի գծով պարտավորությունները վերագնահատվում են իրական արժեքով՝ թղթակցելով համապատասխան եկամտային կամ ծախսային հաշիվների հետ.

Արժեթղթի իրական արժեքի բարձրացման դեպքում՝

Դտ - 746-747 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ - 370 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Արժեթղթի իրական արժեքի նվազման դեպքում՝

Դտ - 370 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ - 657-658 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Այս բաժնի մյուս ենթաբաժինների հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 370 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԴԱՍ 4. ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 40
«Ստացված ոչ ընթացիկ փոխառություններ և վարկեր»

Այս բաժինը ներառում է 400 «Բանկերից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 401 «Բանկերից ստացված ոչ ընթացիկ վարկեր», 402 «Ապահովագրական ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 403 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ», 404 «Այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված ոչ ընթացիկ վարկեր», 405 «Այլ անձանցից ներգրավված ոչ ընթացիկ փոխառություններ»: Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ Դաս 3-ում ներառված հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 41
«Ոչ ընթացիկ պարտավորություններ ՀՀ Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովագրության հիմնադրամի նկատմամբ»

Այս բաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 33 բաժնի հաշվառումը:

ԲԱԺԻՆ 42
«Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ոչ ընթացիկ արժեթղթեր»

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 34 բաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 43
«Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»

Այս բաժնում ներառված են հետևյալ ենթաբաժինները. 430 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 431 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր», 432 «Ակտիվներին վերաբերող շնորհներ», 433 «Հետաձգված հարկային պարտավորություններ», 434 «Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»:

Ենթաբաժին 430
«Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների հաշվառման համար: Հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 17-ում: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրսգրումը:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեքով (իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է) ձևակերպվում է.

Դտ- 2007,

Կտ- 430 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Ֆինանսական վարձակալության գծով չկրած ֆինանսական ծախսերի գումարով ձևակերպվում է.

Դտ-431 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ,

Կտ-430:

Ենթաբաժին 432
«Ակտիվներին վերաբերող շնորհներ»

4320 «Ակտիվներին վերաբերող շնորհներ» - Այս հաշիվը նախատեսված է որպես շնորհ ստացված ոչ ընթացիկ ակտիվների, ինչպես նաև դրանց գնման, կառուցման կամ այլ կերպ ձեռքբերման նպատակով ստացված ակտիվների հաշվառման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում ստանդարտում:

Շնորհների ստացման դեպքում ձևակերպվում է.

Դտ-Ակտիվներ,

Կտ 4320:

Շնորհների վերադարձում դեռևս չմարված մնացորդի հաշվին.

Դտ-4320,

Կտ-Ակտիվներ:

Ենթաբաժին 433
«Հետաձգված հարկային պարտավորություններ»

4330 «Հետաձգված հարկային պարտավորություններ» - այս հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների հաշվառման համար: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում են շահութահարկի գծով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գումարները, իսկ դեբետում՝ դրանց մարումները:

Ենթաբաժին 434
«Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերության այլ ոչ ընթացիկ պարտավորությունների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշիվը պասիվային է, կրեդիտում արտացոլվում է այդ պարտավորությունների աճը, իսկ դեբետում՝ դրանց մարումը, դուրսգրումը:

ԴԱՍ 5. ԿԱՊԻՏԱԼ

ԲԱԺԻՆ 50
«Կապիտալ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 500 «Կանոնադրական կապիտալ», 501 «Չվճարված կապիտալ»:

Ենթաբաժին 500
«Կանոնադրական կապիտալ»

5001 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է արտոնյալ բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև լրացուցիչ) թողարկման դեպքում:

5002 «Արտոնյալ բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

5003 «Արտոնյալ բաժնետոմսեր-զեղչ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը»:

5004 «Սովորական բաժնետոմսեր-անվանական արժեք»- հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև՝ լրացուցիչ) թողարկման դեպքում:

5005 «Սովորական բաժնետոմսեր- էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

5006 «Սովորական բաժնետոմսեր-զեղչ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

5007 «Բաժնեմասեր» - այս հաշվում հաշվառվում է ՍՊԸ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի միջոցների հաշվառման համար:

Ենթաբաժին 501
«Չվճարված կապիտալ»

501 «Չվճարված կապիտալ» ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության չվճարված կապիտալի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշիվն ակտիվապասիվային է, կարգավորող: Այս ենթաբաժինը բաղկացած է 5010 «Թողարկված և չտեղաբաշխված կապիտալ» և 5011 «Տեղաբաշխված և չվճարված կապիտալ» հաշիվներից: Հաշվի դեբետում արտացոլվում են բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև մասնակիցների (հիմնադիրների) պարտքը ապահովագրական ընկերությունների կապիտալում ներդրումների գծով, իսկ կրեդիտում՝ այդ պարտքի մարումը, չմարված պարտքերի կամ թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կապիտալի նվազեցումը:

ԲԱԺԻՆ 51
«Պահուստներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 510 «Գլխավոր պահուստ», 511 «Վերագնահատման պահուստներ»:

Ենթաբաժին 510
«Գլխավոր պահուստ»

5100 «Գլխավոր պահուստ» - այս հաշվում հաշվառվում է այն պահուստը, որն ստեղծվում է ապահովագրական ընկերության տրամադրության տակ մնացած շահույթից՝ չնախատեսված ծախսերի փոխհա-

տուցման նպատակով: Պահուստն օգտագործվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ապահովագրական ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգերի:

Գլխավոր պահուստին կատարվող հատկացումների գումարներով.

Դտ-5300 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս»,

Կտ-5100 «Գլխավոր պահուստ»:

Վնասների ծածկման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.

Դտ-5100 «Գլխավոր պահուստ»,

Կտ-5300 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս»:

Շահաբաժինների վճարման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.

Դտ- 5100 «Գլխավոր պահուստ»,

Կտ- 560 ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով պահուստային կապիտալի օգտագործում.

Դտ-5100 «Գլխավոր պահուստ»,

Կտ-500 «Կանոնադրական կապիտալ» ենթաբաժնի համապատասխան հաշիվներ:

Ենթաբաժին 511
«Վերագնահատման պահուստներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների ակտիվների վերագնահատման արդյունքները հաշվառելու համար:

5110 «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է հիմնական միջոցների պարբերաբար վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը՝ հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի որևէ տեսակի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները: Վերագնահատումը կատարվում է ապահովագրական ընկերությունների կողմից և հաստատվում անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7530 «Հիմնական միջոցների վերագնահատումից ծախսեր» հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից: Վերագնահատումից հետո ամորտիզացիոն ծախսերը եկամուտների և ծախսերի հաշվետվությունում ավելի մեծ լինելու դեպքում ամորտիզացիոն ծախսերի ավելացած գումարը տեղափոխվում է այս հաշվից «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին: Հիմնական միջոցների իրացման դեպքում այս հաշվի մնացորդները նույնպես ուղղակիորեն փոխանցվում են «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5111 «Ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ» - այս հաշվում հաշվառվում է ապահովագրական ընկերության ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքը: Վերագնահատման հաշվառումը ներկայացված է ՀՀՀՀ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտում:

5112 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշիվն օգտագործվում է այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունն ընտրել է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունների հետևանքը (վերագնահատումները) ուղղակիորեն սեփական կապիտալում արտացոլելու մեթոդը:

Հաշիվը դեբետագրվում է հետևյալ դեպքերում.

ա) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի նվազման դեպքում՝

Դտ – 5112,

Կտ–Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների համապատասխան հաշիվներ,

բ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրական (վերագնահատված) արժեքով վաճառելու դեպքում՝

Դտ - Դրամական միջոցներ,

Դտ – 5112,

Կտ – 6540 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված եկամուտներ»,

Կտ–Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող համապատասխան ակտիվային հաշիվներ,

գ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները որպես առևտրական նպատակներով պահվող վերադասակարգելու դեպքում, եթե մինչ այդ վերագնահատվել է դրական՝

Դտ–առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները հաշվառող համապատասխան ակտիվային հաշիվներ,

Կտ–6540 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից եկամուտներ»,

Դտ–5112 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս»,

Կտ–Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող համապատասխան ակտիվային հաշիվներ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ դասակարգելու դեպքում՝

Դտ – մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվները հաշվառող համապատասխան ակտիվային հաշիվներ,

Դտ–5112 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս»,

Կտ - 5113 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս,

Կտ–Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող համապատասխան ակտիվային հաշիվներ:

Հաշիվը կրեդիտագրվում է՝ ա) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճելու դեպքում, բ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները վաճառելու դեպքում, եթե մինչ այդ վերագնահատվել է բացասական, գ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները որպես առևտրական նպատակներով պահվող կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ վերադասակարգելու դեպքում, եթե մինչև այդ վերագնահատվել է բացասական.

ա) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճելու դեպքում՝

Դտ–վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող ակտիվային հաշիվներ,

Կտ 5112,

բ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները վաճառելու դեպքում, եթե մինչ այդ վերագնահատվել է բացասական՝

Դտ - Դրամական միջոցներ,

Դտ – 7541 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր»,

Կտ – 5112,

Կտ – վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող ակտիվային հաշիվներ,

գ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որպես առևտրական նպատակներով պահվող վերադասակարգելու դեպքում, եթե մինչև այդ վերագնահատվել է բացասական՝

Դտ– առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ հաշվառող ակտիվային հաշիվներ,

Դտ – 7540 «Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր,

Կտ – Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող ակտիվային հաշիվներ,

Կտ - 5112

կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ դասակարգելու դեպքում, եթե վերագնահատվել է բացասական՝

Դտ – մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառող ակտիվային հաշիվներ,

Դտ - 5113 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս,

Կտ - վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները հաշվառող ակտիվային հաշիվներ,

Կտ-5112 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս»:

5113 «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով շահույթ/վնաս» - այս հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 5112 հաշվի դեպքում է:

5114 «Ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատումից չիրացված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է ասոցիացված կազմակերպությունում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են ասոցիացված կազմակերպության ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում ներդրումների հաշիվների հետ:

5115 «Համատեղ վերահսկվող միավորներում մասնակցության վերագնահատումից չիրացված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցության վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդն արտացոլում է համատեղ վերահսկվող միավորներում մասնակցությունների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են համատեղ վերահսկվող միավորներում ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների հաշիվների հետ:

5116 «Դուստր ընկերություններում ներդրումների վերագնահատումից չիրացված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է դուստր ընկերություններում ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթը/վնասը: Հաշվի մնացորդը արտացոլում է դուստ ընկերություններում ներդրումների վերագնահատման արդյունքում կուտակված շահույթը/վնասը: Այս ներդրումները վերագնահատվում են դուստր ընկերությունների ակտիվների վերագնահատման հետևանքով: Հաշիվը թղթակցում է դուստր ընկերություններում ներդրումների հաշիվների հետ:

5117 «Արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ» - այս հաշվում հաշվառվում է ապահովագրական ընկերության և նրա արտերկրյա միավոր հանդիսացող մասնաճյուղի հաշվեկշիռների կոնսոլիդացիայի ընթացքում արտարժույթի փոխանակման արդյունքում առաջացած չիրացված շահույթը կամ վնասը:

5118 «Դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքների վերագնահատման պահուստ» - այս հաշիվը նախատեսված է դրամական հոսքերի հեջավորման ածանցյալ գործիքներից վերագնահատման արդյունքները հաշվառելու համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի և այլ սահմանված կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 52
«Հետգնված կապիտալ»

Այս բաժինը նախատեսված է ընկերության կողմից հետգնված սեփական բաժնետոմսերի հաշվառման համար: Այս բաժնի հաշիվների դեբետում արտացոլվում է մասնակիցներից հետ գնված բաժնետոմսերի արժեքը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը և վերավաճառքը: Այս հաշվի մնացորդը դասի հաշվարկում ներառվում է բացասական նշանով:

ԲԱԺԻՆ 53
«Չբաշխված շահույթ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 530 «Չբաշխված շահույթ» և 531 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»:

5300 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» - այս հաշիվը նախատեսված է ապահովագրական ընկերությունների ընթացիկ տարվա գործունեության ֆինանսական արդյունքի (շահույթի կամ վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Յուրաքանչյուր նոր ֆինանսական տարվա սկզբին այս հաշվի մնացորդը (նախորդ տարվա զուտ շահույթը/զուտ վնասը) տեղափոխվում է 5301 «Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս» հաշվին:

5301 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է նախորդ ֆինանսական տարիների զուտ շահույթը կամ վնասը, որը մնացել է գլխավոր պահուստին հատկացումներ կատարելուց և շահաբաժինները վճարելուց հետո:

Ենթաբաժին 531
«Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած ճշգրտումների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ապահովագրական ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ճշգրտում են չբաշխված շահույթի սկզբնական

մնացորդը): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 54
«Միջանկյալ շահաբաժիններ»

Այս բաժինը ներառում է 540 «Միջանկյալ շահաբաժիններ» ենթաբաժինը:

5400 «Միջանկյալ շահաբաժիններ» - այս հաշվի դեբետում արտացոլվում է հայտարարված միջանկյալ շահաբաժինների գումարը, իսկ կրեդիտում՝ հաշվետու տարվա արդյունքներով հայտարարված շահաբաժինների մարումը միջանկյալ շահաբաժինների հաշվին:

ԴԱՍ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԲԱԺԻՆ 60
«Եկամուտներ ապահովագրական գործունեության գծով»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 600 «Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով», 601 «Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով», 602 «Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով համասապահովագրողներին ստացվելիք հատուցումների գծով», 603 «Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով համասապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով», 604 «Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով վերասապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով», 605 «Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով վերասապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով», 606 «Այլ եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով ստացվելիք այլ գումարներից», 607 «Այլ եկամուտներ կյանքի ապահովագրության գծով ստացվելիք այլ գումարներից»:

Ենթաբաժին 600
«Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրողներից, համասապահովագրողներից վերասապահովագրողներից, ապահովագրական միջնորդներից ստացվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է եկամուտների ավելացման դեպքում և դեբետագրվում է դրանց նվազման, ֆինանսական արդյունքներին վերագրման դեպքում:

6000 «Ուղղակի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ» - այս հաշիվը նախատեսված է ստացվելիք ապահովագրավճարների հաշվառման համար:

Հաշվեգրված ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ-103 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-600 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում եկամուտները ֆինանսական արդյունքներին վերագրելիս.

Դտ-600 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-530 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Այս բաժնի մյուս հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 600 ենթաբաժնի հաշվառումը:

Ենթաբաժին 601
«Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով»

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 600 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 602
«Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով համաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են համաապահովագրության պայմանագրերից բխող այն պահանջների հաշվառման համար, որոնք վերաբերում են համաապահովագրողներից ստացվելիք հատուցումների մեծությանը:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ 109,

Կտ 602:

Ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ 602,

Կտ-530:

Ենթաբաժին 603
«Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով համաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով»

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 602 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 604
«Եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով ստացվելիք հատուցումների գծով եկամուտների հաշվառման համար:

Ստացվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ-110,

Կտ-604:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-604,

Կտ-530:

Ենթաբաժին 605
«Եկամուտներ կյանքի ապահովագրության գծով վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով»

Այս բաժնի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 604 բաժնի դեպքում է:

Ենթաբաժին 606
«Այլ եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով ստացվելիք այլ գումարներից»

Այս բաժնի հաշիվները նախատեսված են սուբրոգացիայի հետևանքով ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների նկատմամբ առաջացած պահանջներից եկամուտների հաշվառման համար: Հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 604 ենթաբաժնի դեպքում է:

Ենթաբաժին 607
«Այլ եկամուտներ կյանքի ապահովագրության գծով ստացվելիք այլ գումարներից»

Այս բաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 604 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 61-62
«Ֆինանսական ակտիվների գծով եկամուտներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 610 «Տոկոսային եկամուտներ բանկերում ներդրված ավանդների գծով», 611 «Տոկոսային եկամուտներ ներդրված այլ ներդրումներից», 612 «Տոկոսա-

յին եկամուտներ բանկերին տրամադրված փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից», 613 «Տոկոսային եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից», 614 «Տոկոսային եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից», 615 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց տրամադրված փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից», 616 «Տոկոսային եկամուտներ առևտրական նպատակներով պահվող արժեթղթերից», 617 «Տոկոսային եկամուտներ վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթերից», 618 «Տոկոսային եկամուտներ վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ արժեթղթերից», 619 «Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ արժեթղթերից», 620 «Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ արժեթղթերից», 621 «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ», 622 «Այլ անձանց նկատմամբ այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ», 623 «Այլ անձանց նկատմամբ այլ ոչ ընթացիկ պահանջներից եկամուտներ», 624 «Տոկոսային եկամուտներ այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից»:

Ենթաբաժին 610
«Տոկոսային եկամուտներ բանկերում ներդրված ավանդների գծով»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովագրական ընկերությունների կողմից բանկերում ներդրված ավանդների գծով ստացվելիք տոկոսային եկամուտների հաշվառման համար: Այս ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են եկամուտների ճանաչման ժամանակ՝ թղթակցելով համապատասխան ակտիվային հաշիվների հետ:

Այս բաժնի 611-621 ենթաբաժինների հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 610 ենթաբաժնի դեպքում է:

Ենթաբաժին 621
«Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ»

6210 «Եկամուտ շահաբաժիններից» - այս հաշվում հաշվառվում են այլ անձանց կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվելիք շահաբաժինները:

Տես 160 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6211 «Ռեզիդենտ համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է համատեղ վերահսկվող միավորների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերության ունեցած բաժնեմասը: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 31 ստանդարտի:

6213 «Ռեզիդենտ ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է ասոցիացված կազմակերպությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերության ունեցած բաժնեմասը: Տես 240 ենթաբաժնի մեկնաբանությունը:

6215 «Ռեզիդենտ դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս» - այս հաշվում հաշվառվում է դուստր ընկերությունների կողմից ստացված շահույթներում կամ վնասներում ընկերությունների ունեցած բաժնեմասը: Տես 240 ենթաբաժնի մեկնաբանությունը:

Ենթաբաժին 622
«Այլ անձանց նկատմամբ այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվներում հաշվառվում են դուստր, ասոցիացված ընկերությունների, համատեղ վերահսկվող միավորների նկատմամբ այլ ընթացիկ պահանջների գծով եկամուտները: Հաշիվները կրեդիտագրվում են պահանջների գծով եկամուտների ճանաչման ժամանակ՝ թղթակցելով 161 ենթաբաժնի հաշիվների հետ:

Ենթաբաժին 623
«Այլ անձանց նկատմամբ այլ ոչ ընթացիկ պահանջներից եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 622 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 63
«Կորուստների վերականգնում (փոխհատուցում)

ԵՆԹԱԲԱԺԻՆ 630
«Կորուստների վերականգնում»

6300 «Ավանդների և փոխառությունների գծով կորուստների հակադարձումից եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են ավանդների և փոխառությունների կորուստների վերականգնումը և/կամ ընկերության հաշվեկշռից դուրս գրված ավանդների կամ դրանց մի մասի փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով ավանդների գծով պահուստաֆոնդի հաշվի հետ.

Դտ- 126, 216,

Կտ –6300:

6301 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով կորուստների հակադարձումից եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների վերականգնումը և/կամ ընկերության հաշվեկշռից դուրս գրված դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստների հետ.

Դտ 176,

Կտ 6301:

6302 «Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների գծով կորուստների հակադարձումից եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի վերականգնումը և/կամ ընկերության հաշվեկշռից դուրս գրված արժեթղթերի փոխհատուցումից ստացված միջոցները: Հաշիվը կրեդիտագրվում է՝ թղթակցելով մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի արժեզրկման կորուստների պահուստների հետ.

Դտ- 156, 236,

Կտ- 6302:

6303 «Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով հնարավոր կորուստների հակադարձումից եկամուտներ» - այս հաշիվը թղթակցում է 243 ենթաբաժնի հաշիվների հետ:

6304 «Ստացվելիք այլ փոխհատուցումների գծով եկամուտներ» - այս հաշիվը թղթակցում է 116, 117 ենթաբաժինների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 64
«Եկամուտներ տեխնիկական պահուստների գծով»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 640 «Եկամուտներ տեխնիկական պահուստների հակադարձումից», 641 «Եկամուտներ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով»:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 640

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են տեխնիկական պահուստների հակադարձումից եկամուտների և տեխնիկական պահուստներից վերաապահովագրողի բաժնի նվազեցման գծով եկամուտների հաշվառման համար:

6400 «Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի գծով» - այս հաշվում հաշվառվում է ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձման գումարը:

Մասնավորապես, չվաստակած ապահովագրավճարների պահուստը հակադարձելիս ձևակերպվում է.

Դտ-350,

Կտ-6400:

6400 հաշվի մնացորդը եկամուտներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ-6400,

Կտ-530:

6401, 6402 և 6403 հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 6400 հաշվինը:

Ենթաբաժին 641
«Եկամուտներ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով»

6410 «Ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտներ» - այս հաշվում արտացոլվում են ռեզիդենտների հետ կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորած չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման եկամուտները:

Արտացոլման ենթակա եկամտի գումարի չափով ձևակերպվում է.

Դտ- 113 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ- 641 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

Եկամտի վերագրումը ֆինանսական արդյունքներին.

Դտ-641 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ-530:

ԲԱԺԻՆ 65
«Այլ եկամուտներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 650 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ», 651 «Ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ», 652 «Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ», 653 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից եկամուտներ և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ», 654 «Ֆինանսական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ», 655 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ», 656 «Այլ եկամուտներ», 657-658 «Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ»:

Ենթաբաժին 650
«Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների և այլ ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից եկամուտների հաշվառման համար: Ենթաբաժնի հաշիվները կրեդիտագրվում են վաճառքի գնի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերության չափով՝ դեբետագրելով դրամական միջոցների, դեբիտորական պարտքերի հաշիվները:

Ենթաբաժին 651
«Ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ընթացիկ ֆինանսական և այլ ակտիվների վաճառքից ստացվող եկամուտների հաշվառման համար: Ենթաբաժնի հաշիվների հաշվառման սկզբունքները նույնն են, ինչ որ 650 ենթաբաժնի հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 652
«Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարումից (վաճառքից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության ընդհատվող գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքից և պարտավորությունների մարումից ստացվող եկամուտների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 35 ստանդարտի:

Ենթաբաժին 653
«Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից եկամուտներ և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»

Այս ենթաբաժնի հաշիվների հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 16-ի, ՀՀՀՀՍ 36-ի, ՀՀՀՀՍ 38-ի:

Ենթաբաժին 654
«Ֆինանսական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման կորուստի հակադարձումից եկամուտներ»

6540 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից եկամուտներ» - այս հաշվում հաշվառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Հաշիվը կիրառվում է այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ վաճառքի համար նախատեսված արժեթղթերի վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Այդ գումարներով դեբետագրվում են 14, 22 բաժինների համապատասխան հաշիվները՝ թղթակցելով 6540 հաշվի կրեդիտի հետ:

6541 «Առևտրական նպատակով պահվող ակտիվների վերագնահատումից եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների վերագնահատման դրական տարբերությունը: Այդ գումարներով դեբետագրվում են 13 բաժնի համապատասխան հաշիվները՝ թղթակցելով 6541 հաշվի կրեդիտի հետ:

Ենթաբաժին 655
«Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ»

6550 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից արտարժույթով ակտիվների՝ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով վերահաշվարկներից ստացված եկամուտները:

Ենթաբաժին 657-658
«Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բանկերի, ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների, այլ ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ֆինանսական ակտիվների, ինչպես նաև այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից եկամուտների արտացոլման համար:

ԲԱԺԻՆ 67
«Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ»

Ենթաբաժին 670
«Նախորդ ժամանակաշրջանի եկամուտներ»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած՝ նախորդ տարիների եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԴԱՍ 7. ԾԱԽՍԵՐ

ԲԱԺԻՆ 70
«Ապահովագրության հետ կապված ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 700 «Ոչ կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի հետ կապված ծախսեր», 701 «Կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի հետ

կապված ծախսեր», 702 «Ոչ կյանքի համաապահովագրության գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր», 703 «Կյանքի համաապահովագրության գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր», 704 «Ոչ կյանքի վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումների գծով ծախսեր», 705 «Կյանքի վերաապահովագրությամբ ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ», 706 «Վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր», 707 «Դադարեցված ապահովագրական պայմանագրերի գծով ծախսեր», 708 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»:

Ենթաբաժին 700
«Ոչ կյանքի ուղղակի ապահովագրական պայմանագրերի հետ կապված ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ապահովադիրներին վճարվելիք հատուցումների, ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների և ապահովագրության հետ կապված ծախսերի հաշվառման հետ:

Վճարվելիք հատուցումների գումարով ձևակերպվում է.

Դտ- 700,

Կտ- 300:

Ծախսերը ֆինանսական արդյունքներին վերագրելիս ձևակերպվում է.

Դտ-530,

Կտ-700:

Այս բաժնի 701-705 ենթաբաժինների հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 700 ենթաբաժնի հաշիվների դեպքում է:

Ենթաբաժին 706
«Վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից կնքված վերաապահովագրական պայմանագրերի հիման վրա վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսերի հաշվառման համար:

Փոխանցվելիք ապահովագրավճարների գումարով ձևակերպվում է.

Դտ- 706 ենթաբաժնի հաշիվներ

Կտ- 312, 313 ենթաբաժինների հաշիվներ:

Ծախսերը ֆինանսական արդյունքներին վերագրելիս.

Դտ-530

Կտ-706:

Ենթաբաժին 708
«Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է հետաձգված ձեռքբերման ծախսերի և ապագա ժամանակաշրջանի ծախսերի նվազեցումները արտացոլելու համար հետևյալ թղթակցումներով.

Դտ - 708 ենթաբաժնի համապատասխան հաշիվ,

Կտ - 117 ենթաբաժնի համապատասխան հաշիվ:

ԲԱԺԻՆ 71
«Պահուստների հետ կապված ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 710 «Տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր», 711 «Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր»:

Ենթաբաժին 710
«Տեխնիկական պահուստների ձևավորման ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են տեխնիկական պահուստների ձևավորման ծախսերի հաշվառման համար: Հաշիվները դեբետագրվում են պահուստների ձևավորման ժամանակ, կրեդիտագրվում են ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

Չևավորման ենթակա պահուստի մեծության կամ արտացոլման ենթակա պահուստի և արդեն ձևավորած պահուստի մեծության տարբերության գումարով ձևակերպվում է.

Դտ- 710,

Կտ-350:

Պահուստի ձևավորման ծախսերը ֆինանսական արդյունքին վերագրելիս.

Դտ- 530

Կտ-710:

Ենթաբաժին 711
«Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսերը արտացոլելու համար՝ հետևյալ թղթակցումներով.

Դտ – 711,

Կտ - 113:

Վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման ծախսերը ֆինանսական արդյունքին վերագրելիս.

Դտ- 530,

Կտ-711:

ԲԱԺԻՆ 72
«Տոկոսային ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 720 «Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով», 721 «Տոկոսային ծախսեր բանկերից ստացված վարկերի դիմաց», 722 «Տոկոսային ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով», 723 «Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքած ռեպո համաձայնագրերի գծով», 724 «Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց», 725 «Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրավված փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց», 726 «Տոկոսային ծախսեր գանձապետարանից ստացված վարկերի դիմաց», 727 «Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով», 728 «Այլ տոկոսային ծախսեր», 729 «Ֆինանսական վարձակալության գծով ֆինանսական ծախսեր»:

Այս բաժնի ենթաբաժինների հաշիվները նախատեսված են տոկոսային ծախսերի հաշվառման համար և դեբետագրվում են ծախսերի առաջացման ժամանակ, կրեդիտագրվում՝ դրանք ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

ԲԱԺԻՆ 73
«Կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 730 «Ծախսեր անձնակազմի գծով», 731-732 «Կառավարչական ծախսեր», 733 «Հասարակական կապերի գծով ծախսեր», 734 «Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր», 735 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր», 736 «Այլ ծախսեր»:

Ենթաբաժին 730
«Ծախսեր անձնակազմի գծով»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության հիմնական և պայմանագրային աշխատողներին տրվող աշխատավարձի, պարգևատրումների և լրավճարների, արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումների, անձնակազմի ուսուցման և անձնակազմի սպասարկման այլ ծախսերը, ինչպես նաև սոցիալական ապահովագրության գծով հատկացումները: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համապատասխան հաշիվների հետ:

Ենթաբաժին 731-732
«Կառավարչական ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության կողմից շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության, շենքի, սարքավորումների ու փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման, անվտանգության ապահովման, աուդիտի և այլ փոխհատուցվող հարկերի ու տուրքերի, վարկերի տրամադրման և վերադարձման, գործուղումների, գրասենյակային, ապահովագրության, կազմակերպչական (այսինքն՝ ընկերության կողմից կատարված այն ծախսերը, որոնք կատարվել են ընկերության գրանցման և կազմակերպման ընթացքում) և այլ կառավարչական ծախսերը: Այս ենթաբաժնի հաշիվները թղթակցում են դեբիտորների և կրեդիտորների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 733
«Հասարակական կապերի գծով ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են գովազդի, հասարակական կապերի անդամավճարների և ընկերության ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները թղթակցում են ակտիվների և պարտավորությունների համապատասխան հաշիվների կամ դրամական միջոցների հաշիվների հետ:

Ենթաբաժին 734
«Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը, ինչպես նաև ֆինանսական լիզինգի պայմանագրի համաձայն ընկերության տիրապետության տակ գտնվող հիմնական միջոցների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 201 «Հիմնական միջոցների ամորտիզացիա» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ: Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն այդ միջոցների օգտակար տևողության վրա՝ հաշվի առնելով հաշվարկված մնացորդային արժեքը, եթե սեփականության իրավունքը պետք է փոխանցվի ընկերությանը վարձակալության ժամկետի ավարտից հետո: Եթե այդ իրավունքը հետ է վերադարձվում վարձատուին, ապա ամորտիզացիոն ծախսերը պետք է հիմնվեն վարձակալության ժամանակաշրջանի վրա, եթե այն ավելի կարճ է, քան կապիտալիզացված ակտիվի հաշվարկված օգտակար տևողությունը: Կիրառվող ամորտիզացիոն մեթոդը պետք է համապատասխանի ընկերության կողմից ընդունված ամորտիզացիոն քաղաքականությանը:

Ենթաբաժին 735
«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը: Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսերը հաշվեգրելիս՝ թղթակցելով 203 «Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա» ենթաբաժնի համապատասխան հաշիվների հետ:

Ենթաբաժին 736
«Այլ ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են արժեթղթերի թողարկման գծով ծախսերի, տուգանքների, տույժերի գծով ծախսերի և նաև այն ծախսերի հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԲԱԺԻՆ 74
«Այլ ծախսեր»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները. 740 «Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) ծախսեր, 741 «Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր», 742 «Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման

(վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր», 743 «Նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից ծախսեր», 744 «Ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր», 745 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր», 746-747 «Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից ծախսեր», 749 «Այլ ծախսեր»:

Ենթաբաժին 740
«Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների, այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից ծախսերի հաշվառման համար:

7401 «Հիմնական միջոցների օտարումից (վաճառքից) ծախսեր» - Հիմնական միջոցների օտարումից կորուստները հաշվարկվում են որպես վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի միջև եղած բացասական տարբերություն: Հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես ձեռքբերման արժեքի, հաշվարկված ամորտիզացիայի, արժեզրկումից կորուստների տարբերություն՝ օտարման օրվա դրությամբ: Եթե ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5110 «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշվից՝ թղթակցելով 5301 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնաս» հաշվի հետ:

7402 «Ոչ նյութական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր» - այս հաշվում արտացոլվում է ոչ նյութական ակտիվի վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը: հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 7401 հաշվի հաշվառումը:

7403 «Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) ծախսեր» - այս հաշվում հաշվառվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը:

Եթե վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվը նախկինում վերագնահատվել է, ապա վերագնահատման հաշվարկված գումարը դուրս է գրվում 5112 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվից՝ գրանցվելով եկամուտների և ծախսերի հաշվետվությունում՝ որպես իրացված շահույթ կամ վնաս:

7404-7406 հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ սույն ենթաբաժնի մյուս հաշիվների հաշվառումը:

Ենթաբաժին 741
«Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսերի արտացոլման համար: Հաշիվները դեբետագրվում են պարտավորությունների առաջացման ժամանակ՝ թղթակցելով 366 հաշվի հաշիվների հետ, կրեդիտագրվում են դրանք ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

Ենթաբաժին 742
«Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների օտարման (վաճառքի) և պարտավորությունների մարման ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության ընդհատվող գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքից և պարտավորությունների մարումից ծախսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՀՀՍ 35 ստանդարտի:

Ենթաբաժին 743
«Նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից կորուստներ»

Այս հաշվում հաշվառվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկումից առաջացած կորուստները: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 16-ի, ՀՀՀՀՍ 38 և ՀՀՀՀՍ 36-ի համաձայն, ընդ որում, որևէ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վերագնահատման դեպքում վերագնահատվում են տվյալ դասի բոլոր հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները: Վերագնա-

հատման արդյունքում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի նվազումը դեբետագրվում է 7430 հաշվին: Եթե նախկինում այդ հիմնական միջոցը վերագնահատվել է, և արդյունքը կրեդիտագրվել է «Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ» հաշվին, ապա նվազման գումարը դուրս է գրվում այդ հաշվից:

Ենթաբաժին 744
«Ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ֆինանսական ակտիվների վերագնահատումից ծախսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՀՀՍ 39-ի համաձայն: Վաճառքի համար մատչելի արժեթղթերի համար այս ենթաբաժնի հաշիվները կիրառվում են այն դեպքում, եթե ընտրվել է ստանդարտի այն մոտեցումը, ըստ որի՝ այս ակտիվների վերագնահատումները գրանցվում են ֆինանսական արդյունքներում: Հաշվում գրանցվում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ճշգրտումները՝ որպես հաշվեկշռային արժեքի և վերջին իրական արժեքի միջև տարբերություն: Այս ճշգրտումներն արտացոլվում են 14, 22 բաժինների համապատասխան հաշիվներում:

Ենթաբաժին 745
«Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր»

7450 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր» - այս հաշվում հաշվառվում են ապահովագրական ընկերության կողմից արտարժույթով ակտիվների՝ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով վերահաշվարկներից ստացված ծախսերը:

Ենթաբաժին 746-747
«Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ակտիվների և այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է ապահովագրական ընկերության կողմից բանկերի, ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների, այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ֆինանսական ակտիվների, ինչպես նաև այլ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների վերագնահատումից ծախսերի արտացոլման համար: Հաշիվները դեբետագրվում են վերագնահատումից ծախսերի առաջացման ժամանակ, կրեդիտագրվում՝ ծախսերը ֆինանսական արդյունքներին վերագրելիս:

ԲԱԺԻՆ 75
«Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ»

Ենթաբաժին 750
«Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ»

Այս ենթաբաժնի հաշիվները նախատեսված են ավանդների, փոխառությունների, մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի, այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների և նրանց նկատմամբ այլ պահանջների հնարավոր կորուստների գծով պահուստներին կատարվող հատկացումների հաշվառման համար:

Հնարավոր կորուստների գումարով ձևակերպվում է.

Դտ-750,

Կտ-119, , 126, 156, 216, 236, 243:

ԲԱԺԻՆ 77
«Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր»

Ենթաբաժին 770
«Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր»

Այս ենթաբաժինը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահա-

կան հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե ընկերությունն ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 78
«Շահութահարկի գծով ծախս»

ԵՆԹԱԲԱԺԻՆ 781
«Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

Այս ենթաբաժնում հաշվառվում են շահութահարկի գծով ընթացիկ և հետաձգված ծախսերը (փոխհատուցումները): Շահութահարկի հաշվառումը նկարագրված է ՀՀՀՀՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԴԱՍ 8. ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 80
«Արտահաշվեկշռային հաշիվներ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 800 «Որպես գրավ պահվող ակտիվներ», 801 «Գրավադրված ակտիվներ», 802 «Վարձակալություն», 803 «Պայմանական ակտիվներ», 804 «Պայմանական պարտավորություններ», 805 «Ապահովագրական գումարներ», 806 «Այլ արտահաշվեկշռային հաշիվներ»:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 800
«Որպես գրավ պահվող ակտիվներ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության կողմից տրամադրված փոխառությունների դիմաց ստացված գրավները: Այս հաշիվներից դրանք դուրս են գրվում, երբ փոխառությունները մարվում են, կամ գրավը իրացվում է:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 801
«Գրավադրված ակտիվներ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են ընկերության այն ակտիվները, որոնք տրամադրվել են որպես գրավ վարկեր, փոխառություններ ներգրավելիս: Այս հաշիվներում հաշվառվող գումարները դուրս են գրվում, երբ ընկերությունը մարում է դրանցով ապահովված վարկերն ու փոխառությունները կամ կորցնում է դրանց նկատմամբ սեփականության իրավունքը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 802
«Վարձակալություն»

Այս բաժնում հաշվառվում են ընկերությունների կողմից գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվները իրական արժեքով:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 803
«Պայմանական ակտիվներ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են փոխառությունների դիմաց ստացված երաշխավորությունները, երաշխիքները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխավորությամբ, երաշխիքներով տրված փոխատվությունների մարման կամ երաշխավորությունների, երաշխիքների դիմաց վճարում ստանալիս:

Ենթաբաժին 804
«Պայմանական պարտավորություններ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են տրամադրված երաշխավորությունների գումարները: Այստեղ հաշվառվող գումարները դուրս են գրվում այն դեպքում, երբ այն պարտավորությունները, որոնց համար տրված են այդ երաշխավորությունները, մարվել են, կամ երաշխավորությունների մարման դեպքում:»:

Ենթաբաժին 805
«Ապահովագրական գումարներ»

Այս ենթաբաժնում հաշվառվում են կնքված ապահովագրական պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարները: Այս հաշիվներից գումարները դուրս են գրվում, ապահովագրական պայմանագրերի գործողության ժամկետի ավարտի, պայմանագրի վաղաժամկետ լուծման և այն բոլոր դեպքերում, երբ դադարում է ապահովագրական պայմանագրով նախատեսված պարտավորությունը:

Ենթաբաժին 806
«Այլ արտահաշվեկշռային հաշիվներ»

Այս ենթաբաժնում արտացոլվում են այն հաշիվները, որոնց համար արտահաշվեկշռի առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցի 4-րդ կետը լրացնել 4.4 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.4 Օպերատորը Հայաստանի Հանրապետությունում ծառայություններ է մատուցելու (մատուցում է) միայն մեկ հայաստանյան մասնակցի միջոցով կամ օպերատորը այլ երկրների համեմատ անհավասար պայմաններ է սահմանում (ստեղծում) համակարգին հայաստանյան մասնակիցների մասնակցության համար կամ օպերատորը մասնակցության անհավասար պայմաններ է սահմանում տարբեր հայաստան-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.12.2010 թ. (ՀՀՊՏ N29 (381), 15.12.2010):

յան մասնակիցների համար կամ օպերատորն իր վարքագծով հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Սույն ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն հայցող (կամ մասնակցող) հայաստանյան մասնակիցը կամ համակարգի օպերատորը կարող է ներկայացնել համապատասխան հիմնավորում սույն ենթակետով սահմանված հիմքերի առկայության անխուսափելիության կամ անհրաժեշտության վերաբերյալ: Այդ հիմնավորումները Կենտրոնական բանկի կողմից ընդունվելու դեպքում սույն ենթակետով նախատեսված հիմքերը չեն համարվի արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում հայաստանյան մասնակցի մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությանը և (կամ) իրացվելիությանը և (կամ) վճարունակությանը վտանգող հիմքեր:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 նոյեմբերի 2010 թ., N302-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 296-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը և 20-րդ հոդվածի «իդ» կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշմամբ հաստատված ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ում» (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետը «վրա» բառից հետո լրացնել «, (այսուհետ՝ հայաստանյան մասնակից) բառերով,

2) Կանոնակարգի 5-րդ կետը 3-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության ընդհանուր նկարագրությունում մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պարունակի համակարգի օպերատորի կողմից սահմանված մասնակիցների մասնակցության չափանիշները: Հայաստանյան մասնակիցների նկատմամբ մասնակցության առանձնահատուկ պայմանների առկայության դեպքում պետք է հստակ նկարագրված լինեն այդ համակարգին հայաստանյան մասնակիցների մասնակցության՝ համակարգի օպերատորի կողմից սահմանված քաղաքականությունը և չափանիշները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 նոյեմբերի 2010 թ., N302/1-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.12.2010 թ. (ՀՀՊՏ N29 (381), 15.12.2010):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ծաղիկների գեղեցկությունը» հուշադրամների շարքի «Արոսենի Հայաստանյան» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2011 թվականի հունվարի 12-ից շրջանառության մեջ դնել «Արոսենի Հայաստանյան» արծաթե հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 նոյեմբերի 2010 թ., N308-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի նոյեմբերի 23-ի
թիվ 308-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Արոսենի Հայաստանյան» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Ծաղիկների գեղեցկությունը» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Արոսենի Հայաստանյան» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսի աջ հատվածում պատկերված են արոսենու ծաղիկը և թողարկման տարեթիվը՝ «2011»: Ամբողջ մակերեսով տեղադրված է գունավոր ոճավորված պատկեր, որի մեջտեղում գտնվում են արոսենու պտուղները: Դիմերեսի վերևի և ներքևի կիսաշրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»: Հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»՝ տեղադրված է ներքևի հատվածում:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են արոսենու տերևն ու պտուղները: Աջ հատվածի պատկերի մի մասը ավարտվում է հուշադրամի դիմերեսին: Դարձերեսի եզրով հայերեն և լատիներեն մակագրված է ծաղկի անվանումը՝ «ԱՐՈՍԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ» և «Sorbus hajastana»: Դարձերեսի ներքևի աջ հատվածում նշված են հուշադրամի մետաղը և հարգը՝ «Ag 925»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Մայեր դրամահատարանում (Գերմանիա):

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀԳՏ N30 (382)[1], 21.12.2010):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ.
Տրամագիծը	38,61 մմ.
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Թողարկման տարեթիվը	2011
Տպաքանակը	մինչև 10000 հատ

1.2. «Արոսենի Հայաստանյան» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը, 103-րդ հոդվածը «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և 70-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկե-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.12.2010 թ. (ՀՀՊՏ N31 (383), 29.12.2010):

րության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձեւը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության եւ ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության եւ որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման եւ որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/01-ի 103-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը լրացնել «դ» պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«դ. փաստաթուղթ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց կողմից ապահովագրության մասին դասընթացի ավարտման վերաբերյալ կամ ապահովագրական ընկերության (որի հետ աշխատելու է իրավաբանական անձ գործակալը) պատշաճ ձևով տրված հայտարարություն այն մասին, որ գործակալի գործառույթներ իրականացնող անձինք բավարարում են գիտելիքների հետևյալ պահանջներին.

1. ապահովագրության հիմնական սկզբունքների իմացություն,
2. ապահովագրության այն դասի կամ ենթադասի բնույթի իմացություն, որի գծով իրականացվում է միջնորդությունը,
3. ապահովագրության պայմանագրերի կնքման գործընթացի իմացություն,
4. ապահովագրության պայմանագրի պայմանների իմացություն՝ ներառյալ ապահովագրական պատահարների, պայմանագրին վերաբերող սահմանափակումների և բացառությունների,
5. ապահովագրական ծածկույթի որոշման սկզբունքների իմացություն,
6. ապահովագրավճարի վրա ազդող գործոնների իմացություն,
7. ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցման վճարման սկզբունքների իմացություն,
8. ապահովագրության պայմանագրերը կարգավորող օրենսդրության իմացություն»,

բ. 2.1 ենթակետը լրացնել «դ», «ե» պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«դ. ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը, որում պետք է նշված լինեն, թե «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված որ գործառնություններն են թույլատրված գործակալին, որ ապահովագրության դասի գծով, իսկ 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնության դեպքում՝ նաև գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ ապահովագրական ընկերության կողմից թույլատրված չափերը,

ե. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը:

2) Կանոնակարգ 3/01-ի 104.1-րդ կետում «գրանցվելու» բառը փոխարինել «հաշվառվելու» բառով:

3) Կանոնակարգ 3/01-ի 112-րդ կետը «ֆիզիկական անձ» բառերից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատեր» բառերով:

4) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 2ե-ում՝

ա. «ստորագրությունը» բառից հետո լրացնել. «, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը»,

բ. «գործունեության կամ գրանցման հասցեն» բառերը փոխարինել «հաշվառման վայրը, ինչպես նաև գործունեության վայրը (մարզ, բնակավայր (քաղաք կամ գյուղ)) բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2010 թ., N315-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 408-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը, 54-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի ««Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը հաստատելու մասին» թիվ 408 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/07) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2 կետում՝

ա. 2-րդ ենթակետում «գնահատումը:» բառը փոխարինել «գնահատումը,» բառով,

բ. լրացնել 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.12.2010 թ. (ՀՀՊՏ N31 (383), 29.12.2010):

2) Կանոնակարգը լրացնել 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1 Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ գլուխներով սահմանված պահանջները չեն տարածվում Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնին ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության գործառույթի պատվիրակման նկատմամբ: Սույն կետով նախատեսված պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը սույն կանոնակարգի ուժով համարվում է տրված:»:

3) Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում՝

ա. «ա» պարբերությունում «ձև 2» բառերը փոխարինել «Հավելված 2-ի» բառերով,

բ. հանել «բ» և «ե» պարբերությունները,

4) Կանոնակարգը լրացնել 8-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Ապահովագրական ընկերությունը կոնտրագենտի հետ ապահովագրական գործառույթի պատվիրակման պայմանագրի դադարեցման դեպքում պայմանագիրը դադարեցնելուց հետո 3 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին:»:

5) Կանոնակարգի Հավելվածի Չև 1-ում ֚«ապահովագրության օբյեկտի զննումը և (կամ) դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու հնարավորության գնահատումը.» տողից հետո լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ. ֚«ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը.»:

6) Կանոնակարգի «Չև 1 «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը Հավելվածի» բառերը փոխարինել «Հավելված 1 «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը Հավելվածի» բառերով:

7) Կանոնակարգի «Չև 2 «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը Հավելվածի» բառերը փոխարինել «Հավելված 2 «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը Հավելվածի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2010 թ., N316-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/03) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 4/03-ի 4-րդ կետի աղյուսակի 19-րդ կետի 2-րդ սյունակում «և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների» բառերը փոխարինել «վճարի» բառով:

2) Կանոնակարգ 4/03-ի 20-րդ կետում «տարեկան պետական տուրքի վճարման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետին» բառերը փոխարինել «հաշվետու ժամանակաշրջանին» բառերով:

3) Կանոնակարգ 4/03-ի 40-րդ կետը «նվազեցման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նախկինում ներկայացված տեղեկություններում այլ փոփոխությունների» բառերով:

4) Կանոնակարգ 4/03-ի 41-րդ կետը լրացնել 11-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում կանոնադրական կապիտալի ձևավորման դեպքում նշվում է «կապիտալի ձևավորում», կանոնադրական կապիտալի համալրման դեպքում՝ «կապիտալի համալրում», նվազեցման դեպքում՝ «կապիտալի նվազեցում», այլ փոփոխությունների դեպքում «այլ փոփոխություն»:»:

5) Կանոնակարգ 4/03-ի 5-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հաշվետվական ձևը ներկայացնում են նաև այն ներդրումային ընկերությունները, որոնք չեն մատուցում սույն ենթակետով սահմանված ծառայությունները, սակայն իրենց անունից և իրենց հաշվին կատարում են արժեթղթերով գործարքներ, որը կրում է ոչ պարբերական բնույթ և չի կազմում տվյալ ներդրումային ընկերության հիմնական գործունեության մաս,»:

6) Կանոնակարգ 4/03-ի 49-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«49. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ը կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ)) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից): Ընդ որում, սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-ից 15-րդ աղյուսակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության աղյուսակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել: Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով կնքվել են գործարքները:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. դեկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀԳՏ N30 (382)[1], 21.12.2010):

7) Կանոնակարգ 4/03-ը լրացնել 49.1-րդ, 49.2-րդ, 49.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«49.1. Թիվ 6 հաշվետվությունը չի ներկայացվում մարման գործարքների համար:

49.2. Թիվ 6 հաշվետվության համաձայն բոլոր թվերը կլորացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

49.3. Սույն հաշվետվությամբ ներկայացվում են ածանցյալ գործիք համարվող այն սվոփ գործարքները, որոնց հաշվառումն իրականացվում է համաձայն «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՖՀՄՍ 39-ի:»:

8) Կանոնակարգ 4/03-ի 51-րդ կետում «17» թիվը փոխարինել «16» թվով:

9) Կանոնակարգ 4/03-ի 52-րդ կետի 8-րդ ենթակետից հանել «՝ ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ» բառերը, ինչպես նաև 8-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում, տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կնքման (գործարքի պայմանների փոփոխության) օրվա դրությամբ:»:

10) Կանոնակարգ 4/03-ի 52-րդ կետը լրացնել 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) ***«Գործարքի նույնականացուցիչ համարը»*** սյունակում նշվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը:

12) ***«Գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:

13) ***«Փոփոխված գործարքի ամսաթիվը»*** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:

14) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ»:»:

11) Կանոնակարգ 4/03-ի 55-րդ կետում «երկարաձգված և կրճատված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների,» բառերը փոխարինել «և (կամ) փոփոխված գործարքների» բառերով:

12) Կանոնակարգ 4/03-ի 56-րդ կետի 1.1-րդ, 2-րդ և 3-րդ ենթակետերը, 57-րդ և 58-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

13) Կանոնակարգ 4/03-ի 56-րդ կետի 5-րդ ենթակետում «հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ընդ որում, ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում» բառերը փոխարինել «սյունակում» բառով, իսկ 6-րդ ենթակետից հանել «՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ» բառերը:

14) Կանոնակարգ 4/03-ի 59-րդ, 61-րդ, 63-րդ, 65-րդ և 67-րդ կետերը «գործարքների» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ փոփոխված գործարքների)» բառերով:

15) Կանոնակարգ 4/03-ի 68-րդ կետում «օպցիոնների» բառը փոխարինել «օպցիոն գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների)» բառերով:

16) Կանոնակարգ 4/03-ի 70-րդ կետում «սվոփերի» բառը փոխարինել «սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների)» բառերով:

17) Կանոնակարգ 4/03-ի 71-րդ կետը լրացնել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) ***«Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ / տրամադրման սվոփ)»*** սյունակում սվոփի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոփ», իսկ սվոփի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոփ»:

4) ***«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):

5) ***«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»*** սյունակի ***«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»*** ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ ***«Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը»*** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):

6) ***«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է սփոթ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

7) ***«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»*** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:»:

18) Կանոնակարգ 4/03-ի 71-րդ կետի 4-րդ պարբերությունը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «60.1.-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով սվոփի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք է ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները:»:

19) Կանոնակարգ 4/03-ի 82-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Միջին փոխարժեք» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված առքի (վաճառքի) գործարքների միջին փոխարժեքը (փոխարժեքների միջին թվաբանականը)՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով:

20) Կանոնակարգ 4/03-ի ԳԼՈՒԽ 19-ի վերնագրում «ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕԳՏԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՎՃԱՐԻ» բառով:

21) Կանոնակարգ 4/03-ի 129-րդ կետում «Թիվ 19 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից: Առաջին աղյուսակում» բառերը փոխարինել «Թիվ 19 հաշվետվությունում» բառերով:

22) Կանոնակարգ 4/03-ի 130-րդ կետից հանել «1-ին աղյուսակի» բառերը:

23) Կանոնակարգ 4/03-ի 131-րդ և 132-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

24) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 2-րդ աղյուսակում «Ռեպո գործարքի բնույթը» բառերը փոխարինել «Գործարքի բնույթը» բառերով:

25) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 3-րդ աղյուսակն ուժը կորցրած ճանաչել:

26) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 2-րդ աղյուսակից հանել «Միավոր արժեթղթի գինը» և «Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը» սյունակները:

27) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 2-րդից մինչև 12-րդ և 15-րդ աղյուսակները «Ում անունից է գործարքը կնքվել» սյունակից հետո լրացնել նոր սյունակով՝ «Գործարքի նույնականացուցիչ համարը» վերնագրով, իսկ 4-րդից մինչև 12-րդ և 15-րդ աղյուսակները՝ նաև «Գործարքի բնույթը» վերնագրով սյունակով:

28) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 2-րդ աղյուսակի և 4-րդից մինչև 12-րդ և 15-րդ աղյուսակները «Գործարքի կնքման ամսաթիվը» սյունակից հետո լրացնել նոր սյունակով՝ «Փոփոխված գործարքի ամսաթիվը» վերնագրով:

29) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 10-րդ, 11-րդ և 12-րդ աղյուսակներից հանել «Օպցիոնի իրականացման» սյունակի «ամսաթիվը» և «ժամանակաշրջանը» ենթասյունակները, իսկ «Օպցիոնի իրականացման» բառերը փոխարինել «Օպցիոնի իրականացման ամսաթիվը» բառերով:

30) Կանոնակարգ 4/03-ի 4-րդ հավելվածը լրացնել նոր սյունակով՝ «Գործարքի բնույթը» վերնագրով:

31) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ հավելվածի 13-րդ և 14-րդ աղյուսակները հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար հավելված 1-ի և հավելված 2-ի:

32) Կանոնակարգ 4/03-ի 20-րդ հավելվածում.

ա. վերնագրում «ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕԳՏԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՎՃԱՐԻ» բառով,

բ. հանել «Աղյուսակ 1.» բառերը,

գ. 2-րդ աղյուսակն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի փետրվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

14 դեկտեմբերի 2010 թ., N324-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ հոդվածը և 207-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին» թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 8-16-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) ***«Վարկային ռեսուրս»***՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով արտահայտված դրամական այն միջոցները, որոնք Շուկայի մի մասնակիցը որոշակի ժամկետով և տոկոսադրույքով Օպերատորի կանոններով սահմանված կարգով որպես փոխառություն նախատեսում է տրամադրել Շուկայի այլ մասնակցի:

9) ***«Ռեպո գործարք»***՝ արժեթղթերի վաճառքի (առքի) գործարքը՝ հետգնման (հետ վաճառելու) պայմանով:

10) ***«Ռեպո-ուղղակի գործարք»***՝ առևտրի մասնակիցների միջև կնքվող ռեպո գործարքի առաջին քայլը, համաձայն որի դրամական միջոցների փոխառուն վաճառում է արժեթղթերը դրամական միջոցների փոխատուին:

11) ***«Ռեպո-հետադարձ գործարք»***՝ առևտրի մասնակիցների միջև կնքվող ռեպո գործարքի երկրորդ քայլը, համաձայն որի՝ դրամական միջոցների փոխառուն հետ է գնում արժեթղթերը դրամական միջոցների փոխատուից:

12) ***«Հասցեական առաջարկ»***՝ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակցի կողմից մեկ այլ կոնկրետ (իրեն հայտնի) առևտրի մասնակցի առևտրային համակարգի միջոցով ուղարկված՝ բաժնային և (կամ) ոչ բաժնային արժեթղթերի առուվաճառքի կամ ռեպո գործարքների կնքման առաջարկ, որի ակցեպտավորման դեպքում առևտրային համակարգում գրանցվում է գործարքի կնքում:

13) ***«Հարթակ»***՝ շուկայի հատված, որի համար Օպերատորի առևտրային համակարգում ստեղծված է համապատասխան միջավայր՝ շուկայի տվյալ հատվածում ֆինանսական գործիքներով կազմակերպվող առևտուրն առանձին չափանիշներին համապատասխան իրականացնելու նպատակով:

14) ***«Արժեթղթի տարեկան արժեկտրոն»***՝ պարտքային արժեթղթի թողարկողի կողմից այդ արժեթղթի սեփականատերերին մինչև արժեթղթի մարման օրը վճարվող տարեկան տոկոսային եկամուտը, որն արտահայտված է տվյալ պարտքային արժեթղթի անվանական արժեքի նկատմամբ տոկոսներով:

15) ***«Զեղչատոկոսային պարտատոմս»***՝ պարտատոմս, որի գծով արժեկտրոնների վճարումներ նախատեսված չեն, և, որը վաճառվում է իր անվանական արժեքից ցածր գնով՝ զեղչով:

16) ***«Վարկային ռեսուրսների շուկայի մասնակից»***՝ այն բանկերը, որոնք Օպերատորի հետ ունեն վարկային ռեսուրսների առևտրին մասնակցության վերաբերյալ գործող պայմանագիր և որոնց Օպերատորի կանոններին համապատասխան թույլատրվել է մասնակցելու վարկային ռեսուրսներով Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀՊՏ N30 (382)[1], 21.12.2010):

2) Կանոնակարգի 4-րդ կետում «Հայաստանի ֆոնդային բորսայի» բառերը փոխարինել «կարգավորվող շուկայի օպերատորի» բառերով:

3) Կանոնակարգի 5-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« ԳԼՈՒԽ 5. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

26. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում են կարգավորվող շուկայում բաժնային և (կամ) ոչ բաժնային արժեթղթերով, վարկային ռեսուրսներով կնքված գործարքների և ռեպո գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից): Ընդ որում, սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 3-րդ աղյուսակում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու օրվա) համար: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության 3-րդ աղյուսակում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը» սյունակի, որտեղ լրացվում են առաջնային գործարքի «Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել: Թիվ 6 հաշվետվությունը չի ներկայացվում մարման գործարքների համար:

27. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակից:

27.1 Թիվ 6 հաշվետվության առաջին աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը**:**

2) ***«Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ գործարքին տրված կոդը:

3) **«Գործարքի առարկա արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում): Տարբերակիչ ծածկագիր և պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է Օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:

4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:

5) ***«Գործարքի առարկա արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքով գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը հատերով, ընդ որում, ծավալային արժեթղթերի (արժեթղթեր, որոնք չունեն քանակ, այլ միայն ծավալ, մասնավորապես՝ պետական արժեթղթերը) համար սույն սյունակը չի լրացվում:

6) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առուվաճառքի (տեղաբաշխման հարթակում գործարքների կնքման դեպքում՝ տեղաբաշխման) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

7) ***«Գործարքի ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի և գործարքի առարկա արժեթղթերի քանակի արտադրյալը: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:

8) ***«Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և(կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Սույն ենթակետում նշված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ:

9) ***«Արժեթղթի տարեկան արժեկտրոնը (%)՝ առկայության դեպքում»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի առարկա արժեթղթի գծով վճարվող տարեկան արժեկտրոնը (առկայության դեպքում) տոկոսներով՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ, ընդ որում, զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում՝ այս սյունակում լրացվում է «0»:

10) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ:

11) ***«Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը»*** սյունակի ***«գնորդ»*** և ***«վաճառող»*** ենթասյունակներում համապատասխանաբար լրացվում են տվյալ գործարքի ներքո արժեթղթի գնորդին և վաճառողին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդերը:

12) ***«Գնորդը ում հաշվին է գործարքը կնքել» կամ «Վաճառողը ում հաշվին է գործարքը կնքել»*** սյունակներում նշվում է «հաճախորդի հաշվին» կամ «իր հաշվին»:

13) ***«Շուկայի տեսակը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի կողմից Օրենքով և իր կանոններով սահմանված կարգով կազմակերպվող այն շուկայի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է:

14) ***«Շուկայի հարթակը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի կողմից կազմակերպվող շուկայի այն հարթակի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է:

27.2 Թիվ 6 հաշվետվության երկրորդ աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը**:**

2) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ:

3) ***«Վարկային ռեսուրսի հապավումը»*** սյունակում լրացվում է օպերատորի կողմից վարկային ռեսուրսին տրված հապավումը:

4) ***«Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ գործարքին տրված կոդը:

5) ***«Գործարքի կատարման օրը (վարկային ռեսուրսի տրամադրման օրը)»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված տվյալ գործարքով նախատեսված վարկային ռեսուրսի փաստացի տրամադրման (վերջնահաշվարկի) օրվա ամսաթիվը:

6) ***«Գործարքի մարման օրը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված տվյալ գործարքով նախատեսված հիմնական (մայր) գումարի և հաշվեգրված տոկոսների հետվճարման (վերջնահաշվարկի) օրը:

7) ***«Հիմնական (մայր) գումարը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված գործարքով տրամադրվող վարկային ռեսուրսի (դրամական միջոցների) գումարը:

8) ***«Տրամադրվող վարկային ռեսուրսների տոկոսագումարները»*** սյունակում լրացվում է Օպերատորի կանոններով սահմանված կարգով հաշվարկված վարկային ռեսուրսի նկատմամբ հաշվեգրվելիք տոկոսների գումարը՝ դրամային արտահայտությամբ: Տոկոսագումարը կլորացվում է 0.1 Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

9) ***«Վարկային ռեսուրսի գինը (տարեկան տոկոսադրույքը)»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսներով կնքված տվյալ գործարքի տարեկան տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

10) ***«Գործարքի կողմ հանդիսացող վարկային ռեսուրսների շուկայի մասնակցին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը»*** սյունակի ***«ներգրավող»*** և ***«տեղաբաշխող»*** ենթասյունակներում համապատասխանաբար լրացվում են տվյալ գործարքի պայմաններին համաձայն վարկային ռեսուրս ստացողին (վարկային ռեսուրսի ներգրավողին) և վարկային ռեսուրս տրամադրողին (վարկային ռեսուրսի տեղաբաշխողին) Օպերատորի կողմից շնորհված կոդերը:

27.3 Թիվ 6 հաշվետվության երրորդ աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում ռեպո գործարքների հարթակում կնքված ռեպո-ուղղակի գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը**:**

2) ***«Ռեպո-ուղղակի գործարքի տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքին օպերատորի կողմից տրված հերթական տարբերակիչ համարը:

3) ***«Գործարքի առարկա արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքում ներառված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի

դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում): Տարբերակիչ ծածկագիր և պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է Օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:

4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:

5) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ:

6) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», իսկ արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի փոփոխությունների հետ չկապված այլ պայմանների փոփոխության դեպքում նշվում է «այլ»:

7) ***«Գործարքի առարկա արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ ռեպո գործարքում ներառված արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում, ծավալային արժեթղթերի (արժեթղթեր, որոնք չունեն քանակ, այլ միայն ծավալ) համար սույն սյունակը չի լրացվում:

8) ***«Ռեպո - ուղղակի գործարքի գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո պայմանագրով սահմանված ռեպո-ուղղակի գործարքի գումարը:

9) ***«Ռեպո - հետադարձ գործարքի գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո պայմանագրով սահմանված ռեպո-հետադարձ գործարքի գումարը:

10) ***«Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր՝ կախված տվյալ ռեպո գործարքի կնքման օրվանից մինչև հաջորդ տարվա նույն օրվան նախորդող օրը ընկած ժամանակահատվածում առկա օրերի քանակը 365 է, թե 366) տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

11) ***«Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը»*** սյունակի ***«գնորդ»*** և ***«վաճառող»*** ենթասյունակներում լրացվում են տվյալ ռեպո գործարքի ներքո համապատասխանաբար արժեթղթերի գնորդին և արժեթղթեր վաճառողին Օպերատորի կողմից շնորհված կոդերը,

12) ***«Գնորդը ում հաշվին է գործարքը կնքել»*** կամ ***«Վաճառողը ում հաշվին է գործարքը կնքել»*** սյունակներում նշվում է «հաճախորդի հաշվին» կամ «իր հաշվին»:

13) ***«Ժամանակաշրջանը»*** սյունակում լրացվում է Ռեպո - ուղղակի և ռեպո - հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով):»:

4) Կանոնակարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետը « «2» «պետական պարտատոմսերի շուկա» » բառերից հետո լրացնել « «3» «վարկային ռեսուրսների շուկա» » բառերով:

5) Կանոնակարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը « «9» - «արժեթղթերի տեղաբաշխման հարթակ» » բառերից հետո լրացնել « «10» - «վարկային ռեսուրսների հարթակ»:» բառերով:

6) Կանոնակարգի 31-րդ կետի 4-րդ ենթակետը « «2» «պետական պարտատոմսերի շուկա» » բառերից հետո լրացնել « «3» «վարկային ռեսուրսների շուկա» » բառերով:

7) Կանոնակարգի 31-րդ կետի 7-րդ ենթակետը « «9» - «արժեթղթերի տեղաբաշխման հարթակ» » բառերից հետո լրացնել « «10» - «վարկային ռեսուրսների հարթակ»:» բառերով:

8) Կանոնակարգի 10-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 10. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 11 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

36. Թիվ 11 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից, որոնցում լրացվում են կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) կողմից հաշվետու օրվա ընթացքում կարգավորվող շուկայի առևտրային համակարգ մուտքագրված հայտերի և հասցեական առաջարկների վերաբերյալ տեղեկությունները:

37. Թիվ 11 հաշվետվության բոլոր աղյուսակները լրացվում են սույն կետի 1-6 ենթակետերով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան, ինչպես նաև յուրաքանչյուր աղյուսակի

համար սույն կանոնակարգի 37.1-37.2 կետերով սահմանված լրացուցիչ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է կարգավորվող շուկայի առևտրային համակարգ հայտերի, իսկ ռեպո գործարքների դեպքում՝ հասցեական առաջարկների մուտքագրման ամսաթիվը:

2) ***«Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում»*** սյունակում նշվում է «հաճախորդի հաշվին» կամ «իր հաշվին»:

3) ***«Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում): Տարբերակիչ ծածկագիր և պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է Օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:

4) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:

5) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված մեկ արժեթղթի գինը: Ծավալային արժեթղթերի համար և ռեպո հասցեական առաջարկների դեպքում սույն սյունակը չի լրացվում:

6) ***«Արժեթղթերի քանակը»*** սյունակում լրացվում է շուկայի մասնակցի կողմից ներկայացված հայտում (հասցեական առաջարկում) նշված արժեթղթերի քանակը՝ հատերով: Եթե գործարքի արդյունքում հայտը բավարարվել է մասամբ, ապա լրացվում է միայն արժեթղթերի մնացորդային քանակը՝ հատերով: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:

37.1 Թիվ 11 հաշվետվության առաջին աղյուսակում լրացվում են արժեթղթերի առուվաճառքի հայտերի վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հայտի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ հայտին տրված կոդը:

2) ***«Հայտով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»:

3) ***«Ընդհանուր գումարը»*** հաշվարկվում է որպես միավոր արժեթղթի գնի և հայտում նշված արժեթղթերի քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է հայտում նշված ծավալային արժեթղթերի ընդհանուր գինը:

4) ***«Հայտի տեսակը՝ կախված գնային պայմաններից»*** սյունակում նշվում է «լիմիտային» կամ «շուկայական»:

5) ***«Հայտի տեսակը՝ կախված քանակական պայմաններից»*** սյունակում նշվում է «լրիվ բավարարմամբ» կամ «մասնակի բավարարմամբ»:

6) ***«Հայտի տեսակը՝ կախված ժամանակային պայմաններից»*** սյունակում նշվում է «պահել հերթում» կամ «հանել մնացորդը»:

7) ***«Հայտի տեսակը՝ կախված ակտիվացման պայմաններից»*** սյունակում նշվում է «անմիջապես ակտիվացմամբ» կամ «ստոպ»:

8) ***«Գործողության տեսակը»*** սյունակում նշվում է «ներկայացում», «փոփոխում», «գործարքի կնքում» կամ «հեռացում»:

9) ***«Հայտի ներկայացման ժամը»*** սյունակում լրացվում է ժամ:րոպե:վայրկյան:

10) ***«Գործողության կատարման ժամը»*** սյունակում լրացվում է ժամ:րոպե:վայրկյան:

37.2 Թիվ 11 հաշվետվության երկրորդ աղյուսակում լրացվում են ***առուվաճառքի և ռեպո գործարքների*** հասցեական առաջարկների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հասցեական առաջարկով նախատեսվող գործարքի տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով նախատեսվող գործարքին կամ ռեպո գործարքին օպերատորի կողմից տրված հերթական տարբերակիչ համարը:

2) ***«Հասցեական առաջարկով նախատեսված գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «արժեթղթերի առք» կամ «արժեթղթերի վաճառք»՝ կախված նրանից, թե տվյալ մասնակիցը (անդամը) հասցեական առաջարկով նախատեսված գործարքի (ռեպո գործարքի) հիմքում ընկած արժեթղթի գնորդ է, թե վաճառող:

3) ***«Հասցեական առաջարկում ներառված գործարքի (ռեպո-ուղղակի գործարքի) ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի և հասցեական առաջարկում նշված

արժեթղթերի քանակի արտադրյալը: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է հայտում նշված ծավալային արժեթղթերի ընդհանուր գինը: Ընդ որում, ռեպո գործարքների հասցեական առաջարկների ներկայացման դեպքում լրացվում է ռեպո-ուղղակի գործարքի պայմանների համաձայն հաշվարկված ընդհանուր գումարը:

4) ***«Հասցեական առաջարկում ներառված ռեպո - հետադարձ գործարքի ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով ներկայացված ռեպո-հետադարձ գործարքի ընդհանուր գումարը: Սույն սյունակը լրացվում է միայն ռեպո գործարքների հասցեական առաջարկների դեպքում:

5) ***«Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով ներկայացված ռեպո գործարքի տարեկան տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով: Սույն սյունակը լրացվում է միայն ռեպո գործարքների հասցեական առաջարկների դեպքում:

6) ***«Հասցեական առաջարկի ներկայացման ժամը»*** սյունակում լրացվում է ժամ:րոպե:վայրկյան:

7) ***«Գործողության տեսակը»*** սյունակում լրացվում է «ներկայացում», «փոփոխում», «փոփոխության հաստատում», «հեռացում», «գործարքի կնքում», «երկարաձգման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում ժամկետի երկարաձգման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից), «կրճատման փոփոխության հաստատում» (այն դեպքում, երբ տեղի է ունենում կրճատման հաստատում՝ անկախ այլ փոփոխությունների տեղի ունենալու հանգամանքից) կամ «մարում»:

8) ***«Գործողության կատարման ժամը»*** սյունակում լրացվում է ժամ:րոպե:վայրկյան:

9) ***«Ժամանակաշրջանը»*** սյունակում լրացվում է հասցեական առաջարկով ներկայացված ռեպո գործարքի «ռեպո-ուղղակի» և «ռեպո-հետադարձ» գործարքների միջև առկա ժամանակաշրջանը (օրերով): Սույն սյունակը լրացվում է միայն ռեպո գործարքների հասցեական առաջարկների դեպքում:

10) ***«Շուկայի այն մասնակցի առևտրային կողը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը»*** սյունակում լրացվում է Օպերատորի կողմից առևտրի այն մասնակցին շնորհված առևտրային կողը, որին ուղարկվում է գործարքի (ռեպո գործարքի) կնքման հասցեական առաջարկը:»:

9) Կանոնակարգի Հավելված 1-ի Աղյուսակ 23-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

10) Կանոնակարգի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի:

11) Կանոնակարգի Հավելված 5-ը լրացնել նոր սյունակով՝ «Հարթակ» վերնագրով:

12) Կանոնակարգի Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի փետրվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

14 դեկտեմբերի 2010 թ., N325-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
դեկտեմբերի 7-ի թիվ 325-Ն որոշմամբ

ԱՂՅՈՒՍԱԿ 23. Կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) վճարներից եկամուտ

	Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի (միջանկյալ տեղեկատվության) դրությամբ	Հաշվետու տարվա վերջի (միջանկյալ տեղեկատվության) դրությամբ	Նախորդ տարվա միջինացված ժամանակաշրջանում	Հաշվետու տարվա միջինացված ժամանակաշրջանում
1	Եկամուտներ կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) միանվագ (մուտքի) վճարներից, այդ թվում՝	10				
1.1	Ֆոնդային բորսայի անդամների միանվագ (մուտքի) վճարներից	20				
1.2	Եկամուտներ կարգավորվող այլ շուկաների մասնակիցների (անդամների) միանվագ (մուտքի) վճարներից	30				
2	Եկամուտներ կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) առևտրի մասնակցության պարբերական վճարներից, այդ թվում՝	40				
2.1	Ֆոնդային բորսայի անդամների առևտրի մասնակցության պարբերական վճարներից	50				
2.2	Կարգավորվող այլ շուկաների մասնակիցների առևտրի մասնակցության պարբերական վճարներից	60				
3.	Եկամուտներ կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) առևտրի մասնակցության պարբերական վճարների գծով ստացված կանխավճարներից, այդ թվում՝	70				
3.1	Ֆոնդային բորսայի անդամների առևտրի մասնակցության պարբերական վճարների գծով ստացված կանխավճարներից	80				
3.2	Կարգավորվող այլ շուկաների մասնակիցների առևտրի մասնակցության պարբերական վճարների գծով ստացված կանխավճարներից	90				
4.	Եկամուտներ կարգավորվող շուկայում կնքված գործարքների միջնորդավճարներից, այդ թվում՝	100				
4.1	Ցուցակված բաժնետոմսերի և պարտատոմսերի հարթակներում կնքված գործարքների միջնորդավճարներից	110				
4.2	Պետական պարտատոմսերի հարթակում կնքված գործարքների միջնորդավճարներից	120				
4.3	Ազատ շուկայի գործիքների հարթակի կնքված գործարքների միջնորդավճարներից	130				
4.4	Դրամական շուկայի գործիքների հարթակի կնքված գործարքների միջնորդավճարներից	140				
4.5	Վարկային ռեսուրսների հարթակում կնքված գործարքների միջնորդավճարներից	150				
4.6	Ռեպո և հասցեական գործարքների հարթակներում կնքված գործարքների միջնորդավճարներից	160				
4.7	Արտարժույթի հարթակում կնքված գործարքների միջնորդավճարներից	170				
5.	Եկամուտներ կարգավորվող շուկայի մասնակիցների նկատմամբ կիրառված տույժերից	180				
6.	Եկամուտներ կարգավորվող շուկայի մասնակիցների (անդամների) առևտրի մասնակցությունից բխող այլ վճարներից	190				
	Ը ն դ ա մ ե ն ը	**200**				

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
դեկտեմբերի 7-ի թիվ 325-Ն որոշմամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Կարգավորվող շուկայի օպերատորի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 5/03-ի հավելվածի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 6

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ՀՀ դրամ)

N	Գործարքին մասնակցող կարգավորվող շուկայի անդամի կոդը	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթի ISIN ծածկագիրը	Արժեթղթի անվանումը	Գործարքի ենթակա արժեթղթերի քանակը	Միավոր արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Արժեթղթի կիրառվող մոտեցումը (%)՝ ըստ գործարքի կողմերի	Արժեթղթի տատանողականության մոտեցումը (%)՝ ըստ գործարքի կողմերի	Գործարքի կնքման ժամը	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը		Գործարքի կնքման ենթակա կարգավորվող շուկայի անդամի կոդը	Գործարքի կնքման ենթակա կարգավորվող շուկայի մասնակցի կոդը	Հուկայի տեսակը	Միավոր կիրառվող
										գնորդ	վաճառող				
1															
2															
…															

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Աղյուսակ 2. Վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ԴԴ դրամ)

N	Գործարքի կնքման վերջնաժամկետ	Վարկային ռեսուրսի տրամադրման ամսաթիվ	Գործարքին մասնակցող վարկային ռեսուրսների չհատկացված մնացորդ	Գործարքի կողմ հանդիսացող վարկային ռեսուրսների շուկայի մասնակցի (կամ նրա ներկայացուցչի) անվանումը (առկայության դեպքում)	Գործարքի կնքման օրը	Հիմնադրման (մուտքագրման) ամսաթիվ	Տրամադրվող վարկային ռեսուրսների ընդհանուր ծավալը	Վարկային ռեսուրսի գինը (տոկոսադրույքը)	Գործարքի կողմ հանդիսացող վարկային ռեսուրսների շուկայի մասնակցին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը	
									ներգրավող	տեղաբաշխող
1										
2										
...										

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Աղյուսակ 3. Ռեպո գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ԴԴ դրամ)

N	Ակտիվի վերաբերյալ գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցին (անդամին) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված կոդը		Ակտիվի տեսակը	Գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կողմից գործարքի կնքման ամսաթիվ	Ակտիվի քանակը - սկզբում	Ակտիվի քանակը - վերջում	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կողմից գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի կողմ հանդիսացող կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) կողմից գործարքի կնքման ամսաթիվ	Ընդհանուր գործարքի գումարը
			գնորդ	վաճառող								
1												
2												
3												
...												

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
դեկտեմբերի 7-ի թիվ 325-Ն որոշմամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 7
«Կարգավորվող շուկայի օպերատորի՝
Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերի առուվաճառքի հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ՀՀ դրամ)

N	Հայտի տարբերակիչ ծածկագիրը	Հայտը ներկայացրած մասնակցի (անդամի) կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհված տարբերակիչ ծածկագիրը	Կարգավորվող շուկայի մասնակցից (անդամից) ստացված հայտի համարը	Հայտի տեսակը	Սուբ-պորտֆելի անվանումը	Արժեթղթի ծածկագիրը	Արժեթղթի անվանումը	Միավոր արժեթղթի գինը	Արժեթղթերի քանակը	Ընդհանուր գումարը	Հայտի տեսակը՝ ակտիվի գծով պայմանների	Հայտի տեսակը՝ ակտիվի ժամանակահատվածի գծով պայմանների	Հայտի տեսակը՝ ակտիվի ամիսների գծով պայմանների	Հայտի տեսակը՝ ակտիվի ամսաթվերի գծով պայմանների	Կարգավորվող շուկայի մասնակցի հաճախորդի ծածկագիրը (եթե հայտը ներկայացվել է հաճախորդի հաշվին)	Գործառույթը	Հայտի կեղծ անունը	Գործառույթի ընդունման ժամը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Աղյուսակ 2. Առուվաճառքի և ռեպո գործարքների հասցեական առաջարկների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

(ՀՀ դրամ)

N	Հաշվետու առաջարկով նախատեսված գործարքի տեսակը	Հաշվետու առաջարկով նախատեսված գործարքի կողմ հանդիսացող (առաջարկին) կողմնակից հաստատության կոդը	Կարգավորվող շուկայի մասնակցի (անդամի) ում հաշվին է գործարք կնքում	Հաշվետու առաջարկով նախատեսված գործարքի տեսակը	Արժեթղթերի տարբերակին ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժեթղթերի քանակը	Հաշվետու առաջարկում ներառված գործարքի (ռեպո-ռուդրամի գործարքի) ընդհանուր գումարը	Հաշվետու առաջարկում ներառված գործարքի (ռեպո-հետադարձ գործարքի) ընդհանուր գումարը	Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)	Կարգավորվող շուկայի հաճախորդի ծածկագիրը (եթե հայտը ներկայացվել է շուկայի մասնակցի հաճախորդի հաշվին)	Գործողության տեսակը	Հաշվետու առաջարկի ներկայացման ժամը	Գործողության կատարման ժամը	Ժամանակահատվածը	Հիմնական գրկի մասին տեղեկությունը, եթե այն տարբերվում է գործիչ

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ստեղծելու, տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը» հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Ստեղծել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ:

2. Հաստատել «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը»՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

16 դեկտեմբերի 2010 թ., N326-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի դեկտեմբերի 7-ի
թիվ 326-Ն որոշմամբ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Կ Ա Ր Գ

ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածը սահմանում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ) ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը: Սույն հավելվածի իմաստով տեղեկատվական համակարգի օգտագործում է համարվում տեղեկատվական համակարգում տեղեկատվության հավաքագրումը և հաշվառումը, հավաքագրված տեղեկատվության մշակումն և պահպանումը, ինչպես նաև դրա տրամադրումը:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀԳՏ N30 (382)[1], 21.12.2010):

2. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի նպատակն է ԱՊՊԱ համակարգի հետ կապված ամբողջական տեղեկատվության հավաքագրումը և համապատասխան տեղեկատվական հոսքերի կազմակերպումը ԱՊՊԱ համակարգի արդյունավետ գործունեության, ինչպես նաև համակարգի վերահսկողության ապահովումը:

3. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններին, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ԱՊՊԱ պայմանագրերով սահմանված ապահովադիրներին և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից օգտվող այլ անձանց է տրամադրվում սույն հավելվածով սահմանված տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ԱՊՊԱ համակարգում կիրառվող սակագների սահմանման, պահուստների հաշվարկման, ԱՊՊԱ գործունեության բնականոն ընթացքի ապահովման և վերահսկման համար:

4. Սույն հավելվածում կիրառվող հասկացություններն օգտագործվում են ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտերում կիրառվող նշանակության:

5. Սույն հավելվածն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում սույն հավելվածն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ գործող և դրանից հետո կնքված բոլոր ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ, նոր ստեղծվող ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունները՝ համապատասխան դասով ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու պահից սկսած, իսկ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը (այսուհետ՝ Բյուրո) նոր անդամագրված Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունները՝ Բյուրոյին անդամագրվելու պահից:

ՄԱՍ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի բնականոն գործունեությունը պայմանավորված է համակարգի յուրաքանչյուր բաժնի որակական չափանիշների բավարար մակարդակով: Դրանք են.

1) հուսալիություն,
2) անընդհատություն,
3) համադրելիություն,
4) մատչելիություն:

7. Սույն հավելվածի իմաստով հուսալիությունը՝ որպես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի որակական չափանիշ, ենթադրում է, որ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ մուտքագրվող, համակարգում պահպանվող, ինչպես նաև համակարգից ելքագրվող տվյալները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ, ինչպես նաև բավարարեն սույն հավելվածով սահմանված պահանջներին:

8. Սույն հավելվածի իմաստով անընդհատությունը՝ որպես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի որակական չափանիշ, ենթադրում է, որ չպետք է խախտվի սույն հավելվածով սահմանված՝ տվյալների փոխանակման գործընթացն ապահովող պարբերականությունը (հաճախականությունը), ինչպես նաև այն, որ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի գործունեությունն անժամկետ է:

9. Սույն հավելվածի իմաստով համադրելիությունը՝ որպես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի որակական չափանիշ, ենթադրում է, որ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ մուտքագրվող, համակարգում պահպանվող, ինչպես նաև համակարգից ելքագրվող տվյալները պետք է լինեն համադրելի ժամկետների և ձևաչափերի տեսանկյունից: Սույն հավելվածով սահմանված ժամկետներից ուշ տվյալների ներկայացումը հակասում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի հուսալիության չափանիշին:

10. Սույն հավելվածի իմաստով մատչելիությունը՝ որպես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի որակական չափանիշ, ենթադրում է, որ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներմուծվող, համակարգում պահպանվող, ինչպես նաև համակարգից ելքագրվող տվյալները պետք է ներկայացվեն համակարգված տեսքով, օգտագործողների համար պետք է լինեն հասկանալի և սույն հավելվածով սահմանված պայմաններով և դեպքերում՝ հասանելի:

11. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի գործողության ընթացքում սույն հավելվածի 4-րդ գլխում նշված բաժիններից որևէ մեկի անհամապատասխանությունը վերոնշյալ որակական չափանիշներից որևիցե մեկին դիտվում է որպես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ոչ բնականոն գործողություն:

ԳԼՈՒԽ 2. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ

12. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի օգտագործողներն են Բյուրոն, Կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները:

13. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի տեղեկատվության այլ օգտագործողներ են հանդիսանում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 7-րդ մասով և սույն հավելվածով սահմանված հրապարակային տեղեկատվություն օգտագործող անձինք:

ԳԼՈՒԽ 3. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1) ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ տվյալների փոխանցում ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

2) ԱՊՊԱ պատահարի (ճանապարհատրանսպորտային պատահարների (այսուհետ՝ ՃՏՊ)) վերաբերյալ ծանուցման ուղարկում ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

3) ԱՊՊԱ պատահարի վերաբերյալ տեղեկատվության փոխանցում ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

4) ԱՊՊԱ պայմանագրով սահմանված հատուցման մասին տեղեկատվության փոխանցում ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

5) Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ՃՈ) կողմից հաշվառված տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) վերաբերյալ տվյալների փոխանցում ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

6) ՃՈ կողմից հաշվառված վարորդների վերաբերյալ տվյալների փոխանցում ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

7) ՃՈ կողմից հաշվառված ՃՏՊ-ների և վարչական իրավախախտումների վերաբերյալ տվյալների փոխանցում ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ:

8) ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում՝ ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՏՄ-ների, ԱՊՊԱ կտրոնների վերաբերյալ տեղեկատվության ձևավորում և փոխանցում ՃՈ:

9) ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում գործառնական, վերլուծական, վիճակագրական հաշվետվությունների ձևավորում և տրամադրում (հրապարակում):

15. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի գործառնական բաժիններն են սույն հավելվածի 14-րդ կետի 1-4-րդ և 8-րդ ենթակետերով, իսկ օժանդակող բաժինները՝ 5-7-րդ և 9-րդ ենթակետերով սահմանված դրույթները:

16. Սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված բաժինների բնականոն գործունեությունն ապահովում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի տեխնիկածրագրային համակարգերը, որոնք դասվում են.

1) ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստր,

2) Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների ծրագրային համակարգեր,

3) ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրի կցորդ (օժանդակող) միջավայր,

4) ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգի միջավայր,

5) ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրի «Կասկածելի/վերանայման ենթակա ժամանակավոր տվյալներ» միջավայր:

17. Սույն հավելվածի 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված բաժինները ձևավորում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրը:

18. Սույն հավելվածի 14-րդ կետի 5-7-րդ ենթակետերում նշված բաժինները ձևավորում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրի կցորդ (օժանդակող) միջավայրը:

19. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների կողմից ստացված տվյալների և ՃՈ կողմից ստացված տվյալների անհամադրելիության դեպքում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում տվյալները պահպանվում են տեղեկատվական համակարգի ռեգիստրի «Կասկածելի/վերանայման ենթակա ժամանակավոր տվյալներ» համակարգում:

ԳԼՈՒԽ 4. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

20. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի անվտանգության համար պատասխանատու անձը վերահսկում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվության տրամադրման, տեղեկատվական համակարգի օգտագործողներին իրավասությունների տրամադրման և բաշխման գործընթացը:

21. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները պետք է հատուկ սահմանված վայրերում ունենան առանձնացված համակարգիչներ (սերվեր), որտեղ պահվելու է սույն հավելվածի 59-րդ կետում նշված տեղեկատվությունը:

22. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերության սերվերը պետք է լինի պաշտպանված արտաքին վտանգավոր ներգործություններից (վնասվածքներից), ունենա ներքին պաշտպանվածության հուսալիության բավարար մակարդակի հակավիրուսային ծրագիր, ինչպես նաև ռեզերվային կրիչներ, որոնցում պահվող տեղեկատվությունը պարբերաբար պետք է թարմացվի և արխիվացվի:

23. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների սերվերը, դրա ռեզերվային և արխիվային կրիչները կարող են դուրս բերվել դրանց օգտագործման և պահպանման համար սահմանված հատուկ տարածքներից միայն ապահովագրական, վերաապահովագրական ընկերության գործադիր տնօրենի գրավոր թույլտվությամբ՝ հատուկ կամ արտակարգ իրավիճակների դեպքերում:

24. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրի և սույն հավելվածի 16-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված տեխնիկածրագրային համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման համար նախատեսված ծրագրային համակարգերը պետք է գեներացնեն գաղտնաբառով պաշտպանված նույնականացուցիչներ: Նշանակված գաղտնաբառը պետք է ունենա բարդ կառուցվածք սերտիֆիկատների պաշտպանությունն ապահովելու համար:

25. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում պետք է մշակված լինեն հաշվառման գրառումների ստեղծման, ակտիվացման, փոփոխման, կասեցման, հեռացման գործընթացներն ապահովող ավտոմատ մեխանիզմներ:

26. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում բացառված է ուղարկված և ստացված տեղեկատվության փոփոխման կամ հեռացման հնարավորությունը:

27. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների, ինչպես նաև ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված էքսէմէլ ֆայլերը պետք է պարունակեն էլեկտրոնային ստորագրություն:

ՄԱՍ 3. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱԶՄԸ

28. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացնում են տվյալներ՝ իրենց կողմից կնքված բոլոր ԱՊՊԱ պայմանագրերի, ապահովադիրների, պայմանագրերում նշված ապահովագրված անձանց (լիազորված տիրապետողների), ՏՄ-ների, ինչպես նաև այդ պայմանագրերով ապահովագրական պատահարների ծանուցումների, ԱՊՊԱ վկայագրերի, ապահովագրական ընկերությունների կողմից ԱՊՊԱ պայմանագրերով ապահովադիր, ապահովագրված անձ կամ տուժող համարվող անձանցից ընդունված ապահովագրական պատահարի վերաբերյալ համաձայնեցված հայտարարագրերի և վճարված ապահովագրական հատուցումների վերաբերյալ: Ներկայացվող տվյալների բովանդակությունը, դրանց լրացման կանոնները սահմանվում են սույն հավելվածի Հավելված 1-ով:

29. ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ փոխանցվող տվյալները ներառում են Հայաստանի Հանրապետությունում հաշվառված ՏՄ-ների, վարորդների, ՃՈ-ի կողմից արձանագրված ՃՏՊ-ների և վարչական իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվությունը:

30. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների կողմից ՏՄ-ներին, վարորդներին և ՃՏՊ-ներին վերաբերող ներկայացվող տվյալները համարվում են հավաստի, եթե դրանք համապատասխանում են ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված տվյալներին:

31. Սույն հավելվածի իմաստով ոչ ճիշտ տվյալ է համարվում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացվող այն տեղեկատվությունը, որը չի համապատասխանում սույն հավելվածի հավելվածներով սահմանված տվյալների կառուցվածքներին, տվյալների ներկայացման ձևաչափերին և (կամ) պարունակում է տվյալների հակասություն, անհամապատասխանություն, չի պարունակում սույն հավելվածի հավելվածներով սահմանված՝ պարտադիր ներկայացման ենթակա բոլոր տվյալները:

ՄԱՍ 4. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5. ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

32. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից տրամադրվող տեղեկատվությունը լինում է երկու տեսակի՝ հրապարակային և ոչ հրապարակային.

1) Հրապարակային տեղեկատվությունը ներառում է վիճակագրական տվյալներ՝ առանց ապահովադիրների, ապահովագրված անձանց և ՏՄ-ների վերաբերյալ անհատական տվյալների և կարող է հրապարակվել Բյուրոյի և (կամ) Կենտրոնական բանկի ինտերնետային կայքերում և (կամ) այլ միջոցներով:

2) Ոչ հրապարակային տեղեկատվությունը ներառում է ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների հաճախորդների և նրանց ՏՄ-ների, ինչպես նաև ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ փոխանցվող ՏՄ-երի և ՃՏՊ-երի վերաբերյալ տեղեկատվությունը: Ոչ հրապարակային տեղեկատվություն ստանալու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները, ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացվող ԱՊՊԱ պայմանագրերով ապահովադիր հանդիսացող անձինք (միայն իրենց վերաբերյալ)՝ սույն հավելվածով սահմանված ձևով և դեպքերում: Ոչ հրապարակային տվյալների բովանդակությունը սահմանվում է սույն հավելվածի Հավելված 2-ով:

33. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ոչ հրապարակային տեղեկատվություն ստանում է նաև ՃՈ՝ համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի:

34. ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ՏՄ-երի և ՃՏՊ-երի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններին՝ համապատասխանաբար ըստ սույն հավելվածի Հավելված 2-ի Ձև 8-ի և Ձև 9-ի, որոնց գաղտնիության պահպանման համար պատասխանատու է վերոնշյալ տվյալները ստացած ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունը: ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից վարորդի վերաբերյալ տվյալները փոխանցվում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ միայն ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ապահովադիրների և լիազորված տիրապետողների վերաբերյալ տեղեկատվության ստուգման նպատակով և չեն կարող տրամադրվել ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին:

35. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի վարման համար «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատու մարմինը պարտավոր է ապահովել ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված անձնական տվյալների գաղտնիությունը:

36. Սույն հավելվածի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունից բացի, ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններն ապահովագրական սակագներ հաշվարկելու և այլ վերլուծություններ իրականացնելու նպատակով ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից կարող են ստանալ ոչ ստանդարտ ամփոփ տեղեկատվություն՝ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում առկա տվյալների հիման վրա:

37. Ապահովադրի վերաբերյալ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից տրամադրված տեղեկատվությունը ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերությունն օգտագործում է բացառապես այդ ապահովադրի հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս, ապահովադրի հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը (ապահովագրական սակագինը) հաշվարկելիս, ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

38. ՃՈ տեղեկատվական-փնտրողական և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանակումն իրականացվում է օրական կտրվածքով:

39. ԱՊՊԱ տեղեկատվական և ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգերի միջև տվյալների համապատասխանեցումն իրականացվում է ոչ ուշ, քան առավելագույնը յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում՝ հաջորդ աշխատանքային օրվա համար:

40. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տեղեկատվություն են ուղարկում և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվություն են ստանում Կենտրոնական բանկին պատկանող SWIFT միջբանկային համակարգչային ցանցի և դրա ռեզերվային ուղիների միջոցով:

41. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի և ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունների միջև փոխանակվող տվյալները կրում են էքսէմէլ ձևաչափը (կառուցվածքը):

42. ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

43. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում մեկ ապահովադրի գծով ստացված ԱՊՊԱ պայմանագրերից տվյալ պահին գործող պայմանագիր է համարվում վերջին ամսաթվով կնքված պայմանագիրը:

44. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ արդեն իսկ ներկայացված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում (ներառյալ պայմանագրի լուծման դեպքերը) ապահովագրական ընկերությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացնում տվյալ փոփոխությունը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

45. ԱՊՊԱ պայմանագրերի գծով ապահովագրական պատահարների ծանուցումների վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում ապահովագրական պատահարի մասին ապահովագրական, վերաապահովագրական ընկերության տեղեկանալուց անմիջապես հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

46. ԱՊՊԱ պայմանագրերի գծով գրանցված ապահովագրական պատահարների վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում տվյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերության ապահովագրության կանոններով սահմանված կարգով ապահովագրական պատահարի վերաբերյալ փաստաթղթերի հավաքագրումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

47. ԱՊՊԱ պայմանագրերի գծով վճարված հատուցումների վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում հատուցումն իրականացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հատուցումը միանվագ չէ, ապա ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ է ներկայացնում տվյալ ապահովագրական պատահարի հետ կապված հատուցման յուրաքանչյուր վճարման վերաբերյալ՝ վճարումը կատարելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:

48. ԱՊՊԱ պայմանագրերի գծով վճարված հատուցումների վերաբերյալ ապահովագրական ընկերության կողմից հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքից օգտվելու դեպքում ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերությունը ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացնում ապահովագրական հատուցումների գծով լրացուցիչ տեղեկատվություն երեք աշխատանքային օրվա ընթացքում: Այս դեպքում ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ են ներկայացնում ծանուցում տվյալ հատուցմանը կից երկու նշումներով՝ «Սուբրոգացիա» և «Ամսաթիվ» անվանումներով՝ վերջին նշման մեջ նշելով հետադարձ պահանջի ամսաթիվը:

49. Ոչ ճիշտ տվյալներ ստանալու դեպքում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը ոչ ճիշտ տվյալներ տրամադրած ապահովագրական, վերաապահովագրական ընկերությանը տեղեկացնում է անճշտության մասին: Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունն անճշտության մասին տեղեկանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացնում ճշգրտված տվյալները կամ հաստատում է ներկայացված տվյալների ճշտությունը:

50. Սույն հավելվածի 36-րդ կետում սահմանված տեղեկատվությունը ստանալու համար ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերությունը գրավոր դիմում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի վարման համար պատասխանատու անձին՝ կից ներկայացնելով տեղեկատվություն ստանալու համար սահմանված գումարի վճարումը հավաստող փաստաթուղթը: Դիմումը ստորագրվում և կնքվում է ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերության գործադիր ղեկավարի կողմից: ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի վարման համար պատասխանատու ստորաբաժանումը ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերության դիմումի հիման վրա ձևավորում և դիմումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերությանը տրամադրում է համապատասխան ոչ ստանդարտ հաշվետվություն: Եթե դիմումը ներկայացնում է ապահովագրական կամ վերաապահովագրական ընկերության կողմից լիազորված անձը, ապա դիմումի հետ միասին պետք է ներկայացվի ընկերության գործադիր ղեկավարի կողմից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

51. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու համար տեղեկատվական համակարգ են ներկայացնում յուրաքանչյուր

տվյալների խմբին համապատասխան հայտ: ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու համար տեղեկատվական համակարգ ներկայացվող յուրաքանչյուր տվյալների խմբին համապատասխանող հայտերի ձևերը ներկայացված են սույն որոշմամբ հաստատված Հավելված 3-ում:

52. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունն ապահովադրի մասին ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվություն ստանալու համար հարցում կատարելու դեպքում՝ հարցում կատարելու պահից սկսած երեք տարվա ընթացքում պահպանում է այդ ապահովադիրների վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք հավաստիացնում են, որ տվյալ անձը դիմել է ապահովագրական, վերաապահովագրական ընկերությանն ԱՊՊԱ պայմանագիր կնքելու նպատակով:

53. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված ՏՄ-երի և ՃՏՊ-երի վերաբերյալ տվյալները կարող են ստանալ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացնելով (հարցում կատարելով) համապատասխան ՏՄ-ի հաշվառման համարանիշը: ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված ՏՄ-երի և ՃՏՊ-երի վերաբերյալ տվյալները ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները կարող են ստանալ կամ ԱՊՊԱ բյուրոյի ինտերնետային կայքի միջոցով, կամ ՍիԲիէյնեթ ցանցի միջոցով:

54. Այն դեպքերում, երբ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացված տեղեկատվությունում առկա են անհամապատասխանություններ տեղեկատվությունը ստացած ապահովագրական, վերաապահովագրական ընկերության մոտ առկա տվյալների համադրմամբ, ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունն այդ մասին տեղեկացնում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի վարման համար պատասխանատու ստորաբաժանմանը անհամապատասխանությունները ճշգրտելու և ճշգրտված տեղեկատվությունը տրամադրելու նպատակով:

55. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ապահովադրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունը տվյալ ապահովադրի պահանջի դեպքում նրան տրամադրում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացված տեղեկատվությունը:

56. Ապահովադիրն իրավասու է նաև անմիջապես ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստանալ իր մասին առկա տեղեկատվությունը: ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվությունն ապահովադիրը կարող է ստանալ առձեռն, ընդ որում, տեղեկատվությունը առձեռն ստանալու համար ապահովադիրն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացնում գրավոր դիմում-հայտ՝ կից ներկայացնելով սահմանված գումարի վճարումը հաստատող փաստաթուղթը: Ապահովադրի իրավաբանական անձ լինելու դեպքում դիմումը ստորագրվում և կնքվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Ապահովադրի ֆիզիկական անձ լինելու դեպքում դիմումին կցվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը: ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից սույն կետով նախատեսված դիմումը բավարարվում է դիմումը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

57. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից իր կարծիքով ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում ապահովադիրը կարող է գրավոր տեղեկացնել ԱՊՊԱ տեղեկատվական համակարգին՝ նշելով կասկած հարուցող տվյալները և պահանջել ճշգրտված տեղեկատվություն: ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը տվյալների արժանահավատությունը ստուգելուց և, հարկ եղած դեպքում, ճշգրտումներ իրականացնելուց հետո գրավոր ձևով պատասխանում է ապահովադրին՝ տրամադրելով ճշգրտված տեղեկատվությունը՝ դիմումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

58. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի ռեգիստրի «Կասկածելի/վերանայման ենթակա ժամանակավոր տվյալներ» բաժնում պահպանվող տվյալները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի վարման համար պատասխանատու անձի կողմից ենթարկվում են հետագա մշակման՝ տվյալների վերաբերյալ ծանուցումների ուղարկման միջոցով:

59. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացված և համակարգից ստացված տվյալները ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունը պահպանում է էլեկտրոնային եղանակով՝ առնվազն յոթ տարի:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը» հավելվածի

Ց Ա Ն Կ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

Գլուխ 1. ԱՊՊԱ պայմանագիր

1. Էլեկտրոնային փաստաթղթի վերաբերյալ հիմնական տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Ապահովագրական ընկերության կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության կոդը	պարտադիր
2)	Մասնաճյուղի կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության մասնաճյուղի կոդը	առկայության դեպքում՝ պարտադիր
3)	Ռեգիստրի կոդ	Լրացվում է ռեգիստրի համապատասխան կոդը	պարտադիր
4)	Փաստաթղթի տեսակ	Լրացվում է փաստաթղթի տեսակը՝ *ԱՊՊԱ պայմանագիր*	պարտադիր
5)	Փաստաթղթի փոփոխություն	Արտացոլվում է փաստաթղթի փոփոխությունը (այո կամ ոչ)	պարտադիր
6)	Փաստաթղթի կազմման ամսաթիվ	Լրացվում է ներկայացվող փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր
7)	Փաստաթուղթն ուղարկելու ամսաթիվ	Լրացվում է փաստաթուղթն ապահովագրական ռեգիստր ուղարկելու ամսաթիվը	պարտադիր

2. Պայմանագրի գործողություն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Պայմանագրի կոդ	Լրացվում է կնքվող պայմանագրի կոդը	պարտադիր
2)	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Լրացվում է պայմանագրի կնքման ամսաթիվը	պարտադիր
3)	Պայմանագրի գործողության մեջ մտնելու օր	Լրացվում է պայմանագրի գործողության մեջ մտնելու օրը/ամիսը/տարեթիվը	պարտադիր
4)	Պայմանագրի գործողության մեջ մտնելու ժամ	Լրացվում է պայմանագրի գործողության մեջ մտնելու ժամը	պարտադիր
5)	Պայմանագրի գործողության դադարման օր	Լրացվում է պայմանագրի գործողության դադարման օրը/ամիսը/տարեթիվը	պարտադիր
6)	Պայմանագրի գործողության դադարման ժամ	Լրացվում է պայմանագրի գործողության դադարման ժամը	պարտադիր

3. Ապահովագրության ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Պայմանագրի տեսակ	Լրացվում է պայմանագրի տեսակը	պարտադիր
ա.	*Ստանդարտ*		
բ.	*Սահմանային*		
գ.	*Գրիճ քարտ*		
2)	Ապահովագրավճարի չափ	Լրացվում է ապահովագրավճարի չափը (ՀՀ դրամ)	պարտադիր
3)	Ապահովագրական գումար	Լրացվում է ապահովագրական գումարի չափը (ՀՀ դրամ կամ արտարժույթ)	պարտադիր
ա.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր տուժողի		
բ.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		
գ.	Գույքին պատճառված վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		
4)	Պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ Բացակայության դեպքում՝0	պարտադիր
5)	Ոչ պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ	պարտադիր

Գլուխ 2. Ապահովադիր

4. Ապահովադրի վերաբերյալ ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Իրավական կարգավիճակ	Լրացվում է ապահովադրի իրավական կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		
2)	Ապահովադրի նույնականացուցիչ	Լրացվում է պատահարի մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր

Գլուխ 3. ԱՊՊԱ պայմանագրում նշվող տրանսպորտային միջոցները (այսուհետ նաև՝ ՏՄ)

5. Տրանսպորտային միջոցների թիվ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Տրանսպորտային միջոցների թիվ	Ձևավորում է համակարգչային ծրագիրը	

6. Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	ՏՄ նույնացման համար	Լրացվում է ՏՄ ունիկալ նույնականացման համարը	պարտադիր
2)	ԱՊՊԱ կտրոնի համար	Լրացվում է ապահովագրական ընկերության (ԱԸ) կողմից տրված ԱՊՊԱ կտրոնի համարը	պարտադիր
3)	Ապահովագրավճարի չափ՝ առանձին ՏՄ-ի համար	Լրացվում է ապահովագրավճարի չափը (ՀՀ դրամ)	պարտադիր
4)	Ապահովագրական գումար՝ առանձին ՏՄ-ի համար	Լրացվում է տվյալ ՏՄ գծով ապահովագրական գումարը	պարտադիր
ա.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր տուժողի		
բ.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		
գ.	Գույքին պատճառված վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		
5)	Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կարգավիճակ	Լրացվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		
6)	Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր

Գլուխ 4. Ապահովագրված անձանց /լիազորված տիրապետողների՝ ներառյալ ապահովադիրը, եթե վարորդ է/ վերաբերյալ տվյալներ

7. Ապահովագրված անձանց թիվը

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Ապահովագրված անձանց թիվ	Ձևավորում է համակարգչային ծրագիրը	

8. Յուրաքանչյուր ապահովագրված անձի վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Ապահովագրված անձի նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր
2)	Իրավական կարգավիճակ	Լրացվում է ապահովադրի իրավական կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		

Գլուխ 5. ԱՊՊԱ պայմանագրերի և ապահովագրական պատահարների մասնակիցների վերաբերյալ տվյալներ

9. Ֆիզիկական անձ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1)	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2)	Սոցիալական քարտ	Լրացվում է սոցիալական քարտի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր
3)	Անձը հաստատող փաստաթղթի համար	Լրացվում են Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ հաստատված անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկի հերթական համարը	պարտադիր
4)	Անձը հաստատող փաստաթուղթն ում կողմից է տրվել	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
5)	Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
6)	Անձը հաստատող փաստաթուղթը մինչև երբ է ուժի մեջ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
7)	Անուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
8)	Հայրանուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
9)	Ազգանուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
10)	Անուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
11)	Հայրանուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
12)	Ազգանուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
13)	Ծննդյան ամսաթիվ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների Նշվում է օր/ամիս/տարի	պարտադիր
14)	Սեռ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
15)	Քաղաքացիություն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
16)	Բնակության վայր	Լրացվում է փաստացի բնակության վայրը	պարտադիր ՀՀ քաղաքացիների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
17)	Հաշվառման վայր	Լրացվում է պետական հաշվառման վայրը	պարտադիր ՀՀ քաղաքացիների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
18)	Հեռախոսահամար		առկայության դեպքում՝ պարտադիր

19)	Վարորդական վկայականի համար	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ համար
20)	Վկայականի տրման ամսաթիվ	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ համար
Այդ թվում՝ ըստ /նշել ներքոհիշյալ հայտանիշներից մեկը/.	
Հատուցումների գումարն ըստ հատուցման եղանակի	
Հատուցումների գումարն ըստ հատուցման կարգավիճակի	
Հատուցումների գումարն ըստ վնասի տեսակի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ օգտագործման ձեւի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ օգտագործման հիմնական մարզի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ օգտագործման հիմնական վայրի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ շահագործման տարեկան ինտենսիվության (կմ)	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ տեսակի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ մակնիշի ընտանիքի	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ թողարկման տարեթվի	
Հատուցումների գումարն ըստ շարժիչի հզորության	
Հատուցումների գումարն ըստ ՏՄ գույնի ընտանիքի	
Հատուցումների գումարն ըստ ապահովադրի իրավական կարգավիճակի	

Հատուցումների գումարն ըստ ապահովադրի բնակության (ֆիզիկական անձանց դեպքում) / գործունեության մարզի	
Հատուցումների գումարն ըստ ապահովագրված անձանց քանակի	
Հատուցումների գումարն ըստ մեղավոր վարորդի տարիքի	
Հատուցումների գումարն ըստ մեղավոր վարորդի վարորդական ստաժի	
Հատուցումների գումարն ըստ մեղավոր վարորդի սեռի	
Հատուցումների գումարն ըստ պատահարի տեղի ունենալու մարզի	
Հատուցումների գումարն ըստ ապահովագրական պատահարի տեսակների	

Հայտում 3. կետը կարող է չներառվել, եթե խաչածև բացվածքով տվյալներ չեն պահանջվում: Մեկից ավելի խաչածև բացվածքով տվյալներ պահանջվելու դեպքում 3. կետը կրկնվում է պահանջվող բացվածքների քանակով:

4. Հարցվող հայտանիշների պահանջվող միջակայքերը

Այս կետում հայտատու ապահովագրական ընկերությունը նշում է, թե հարցվող տվյալների ինչպիսի միջակայքային խմբավորումներով են պահանջվում տվյալները: Հայտում նշվում են խմբավորման յուրաքանչյուր հայտանիշին համապատասխանող փոփոխականների (Ի, S, U, Հ, ՀԳ) միջակայքային սահմանները (պայմանական նշանակումը՝ Xi, որտեղ X-ը հայտանիշին համապատասխանող փոփոխականի նշանակումն է, i-ն՝ միջակայքային սահմանի հերթական համարը): Ընդ որում, միջակայքային սահմանների քանակը փոփոխական է: Հայտում *պարտադիր* պետք է նշվեն այն հայտանիշների միջակայքային սահմանները, որոնց գծով պահանջվում են տվյալներ ըստ սույն հայտի 2. և 3. կետերի:

4.1	**Ապահովադրի, լիազորված վարորդի տարիք (տարի) - S**	
	մինչև S1 ներառյալ	
	S1-ից ավելի մինչև S2 ներառյալ	
	S2-ից ավելի մինչև S3 ներառյալ	
	. . .	
	Sո-ից ավելի	
	նշված չէ / որոշված չէ	
4.2	**Վարորդական ստաժ (տարի) - U**	
	մինչև U1 ներառյալ	
	U1-ից ավելի մինչև U2 ներառյալ	
	U2-ից ավելի մինչև U3 ներառյալ	
	. . .	
	Uո-ից ավելի	
	նշված չէ / որոշված չէ	
4.3	**ՏՄ շարժիչի հզորություն (ձիաուժ) - Հ**	
	մինչև Հ1 ներառյալ	
	Հ1-ից ավելի մինչև Հ2 ներառյալ	
	Հ2-ից ավելի մինչև Հ3 ներառյալ	
	. . .	
	Հո-ից ավելի	
	նշված չէ / որոշված չէ	
4.4	**ՏՄ շահագործման տարեկան ինտենսիվություն (կմ) - Ի**	
	մինչև Ի1 ներառյալ	
	Ի1-ից ավելի մինչև Ի2 ներառյալ	
	Ի2-ից ավելի մինչև Ի3 ներառյալ	
	. . .	
	Իո-ից ավելի	
	նշված չէ / որոշված չէ	
4.5	**Հատուցման չափ (դրամ) - ՀԳ**	
	մինչև ՀԳ1 ներառյալ	
	ՀԳ1-ից ավելի մինչև ՀԳ2 ներառյալ	
	ՀԳ2-ից ավելի մինչև ՀԳ3 ներառյալ	
	. . .	
	ՀԳո-ից ավելի	
	նշված չէ / որոշված չէ	

ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվության ստացման հայտ
ՁԵՎ 7-ի համար

1.1. Փաստաթղթի վերաբերյալ տվյալներ

1.1.1. Փաստաթղթի գլխագիր		
1	Ապահովագրական ընկերության կոդը	պարտադիր
2	Մասնաճյուղի կոդը	
3	Ռեգիստրի կոդը	պարտադիր
4	Փաստաթղթի տեսակը	պարտադիր
5	Փաստաթղթի փոփոխություն	պարտադիր
6	Փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր
7	Փաստաթղթի ուղարկման ամսաթիվը	պարտադիր
1.1.2. Հայտի չկրկնվող համարը		
1	Հայտի համարը	Պարտադիր, ընդ որում, ապահովագրական ընկերությունը համարակալում է հայտերը, որոնց համարները չեն կարող լինել կրկնվող

1.2. Հարցվող տեղեկատվություն

1.2.1. Հարցման ժամանակահատվածը		
1	Ժամանակահատվածի սկիզբը	
2	Ժամանակահատվածի ավարտ	

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին*

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/04-ի 2-րդ կետի աղյուսակի 15-րդ կետում «մաթեմատիկական» բառը փոխարինել «տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների» բառերով:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. դեկտեմբերի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.12.2010 թ. (ՀՀԳՏ N30 (382)[1], 21.12.2010):

2) Կանոնակարգ 3/04-ի 2-րդ կետի աղյուսակի 16-րդ կետը «պահանջների պահուստի» բառերից հետո լրացնել «գործակցի» բառերով:
3) Կանոնակարգ 3/04-ի 2-րդ կետի աղյուսակի 21-րդ կետից հանել «և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին վճարված պարտադիր վճարների» բառերը:
4) Կանոնակարգ 3/04-ի 2-րդ կետի աղյուսակից հանել 22-րդ կետը:
5) Կանոնակարգ 3/04-ը լրացնել 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում նաև 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» հաստատելու մասին» թիվ 312 Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ի (այսուհետ՝ կանոնակարգ 3/03) 8-րդ, 64-րդ և 65-րդ կետերի համաձայն՝ կանոնակարգ 3/03-ով չնախատեսված մեթոդներով ձևավորած պահուստների հաշվարկները՝ տվյալ պահուստի ձևավորման պարբերականությամբ:»:

6) Կանոնակարգ 3/04-ի 3-րդ կետը «արգելվում է» բառերից հետո լրացնել «, բացառությամբ թիվ 10 հաշվետվության, որի համար Կենտրոնական բանկը տրամադրում է լրացման օրինակելի ձևը» բառերով:
7) Կանոնակարգ 3/04-ը լրացնել 3.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Թիվ 10 հաշվետվությունը լրացման թերություններից զերծ պահելու նպատակով ապահովագրական ընկերությունները մինչև Կենտրոնական բանկ ուղարկելը ստուգում են (վալիդացնում են) էքս-էս-Դի (xsd) ֆորմատի ֆայլերով, որոնք ապահովագրական ընկերություններին է տրամադրում Կենտրոնական բանկը: Հաշվետվության ընդունման գործընթացը կարգավորելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերություններին ուղարկել էքս-էմ-էլ (xml) և էքս-էս-Դի (xsd) ֆորմատի ֆայլերի թարմացված տարբերակներ:»:

8) Կանոնակարգ 3/04-ը լրացնել 3.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Ապահովագրական ընկերություններից ստացված բոլոր թիվ 10 հաշվետվությունները, որոնցում ստուգման արդյունքում հայտնաբերվում են տեխնիկական սխալներ, համարվում են չընդունված:»:

9) Կանոնակարգ 3/04-ի 4-րդ կետից հանել «, իսկ ֆայլերը՝ պարունակեն թվային հավաստագիր» բառերը:
10) Կանոնակարգ 3/04-ի 5-րդ կետը՝

ա. «Հաշվետվության» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ թիվ 10 հաշվետվության)» բառերով,

բ. «Կոդավորման» բառից առաջ լրացնել «Թիվ 10 հաշվետվության անվանման կոդը համապատասխանում է մյուս բոլոր հաշվետվությունների կոդերին, բացառությամբ հապավման, որը թիվ 10 հաշվետվության համար՝ xml է:» նախադասությամբ:

11) Կանոնակարգ 3/04-ի 8-րդ կետից հանել «Կենտրոնական բանկ ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2008 թվականի հունիսի 30-ը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո 15-րդ օրը (ներառյալ): 2008 թվականի հունիսի 30-ից (ներառյալ)» բառերը:
12) Կանոնակարգ 3/04-ի 9-րդ կետից հանել «Կենտրոնական բանկ տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2008 թվականի հունիսի 30-ը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա փետրվարի 15-ը: 2008 թվականի հունիսի 30-ից (ներառյալ)» բառերը:
13) Կանոնակարգ 3/04-ի 39-րդ կետում.

ա. «կնքված ապահովագրության պայմանագրերի գծով» բառերը փոխարինել «նշված ապահովագրավճարների մասով» բառերով,

բ. «կնքված ապահովագրության պայմանագրերով նախատեսված» բառերը փոխարինել «հաշվեգրված» բառով:

14) Կանոնակարգ 3/04-ի 40-րդ կետում.

ա. «կնքված ապահովագրության պայմանագրերի գծով գործակալներին» բառերը փոխարինել «գործակալների» բառով,

բ. «գործակալներին վճարվող» բառերը փոխարինել «գործակալների» բառով,

գ. «վճարվող պարգևավճարների» բառերը փոխարինել «գծով հաշվեգրված միջնորդավճարների» բառերով:

15) Կանոնակարգ 3/04-ի 41-րդ կետում «Եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված ապահովագրության պայմանագրերը վերաապահովագրվել են, ապա հաշվետվության» բառերը փոխարինել «Հաշվետվության» բառով:
16) Կանոնակարգ 3/04-ի 41-րդ կետում «վերաապահովագրությանը փոխանցվող ապահովագրավճարների» բառերը փոխարինել «հաշվեգրված վերաապահովագրավճարների» բառերով:

17) Կանոնակարգ 3/04-ի 42-րդ կետից հանել «կնքված ապահովագրության պայմանագրերի վերաապահովագրությունն ապահովելու համար» բառերը:
18) Կանոնակարգ 3/04-ի 42-րդ կետի «բրոքերներին տրվող» բառերը փոխարինել «բրոքերների գծով հաշվեգրված միջնորդավճարների» բառերով:
19) Կանոնակարգ 3/04-ի 43-րդ կետում «կնքված ապահովագրության պայմանագրերի գծով և վերաապահովագրողի հետ կնքված պայմանագրերի համաձայն ստացվող միջնորդավճարների» բառերը փոխարինել «վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճարների գծով հաշվեգրված» բառերով:
20) Կանոնակարգ 3/04-ի 44-րդ կետից հանել «հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված» բառերը:
21) Կանոնակարգ 3/04-ի 44-րդ կետը «շահութահարկի» բառից հետո լրացնել «գծով ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված» բառերով:
22) Կանոնակարգ 3/04-ի 45-րդ կետից հանել «հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում» բառերը:
23) Կանոնակարգ 3/04-ի 45-րդ կետում «գումարները» բառը փոխարինել «՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված մեծությունները» բառերով:
24) Կանոնակարգ 3/04-ի 46-րդ կետից հանել «հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում» բառերը:
25) Կանոնակարգ 3/04-ի 46-րդ կետը «չափի» բառից հետո լրացնել «՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված» բառերով:
26) Կանոնակարգ 3/04-ի 47-րդ կետում «պայմանագրերով նախատեսված» բառերը փոխարինել «պայմանագրերի գծով հաշվեգրած» բառերով:
27) Կանոնակարգ 3/04-ի գլուխ 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3. Ն1[1], Ն1[2], Ն2, Ն3, Ն4, Ն5 ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

48. Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 19 աղյուսակից:

49. 1-ին և 2-րդ աղյուսակներում ներկայացվում են հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկներին մասնակցող ցուցանիշներն ու նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի (այսուհետ՝ կանոնակարգ 3/02):

49.1 Հաշվետվության 1-ին աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում է հաշվետու ամսվա վերջին և առաջին օրերի դրությամբ պահանջների պահուստի մեծությունների (նվազեցրած պահանջների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) հարաբերությունը: 3-րդ սյունակում լրացվում է կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի համաձայն հաշվարկվող վճարունակության պահանջվող մեծությունը (այսուհետ՝ ՎՊՄ): Եթե ապահովագրական ընկերությունը չի խախտել ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի Ն3 նորմատիվը, ապա 9-րդ սյունակում լրացվում է ստանձնած պարտավորության մեծության (զուտ ապահովագրական գումարի) ամենամեծ գումարը: Եթե ապահովագրական ընկերությունը խախտել է Ն3 նորմատիվը, ապա 9-րդ սյունակում ցույց են տրվում խախտում առաջացնող գումարներն՝ ըստ նվազող հաջորդականության:

49.2 Եթե ապահովագրական ընկերությունը չի խախտել մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի առավելագույն չափի Ն5 նորմատիվը, ապա աղյուսակ 1-ի 10-րդ սյունակում լրացվում է մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի ամենամեծ գումարը: Եթե ապահովագրական ընկերությունը խախտել է Ն5 նորմատիվը, ապա 10-րդ սյունակում ցույց են տրվում խախտում առաջացնող գումարներն՝ ըստ նվազող հաջորդականության:

50. Հաշվետվության 3-րդ աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է հիմնական կապիտալի հետևյալ տարրերի հանրագումարը՝ վճարված կանոնադրական կապիտալ (ներառյալ՝ բաժնետոմսերի հավելավճար), գլխավոր պահուստ, չբաշխված շահույթ (եկամուտների պահուստ): 2-րդ սյունակում լրացվում են կանոնակարգ 3/02-ի 19-րդ կետով սահմանված լրացուցիչ կապիտալի տարրերի մեծությունները: 4-րդ սյունակում լրացվում է հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի հանրագումարը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի 17-րդ կետի: 5-րդ սյունակում լրացվում է լրացուցիչ կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի հանրագումարը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի 20-րդ կետի: Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

52. Հաշվետվության 4-8-րդ աղյուսակներում ներկայացվում են $Ն1^2$ նորմատիվի ՎՊՄ տարրի հաշվարկում ներառվող գումարները: Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունը, ինչպես նաև կանոնակարգ 3/02-ի 16-րդ կետով նշված ընկերությունը, երեք տարուց ավելի գործունեություն ծավալած լինելու դեպքում լրացնում է ապահովագրավճարների և հատուցումների մեթոդով հաշվարկվող վճարունակության սահմանաչափերի հաշվարկման համար նախատեսված 4-րդ և 5-րդ աղյուսակները, իսկ մինչև երեք տարի գործունեություն ծավալած լինելու դեպքում՝ նշված աղյուսակներից միայն 4-րդ՝ ապահովագրավճարների մեթոդով հաշվարկվող վճարունակության սահմանաչափի հաշվարկման աղյուսակը: Հաշվետվության 4-րդ աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում է կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի 5-րդ կետի համաձայն հաշվարկված հաշվեգրված ապահովագրավճարների, վաստակած ապահովագրավճարների և դադարեցված (լուծված) ապահովագրության պայմանագրերի գծով վերադարձված և վերադարձման ենթակա ապահովագրավճարների գումարները, 4-րդ և 5-րդ սյունակներում լրացվում են նույն կետի համաձայն հաշվարկվող սեփական պահման գործակցի բաղկացուցիչ տարրերը, 6-րդ սյունակում՝ սեփական պահման գործակցի մեծությունը:

53. Հաշվետվության 5-րդ աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի 6-րդ կետով սահմանված «Պ» տարրի հաշվարկման համար անհրաժեշտ մեծությունները, իսկ 4-րդ և 5-րդ սյունակներում լրացվում են նույն կետի համաձայն հաշվարկվող համապատասխան սեփական պահման գործակցի բաղկացուցիչ տարրերը և 6-րդ սյունակում՝ սեփական պահման գործակցի մեծությունը: Աղյուսակ 5-ը լրացնելիս հաշվի է առնվում կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի 7-րդ և 8-րդ կետով նախատեսված պահանջները:

54. Ապահովագրական ընկերությունները, որոնք իրականացնում են գործունեություն կանոնակարգ 3/02-ի Հավելված 1-ի 11-րդ կետում նշված դասերով, տվյալ դասերի համար լրացնում են հաշվետվության 6-րդ և 7-րդ աղյուսակները, 18-րդ կետում նշված դասերի գծով միայն 6-րդ աղյուսակը, 17-րդ կետում նշված դասերի համար միայն 8-րդ աղյուսակի 1-3-րդ սյուները, իսկ 19-րդ կետում նշված դասերի համար միայն 8-րդ աղյուսակի 4-րդ սյունը: Աղյուսակներում արտացոլվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 1-ի գլուխ 2-ի համաձայն հաշվարկվող մեծությունները:

55. Հաշվետվության 9-րդ աղյուսակում ներկայացվում են $Ն1^2$ նորմատիվի տարր հանդիսացող վարկային ռիսկի հաշվարկում մասնակցող ակտիվներն՝ ըստ ռիսկի կշիռների, և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: Ընդ որում, 9-րդ աղյուսակում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 9-րդ աղյուսակի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ և 25-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի հավելված 2-ի համաձայն՝ ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ, 22-րդ, 24-րդ և 26-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: 27-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:

55.1 Հաշվետվության 10-րդ աղյուսակում ներկայացվում են միայն այն ակտիվները, որոնց վրա, համաձայն կանոնակարգ 3/02-ի, տարածվում են ՎՌԶՄ-ները: Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների ընդհանուր գումարը, 2-րդ սյունակում՝ վերոհիշյալ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը: 3-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է: 4-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 5-ից 17-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծություններն ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց հետո: Ընդ որում, ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Եթե ակտիվի մեծությունը 100 դրամ է, պահուստը՝ 10 դրամ, փոխառուի ռիսկի կշիռը՝ 100 տոկոս, ակտիվի գծով առկա է գրավ, որի արժեքը 60 դրամ է, գրավի ռիսկի կշիռը 50 տոկոս է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում 100 դրամի չափով, 10 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 60 դրամ, իսկ 4-րդ սյունակում՝ 60*(100%-50%)=30 դրամ (որտեղ 60-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌԶՄ կիրառելիս, 100 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌԶՄ կիրառելը, իսկ 50 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌԶՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Միևնույն ժամանակ, ակտիվի ապահովված մասը՝ 60 դրամը, պետք է լրացնել 9-րդ սյունակում: Իսկ ակտիվի չապահովված մասը ((100-10)-60=30-ը) պետք է արտացոլել 11-րդ սյունակում՝ 30 դրամ գումարի չափով:

55.2 Հաշվետվության 11-րդ աղյուսակում ներկայացվում են կանոնակարգ 3/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները: 1-ից 12-րդ սյունակներում արտացոլվում է հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ փոխարկման գործոնների: 13-ից 25-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների:

55.3 Հաշվետվության 12-րդ աղյուսակում ներկայացվում են կանոնակարգ 3/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա տարածվում են ՎՌՋՄ-ները: 1-ից 12-րդ սյունակներում արտացոլվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ փոխարկման գործոնների: 13-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՋՄ կիրառման արդյունքում փոխվել է: 14-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 15-ից 27-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների: ՎՌՋՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Եթե մինչև 1 ամիս պայմանագրային ժամկետ ունեցող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունը 1000 ՀՀ դրամ է, պահուստը՝ 20 դրամ, ապա փոխարկման գործոնները կիրառելու արդյունքում հաշվեկշռային վարկային ռիսկը կկազմի (1000-20)*100%=980: Փոխառուի ռիսկի կշիռը կկազմի 100 տոկոս: Պարտավորության համար առկա է երաշխիք՝ 600 դրամի չափով: Երաշխիք տրամադրողի ռիսկի կշիռը 50% է: Այս դեպքում հետհաշվեկշռային պայմանական պարտավորության գումարը՝ 1000 դրամը, պետք է արտացոլել 7-րդ սյունակում, 20 դրամ պահուստը՝ 8-րդ սյունակում: Պարտավորության ապահովված մասը՝ 600 դրամը, պետք է լրացնել 19-րդ սյունակում, չապահովված մասը՝ (980-600) = 380 դրամը, պետք է արտացոլել 21-րդ սյունակում:

55.4 Հաշվետվության 13-րդ աղյուսակում ներկայացվում են գործառնական ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն կանոնակարգ 3/02-ի հավելված 3-ի: Աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ով սահմանված ապահովագրական ընկերության շահույթը՝ ըստ տարիների: Ընդ որում, նշված սյունակներում համապատասխան մեծությունները լրացվում են միայն այն դեպքերում, երբ համապատասխան տարվա շահույթը մեծ կամ հավասար է 0-ի:

55.5 Հաշվետվության 14-րդ աղյուսակում ներկայացվում են արտարժութային ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը՝ համաձայն Կանոնակարգ 3/02-ի Հավելված 4-ի: Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը, 2-րդ սյունակում՝ կարճ դիրքերի հանրագումարը (բացարձակ մեծությամբ): 3-րդ սյունակում՝ կանոնակարգ 3/02-ի Հավելված 4-ի համաձայն հաշվարկվող արտարժութային առավելագույն դիրքը: «Արտարժութային ռիսկ» տողում լրացվում է արտարժութային առավելագույն դիրքերից առավելագույնի մեծությունը:

55.6 Հաշվետվության 14.1-րդ աղյուսակի տող 1-ում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային ակտիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 1.1-1.7 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները, համաապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերից ստացվելիք գումարները, ապահովագրական հատուցումների գծով համաապահովագրողների, վերաապահովագրողների և այլ անձանց նկատմամբ պահանջների գումարները և ապահովագրության պայմանագրերից ստացվելիք այլ գումարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի տող 2-ում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային պարտավորությունների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 2.1-2.6 տողերում համապատասխանաբար լրացվում են ուղղակի ապահովագրության, համաապահովագրության պայմանագրերի, վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով վճարվելիք գումարները, ապահովագրության գծով համաապահովագրողներին և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները և ապահովագրության գծով ստաց-

ված կանխավճարները հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 3-րդ տողում լրացվում է ապահովագրական ընկերության արտարժութային հետհաշվեկշռային հաշիվների հանրագումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների: Աղյուսակի 3.1-3.3 տողերում համապատասխանաբար լրացվում են ապահովագրական ընկերության՝ արտարժութային ռիսկ պարունակող ապահովագրական գումարների, ածանցյալ գործիքների գծով պայմանական ակտիվների և պարտավորությունների մեծությունները՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ՝ ըստ առանձին արտարժույթների:

56. Հաշվետվության 15-րդ աղյուսակում ներկայացվում է ապահովագրական ընկերության իրացվելիության Ն2 նորմատիվի հաշվարկման համար անհրաժեշտ մեծությունների հաշվարկը: 15-րդ աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում են հաշվետու ամսվա վերջին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվան նախորդող 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ շաբաթների յուրաքանչյուր օրվա դրությամբ բարձր իրացվելի ակտիվների գումարները, որոնց հիման վրա հաշվարկվում են դրանց միջին մեծությունները, ընդ որում՝ օրերը լրացվում են նվազող հերթականությամբ. վերևի տողում լրացվում է հաշվետու ամսվա վերջին շաբաթվա վերջին նորմատիվի հաշվարկման օրվա տվյալները, հաջորդ տողում՝ նորմատիվի հաշվարկման օրվան նախորդող օրվա տվյալները, և այդպես շարունակ: «Հաշվետու ամսվա վերջին շաբաթ»-ը այն շաբաթն է, որում գտնվում է հաշվետու ամսվա վերջին օրը: Տվյալ հաշվետու ամսվա մեջ ներառված շաբաթը չի ներառվում տվյալ ամսվան հաջորդող հաշվետու ամսվա մեջ: Օրինակ՝ 2011 թվականի փետրվար ամսվա համար վերջին շաբաթը փետրվարի 27-ից մարտի 5-ն է, որը ներառվում է փետրվար ամսվա հաշվարկի մեջ և չի ներառվում մարտ ամսվա հաշվարկի մեջ: 4-րդ սյունակում լրացվում են հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող 1-ին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվա, հաշվետու ամսվա վերջին շաբաթվան նախորդող 1-ին, 2-րդ, 3-րդ շաբաթների յուրաքանչյուր օրը մարման ենթակա ապահովագրական հատուցման հետ չառնչվող բոլոր կրեդիտորական պարտավորությունների գումարները, ընդ որում, օրերը կրկին լրացվում են նվազող հերթականությամբ. վերևի տողում լրացվում է հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող շաբաթվա վերջին օրվա տվյալները, հաջորդ տողում՝ հաշվետու ամսվա վերջին շաբաթվան հաջորդող շաբաթվա նախավերջին օրվա տվյալները, և այդպես շարունակ: 15-րդ աղյուսակի 4-րդ սյան «Ընդամենը» տողը ցույց է տալիս ապահովագրական հատուցման հետ չառնչվող բոլոր պարտավորությունների հանրագումարը, որոնց մարումը կատարվելու է Ն2 նորմատիվի հաշվարկման օրվան հաջորդող յոթ օրերի ընթացքում: 5-րդ սյունակում լրացվում են միայն «Ընդամենը» տողերը, որտեղ նշվում են նորմատիվի հաշվարկման օրվա (հաշվետու շաբաթվա վերջին օր) վերջի դրությամբ ապահովագրական հատուցումների գծով ձևավորված կրեդիտորական պարտավորությունների հանրագումարները, իսկ 6-րդ սյունակում՝ նորմատիվի հաշվարկման օրվա (հաշվետու շաբաթվա վերջին օր) վերջի դրությամբ ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստի մեծությունը:

57. Հաշվետվության 16-րդ աղյուսակը լրացվում է մեկ ապահովագրության օբյեկտը և դրանց հետ փոխկապակցված օբյեկտները ծածկող ապահովագրության պայմանագրի (պայմանագրերի) գծով ապահովագրական ընկերության կողմից ստանձնած այն պարտավորությունների (ապահովագրական գումարների) գծով՝ նվազեցված այդ պայմանագրի (պայմանագրերի) գծով վերաապահովագրողի մասնաբաժնի մասով՝ կանոնակարգ 3/02-ի 27-րդ կետում սահմանված չափով, որոնց մեծությունը կազմում է հաշվետու օրվա դրությամբ կանոնակարգ 3/02-ի համաձայն հաշվարկված ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 5 և ավելի տոկոսը:

58. Հաշվետվության 16-րդ աղյուսակում ներկայացվում են ստանձնած ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի Ն3 նորմատիվի հաշվարկում ընդգրկվող մեծությունները: 1-ին սյունակում լրացվում է ապահովագրության օբյեկտի կամ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի համարը, ընդ որում՝ ապահովագրական օբյեկտները համարակալվում են՝ առաջին ապահովագրական օբյեկտը՝ «1», երկրորդը՝ «2», և այլն, իսկ տվյալ՝ «X» համարի ապահովագրական օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտները՝ « X/1», « X/2», և այլն: 2-րդ սյունակում լրացվում է տվյալ ապահովագրական օբյեկտի անվանումը, 3-րդ սյունակում՝ տվյալ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի անվանումը, 4-րդ սյունակում՝ տվյալ ապահովագրության օբյեկտի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը, 5-րդ սյունակում՝ տվյալ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը: 6-րդ սյունակում լրացվում է տվյալ ապահովագրության օբյեկտը ծածկող ապահովագրական գումարի մեծությունները, 7-րդ սյունակում՝ տվյալ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտը ծածկող ապահովագրական գումարի մեծությունները. եթե ապահովագրության որևէ օբյեկտ (ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված

որևէ օբյեկտ) ապահովագրված է մի քանի ապահովագրության պայմանագրերով, ապա աղյուսակի 6-րդ (7-րդ) սյունակում լրացվում է այդ օբյեկտի ապահովագրության վերաբերյալ կնքված բոլոր պայմանագրերով ստանձնած ռիսկի ամբողջ գումարը, իսկ հաջորդ տողերում լրացվում են առանձին պայմանագրերով ստանձնած ռիսկի գումարները: 8-րդ սյունակում՝ լրացվում են տվյալ ապահովագրության օբյեկտի գծով ստանձնած պարտավորություններում (ապահովագրական գումարներում) վերաապահովագրողի մասնաբաժինը, 9-րդ սյունակում՝ լրացվում են տվյալ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի գծով ստանձնած պարտավորություններում (ապահովագրական գումարներում) վերաապահովագրողի մասնաբաժինը: Եթե ապահովագրության «Ա» օբյեկտի գծով կնքվել է 3 հատ պայմանագիր, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված ապահովագրական գումարներն են, համապատասխանաբար 200 միավոր, 300 միավոր, 350 միավոր, միևնույն ժամանակ «Ա» օբյեկտի գծով առկա են «բ» և «գ» փոխկապակցված օբյեկտներ, «բ»-ի գծով կնքվել է 2 հատ պայմանագիր՝ համապատասխանաբար 200 և 100 միավոր, «գ»-ի գծով՝ 1 պայմանագիր՝ 50 միավոր, ընդ որում՝ «Ա», «բ» և «գ» օբյեկտները չեն վերաապահովագրվում, ապա աղյուսակ 16-ը պետք է լրացնել հետևյալ կերպ.

Ապահովագրության օբյեկտի կամ ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի համարը	Ապահովագրության օբյեկտի անվանում	Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտի անվանում	Ապահովագրության օբյեկտի գծով կնքված պայմանագրերի քանակ (հատ)	Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտների գծով կնքված պայմանագրերի քանակ (հատ)	Ապահովագրության ընթերցող գործող ապահովագրական գումարի մեծություն	Ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտների գծով ընդունված ռիսկերի ապահովագրական գումարի մեծություն	Վերաապահովագրողի մասնաբաժնին ընկնող ապահովագրության օբյեկտի գծով ընդունված ռիսկերի ապահովագրական գումարի մեծություն դեր (կամ տոկոս)	Վերաապահովագրողի մասնաբաժնին ընկնող ապահովագրության օբյեկտի հետ փոխկապակցված օբյեկտների գծով ընդունված ռիսկերի ապահովագրական գումարի մեծություն դեր (կամ տոկոս)
1	2	3	4	5	6	7	8	9
1	«Ա»	-	3	-	850	-	-	-
1	-	-	-	-	200	-	-	-
1	-	-	-	-	300	-	-	-
1	-	-	-	-	350	-	-	-
1/1	-	«բ»	-	2	-	300	-	-
1/1	-	-	-	-	-	200	-	-
1/1	-	-	-	-	-	100	-	-
1/2	-	«գ»	-	1	-	50	-	-

59. Հաշվետվության 17-րդ աղյուսակի 1-3-րդ սյունակներում լրացվում են կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակի 1-ին կետում սահմանված ակտիվները, 4-7-րդ սյունակներում լրացվում են նշված աղյուսակի 2-րդ կետում նշված ակտիվները, 8-18-րդ սյունակներում՝ 3-րդ կետում նշված ակտիվները, 19-20-րդ սյունակներում՝ 4-րդ կետում նշված ակտիվները, 21-25-րդ սյունակներում՝ 5-րդ կետում նշված ակտիվները, 26-րդ սյունակում լրացվում են տեխնիկական պահուստների մեծությունների հանրագումարը՝ նվազեցրած վերաապահովագրողների մասնաբաժնի չափով: Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

60. Հաշվետվության 18-րդ աղյուսակում արտացոլվում են մեկ փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ապահովագրական ընկերության այն պահանջները, որոնք գերազանցում են կանոնակարգ 3/02-ի համաձայն հաշվարկված ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 5 և ավելի տոկոսը (այսուհետ՝ խոշոր փոխառուներ): «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է խոշոր փոխառուի անվանումը: 2-6-րդ սյունակներում լրացվում են 1-ին սյունակում նշված փոխառուին տրամադրված՝ կանոնակարգ 3/02-ի 35-րդ կետով սահմանված «Ռ» տարրի բաղադրիչների մեծությունները՝ ըստ համապատասխան սյուների: 9-րդ սյունակում լրացվում է 8-րդ սյունակում արտացոլված մեծությունների մասով հնարավոր կորուստների պահուստների հանրագումարը:

61. Աղյուսակ 19-ում արտացոլվում են խոշոր փոխառուների հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ապահովագրական ընկերության պահանջները: Աղյուսակ 19-ի 2-րդ սյունակում առանձին տողերով պետք է արտացոլվեն 1-ին սյունակում նշված փոխառուի հետ փոխկապակցված և ապահովագրական ընկերության հանդեպ պարտավորություններ ստանձնած բոլոր անձանց անունները (անվանումները): Ընդ որում, մնացած սյունակները լրացվում են, միայն, եթե տվյալ տողում արտացոլված փոխառուի հետ փոխկապակցված անձի հանդեպ ապահովագրական ընկերության ունեցած պահանջները ներառված են 12-րդ աղյուսակում տվյալ փոխառուի համապատասխան տողի 7-րդ սյունակի հանրագումարում: Սույն աղյուսակի տեսքով բերվում է փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջների լրացման ձևի օրինակը:

Կազմակերպության (փոխառուի) անվանումը	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	Ժամկետային փոխառության մնացորդը	Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	Ընդամենը
«Գ» ՍՊԸ	«Բ» ՍՊԸ	200 000	50 000	250 000
«Գ» ՍՊԸ	Պետրոսյան Պետրոս		100000	***100000***

»:

28) Կանոնակարգ 3/04-ի 76-րդ կետում «ինչպես հուսալի, այնպես էլ ոչ հուսալի վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների» բառերը փոխարինել «հաշվեգրված վերաապահովագրավճարների» բառերով:
29) Կանոնակարգ 3/04-ի 77-րդ կետից հանել «(չվաստակած ապահովագրավճարներ՝ նվազեցված հուսալի վերաապահովագրողին փոխանցվելիք ապահովագրավճարների մասով չվաստակած ապահովագրավճարների չափով)» նախադասությունը:
30) Կանոնակարգ 3/04-ի 79-րդ կետում «ինչպես հուսալի, այնպես էլ ոչ հուսալի» բառերը փոխարինել «հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված» բառով:
31) Կանոնակարգ 3/04-ի 79-րդ կետում «գումարներն ապահովագրական հատուցումների գծով» բառերը փոխարինել «ապահովագրական հատուցումները» բառերով:
32) Կանոնակարգ 3/04-ի 81-րդ կետում «4.1.1. կետից նվազեցվող գումարները՝ հուսալի վերաապահովագրողների բաժնի չափով» բառերը փոխարինել «ձևավորված պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի մեծությունը» բառերով:
33) Կանոնակարգ 3/04-ի 82-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «82. 4.3.1. և 4.3.2. կետերը լրացվում են նույն սկզբունքով, ինչ 4.1.1. և 4.1.2. կետերը:»:
34) Կանոնակարգ 3/04-ի 126-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» Կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» Կանոնակարգ 3/02-ի» բառերը փոխարինել «կանոնակարգ 3/02-ի» բառերով:
35) Կանոնակարգ 3/04-ի գլուխ 10-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 10. ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 10 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

127. Թիվ 10 հաշվետվությունը բաղկացած է երկու հատվածից:

128. Հաշվետվության 1-ին հատվածում ապահովագրական ընկերությունը ներկայացնում է իր և հաշվետվության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն: Երկրորդ հատվածում ապահովագրական ընկերությունը ներկայացնում է վերաապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվության առաջին հատվածը հաշվետվության Հեդեր (HEADER) տարրի ներքո ներառված տարրերի ամբողջությունն է: Հաշվետվության երկրորդ հատվածը հաշվետվության Բոդի (BODY) տարրի ներքո ներառված տարրերի ամբողջությունն է:

129.1.Հաշվետվության առաջին հատվածի ԻնշուրերԿոդ (INSURERCODE) տարրի ներքո լրացվում է ապահովագրական ընկերության կոդը, որը վերջինիս է տրամադրվել Կենտրոնական բանկի կողմից:

129.2. Հաշվետվության առաջին հատվածի ԻնշուրերՆեյմ (INSURERNAME) տարրի ներքո լրացվում է ապահովագրական ընկերության անվանումը:

129.3. ՌետրնԿոդ (RETURNCODE) և ՌետրնՆեյմ (RETURNNAME) տարրերի ներքո լրացվում են համապատասխանաբար հաշվետվության համարը և անվանումը, մասնավորապես թիվ 10 հաշվետվության համար այս տարրերի արժեքներն են համապատասխանաբար 10 և Վերաապահովագրության վերաբերյալ:

130. ՊերիոդՖրոմ (PERIODFROM) և ՊերիոդԵնդ (PERIODEND) տարրերի ներքո լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և ավարտի ամսաթիվը օր/ամիս/տարի ֆորմատով: Եթե հաշվետվությունը ներկայացվում է 2010 թվականի առաջին եռամսյակի համար, ապա այս տարրերի համար արժեքները համապատասխանաբար կլինեն 01/01/2010 և 31/03/2010:

131. Վեր (VER) տարրի ներքո լրացվում է հաշվետվության տարբերակը: Եթե հաշվետվությունը ուղարկվում է առաջին անգամ, ապա Վեր (VER) տարրի արժեքը կլինի 1, իսկ հետագա բոլոր ճշգրտված հաշվետվությունների համար տարրի արժեքը կմեծանա 1-ով, մասնավորապես 2-րդ ուղարկված հաշվետվության համար այս տարրի արժեքը կլինի 2: Սայնեդ (SIGNED) և ԼՆԳ (LNG) տարրերի արժեքները միշտ հաստատուն են ՝ null և hy_AM:

132. Յուրաքանչյուր պայմանագրի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է առանձին Ռոու (ROW) տարրերի ներքո, որոնց մեջ ներառվող տարրերի լրացման կարգը ներկայացված է սույն կանոնակարգի 133-140 կետերում: Հաշվետվությունում արտացոլվում են այն բոլոր պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք կնքվել են հաշվետու ժամանակաշրջանում, կամ որոնց գործողության ժամկետը դադարել է հաշվետու ժամանակշրջանում:

133.1. ԱյԴի (ID) տարրում ներկայացվում է տողի հերթական համարը (1,2,3……..):

133.2. ՌեինշուրանսԿոնտրակտԱյԴի (REINSURANCE_CONTRACT_ID) տարրում ներկայացվում է վերաապահովագրության պայմանագրի համարը:

133.3. ԻնշուրանսԿլաս (INSURANCE_CLASS) տարրում ներկայացվում է ապահովագրության դասի կոդը, որին վերաբերում է վերաապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության դասերի կոդերը ներկայացված են հավելված 10-ի աղյուսակ 1-ում:

134. ՌեինշուրանսԿոմպանիՆեյմ (REINSURANCE_COMPANY_NAME) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության անվանումը: Ընկերության անվանումը պետք է ընտրել Կենտրոնական բանկի կողմից տրված ցուցակից: Եթե ապահովագրական ընկերությունը պայմանագիր է կնքել այնպիսի վերաապահովագրական ընկերության հետ, որը բացակայում է ներկայացված ցուցակում, ապա ապահովագրական ընկերությունը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին, որը ծանուցում ստանալուց հետո ապահովագրական ընկերությանն է տրամադրում թարմացված ֆայլերը: Վերաապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացվում է Կենտրոնական բանկի կողմից տրված էքս-էս-Դի (xsd) ֆորմատի ֆայլերում:

135.1. Ստանդ Փուրզ Ռեյտինգ (STAND_POORS_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ստանդարտ ընդ Փուրզ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ստանդարտ ընդ Փուրզ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.2. Ֆիտչ Ռեյտինգ (FITCH_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ֆիտչ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ֆիտչ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.3. Մուդիզ Ռեյտինգ (MOODYS_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Մուդիզ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Մուդիզ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

135.4. Ա.Մ.Բեստ Ռեյտինգ (A.M.BEST_RATING) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության վարկանիշը՝ տրված Ա. Մ. Բեստ վարկանիշային կազմակերպության կողմից: Ընկերության վարկանիշը ընտրվում է նախատեսված ցուցակից, որը տրվում է Կենտրոնական բանկի կողմից: Եթե ընկերությունը չունի վարկանիշ, ապա նշվում է «X»: Ա. Մ. Բեստ վարկանիշային կազմակերպության վարկանիշային սանդղակը ներկայացված է հավելված 10-ի աղյուսակ 2-ում:

136.1. Ռեինշուրանս Սայթ (REINSURANCE_SITE) տարրում ներկայացվում է վերաապահովագրական ընկերության կայքը, ընդ որում www. նշելը պարտադիր է:

136.2. Ռեինշուրանս Քաունտրի (REINSURANCE_COUNTRY) և Ռիինշուրանս Ստեյտ Ռիգիստրեյտեդ Դատա (REINSURANCE_STATE_REGISTRATED_DATA) տարրերում ներկայացվում են համապատասխանաբար վերաապահովագրական ընկերության երկրի եռանիշ ISO կոդը և պետական գրանցման համարը:

137.1. Ռեզիդենտ Բրոքեր Նեյմ (REZIDENT_BROKER_NAME) տարրում ներկայացվում է ապահովագրողի ռիսկերը տվյալ վերաապահովագրողին փոխանցած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ապահովագրական բրոքերի Կենտրոնական բանկի կողմից տրված կոդը: Եթե բրոքերները մեկից ավելին են, ապա կոդերը տարանջատվում են բացատներով:

137.2. Նոն Ռեզիդենտ Բրոքեր Նեյմ (NON_REZIDENT_BROKER_NAME) տարրում ներկայացվում է ապահովագրողի ռիսկերը տվյալ վերաապահովագրողին փոխանցած օտարերկրյա ապահովագրական բրոքերի Կենտրոնական բանկի կողմից տրված կոդը: Եթե բրոքերները մեկից ավելին են, ապա կոդերը տարանջատվում են բացատներով:

138.1. Ռեինշուրանս Կոնտրակտ Թայփ (REINSURANCE_CONTRACT_TYPE) տարրում ներկայացվում է վերաապահովագրության պայմանագրի տեսակի կոդը: Վերաապահովագրության պայմանագրի տեսակների կոդերը ներկայացված են հավելված 10-ի աղյուսակ 3-ում:

138.2. Ռեինս Կոնտր Բեգդեյտ (REINS_CONTR_BEGDATE) և Ռեինս Կոնտր Էնդդեյտ (REINS_CONTR_ENDDATE) տարրերում ներկայացվում են համապատասխանաբար վերաապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկզբի և ավարտի ամսաթվերը օր/ամիս/տարի ֆորմատով:

139.1. Ռիինշուրանս օբջեկտս քաունտ (REINSURANCE_OBJECTS_COUNT) տարրում ներկայացվում է վերաապահովագրված օբյեկտների քանակը ամբողջ թվերով:

139.2. Ռիինշուրանս Սամ (REINSURANCE_SUM) տարրում ներկայացվում է տվյալ վերաապահովագրողի մոտ վերաապահովագրված օբյեկտների վերաապահովագրական գումարը (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.3. Նետ Ռեինշուրանս (NET_REINSURANCE_PREMIUM) տարրում ներկայացվում է տվյալ վերաապահովագրողին փոխանցված վերաապահովագրավճարները (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.4. Ռեինշուրանս Քոմպենսեյշն (REINSURANCE_COMPENSATION) տարրում տվյալ վերաապահովագրողից ստացված կամ ստացվելիք վերաապահովագրական հատուցումները (դրական, ստորակետից հետո անհրաժեշտ քանակությամբ նիշերի ճշգրտությամբ, հազար դրամներով):

139.5. Քոնտրակտ Ստատուս (CONTRACT_STATUS) տարրում ներկայացվում է, թե արդյոք գործող է տվյալ վերաապահովագրողի հետ կնքած պայմանագիրը: Եթե պայմանագիրը գործող է, ապա տարրի արժեքն է Y, իսկ եթե ոչ, ապա՝ N:

140. Հաշվետվությունը ներկայացնելիս վերը նշված տարրերի հերթականությունը պահպանելը պարտադիր է և այլ հերթականությամբ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:»:

36) Կանոնակարգ 3/04-ի գլուխ 14-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ԳԼՈՒԽ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 14 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

152. Թիվ 14 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից: 1-ին աղյուսակը ներառում է տեղեկատվություն ապահովագրական ընկերության հիմնական գործունեության և կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրումների վերաբերյալ: 2-րդ աղյուսակը ներառում է տեղեկատվություն ոչ ռեզիդենտների նկատմամբ պահանջների և ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտավորությունների վերաբերյալ՝ ըստ առանձին գործիքների:

152.1 Սույն հաշվետվության լրացման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով: Արտարժույթով կատարված գործառնությունները լրացվում են համապատասխան սյան մեջ՝ դրամական արտահայտությամբ: Հաշվետվության մեջ տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում: Հաշվետվությունում կյանքի և ոչ կյանքի ապահովագրությանը և վերաապահովագրությանը վերաբերող գործառնություններն ըստ դասերի ներկայացվում են առանձին-առանձին:

153. 1-ին աղյուսակի 1-ին սյունակում ներկայացվում են հաշվարկված ապահովագրավճարները ոչ կյանքի ապահովագրության և կյանքի ապահովագրության գծով:

153.1 «Վաստակած ապահովագրավճարներ ուղղակի ապահովագրության գծով» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում ընկերության կողմից ոչ ռեզիդենտների հետ կնքած ապահովագրության և համաապահովագրության պայմանագրերով ապահովագրավճարների գումարներն ըստ ապահովագրության դասերի:

154. «Վճարման ենթակա (հաշվեգրված) ապահովագրական հատուցումներ ուղղակի ապահովագրության գծով» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրու-

թյան և համապահովագրության պայմանագրերով ընկերության կողմից ոչ ռեզիդենտներին վճարման նպատակով հաշվեգրած հատուցումներն ըստ ապահովագրության դասերի:

155. «Վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով հաշվարկված վերաապահովագրավճարներ՝ ոչ ռեզիդենտներին» սյունակում պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով ոչ ռեզիդենտներին փոխանցվելիք հաշվարկված վերաապահովագրավճարների գումարն ըստ ապահովագրության դասերի: Հաշվարկված վերաապահովագրավճարներն ապահովագրական պայմանագրի գործողության ժամանակահատվածում հաշվարկած վերաապահովագրավճարներն են յուրաքանչյուր եռամսյակի համար: Հաշվարկված վերաապահովագրավճարը հաշվարկվում է համախառն վերաապահովագրավճարներից նվազեցնելով վերաապահովագրումից ստացվելիք բոնուսներն ու միջնորդավճարները, դադարեցված պայմանագրերի գծով վերադարձված գումարները և տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխությունները: «Վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով հաշվարկված վերաապահովագրավճարներ՝ ոչ ռեզիդենտներից» հոդվածում (4-րդ սյունակ) պետք է ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ոչ ռեզիդենտներից ստացման ենթակա վերաապահովագրավճարների գումարն ըստ ապահովագրության դասերի:

156. «Վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով վնասի բաժնի հատուցումներ և այլ մուտքեր՝ ոչ ռեզիդենտներից» սյունակում ցույց են տրվում վերաապահովագրության փոխանցված ռիսկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրված հատուցումները ոչ ռեզիդենտ վերաապահովագրողների գծով, «Վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով վնասի բաժնի հատուցումներ և այլ ելքեր՝ ոչ ռեզիդենտներին» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտից հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրության ընդունված ռիսկերի գծով հաշվեգրված հատուցումները:

157. «Վերաապահովագրության գծով կոմիսիոն վարձատրություններ՝ ոչ ռեզիդենտներից» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներից ստացված կոմիսիոն վարձատրությունները, միջնորդավճարները և բոնուսները:

158. «Վերաապահովագրության գծով կոմիսիոն վարձատրություններ ոչ ռեզիդենտներին» սյունակում ցույց են տրվում ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին տրված կոմիսիոն վարձատրությունները, միջնորդավճարները և բոնուսները:

159. «Ոչ ռեզիդենտների հետ գործող պայմանագրերի քանակը» հոդվածում (9-րդ սյունակ) ցույց է տրվում հաշվետու ժամանակահատվածում ոչ ռեզիդենտների հետ գործող պայմանագրերի քանակը:

160. «Ոչ ռեզիդենտների հետ հաշվետու եռամսյակում կնքված պայմանագրերի քանակը» սյունակում ցույց է տրվում հաշվետու ժամանակահատվածում ոչ ռեզիդենտների հետ կնքված պայմանագրերի քանակը:

161. «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ոչ ռեզիդենտի մասնակցություն (%)» հոդվածում նշվում է կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտ ներդրողների ընդհանուր մասնակցության տեսակարար կշիռը, այնուհետև առանձին-առանձին, ըստ յուրաքանչյուր ոչ ռեզիդենտ ներդրողի, նշվում է կանոնադրական կապիտալում մասնակցության բաժինը՝ տեսակարար կշիռների նվազման կարգով: «Ոչ ռեզիդենտներին հայտարարված շահաբաժիններ» հոդվածում ցույց են տրվում հաշվետու ժամանակաշրջանում հայտարարված շահաբաժինների ոչ ռեզիդենտների մասնաբաժինը:

162. 2-րդ աղյուսակը ներառում է ապահովագրական ընկերության արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ինչպես ակտիվները, այնպես էլ պարտավորությունները պետք է ներկայացվեն ըստ առանձին գործիքների: Ընդ որում, ակտիվների և պարտավորությունների նվազումը նշվում է բացասական նշանով, իսկ աճը՝ դրական: Ինչպես ակտիվները, այնպես էլ պարտավորությունները տարանջատվում են ըստ ժամկետայնության՝ կարճաժամկետ և երկարաժամկետ: Ինչպես ակտիվներում, այնպես էլ պարտավորություններում հաշվեգրված, բայց չվճարված տոկոսավճարները ներկայացվում են գործիքի հետ միասին: «Ակտիվներում» կամ «Պարտավորություններում» չեն ներառվում չվաստակած ապահովագրավճարների պահուստը (ՉԱՊ), ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստը և տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստը:

163. Կարճաժամկետ բաժնում «Պարտատոմսեր, պարտամուրհակներ և այլ շուկայական գործիքներ» տողում լրացվում են այն պարտքային արժեթղթերի հետ կապված գործառնությունները, որոնց թողարկման ժամկետայնությունը մինչև 1 տարի է: 1 տարուց ավելի ժամկետայնությամբ պարտքային արժեթղթերի հետ կապված գործառնությունները նշվում են երկարաժամկետ բաժնի «Պարտատոմսեր, պարտամուրհակներ և այլ շուկայական գործիքներ» տողում: Ընդ որում, պարտքային արժեթղթերը ըստ ժամկետայնության դասակարգելիս պետք է հաշվի առնել ոչ թե մինչև մարումը մնացած ժամկետը, այլ թողարկման սկզբնական ժամկետայնությունը: Կարճաժամկետ և երկարաժամկետ բաժիններում ակտիվ-

ների (պարտավորությունների) «Վարկեր և փոխառություններ» տողում լրացվում է ոչ ռեզիդենտներին տրամադրված (ոչ ռեզիդենտներից ստացած) վարկերը և փոխառությունները՝ կախված ժամկետայնությունից: Կարճաժամկետ և երկարաժամկետ բաժիններում ակտիվների (պարտավորությունների) «Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ» տողում գրանցվում են ապահովագրական ընկերության տնօրինման տակ եղած կանխիկ դրամական միջոցները և ոչ ռեզիդենտներին տրված (ոչ ռեզիդենտներից ստացած) ավանդները:

164. Երկարաժամկետ ակտիվների «Կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն, որից» տողում լրացվում է ապահովագրական ընկերության կողմից ոչ ռեզիդենտ ընկերության բաժնետոմսերում կամ բաժնային արժեթղթերում կատարված ներդրումների ընդհանուր մեծությունը, ընդ որում, ըստ առանձին ներդրման բաժնետիրական կապիտալում 10 %-ից ավել մասնակցությունը լրացվում է «Ուղղակի ներդրում» տողում, իսկ 10 %-ից պակաս մասնակցությունը կամ մասնակցություն ապահովող բաժնային արժեթղթերի տեսքով իրականացված ներդրումները՝ «Պորտֆելային ներդրում» տողում: Երկարաժամկետ պարտավորությունների «Կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն, որից» տողում լրացվում է ոչ ռեզիդենտի կողմից ապահովագրական ընկերության բաժնետոմսերում և բաժնային արժեթղթերում կատարված ներդրումների ընդհանուր մեծությունը, ընդ որում, ըստ առանձին ներդրման բաժնետիրական կապիտալում 10 %-ից ավել մասնակցությունը լրացվում է «Ուղղակի ներդրում» տողում, իսկ 10 %-ից պակաս մասնակցությունը կամ մասնակցություն ապահովող բաժնային արժեթղթերի տեսքով իրականացված ներդրումները՝ «Պորտֆելային ներդրում» տողում:

165. «Այլ ակտիվներ» կամ «Այլ պարտավորություններ» տողերում նշվում են այն գործառնությունները, որոնք վերը նշված գործիքներից և ոչ մեկին իրենց բնույթով չեն համապատասխանում, օրինակ՝ կրեդիտորական կամ դեբիտորական ակտիվներն ու պարտավորությունները, ոչ ռեզիդենտներին վճարվելիք հաշվեգրված շահաբաժինները: Ընդ որում, կարճաժամկետ բաժնի «Այլ ակտիվներ/այլ պարտավորություններ» տողի «ժամկետանց» ենթատողում պետք է լրացնել ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ գործիքների գծով ժամկետանց դարձած միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխանաբար ակտիվներում կամ պարտավորություններում: Իսկ «Այլ ակտիվներ/այլ պարտավորություններ» տողի «ապահովագրության գծով կանխավճարներ» և «վերաապահովագրության գծով կանխավճարներ» տողում անհրաժեշտ է լրացնել ապահովագրության/վերաապահովագրության դիմաց տրված/ստացած կանխավճարները:

166. «Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում» սյունակում նշվում են համապատասխան տողերի հաշվեկշռային ցուցանիշները՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբում:

167. «Գործառնությունների» սյունակում լրացվում են այն բոլոր հաշվեգրված գործառնությունները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տողերում նշված ֆինանսական գործիքներից յուրաքանչյուրի մասով:

